

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Գ. ՎԱԽՎԵՐԴՅԱՆ

## ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՅԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐԻՑ ԱՐԱՋԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

ԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱՅՈՒՆՈՑ ԴԱՄԱՆԱԹԱՅ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ  
ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

*Գիրքը տպագրվել է  
Հայաստանի Հանրապետության վարչապետ  
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ  
հովանավորությամբ*

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГРИГОРЯН Г.М., АХВЕРДЯН С.Г.

# И С Т О Р И Я С Ю Н И К А

(с древнейших времен до наших дней)

Краткий курс для вузов

ԵՐԵՎԱՆ 2001

ЕРЕВАН 2001

ԴՏՅ 941(479.25)(07)  
ԳՄԴ 63.3(23) y 73  
Գ 888

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ  
ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ:

Գրախոս՝ պատմական գիտությունների դոկտոր  
**Գ. Ե. Կիրակոսյան**

Պատասխանատու խմբագիրներ՝  
պատմ. գիտ. դոկտոր **Ռ. Ի. Մաթեոսյան**  
պատմ. գիտ. թեկնածու **Ա. Գ. Մանուչարյան**

**Գրիգորյան Գրիգոր, Հախվերդյան Սերգեյ**  
Գ 888 Սյունիքի պատմություն. հնագույն ժամանակներից մինչեւ  
մեր օրերը (Բուհական համառոտ դասընթաց). - Եր.,  
Հրազդան, 2001, 316 էջ:

*Սույն «Համառոտ դասընթացը» նվիրված է Հայաստանի առավել  
նշանավոր վարչաքաղաքական կազմավորումներից մեկի՝ Սյունիքի  
հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային  
կյանքի լուսարանմանը՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը:*

*Նախատեսվում է բուհերի պարմության ֆակուլտետների եւ այլ  
կրթօջախների ուսանողության, ինչպես նաեւ ընթերցող լայն շրջանների  
համար:*

Գ 0503020913 2001  
0125(01)-2001

ԳՄԴ 63.3(23) y 73


ISBN 99930-73-00-8

© Գրիգորյան Գ., 2001թ.  
© Հախվերդյան Ս., 2001թ.  
© «Հրազդան» հրատարակչություն, 2001 թ.


## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի հնագույն պատմության սկզբնաղբյուրները թեեւ ցանկա-  
լի չափով բազմազան չեն ու շռայլ, սակայն որոշակի պատկերացում  
են տալիս հազարամյակներ առաջ երկրամասի բնակիչների հասարա-  
կական զարգացման աստիճանի, նրանց տնտեսության, կենցաղի, սո-  
վորույթների ու հավատալիքների մասին: Այդ սկզբնաղբյուրների մեջ  
առանձնահատուկ տեղ են գրավում 5000-7000 տարի առաջ ստեղծ-  
ված ժայռապատկերները: Դրանք հայտնաբերվել են 1966 թ. եւ գիտա-  
կան պատշաճ մեկնաբանություններով ու լուսանկարներով հրապա-  
րակվել Գ. Հ. Կարախանյանի եւ Պ. Գ. Սաֆյանի կողմից 1970 թ.:  
Հ. Ա. Մարտիրոսյանի եւ Հ. Ռ. Իսրայելյանի աշխատասիրությամբ 1971  
թ. լույս ընծայվեցին Սյունիքի Գեղարքունիք գավառի ժայռապատկեր-  
ները: Զարաբեկորների վրա հնադարյան մարդու գծած պատկերների  
թվացյալ պարզունակությանն ու մատչելիությանը հակառակ, գիտնա-  
կանները գտնում են, որ դրանցում իմաստավորված են խորհրդանշա-  
կան, տակավին անբացատրելի շատ գաղտնիքներ եւ կարոտ են շա-  
րունակական ուսումնասիրման:

Համաշխարհային հնագիտության ասպարեզում վաղուց ի վեր տեղ  
է գրավել Սիսիանից շուրջ 3 կմ հեռավորության վրա գտնվող մի վայր,  
որը ժողովուրդը կոչում է Զորաց քարեր: Դա մ. թ. ա. 2-րդ հազարա-



Ժայռապատկերներ՝ Ուղղաւարից (Սիսիան)



Ժայռապատկերներ Ուղրասարից (Սիսիան)

մյակի մեգալիթյան հնավայր է, ուր պահպանվել են պարիսպների ու կացարանների մնացորդներ: Պատմական հուշարձանի նմանակն է անգլիական հանրահայտ Սթոունհենջը: Այն դեռևս լիովին չի ուսումնասիրվել: Թեև կարծիք է հայտնվել, որ դա եղել է արեւի պաշտամունքի տաճար եւ կամ աստղադիտարան:

Երկրամասի պատմության ուսումնասիրման հարուստ փաստական նյութեր են տալիս հնագիտական պեղումները: Հնագիտությունն իր սկզբնական հաստատուն քայլերն է անում լեռնաշխարհում: Առայժմ հետեւողա-

կան պեղումներ են կատարվել հանրահայտ հուշարձանախմբերում (Վահանավանք, Տաթև) կամ էլ շինարարական ու հողամաքրման աշխատանքների ժամանակ այս ու այնտեղ պատահաբար բացված դամբարանադաշտերում (Տեղ, Հարժիս, Սիսիան, Խանածախ եւ այլն): Սյունիքում ազգագրական եւ հնագիտական նյութերի հավաքմամբ եւ ուսումնասիրմամբ, դեռևս անցյալ դարավերջին, զբաղվել է Եր. Լալայանը, իսկ հետագայում Նաեմ Ստ. Լիսիցյանը, որի «Ջանգեղուրի հայերը» գիրքն այդ իմաստով հանրագիտարանային արժեք ունի: Վերջին շրջանում Սյունիքում գիտական հիմքի վրա դրված հնագիտական պեղումների նախաձեռնման եւ իրականացման երախտավորներն են Մ. Հասարթյանը, Գր. Գրիգորյանը եւ Օ. Խնկիկյանը: 1998 թ. ՀՀ Կենտրոնական բանկի (Բազրատ Ասատրյան) տրամադրած միջոցներով հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արջավախումբը՝ Պավել Ավետիսյանի ղեկավարությամբ, պեղումներ կատարեց Սիսիան քաղաքի տարածքում հայտնաբերված երկու դամբարանադաշտերում: Պեղածո նյութերը (բրոնզե իրեր,

գունազարդ խեցեղեն եւ այլն) թվագրվում են մ.թ.ա. 21-17-րդ դարերով եւ հանդիսանում են միջին բրոնզի ցայտուն նմուշներ:

Մետաղագործությունը բուռն զարգացում է ունեցել Որոտանի կիրճի երկայնքով տեղակայված բնակավայրերում (Ջորաց քարեր, Ուգ, Շաքի): Սիսիանի նյութերով հերքվում է այն վարկածը, ըստ որի Թեղթյան մշակույթի ձեավորման օջախը գտնվում է Հարավային Վրաստանում: Ձեռք բերված հնագիտական առարկաները ցույց են տալիս, որ պատմական Շողուկի տարածքը եղել է այդ մշակույթի ձեավորման ինքնատիպ կենտրոններից մեկը:

Սյունյաց աշխարհի հնագույն շրջանի պատմության ուսումնասիրման առավել կարեւոր սկզբնաղբյուրները գրավոր հուշարձաններն են: Սիսիանում հայտնաբերվել է ուրարտական Արգիշտի 2-րդ թագավորի (714-685 թթ. մ. թ. ա.) սեպագիր արձանագրությունը, իսկ Գորիս-Սիսիան ավտոճանապարհին՝ Արտաշես 1-ին արքայի (189-160 թթ. մ. թ. ա.) արամեերեն գրությամբ սահմանաքարը: Այդ երկու պատմական, խիստ արժեքավոր վավերագրերը բավարար հիմք են տալիս՝ ենթադրելու հայկական հին միասնական պետականությունների հետ Սյունիքի ունեցած սերտ առնչությունների



Ջորաց քարեր (Սիսիան)

մասին: Եվ, այնուամենայնիվ, երկրամասի հին շրջանի պատմության ուսումնասիրման գլխավոր սկզբնաղբյուրները հայ պատմիչների երկերն են: Համարյա բոլոր հայ պատմիչները, սկսած առաջիններից, քիչ թե շատ, լավ թե վատ, խոսում են Սյունիքի եւ Սյունյաց իշխանական տան մասին: Բայց նրանց մեջ առանձնանում են երկուսը՝ քերթողահայր Մովսես Խորենացին՝ «Պատմութիւն Հայոց» եւ Ստեփանոս Օրբելյանը՝ «Պատմութիւն տանն Սիսական» գրքերով: 5-րդ դարում ապրած Խորենացուց հետո հայ պատմիչները սակավ են անդրադառնում Սյունիքին, բացառությամբ Հովհան Մամիկոնյանի, որը հատուկ նշում է Սյունյաց իշխանի մասին: Հայ պատմագրության մեջ Սյունիքի պատմության ուսումնասիրման գլխավոր սկզբնաղբյուրը 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի «Պատմութիւն Նախնգին Սիսական» կամ «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունն է: Այս գիրքը սյունեցիների այսօրվա սերունդներին իրենց նախնիների հետ կապող մի ոսկե օղակ է: Ստ. Օրբելյանը քաջածանոթ էր իրենից առաջ ապրած հայ պատմիչների գործերին: Նա օգտվել է հայոց թագավորների, կաթողիկոսների, Սյունյաց նախարարների ու մետրոպոլիտների դիվաններից, օգտագործել կալվածային վավերագրեր, վիմագիր արձանագրություններ, հայտնի եւ անհայտ հեղինակների՝ մինչեւ մեր օրերը չհասած գործեր, նաեւ՝ օտարալեզու երկեր: Այդ ամենն, անշուշտ, խիստ բարձրացրել են Ստ. Օրբելյանի երկի գիտական արժեքը:

Սյունիքի պատմության առանձին ժամանակահատվածների, այնտեղ կատարված իրադարձությունների մասին անդրադարձել են նաեւ հետագա դարերի հայ պատմիչները, ինչպես Առ. Դավրիժեցին, Ղ. Սեբաստացին, Աբ. Կրետացին եւ այլոք: Նոր ժամանակներում Սյունիքի պատմության վերաբերյալ ամենաարժեքավոր աշխատությունը Ղ. Ալիշանի «Սիսական» է: Ղ. Ալիշանը Սյունյաց իշխանական տան եւ հոգեւոր թեմի գործունեության անդրադառնում է պատմության խորքերից սկսած, միաժամանակ, հանգամանորեն կանգ առնում առանձին տեղանուների ստուգաբանության վրա: Սյունիքի պատմության առանձին խնդիրների անդրադարձել է հայտնի պատմաբան Նիկողայոս Ադոնցը: Սյունիքում հայտնաբերված համարյա բոլոր հայատառ վիմագիր արձանագրությունները ուսումնասիրել եւ հրապարակել է Ս. Բարխուդարյանը: Սյունիքի պատմության ուսումնասիրման հարցերով հայ գիտնականները զբաղվում են նաեւ այսօր: Մերօրյա գիտնականներին Սյունիքի պատմության ուսումնասիրմամբ աչքի է ընկնում դոկտոր-պրոֆեսոր Գրիգոր Գրիգորյանը: Նա իր կյանքը կապել է



Սյունիքի հետ իրականացնելով Վահանյանի պեղումներն ու վերականգնողական աշխատանքները: Միջնադարյան Սյունիքի վերաբերյալ նա հայերեն եւ ռուսերեն լեզուներով հրատարակել է մի շարք արժեքավոր մենագրություններ:

Սյունիքի հետ իրականացնելով Վահանյանի պեղումներն ու վերականգնողական աշխատանքները: Միջնադարյան Սյունիքի վերաբերյալ նա հայերեն եւ ռուսերեն լեզուներով հրատարակել է մի շարք արժեքավոր մենագրություններ:

Վերջին շրջանում լույս տեսած ուսումնասիրություններից հիշատակության արժանի է նաեւ Ս. Ումառյանի «Սյունիքը դիցարան» գիրքը:

## Ա. Սյունյաց աշխարհ

1. «Սյունիք» եզրույթի ստուգաբանությունը: 2. Նահանգի աշխարհագրական դիրքը: 3. Բնաշխարհը: 4. Վարչական բաժանումը:

«Սյունիք»-«Սիսական» բառերը էթնիկական ծագմամբ են բացատրել Ղը Լազարոյը, Յ. Յյուբշմանը, Ն. Ադոնցը, Ն. Մառը, Գր. Ղափանցյանը, Ար. Ղարիբյանը եւ ուրիշներ: Ըստ ուսումնասիրողների, «Սիսական» եզրույթը կազմված է ՍԻՍ-SIS բառահիմքից եւ ԱԿԱՆ հավաքական իմաստ արտահայտող պարսկերեն ծեսոյթից: Վերջին ուսումնասիրողներից Ս. Ումաշյանը ՍԻՍ-ը քիչեցնում է ԾԵՍ կամ ԶՈՅ հայասերեն բառից: Նա գրում է. «... Սիւնի (Սիսիունի) Սիսիան, Սիսական եւ սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ գոհարան:

Մեծանուն հայագետ Ղ. Ալիշանը ՍԻՆԻ-ն մակաբերում է ՍԵՆՈՒՆԻ բառից՝ այն կապելով Սեւորդյաց աշխարհի հետ (Յյուսիսային Յայաստան): Ժողովրդական պարզ ստուգաբանությամբ՝ ՍԻՆԻԲ անունը ծագել է «սին» բառից՝ հոգնակիակերտ Բ ածանցով, այսինքն՝ նշանակում է սյուներ: Բայց, այս դեպքում պետք է լիներ ՍԻՆԲ եւ ոչ ՍԻՆԻԲ: Ուրեմն՝ բառի նախասկզբնական ձեւը եղել է *սինի*, ինչպես մեզ ավանդվել են ՏԵՂԻ, ՊԱՏԱՍԽԱՆԻ, ԱՐԾՈՒԻ բառերը:

Սեպագիր (ուրարտական) արձանագրություններում հանդիպում է «Սուինա» ձեւը՝ արեւելող երկիր նշանակությամբ, որից եւ ծագում է «Սեւանը»՝ արեւային լիճ, ծով:

Մենք հակված չենք կարծելու, թե «Սյունիքը» առաջացել է Սյունի կոչվող առանձին ցեղախմբի անունից: Ընդունելի մոտեցում չէ, երբ ամեն մի դեռեա անբացատրելի բառ մեկնաբանում են «էթնիկական ծագմամբ»: Պետք է ուսումնասիրել բարբառների, ենթաբարբառների, տեղական խոսվածքների մթամած շերտերը: Օրինակ՝ մինչեւ վերջերս Կապանի շրջանի Աջաղու գյուղանունը կարծում էին առաջացել է թուրքերենից, սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դա հայերեն բառ է՝ Աջաղու, որ նշանակել է ԲԱՐԻ, ՄԵՂՍ ԱԶԲ եւ այլն:

Ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցի», Սյունիքը Մեծ Յայքի 9-րդ նահանգն էր եւ զբաղեցնում էր Սեւանա լճից դեպի հարավ-

արեւելք ընկած տարածքը, մինչեւ Արաքս գետը: Այն սահմանակից էր Այրարատ, Վասպուրական, Արցախ, Գուգարք եւ Ուտիք նահանգներին: Ակադեմիկոս Ս. Երեմյանի հաշվարկների համաձայն, Սյունիքն այդ ժամանակ զբաղեցնում էր ավելի քան 15000 կմ<sup>2</sup> տարածք: Հետագայում այդ տարածքը փոքրանում է: Միջնադարում Սյունիքն ուներ 1008 (ըստ այլ աղբյուրների՝ 1400) գյուղ, 43 խոշոր բերդ եւ 48 վանք: Արեւելքում երկրամասի սահմանը հասնում էր Աղավնո գետը՝ սկսած ակունքից մինչեւ Արաքսին խառնվելը: Արաքս գետը հանդիսանում էր Սյունիքի հարավային սահմանը: Յյուսիս-արեւմուտքում նա Այրարատից բաժանվում էր Գեղամա լեռներով, իսկ հարավ-արեւմտյան սահմանն անցնում էր Վայոց ձոր լեռնաշղթայի հարավային ծայրամասերով:

Սյունիքը խիստ լեռնային երկիր է եւ աշխարհագրական իմաստով գերիշխող դիրք ունի հայոց պետականության օրրան Արարատյան դաշտի նկատմամբ: Օտար նվաճողները հարավ-արեւելքից Արարատյան դաշտ ներթափանցելու համար, նախ, պետք է հաղթահարեին Սյունյաց դժվարանց լեռները: Թշնամիները երբեք Սյունիքի վրայով Արարատյան դաշտ չեն ներխուժել:

Սյունյաց լեռները կազմում են Փոքր Կովկաս լեռնաշղթայի հարավային վերջնամասը: Այստեղ տարբեր ուղղություններով ճյուղավորվում են Վայոց ձորի, Վարդենիսի, Բաղքի կամ Բարկուշատի, Մեղրու լեռնաշղթաները: Ղրանք լեռնաշխարհը վեր են ածում առանձին փակ շրջանների, որոնք միմյանց կապվում են լեռնանցքներով: Հայտնի է Որոտանի լեռնանցքը (2344մ), որով Զանգեզուրը կապվում է Վայքի ու Արարատյան դաշտի հետ: Այստեղով է անցնում Երեւան-Սյունիք միակ ավտոմայրուղին, որը սպասարկում է նաեւ Արցախին: Լեռնանցքը ձմռան առանձին բուք օրերի ժամանակ դառնում է խիստ դժվարանց, երբեմն փակվում է: Սյուս հայտնի լեռնանցքը Տաշտունին է (2400մ), որով Կապանը հաղորդակցվում է Մեղրու հետ, իսկ Յայաստանը՝ Իրանի: Միսիանի լեռնանցքով (2347մ) Սյունիքը կապվում է Նախիջեւանի հետ: Լեռնաշխարհի ամենաբարձր կետը Կապուտջուղի գագաթն է (3906 մ): Հայտնի լեռնագագաթներից են Խուստուկի (3202մ)՝ Կապանում, Մեծ Իշխանասարը (3548մ)՝ Գորիսում, Արամազդը կամ Գազբոյլը (3392մ)՝ Միսիանում, Բաղաքարը (3256մ)՝ Մեղրիում: Ամենացածր կետը գտնվում է Մեղրու գետահովտում (390մ): Կլիման բազմազան է՝ պարզ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ: Այն սկսվում է մերձարեւադարձային գոտուց (Մեղրու գետահովտ) եւ

ձգվում մինչև բարձր լեռնային ցուրտ գոտիները (Որոտան գետի վերին հոսանքի շրջանները): Առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է  $+42^{\circ}\text{C}$ , իսկ նվազագույնը՝  $-43^{\circ}\text{C}$ : Լեռնային շրջաններում ձմեռը տևում է 5-6 ամիս, տեղում է առատ ձյուն, փչում են քամիներ, եւ երբեմն անանցանելի են դառնում լեռնային բնակավայրեր տանող ճանապարհները: Լեռնաշխարհի բնակչության պայմանները առավել նպաստավոր են անասնապահության համար: Ալպյան բարձրադիր խոտառատ մարգագետինները ամառվա ընթացքում մշտապես իրենց են ձգել քոչվոր անասնապահներին: Երկրագործության եւ, մասնավորապես, հացահատիկի արտադրության համար նպաստավոր են Սիսիանի եւ Գորիսի սարահարթերը, իսկ այգեգործության համար՝ Մեղրին, ինչպես նաեւ՝ երկրամասի տարբեր շրջաններում փոփած բազմաթիվ գետահովիտները: Սյունյաց լեռների մեծ մասը լերկ, քարոտ ու չոր է, անտառներ կան Կապանում, Գորիսում եւ Մեղրիում: Անտառները կազմում են Սյունիքի տարածքի շուրջ 20 %-ը: Կապանի շրջանում դրանք զբաղեցնում են 56000 հա, իսկ Գորիսում՝ 9000 հա: Կապանի Ներքին Հանդ եւ Ծավ գյուղերում է գտնվում Հայաստանում միակ սոսիների հազվագյուտ պուրակ-արգելանոցը: Անտառների հիմնական ծառատեսակներն են կաղնին եւ բոխին: Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից հանդիպում են արջ, գայլ, աղվես, լուսան, վարազ, փոքրուղ, կզաքիս, նապաստակ, ինչպես նաեւ եղնիկ (կիտար), քարայծ եւ վայրի ոչխար (մուֆլոն): Թռչնաշխարհի մեջ աչքի է ընկնում լեռնային հպարտ արծիվը, որը եղել է Սյունյաց իշխանական տան խորհրդանիշը:

Լեռնաշխարհը հարուստ է օգտակար հանածոներով: Հնագույն ժամանակներից ի վեր հայտնի են եղել մի շարք «բովեր»՝ պղնձի, այլ գունավոր մետաղների ելքեր, որոնք ենթարկվել են շահագործման: Սո.Օրբելյանը ակնարկում է նաեւ նավթի մասին:

Սյունիքն այսօր Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերության գլխավոր կենտրոնն է՝ մոլիբդենի հանքահայտ հանքավայրերով (Քաջարան, Ագարակ): Կան նաեւ պղնձի (Կապան, Դաստակերտ), երկաթի (Սվարանց), քարածխի (Մեղրի) հանքավայրեր: Վերջին ժամանակներս միջոցներ են ձեռնարկվում արդյունահանելու Մեղրու քարածուխը: Լեռնաշխարհը հարուստ է շինանյութային հանքավայրերով: Կան նաեւ հանքային ջրեր: Համաշխարհային հռչակ են վայելում «Ջերմուկը», «Սեւանը»: Լեռնաշխարհն առատ է, այսպես կոչված «թթու ջրերով»՝ Տաթևի ճանապարհին, Սատանի կամուրջի մոտ, Սիսիանում, Քաջարանում եւ այլուր:

Երկրամասն ունի համեմատաբար ջրառատ գետեր՝ Որոտան, Ողջի, Նախճավան, Երնջակ, Գավառագետ, Արգիճի, Արփա:

Սյունիքի խոշոր գետերն են Որոտանը եւ Ողջին: Ամենահայտնին եւ ջրառատը Որոտանն է, որի երկարությունը 178 կմ է: Այն կտրում անցնում է լեռնաշխարհի միջնամասով: Որոտանը, միախառնվելով Աղավնո գետի հետ, թափվում է Արաքսի մեջ: Գետն ունի հիդրոէներգետիկ մեծ պաշարներ. ջրի անկումը 1 կմ վրա կազմում է 16 մ: Կառուցվել են Ծամբի, Սպանդարյանի եւ Տաթևի հէկ-երը, որոնց հզորությունն է 404 մեգավատ, այնքան, ինչքան հայկական ատոմակայանի մեկ էներգաբլոկը: Որոտանը ձկնառատ է, նրա վերին հոսանքներում լինում է նաեւ կարմրախայտ: Այստեղ աշխատանքներ են տարվում թունելի միջով գետի ջուրը հասցնելու Արփա-Սեւան ջրատարին: Ողջիի երկարությունը 82 կմ է: Գետի վրա՝ Կապան քաղաքի տարածքում, կառուցվել են երկու հիդրոէլեկտրակայաններ: 50կմ վրա Ողջին ունի 2000 մ անկում: Գետը երբեմն վարարում է: Տարեցները հիշում են 1956 թ. օգոստոսի 20-ի ջրհեղեղը, որը մեծ վնասներ պատճառեց Կապանին: Այդ օրը տեղումները կազմել են 80մմ: Սյունյաց լեռնաշխարհի ամենախոշոր լիճը Սեւանն է, իսկ Իշխանասարի փեշերին գտնվող Սեւ լճում ժամանակին արհեստականորեն աճեցվել են իշխան եւ կողակ ձկնատեսակներ: Հիդրոէլեկտրակայաններ աշխատեցնելու նպատակով կառուցվել են խոշոր ջրամբարներ՝ Ծամբի, Տոլորսի եւ Սպանդարյանի: Վերջինս զբաղեցնում է 1000 հա տարածություն եւ ունի 258 մլն խ/մ տարողություն: Զրամբարներում զարգացել է ձկնաբուծությունը, իսկ ջրերը հնարավոր է դարձել օգտագործել պապակ հողերի ոռոգման համար: Սյունիքը հարուստ է քաղցրահամ ջրերի աղբյուրներով: Տասնյակ կիլոմետրեր ձգվող խողովակաշարերով այդ ջրերը հասցվել են քաղաքներ ու բնակավայրեր:

Սյունիքի ներքին եւ արտաքին սահմանները, ժամանակի ընթացքում, բնականաբար, ենթարկվել են փոփոխությունների: Նահանգի սահմանների մասին հայ պատմիչներից առաջինը մեզ ընդհանրական տեղեկություններ է հաղորդում Մովսես Խորենացին, ասելով, որ նահապետ Գեղամն իր Սիսակ որդուն ժառանգեց Սեւանա լճից մինչև Արաքս գետը ձգվող տարածքը: Երկրամասի սահմանների, նրա գավառների մասին հստակ տեղեկություններ է հաղորդում 7-րդ դարի գիտնական Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյցում»: Նա նշում է Սյունիքի 12 գավառները՝ հետեւյալ հերթականությամբ՝ Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղարքունիք՝

համանուն ծովով, Սոթք, Աղահեճք, Ծղուկ, Հաքանդ, Բաղք, Ձորք, Արեւիք, Կոպսական: Հետագոտողները ճշգրտել են այդ գավառների տեղադրությունը, սահմաններն ու տարածքները, բնակավայրերի թիվը եւ այլն: Սյունիքի գավառների գյուղերի եւ դրանց անունների, գյուղերի կողմից Տաթեւի վանքին վճարած հարկաչափի մասին մենք տեղեկանում ենք Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» գրքի վերջում գետեղված հարկացուցակից: Այն արժեքավոր պատմական փաստաթուղթ է, որից մենք իմանում ենք ոչ միայն տարբեր գավառների գյուղերի քանակի, այլեւ գյուղանունների, իսկ հարկի չափից՝ նաեւ դրանց խոշոր կամ փոքր բնակավայր լինելու մասին:

Ներկայացնում ենք Մեծ Հայքի Սյունիք նահանգի գավառները «Աշխարհացոյցի» հերթականությամբ.

#### 1. ԵՐՆՋԱԿ

Այս գավառը տարածվում էր Երնջակ (այժմ՝ Նախիջեւանի ԻՀ-ում) գետի ավազանում: Սահմանակից էր Գողթն, Ծղուկ, Ճահուկ գավառներին եւ Նախիջեւանին: Գավառի հարավային սահմանը հասնում էր մինչեւ Արաքս գետը: Հայտնի էր Երնջակ բերդը, որը եղել է Սյունյաց իշխանների գլխավոր ամրոցներից մեկը: Տեղադրությամբ համապատասխանում է Նախիջեւանի ԻՀ Ջուլֆայի շրջանին: Ուներ 600 կմ² տարածք, 30 բնակավայր եւ Տաթեւի վանքին վճարում էր 360 դահեկան տասանորդ հարկ:

#### 2. ՃԱՀՈՒԿ

Գավառն ընկած էր Ճահուկ (այժմ Ջահրի) եւ Շահապոնք (այժմ Շահբուզ) գետերի հովիտներում: Տարածքը կազմում էր 1130 կմ² եւ տեղադրությամբ համապատասխանում է Նախիջեւանի ԻՀ Շահբուզի շրջանին: Սահմանակից էր Վայոց ձորին, Ծղուկին, Երնջակին, Նախիջեւանին եւ Այրարատին: Հայտնի էր տակավին 6-րդ դարում կառուցված Շահապոնիք բերդը, որի ավերակները գտնվում են Նախիջեւանի ԻՀ Շահբուզ բնակավայրի մոտ: Գավառն ուներ 48 հարկատու գյուղ եւ Տաթեւի վանքին վճարում էր 543 դահեկան հարկ:

#### 3. ԿԱՅՈՑ ՁՈՐ

Սյունիքի առավել նշանավոր ու ընդարձակ գավառներից էր: Ըստ պատմիչներ Մովսես Կաղանկատվացու եւ Ստեփանոս Օրբելյանի,

Վայոց ձոր անունն առաջացել է 735 թ. հուլիսի 21-ին այս տարածքում տեղի ունեցած կործանարար երկրաշարժից, երբ Մոզ քաղաքն իր 10000 բնակիչներով անցավ գետնի տակ: Այժմ էլ Մոզի ավերակները դիտվում են Մալիշկա գյուղից մինչեւ Վայքի շրջկենտրոն Ճգվող մայրուղու երկու կողմերին: Այս վարկածը գիտական հենք չունի, քանզի Վայոց ձոր անունը հիշատակվում է դեռեւս 5-րդ դարից: Գրավում էր 2350 կմ² տարածք եւ ընդգրկում Արփա գետի վերին ու միջին հոսանքները: Սյունիքի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում խաղացել է խոշոր դեր: Վայոց ձորի Եղեգիս ավանը 9-13-րդ դարերում եղել է Սյունյաց իշխանների նստավայր-մայրաքաղաքը: Վանական համալիրներից հայտնի են Գնդեվանքը, Գլաձորը, Թանահատը եւ հատկապես Ամաղուի Նորավանքը, ուր թաղված է Ստ. Օրբելյանը: Գավառն ուներ 92 բնակավայր (ըստ Ղեւոնդ Ալիշանի՝ 90), Տաթեւի վանքին վճարում էր 837 դահեկան հարկ:

#### 4. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ընդգրկում էր Գեղամա կամ Սեւանա լճի ավազանի գերակշիռ մասը, ուներ 1735 կմ² տարածք: Այդ տարածքի մեջ մտնում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի (Կամո), Մարտունու շրջանները եւ Սեւանի շրջանի մի մասը: Սահմանակից էր Այրարատին, Գուգարքին, Ուտիքին, Սոթքին: Հայտնի էր Սեւանա կղզին՝ վանքով եւ ամրոցով: Միջնադարում գավառին տիրում են նախ Բագրատունիները, ապա՝ Ջաջարյան, իսկ հետո՝ Ղուփյան իշխանները: Հայտնի են Հավուց թառ եւ Մաքենյաց վանքերը: Ուներ 47 գյուղ եւ Տաթեւին վճարում էր 509 դահեկան հարկ:

#### 5. ՍՈԹՔ

Սյունիքի ծայրամասային գավառներից էր, համապատասխանում էր ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանին: Գավառանունից է ծագում Ջողը, որը հայտնի է ոսկու հանքերով: Կլիման այստեղ խիստ է, եւ ըստ Օրբելյանի, գավառանունն առաջացել է դաժան ձմեռային ցրտերի պատճառով՝ «Ի դառնաշունչ բքմանե գաւառս կոչեցաւ Սոթք»: Ուներ 55 բնակավայր եւ Տաթեւին վճարում էր 594 դահեկան հարկ:

#### 6. ԱՂԱՅԵՃՔ

Ջբաղեցնում էր Աղամո գետի վերին հոսանքին հարակից շրջան-



ները: Տարածքը, որ կազմում էր 1402 կմ<sup>2</sup>, համապատասխանում էր Ադրբեջանի հանրապետության Նախկին Լաչինի ներկայումս ԼՂՀ Քաջաթաղի շրջանին: Տարբերակեցական հարկացուցակում նշված է 43 հարկատու գյուղ: Այստեղ է գտնվում նշանավոր Ծիծեռնավանքը: Հայտնի է Խոժոռաբերդ ամրոցը: Սահմանակից էր Ծղուկ, Հաբանդ եւ Արցախի Ծար գավառներին: Տարբերական վանքին վճարում էր 389 դահեկան հարկ:

#### 7. ԾՂՈՒԿ

Սյունիքի կենտրոնական մասում գտնվող ամենահայտնի գավառներից է: Գրավել է 1950 կմ<sup>2</sup> տարածք: Շնորհիվ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի շրջանը եւ Գորիսի շրջանի արեւմտյան մասը: Օրբելյանի գավառացուցակում հիշատակված է իբրեւ առաջին իշխանանիստ եւ եպիսկոպոսանիստ կենտրոն: 4-9-րդ դարերում Ծղուկի Շաղատ քաղաքավանք եղել է Սյունիքի մայրաքաղաքը եւ հոգեւոր գահանիստը, ուր գործել է Նաեւ վարդապետարան: Պատմական նշանավոր վայրերն են Որոտնավանքը եւ բերդը, Սյունի վանքը եւ բերդը, Տաթելը: Ունեցել է 75 բնակավայր ու վճարել 643 դահեկան հարկ:

#### 8. ՀԱԲԱՆԴ

Գտնվում էր Սյունիքի կենտրոնում ու սահմանակից էր Ծղուկ, Աղահեճք, Բաղք գավառներին եւ Արցախին: Հարավային սահմանը հասնում էր մինչեւ Արաքս գետը: Զբաղեցնում էր 1325 կմ<sup>2</sup> տարածք, որի մի մասը համընկնում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի շրջանին: Օրբելյանի հավաստմամբ, Սիսակի սերնդից Չագ Նահապետը այստեղ հիմնել է նշանավոր Չագեծորի կամ Հաբանդա բերդը, որը եղել է Վարարակն գետի վերին հոսանքում: Հաբանդն ուներ 59 բնակավայր, վճարել է 618 դահեկան հարկ: Հայտնի բնակավայրերից են Հալիծորը, Ծինուհայրը, Խնծորեսկը, Գորայք-Գորիսը: 14-15-րդ դարերում Հաբանդ գավառանունը փոխարինվում է Չագեծորով, որն էլ հնչյունափոխվելով դառնում է Չանգեզուր:

#### 9. ԲԱՂԷ

Զբաղեցնել է 925 կմ<sup>2</sup> տարածք: Սահմանակից էր Կովսականին, Ծղուկին, Հաբանդին, Չորքին: Եկեղեցական հարկացուցակում գավառը բաժանվում է երկու մասի, նշվում է Նաեւ մյուս Բաղքը կամ

Քաշունիքը: Տարածքն ընդգրկում է ՀՀ Սյունիքի մարզի Կապանի շրջանը: Կապանի թագավորությունը կոչվել է Նաեւ Բաղաթ թագավորություն: Ունեցել է հայտնի բերդեր՝ Անդոկա, Պահու եւ այլն: Նշանավոր հոգեւոր կենտրոնն էր Բղենո Նորավանքը՝ կառուցված 936 թ.: Ուներ 41 բնակավայր եւ վճարում էր 380 դահեկան հարկ: Մյուս Բաղքը կամ Քաշունիքն ուներ 52 բնակավայր, վճարում էր 444 դահեկան հարկ:

#### 10. ՉՈՐԷ

Սյունիքի ամենափոքր գավառն էր՝ 525 կմ<sup>2</sup> տարածքով: Զբաղեցնում էր Ողջի գետի վերին հոսանքը՝ Գեղվա ձորը Ներառյալ: 11-րդ դարից սկսեց կոչվել Կապան: Սյունիքի միջնադարյան թագավորության ոստանն էր: Այստեղ էր գտնվում մայրաքաղաք Կապանը, որն ապավինել է նշանավոր Բաղաթերդ ամրոցին: Հոգեւոր կենտրոնն էր Վահանավանքը, որը դարձել է Սյունյաց թագավորների եւ իշխանների հավերժական հանգստավայրը: Գավառն ուներ հարկատու 16 բնակավայր եւ վճարում էր 148 դահեկան հարկ: Շատ ուսումնասիրողների, այստեղ է գտնվել Շիրոտ ամրոցը:

#### 11. ԱՐԵՎԻԷ

Արեւիքը Սյունիքի ամենահարավային գավառն էր՝ Արաքս գետի ձախ ափին: Ուներ 625 կմ<sup>2</sup> տարածք եւ ընդգրկում էր Մեղրի գետի ավազանը: Նախկինում մտել է Գողթնի մեջ: Հետագայում կոչվել է Տաշտուն եւ Մեղրի: Հայտնի են Կաքավաբերդը եւ Մեղրու բերդը: Գավառն ուներ 24 բնակավայր եւ վճարում էր 262 դահեկան հարկ: Այժմյան Հայաստանի հարավային դուռն է դեպի Իրան:

#### 12. ԿՈՎՍԱԿԱՆ

Նույնպես ոչ մեծ գավառ էր՝ 625 կմ<sup>2</sup> տարածքով: Համապատասխանում է Ադրբեջանի հանրապետության Նախկին Չանգեզանի շրջանին եւ որոշ չափով՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի շրջանին (Շավ գետի շրջակայքը): Գլխավոր բերդն էր Գրիամը՝ Ողջի գետի ձախ կողմում: Ուներ 52 բնակավայր, Տարբերական վանքին վճարում էր 439 դահեկան հարկ: Անհիմն է այն վարկածը, ըստ որի, Կովսական գավառի անունն առաջացել է կովս ցեղի անունից: Իրականում Կովսական բառ-եզրույթը ծագում է կով+ս+ական ածանցավոր բառից եւ նշանակել է կովերի արոտավայր: Կով արմատը կա Նաեւ Կովկաս բառի մեջ:

Ստ. Օրբելյանը «Պատմութիւն տանն Սիսական» գրքի վերջում գետեղված հարկացուցակի վերնագրում նշում է Սյունիքի 12 գավառների մասին, բայց բուն հարկացուցակում ներկայացվում են 14 գավառները: «Աշխարհացոյցի» համեմատ, այստեղ ավելացել են Այլախ (26 գյուղ) եւ մյուս Բաղք կամ Զաշունիք (52 գյուղ) գավառները: Այլախը գատվում է Ծղուկից: Խոսելով Սյունիքի գավառաւանդների մասին, պատմիչը նշում է, որ որոշ անուններ փոփոխություններ են կրել: Այսպես. Աղահեճքը դարձել է Զաշաթաղ եւ Խոժոռաբերդ, Բաղքը՝ Աճեն կամ Աճանան, Կովսականը՝ Գրիս, Արեւիքը՝ Տաշտուն եւ Մեղրի, Չորքը՝ Կապան, Ճահուկը՝ Ճահապոնք: Անանիա Շիրակացուց (7-րդ դար) մինչեւ Ստ. Օրբելյանի ապրած ժամանակը (13-րդ դար), 600 տարիների ընթացքում նման փոփոխությունները զարմանալի չեն: Օրբելյանից հետո երկու դարերի ընթացքում գործածությունից դուրս են մնում եւ ուրիշ գավառաւանդներ, ինչպես Զաքանդը եւ Ծղուկը, որոնց փոխարեն հայտնվում են Զագեճորն ու Սիսիանը: Զագեճորը 18-րդ դարի վերջերից, ինչպես նշեցինք, հնչյունափոխվելով՝ դառնում է Զանգեզուր, իսկ բուն Զագեճոր-Զանգեզուրը 19-րդ դարի երկրորդ կեսից սկսում է կոչվել Գորիս-Կյորես: Երկար ժամանակ՝ 18-րդ դարի վերջից ընդհուպ մինչեւ 20-րդ դարի ավարտը, գործածությունից դուրս է մնում Սյունիք երկրանունը, որին փոխարինում է Զանգեզուրը: Միայն 33 վարչատարածքային մարզային նոր բաժանմամբ՝ Զանգեզուրի փոխարեն, վերստին օրինականացվեց Սյունիք հնագույն պատմական երկրանունը:

Ինչ վերաբերում է Սյունիքի աշխարհիկ եւ հոգեւոր կենտրոններին, ապա դրանք ժամանակների հետ փոփոխվել են: Այդ կենտրոնների մասին պատմական սկզբնաղբյուրները հստակ տեղեկություններ են հաղորդում դեռեւս 4-րդ դարից: Սյունյաց Անդոկ իշխանը Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրանի վրա վրեժխնդիր արշավանք ձեռնարկելուց հետո, ամրացավ Բաղաբերդում, իսկ գանձերը թաքցրեց գյուղաքաղաք Շաղատի եկեղեցում:

4-9-րդ դարերում Սյունիքի աշխարհիկ եւ հոգեւոր կենտրոնը եղել է Սիսիանի Շաղատ բնակավայրը: Ավելի վաղ այդպիսի կենտրոն է եղել Զագ. Նահապետի հիմնած Զագեճորը: 839 թ. Սյունիքի հոգեւոր կենտրոնը տեղափոխվում է Տաթև: Սյունյաց թագավորության ժամանակ (970-1170 թթ.) մայրաքաղաք է հռչակվում Կապանը, իսկ թագավորական տոհմական դամբարան է դառնում Վահանավանքը: Օրբելյան իշխանների օրոք, սկսած 13-րդ դարից, Նահանգի աշխարհիկ եւ հոգեւոր կենտրոնը տեղափոխվում է Վայոց ձոր:

Իշխանանիստ է դառնում Եղեգիս ավանը, իսկ հոգեւոր կենտրոնի դերը Տաթևի հետ հավասարապես կիսում է Ամաղուի Նորավանքը: 3-ետագայում Տաթևը վերստին ստանձնում է հոգեւոր կենտրոնի մենաշնորհը:

10-րդ դարում Սյունիքում կատարվում են տարածքային եւ վարչաքաղաքական լուրջ փոփոխություններ: Գեղամա կամ Սեւանա լճի ողջ ավազանն անցնում է Բագրատունիներին, Սյունիքից դուրս են մնում Գեղարքունիք եւ Սոթք գավառները: Նույն դարում արաբ էմիր Յուսուֆը Սյունիքից անջատում եւ Նախիջեւանին է միացնում Երնջակը: 10-րդ դարում վարչականորեն Սյունիքը բաժանված էր չորս իշխանների միջեւ, որոնց մեջ գահերեց էր Վայոց ձորի եւ Ճահուկի տեր Սմբատը:

Սյունյաց կենտրոնացված իշխանության անկումից հետո, 15-16-րդ դարերում, այլեւս ընդհանուր աշխարհիկ կենտրոն չի եղել: Այդ ժամանակ Սյունիքում կային 4 նշանավոր մելիքություններ, որոնց կենտրոններն էին Բեխ (Կապան), Անգեղակոթ (Սիսիան), Տաթև ու Խանաձախ (Գորիս) բնակավայրերը: Դավիթ-Բեկի ազատագրական պայքարի ընթացքում (1722-1730 թթ.) Սյունյաց իշխանության կենտրոններ են դառնում Նախ Շինուհայրը՝ Գորիսում, ապա Զալիճորը՝ Կապանում, իսկ Մխիթար Սպարապետի օրոք Խնձորեսկը՝ կրկին Գորիսում: Ռուսական տիրապետության ժամանակ, երբ 19-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվում է Զանգեզուր գավառը, վարչական կենտրոն է դառնում նոր հիմնված Գորիս քաղաքը: Գորիսը եղել է Նաեւ Գ. Նժդեհի հռչակած անկախ Լեռնահայաստանի մայրաքաղաքը: Խորհրդային իշխանության առաջին տարիներին (1920-1930 թթ.) եւս Գորիսը Զանգեզուր գավառի կենտրոնն էր: 33 վարչատարածքային նոր բաժանմամբ, 11 մարզերի թվում ստեղծվել է Սյունիքի մարզը՝ Կապան մարզ-կենտրոնով: Մարզի մեջ մտնում են Գորիսի, Սիսիանի, Կապանի եւ Մեղրու Նախկին շրջանները: Պատմական Սյունիքից անջատվել եւ առանձին մարզեր են դարձել Գեղարքունիքը եւ Վայոց ձորը: 33 Սյունիքի մարզն ընդգրկում է 4505 կմ² տարածք, ուր ներկայումս ապրում է 162000 մարդ:

## Բ. Սյունեցիների կենցաղը, ուտեստը, տարագը, էթնիկական պատկերը

Երկրամասի լեռնային ռելիեֆը, բնակլիմայական պայմանները խոր հետք են թողել սյունեցիների հոգեբանության վրա: Բնությունն այստեղ շոայլ չի գտնվել, եւ ապրուստի համար մարդուց պահանջվում է տքնաջան աշխատանք: Լեռնային շրջաններում ձմեռը երկարում է մինչեւ 5-6 ամիս: Հողագործության արդյունքները կախված են լինում բնության քմահաճույքներից: Գյուղերը կամ, ինչպես բնակիչներն են կոչում, շեները, հաճախ կպած են եղել լեռնակողերին: Որոշ գյուղեր կարելի է մուտք գործել միայն կածաններով: Այդ պայմաններում հարմար փոխադրամիջոցը դառնում է գրաստը կամ ջորին: Տների մեծ մասը եղել է քարանձավային: Հանդիպում են մի քանի հարկանի քարանձավային տներ: Դրանք ունեցել են նաեւ պաշտպանական նշանակություն: Քարանձավները երբեմն փորվել են ժայռի բարձրադիր մասում, ուր կարելի էր բարձրանալ միայն պարանե սանդուղքներով: Քարանձավային մի ամբողջ քաղաք է պահպանվել հին հնձորեսկում: Սյունեցի են տղամարդիկ, եւ՝ կանայք ունեցել են իրենց յուրահատուկ տարագը: Գորիսում եւ նրա մի քանի գյուղերում դեռես ապրում են ազգային գունագեղ տարագ կրող տարեց կանայք՝ վերջին մոհիկանները: Ցավոք, որոշ ժամանակ անց այդ զգեստները կարելի է հանդիպել միայն թանգարաններում: Կանացի ազգային տարագը կոչվում է կապա կամ դաբա (տղամարդկանց տարագը ավելի վաղ է անհետացել): Կապան՝ երկարափեշ կտրվածքներով, գեղեցիկ նախշազարդ, արծաթե գոտիով, գլխակալ-ճակտնոցով գրավիչ զգեստ է: Եղել է եւ՝ տոնական, եւ՝ առօրյա կապա:

Սյունեցիները բնության հետ կապված մարդիկ են: Գարունը բացվելուն պես նրանք իրենց սննդաբաժինը հարստացնում են զանազան բուսատեսակներով՝ «կլորած պենջար» (թանջար), խազազ, ջրկոտեմ, դաղձ, մոխրեղ, ծոպաշար, տոպ, քեղ...: Եփած վիճակում օգտագործում են խնջլոզը, ծնեբեկը, թալը, փիփերթը, դանդուռը, գառան դմակը, պոլին (Շինուհայր), գռնթուկը, դարավաշը (լոշտակ), կարմանծուկը, կծողկը, ավելուկի գոխը (միջուկը), բոխին: Շատ հարգի է պենջարով կամ շիրիջով թխված հացը: Որոշ բուսատեսակներ տնտեսու-

հիները թթու են դնում ձմեռվա համար՝ իծի (այծի) կոթ, բոխի, շուշան: Հայտնի թթուներից է Գորիսի ճխթթուն, որը պատրաստում են կարմիր բազուկից: Ձմեռվա համար մարդիկ դաշտերից հավաքում եւ չորացնում են վիլուկ կամ մզուկ (ավելուկ), խոռնը (ուրց), չաման (տմին), ձիթօրան, դանթափա, գռա եւ այլն: Չորացնում եւ չիր են դարձնում թուրթը, հոնը, սալորը, տանձը, խնձորը, դեղձը, ծիրանը, իսկ խաղողը՝ չամիչ: Դրանք օգտագործում են ինչպես առանձին ճաշատեսակներում, այնպես էլ թեյի մեջ: Մուրաբա կամ հյութ պատրաստելու, չորացնելու կամ պարզապես ուտելու համար ամենուր տարածված թփերից հավաքում են մոշ, մասուր, ալոճ, սեզնը, զկեռ...: Սյունեցիների յուրահատուկ ճաշատեսակներից են սուտիկ (կարտոֆիլով) տոլման, կորկոտը, դլավը, գիսաշուն (Կապան), տաքացրած թանը (պզկաթանով կամ չորաթանով), խաշիլը, կնուճի թոնրաճաշը, մարթոն (տաքացրած մասրահյութը), ինչպես նաեւ ավելուկով կամ լոբով շորվան: Ամենաքաղցր լոբին լինում է Տաթեում եւ շրջակա գյուղերում: Անհետացող ճաշատեսակներից են կճախաշը, ածիկը, կոնջուլը, շփոթը: Տարբերվում է նաեւ սյունեցիների պատրաստած մսով տոլման: Սյունեցիներն ունեն իրենց ոգելից խմիչքները, որոնցից ամենահարգին, իհարկե, քարահունջ՝ թթի օղին է (Գորիսի Քարահունջ գյուղի անունով): Այդ օղու չափավոր օգտագործումը օգտակար է մարդու օրգանիզմի համար: Օղի եւ գինի են պատրաստում խաղողից, հոնից, մասուրից, այլ պտուղներից: Կապանի գյուղերում վայրի աճող բույսից (խնդեղնը) թորում են օղի, որը բուժիչ հատկություններ ունի, օգտագործում են ստամոքսի հիվանդությունների եւ հոգացավի դեպքում: Ամենուր տարածված են զանազան դեղաբույսեր:

Սյունիքի բնակչության բացարձակ մեծամասնությունը մշտապես կազմել են հայերը: Օրբելյանը վկայում է, որ միջնադարյան Սյունյաց թագավորության մայրաքաղաք Կապան քաղաքի թաղամասերից մեկը կոչվել է Զիտաթաղ (ջիւղների թաղ): 10-13-րդ դարերում սելջուկ-թուրքերի եւ մոնղոլների արշավանքների ժամանակ երկրամաս են ներթափանցում այլազգի, այլադավան քոչվոր ցեղեր եւ բնակչություն հաստատում հարթավայրային շրջաններում: Նրանք աստիճանաբար տարածվում են նաեւ լեռնային մասերում: Լեռնային Սյունիքում հայ բնակչության միատարրություն է հաստատվում Դավիթ-Բեկի ազատագրական պայքարի ժամանակ, իսկ հետագայում նաեւ՝ Գ. Նժդեհի օրոք: Զանգեզուրի հայկական շրջաններում օտարալեզու բնակչության թիվը հայերից առավել շարունակաբար աճել է խորհրդային իշխանության օրոք: Մեծ թվով աղյուքեցանցիներ էին ապրում Մեղրիում,

Կապանում եւ Սիսիանում: Արցախյան շարժման ընթացքում նրանք արտագաղթեցին, եւ լեռնաշխարհում վերստին հաստատվեց հայ բնակչության միատարրություն: Սյունիքի բնակչությունը ժողովրդագրական լուրջ փոփոխություններ է կրել 19-րդ դարում: 1828 թ. Թուրք-մենչայի պայմանագրից հետո Սյունիքում բնակություն հաստատեցին հազարավոր պարսկահայեր: Ղարադաղից ներգաղթողները հաստատվեցին Կապանում, իսկ խոյից եւ Սալմաստից եկածները՝ Սիսիանում, ինչպես նաեւ Գորիսում ու Մեղրիում: Սիսիանում պարսկահայերը պահպանել են իրենց լեզուն, սովորույթները, իսկ Գորիսում ոչ: 19-րդ դարի վերջերին Ռոտան գետի վերին հոսանքում ցարական իշխանությունները վերաբնակեցնում են ռուս-մոլդկանների (Բազարչայ, Բորիսովկա): Վերջին տասնամյակներում մոլդկանները վերագաղթել են Ռուսաստան: 19-րդ դարի երկրորդ կեսին Կապանի պղնձահանքերում աշխատում էին հույներ եւ պարսիկներ:

Ըստ պատմական աղբյուրների, միջնադարում Սյունիքն ուներ 1008 (այլ վավերագրերում 1400) գյուղ: Ելնելով գյուղերի քանակից, կարելի է ենթադրել, որ երկրամասի բնակչությունը պատկառելի թիվ է կազմել: Այդ թիվը մեծ է եղել եւ Արշակունյաց թագավորության ժամանակ: Ըստ Զորանամակի, Սյունիքը հայոց բանակին տալիս էր ամենից շատ՝ 19400 զինվոր: 1897 թ. մարդահամարի համաձայն, Զանգեզուրի չորս հայկական շրջաններում ապրում էր 87252 մարդ: 1959 թ. մարդահամարի տվյալներով, Զանգեզուրում ապրում էր 117385 մարդ: Ներկայումս ՀՀ Սյունիքի մարզի բնակչության թիվը կազմում է 162000 մարդ, որի կեսից ավելին ապրում են քաղաքներում: Սյունիքի մարզի խոշոր քաղաքներն են Կապանը (մոտ 48000 բն.), Գորիսը (28000 բն.) եւ Սիսիանը (18000 բն.):

## Գ. Հին հայկական պետականությունները եւ Սյունիքը

Հայոց հին պետականությունների հետ հայկական արեւելյան ծայրամասային նահանգների, այդ թվում եւ Սյունիքի առնչության կամ կապերի մասին եղած պատմական սկզբնաղբյուրները սակավաթիվ են, իսկ եղածներն էլ կցկտուր տեղեկություններ են հաղորդում: Հայտնի հնագույն հայկական պետականությունները, ինչպես, օրինակ՝ Հայասա-Ազգին, ձեւավորվել են Հայկական լեռնաշխարհի արեւմտյան մասում, Սյունիքից շատ հեռու: Վերջին տարիներին հայ պատմագիտական գրականության մեջ ավելի հաճախ եւ հաստատուն է շեշտվում այն միտքը, որ մինչեւ մ. թ. ա. 9-րդ դարում Ուրարտու (Արարատ) հզոր եւ միամետական պետության հանդես գալը, հայոց արեւելյան կողմերում ձեւավորվել էր էթիու կամ էթիունի անունով հայկական մի պետականություն կամ ցեղային միություն եւս, որի կազմում մտել են Ուտիքը, Արցախը, ինչպես նաեւ Սյունիքը: Էթիունի ցեղային միության մասին արդեն խոսվում է դարոցական դասագրքերում: Մենք չգիտենք, թե երբ է կազմավորվել էթիունին, քանի դար է գոյատևել, բայց հայտնի է, որ այն քայքայվեց ու վերացավ հզոր Ուրարտուի դեմ մղած երկարատև, ուժասպառ պատերազմների հետեւանքով: Այդ պետության մասին, ահա թե ինչ կարծիք է հայտնել ուրարտական Արգիշտի 2-րդ թագավորի սյունիքյան սեպագիր արձանագրության հրապարակողներից մեկը՝ Վ. Գայսերյանը. «Շնորհիվ իր կազմակերպվածության, զարգացած տնտեսության, աշխարհագրական նպաստավոր դիրքին, ինչպես նաեւ, անկասկած, հայկական էթնոսով բնակեցված լինելուն, էթիու երկիրը դառնում է Հայկական լեռնաշխարհում ձեւավորվող քաղաքական բոլոր կազմավորումների կենտրոնը, այդպիսին էլ մնալով հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում»:

Էթիունի ցեղային միության քայքայումից հետո Սյունիքը վերջնականապես միացվում է ուրարտական պետությանը:

Այն, որ Սյունիքը եղել է Ուրարտուի կազմում, այսօր այլեւս կասկած չի հարուցում: Տասնամյակներ առաջ այդ կասկածանքը կար: Սյունիքը Ուրարտուի կազմի մեջ մտած լինելու մասին տեսականորեն

մենք տեղեկանում ենք հորենացուց, որը գրում է, թե հայոց առաջնորդ Արամը (ըստ հայագետների՝ Ուրարտու-Արարատ պետության հիմնադիր-թագավոր Արամեն (860-840 թթ. մ. թ. ա.) արեւելյան ազգերի ղեկավարումը հանձնեց Սիսակյաններին: Բայց հորենացուն հավատացել են ոչ միշտ ու ոչ բոլորը:

Հայտնաբերված նորագույն պատմական փաստերը անառարկելի են դարձնում Սյունյաց երկրամասի՝ Ուրարտուի կազմի մեջ լինելը: Սյունիքը հեշտությամբ չի միացվել ուրարտական թագավորությանը: Իրար հաջորդած ուրարտական երեք արքաներ (Սարգուր 2-րդ, Ռուսա 1-ին, Արգիշտի 2-րդ), Սյունիքն իրենց տիրույթների մեջ առնելու համար, հարյուր քսան տարվա ընթացքում մի քանի արյունահեղ պատերազմներ են մղել էթիունի պետության դեմ: Սեպագիր արձանագրություններից ելնելով, կարելի է ենթադրել, որ Սյունիքը առաջին անգամ, թեկուզ ժամանակավորապես, ուրարտական գերիշխանությունն ընդունել է Սարգուր 2-րդ թագավորի (764-735 թթ. մ. թ. ա.) օրոք: Այս թագավորը մի սեպագիր արձանագրության մեջ գրաված երկրների թվում նշում է Ուրտեխեն, որը, ըստ Գր. Ղափանցյանի, Արցախն է: Արցախը նվաճող ուրարտական թագավորը, քնականաբար, պետք է անցներ Սյունիքով: Սյունիքի վրա արշավել է նաեւ Սարգուր 2-րդի հաջորդ Ռուսա 1-ինը (735-714 թթ. մ. թ. ա.): Այդ մասին նա արձանագրություն է թողել Սեւանի լճափին, ժայռի վրա: Ուրարտական արքան նշում է, որ գրավել է Սեւանա լճի ավազանի 23 երկրներ, որոնց թվում եւ Գուրիայան: Գուրիայան գիտնականները նույնացնում են Գորիսի հետ: Սպասվում էր, որ ուրարտական արձանագրություն կգտնվի նաեւ Սյունիքի կենտրոնական մասերում: 1975 թ. Սիսիանից 17 կմ հեռավորության վրա գտնվող Արեւիս գյուղի մոտ, Որոտանի աջ ափին, հայտնի ճարտարապետ Հրաչյա Գասպարյանը Թանահատի վանքի ավերակներում հայտնաբերեց Արգիշտի 2-րդ թագավորի (714-685 թթ. մ. թ. ա.) սեպագիր արձանագրությունը: Այն 1979 թ. հրապարակվել է Ն. Հարությունյանի վերծանությամբ: Արձանագրության մեջ խոսվում է Արգիշտի 2-րդի՝ դեպի Ծովուկու կատարած արշավանքի, ինչպես նաեւ էթիունի երկրի դեմ իրողուա (Օրդուատ) քաղաքի մոտ տված հաղթական ճակատամարտի մասին: Այլեւս որեւէ կասկած չի մնում Սյունիքը Ուրարտուի կազմում լինելու հարցի առթիվ: Ռ. Իշխանյանն իր «Պատկերազարդ պատմություն հայոց» գրքում նշում է, որ Սյունիքը ի սկզբանե եղել է Արարատի կազմում եւ Արգիշտի 2-րդի վերջին նշված արշավանքը պարզապես ապստամբության փորձի ճնշում



Առյուծի բրոնզաշույլ արքանիկ Կապանից  
VII դար մ.թ.ա. (Գորիսի բանգարան)

էր: «Արա 1-ի ժամանակ, գրում է նա, Սյունիքն էլ էր մտնում Արարատի թագավորության մեջ: Տարիներ հետո Սյունիքում տեղի իշխանները փորձել են անջատվել Արարատից, եւ նրանց ապստամբությունը ճնշել է Արա 1-ի ծոռը՝ Արա II-ը»: Ռ. Իշխանյանի նշած Արան նույն Արգիշտի թագավորն է:

Սյունիքն արագորեն ներառվել է նաեւ ուրարտական մշակութային կյանքի


մեջ: Գորիսի երկրագիտական թանգարանում պահպանվում է ուրարտական ժամանակաշրջանի (8-7-րդ դարեր մ. թ. ա.) հայկական արվեստի մի եզակի նմուշ՝ վնասված թաթով առյուծի բրոնզե արձանիկ, որը գտնվել է 1944 թ. Կապանի Սյունիք ավանում: 5 կգ կշիռ, 20 սմ երկարություն եւ 13 սմ բարձրություն ունեցող արձանիկը, ամենայն հավանականությամբ, ծովվել է տեղում, եւ որպես հումք օգտագործվել է Կապանի հայտնի հանքերի պղնձաքարը:

Հայկական հին պետականությունների հետ Սյունիքի ունեցած կապերի մասին, հորենացուց զատ, ակնարկել է նաեւ Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը: հորենացին հաղորդում է, որ հնուց ի վեր Սյունիքը մաս էր կազմում հայկական տարածքների: Խոսելով հայոց տոհմաբանության եւ երկրամասերի անունների մասին՝ պատմահայրը նշում է, որ հայոց նախահայր Հայկի ցեղից նահապետ Գեղամն իր ստացվածքի մի մասը որպես ժառանգություն տվեց Սիսակ որդուն: Ուրեմն՝ Սյունիքը Գեղամը ոչ թե նվաճել, այլ որպես ժառանգություն ստացել է իր նախնիներից եւ իր ունեցվածքից էլ բաժին է հանել Սիսակ որդուն: Դա նշանակում է, որ մինչեւ Սիսակը, Սյունիքը վաղուց հայկական էթնոսով բնակեցված տարածք էր: հորենացու ասելով՝ Գեղամի թոռ Արամը՝ Սիսակի եղբորորդին, որին պատմաբանները, ինչպես արդեն նշեցինք, նույնացնում են Ուրարտու-Արարատ պետության հիմնադիր Արամ-Արամեի հետ, նվաճում է արեւելյան ազգերը եւ դրանց ղեկավարումը հանձնում Սիսակյաններին, պահանջում, որ բոլորը սովորեն եւ խոսեն հայերեն:

Ստ. Օրբելյանը «Պատմութիւն տանն Սիսական» գրքում Սյունյաց իշխանական տան հորենացու տված տոհմաբանությանն ամելացնում է ընդամենը մեկ, բայց խիստ արժեքավոր պարբերություն: Ահա թե ինչ է գրում պատմիչը. «Եվ այսպես սկսած Նախնի Սիսակից՝ այս Նահապետության իշխանությունը, ակներեւ հարազատությամբ. որդիները հայրերից հաջորդաբար փոխանցեցին երկար ու ծիգ ժամանակներով: Բազմաթիվ մեծամեծ քաջագործություններ ցույց տվեցին հայոց թագավորների (մղած) պատերազմներում եւ բազում ու մեծամեծ պարգեւներով ու գահերով մեծարվեցին պարսից, հայոց, այլեւ հունաց իսկ թագավորների կողմից: Եվ այնքան անվանի եղան, որ մինչեւ անգամ արտոնվեց նրանց արծաթե գահույք ունենալ եւ մարգարտե վարսակալ օգտագործել ու վարազագիր մատանի դնել, Նաեւ կարմիր կոշիկ (հագնել) ու բռնել ոսկե գավազան՝ վրան նշված տոհմի անունը եւ պատվաստիճանը: Եվ այսպես հասան Վաղարշակին, որին իր եղբայր Արշակը հայոց վրա թագավոր դարձրեց՝ Հայաստանում Արշակունյաց ցեղի թագավորության սկզբնավորման ժամանակ»:

Հայտնի է, որ Օրբելյանի նշած հայոց թագավոր Վաղարշակը, որի անունը հիշատակում է Նաեւ հորենացին, հայոց Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատ 1-ին (64-72 թթ.) թագավորն է: Ուրեմն՝ Օրբելյանի հաղորդածը վերաբերում է Սիսակ Նահապետից սկսած մինչեւ մեր թվարկության առաջին դարն ընկած ժամանակաշրջանին: Խոսքը հայոց Արարատյան (Ուրարտու) թագավորության (860-590 թթ. մ.թ.ա.), Երվանդունի (570-201 թթ. մ.թ.ա.), Արտաշեսյան (189թ. մ.թ.ա. -1թ.) հարստությունների, պարսից Աքեմենյան հարստության (550-330 թթ. մ.թ.ա.) թագավորների, ինչպես Նաեւ Ալ. Մակեդոնացու եւ նրա սելեւկյան հետնորդների մասին է: Պատմիչը ոչինչ չի չափազանցում: Սյունյաց իշխանական տունն ի սկզբանե հայոց թագավորների արեւելյան նեցուկն է եղել, եւ իրենց նվիրվածության ու քաջագործությունների համար այդ Նախարարկան տոհմի ներկայացուցիչները արժանացել են մեծամեծ պարգեւների ու պատիվների: Մ. թ. ա. առաջին հազարամյակի ընթացքում Հայկական լեռնաշխարհում կատարված պատմական անցքերի, մասնավոր. Երվանդունի եւ Արտաշեսյան թագավորությունների ժամանակաշրջանի իրադարձությունների վերաբերյալ պատմական սկզբնաղբյուրները սակավաթիվ են: Բայց պատմական այդ ժամանակաշրջանում Սյունյաց իշխանների ունեցած կոչումների եւ պատվաստիճանների մասին Օրբելյանի հաղորդած տեղեկությունը, որը պատմիչը քաղել է մեզ անհայտ սկզբնաղբյուրներից, հաստատվում են Նորահայտ փաստերով:

Մասնավորապես, այդ մասին է վկայում հայոց Արտաշես I Բարի թագավորի (189-160 թթ. մ. թ. ա.)՝ Գորիսի Հարժիս գյուղի հողատարածքում, Մեծ Իշխանասար լեռան ստորոտին հայտնաբերված արամեերեն արձանագրությամբ սահմանաքարը: 1964 թ. Գորիս-Սիսիան ավտոճանապարհի մոտ, երկու շրջանների սահմանագծից ոչ հեռու այն գտել է Տաթևիէկի աշխատակից Արշակ Հովհաննիսյանը: Սահմանաքարն ունի 58 սմ բարձրություն, 25 սմ լայնություն, 20 սմ հաստություն եւ իր չափերով քիչ է տարբերվում Հայաստանում գտնված արտաշեսյան մյուս յոթ սահմանաքարերից: Երկրի ներքին կյանքը կանոնավորելու, գյուղերի եւ ագարակների սահմանները ճշգրտելու համար տեղադրված հողաբաժան սահմանաքարերի մասին հիշատակություն ունի Նաեւ Մովսես Խորենացին: Սակայն, երկար ժամանակ պատմա-հոր հաղորդած տեղեկությունը համարվել է նրա երեւակայության արդյունք եւ հռչակվել անվավեր: Սյունիքում հայտնաբերված սահմանաքարը վկայում է, որ Արտաշես



Արամեերեն արձանագրություն Սիսիանից՝ Արտաշես I-ի անունով

1-ին հզոր արքան հող էր տանում՝ կարգավորելու Նաեւ երկրի հեռավոր Նահանգների ներքին կյանքը: Հայկական պետականության մաս կազմող Սյունիքը՝ երկրի կենտրոնական Նահանգների նման, պետք է ունենար արքայի կողմից վավերացված հողաբաժանում:

Սյունիքում գտնված արտաշեսյան սահմանաքարի արամեերեն արձանագրությունը 1965 թ. հրապարակել է Ա. Փերիխանյանը: Քարի վրա փորագրված է ինը տող: Գյուղանունը պարունակող առաջին տողը ջնջված է: Արձանագրության մեջ կարդում ենք. «... գյուղը պարկանում է Արտաշես Արքային, Բարուն, Չարեհի որդուն, եւ Նեկփառին, Բազադիր, Աշխարհասպի որդուն»: Կարելի է

ափսոսալ, որ գյուղանունը ջնջված է: Ինչ վերաբերում է արձանագրության մեջ հիշատակված Նեկփառին (հունարեն Նիկեփոր-հաղթող բառից) եւ Աշխարհաստին, ապա՝ Նրանք, անշուշտ, եղել են հայոց արքայի անվանի պաշտոնյաները: Նեկփառը եղել է Սյունյաց տեր իշխանը, որին եւ պատկանել է արձանագրության մեջ հիշատակվող գյուղը: Խորհրդածությունների տեղիք է տալիս թագադիր տիտղոսի հիշատակումը: Ուրեմն, Սյունյաց տերը, տվյալ դեպքում Նեկփառի հայր Աշխարհաստը, եղել է Արտաշես I-ի թագադիրը: Ինչպես հայտնի է, Արշակունիների ժամանակ (64-428 թթ.) հայոց թագավորների թագադիրները եղել են Բագրատունիները: Եվ ահա, որոշ գիտնականներ, այդ թվում եւ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ակադեմիական հրատարակության հեղինակները, գտնում են, որ սյունիքյան սահմանաքարի արձանագրության մեջ հիշատակված Արտաշես I թագավորի թագադիր Աշխարհաստի որդի Նեկփառը Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ է: Անհամոզիչ ու անհավատալի է ենթադրել, որ արձանագրության մեջ հիշատակված, Սյունիքի աշխարհագրական կենտրոնում գտնվող գյուղը կարող էր պատկանել Բագրատունիներին: Արտաշես I-ի գահակալության ժամանակ Բագրատունի իշխանական տան գոյությունն իսկ կասկածելի է: Հայտնի է, որ Մ. Խորենացին իր «Պատմություն հայոցը» գրել է Բագրատունի Սահակ իշխանի պատվերով: Նա Բագրատունիներին ծագած է համարում հրեաներից, որոնք Արտաշեսյան հարստության անկումով սկսված խառնակ ու անիշխան ժամանակներից հետո պարթևներին Հայաստանի գահին հաստատվելու գործում մատուցած ծառայությունների համար՝ թագադիր ասպետի տիտղոս եւ իշխանական տուն կոչվելու պատիվը ստացան եւ հայոց արեւմտյան կողմերի կուսակալ Նշանակվեցին Վաղարշակ (Տրդատ I) թագավորի օրոք՝ սահմանաքարի տեղադրման ժամանակից շուրջ 200 տարի հետո: Խորենացին գրում է. «...Նախ եւ ատաքին փոխարէն քարեաց հապուցանելով ատեն գորաւորի եւ իմաստանոյ, որ ի հրէիցն Շամբայայ Բագրապ, տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց. եւ որի նման է ծննալ ազգ լինել կոչմամբ յանուն նորա Բագրապունի, որ այն մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս»<sup>1</sup>: Իր տոհմի ծագման հավաստիությանը, Նախ, պետք է հավատար պատմիչի հովանավորը՝ Սահակ Բագրատունի իշխանը, եւ եթե նա հավատացել ու ընդունել է Խորենացու հաղորդածը, մենք, առավել եւս, իրավունք չունենք չհավատալու: Որոշ պատմաբաններ (Ն. Ադունց, Հ. Մանանդյան) Տիգրան Մեծի (95-55 թթ. մ. թ. ա.) գորավարներից Բագրատեսին համարում են Բագ-

րատունիների նախահայր: Նրանք, չընդունելով Բագրատունիների ծագման մասին Խորենացու հաղորդածը, հենվում են Բագրատունիների՝ Հայկ Նահապետից սերած լինելու Մեթեոսի (7-րդ դար) հայտնած վարկածի վրա: Բայց Մեթեոսը Բագրատունիների հայրենական կալվածքը համարում էր Անգեղ տունը՝ Արեւմտյան Հայաստանում: Եթե նույնիսկ ընդունենք, որ Բագրատունիները հայկական ծագում ունեցող հնագույն իշխանական տուն են, ապա դա չի նշանակում, թե Նրանք Սյունիքի սրտում կարող էին ունենալ սեփական գյուղ: Մնում է ենթադրել, որ հայոց Արտաշեսյան թագավորների թագադիրները եղել են ոչ թե Բագրատունիները, այլ ուրիշ տոհմի ներկայացուցիչներ, եւ քիչ հավանական չէ, որ Նրանք կարող էին լինել Սյունյաց իշխանները: Այդ են վկայում եւ Օրբելյանի հաղորդածը, եւ սահմանաքարի արձանագրությունը: Սահմանաքարի արամեերեն արձանագրությունը ճշմարտապատում է: Սյունիքի կենտրոնում գտնվող գյուղը պատկանում էր Սյունյաց իշխան Նեկփառին, որի հայր Աշխարհաստը եղել է Արտաշեսյան հարստության հիմնադիր Արտաշես I Բարի թագավորի թագադիրը: Սյունյաց իշխանները, ինչպես հաղորդում է Օրբելյանը, իրավունք էին ստացել ունենալու արծաթե գահույք, կրելու մարգարտե վարսակալ, հագնելու կարմիր կոշիկ (մեկ հատ, քանի որ երկուսը հագնում էր միայն թագավորը) եւ բռնելու տոհմանշանով ոսկե գավազան: Օրբելյանը նաեւ խոսում է գավազանի վրա նշված Սյունյաց իշխանների պատվաստիճանի մասին: Իսկ ի՞նչ պատվաստիճան դա կարող էր լինել, եթե ոչ՝ հայոց թագավորի թագադիր-ասպետությունը...: Պետք է նկատի ունենալ եւ այն հանգամանքը, որ Արտաշեսը Երվանդունիների դեմ իր պայքարի վճռական փուլը՝ ռազմական արշավանքի նախապատրաստությունը, սկսեց հայոց արեւելյան կողմերից, եւ անհնարին է, որ Նրա զինակիցների շարքերում իրենց բազմաքանակ զորքերով կանգնած չլինեին Սյունյաց իշխանները:

Հայոց թագավորների թագադրության պատիվը՝ Արտաշեսյան հարստության անկումից եւ երկարատեւ անիշխանությունից հետո, տրվում է Բագրատունիներին: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ ոչ բոլոր հայ իշխանական տներն էին ոգեւորված այն բանից, որ պարթեական թագավոր Վաղարշ 1-ը (51-75 թթ.) Հայաստանի գահին նստեցնում է իր եղբայր Տրդատին: Վերջինս էլ, նկատի ունենալով այդ գործում մատուցած ծառայությունները, ստեղծում է Բագրատունի նախարարական տունը՝ ի հակակշիռ այլ իշխանական տոհմերի եւ Նրանց շնորհում արքունիքի ամենապատվավոր պաշտոնը: Նշանակում է՝ Սյունյաց իշխաններն անհրաժեշտ աջակցություն չեն

ցուցաբերել Տրդատի գահակալության գործին:

Արտաշեսյան թագավորության կազմում Սյունիքի ներառված լինելու մասին կողմնակի վկայություն են այն գանձերը, որոնք գտնվել են Սիսիանում: 1945թ. Սառնակունք գյուղի շրջակայքում, կավե անոթում հայտնաբերված դրամների հավաքածուի մեջ հարյուրավոր հռոմեական, սելեկյան, պարթևական, փյունիկյան եւ այլ մետաղադրամների հետ կային նաեւ տասը հայկական մետաղադրամներ: Դրամների հայկական խումբն ընդգրկում էր Տիգրան 2-րդ Մեծի եւ Արտավազդ 2-րդի (55-34 թթ. մ. թ. ա.) գահակալության տարիներին թողարկված մետաղադրամներ: Հելենիստական դարաշրջանի մեկ ուրիշ ուշագրավ գանձ 1970 թ. հայտնաբերվել է Սիսիան շրջկենտրոնում: Ոսկյա եւ արծաթյա տարբեր իրերի մեջ կար մի արծաթե թաս՝ արամեերեն մակագրությամբ, ուր կարդում ենք. «Այս թասը պատկանում է Արախսատին, արծաթի քաջը 100 դրախմ է»: Այս երկու գանձերի եւ դրանցում մեծաքանակ մետաղադրամների առկայությունը վկայում է, որ Սյունիքն Արտաշեսյան թագավորության օրոք առեւտրական կապերի մեջ է եղել նույնիսկ հեռավոր երկրների հետ:

## Դ. Քրիստոնեական Սյունիք

Ատ. Օրբելյանն իր գրքի 6-րդ գլուխն սկսում է հետեւյալ բառերով. «*Ամենից առաջ ինչ համար կարելու որ չափազանց անհրաժեշտ էր ցույց տալ հենց այս, քե հայերից մահ հավաքացյալ դարչան սյունեցիները*»<sup>2</sup>: Նա Սյունիքում քրիստոնեության տարածումը կապում է Բարդուղիմեոս առաքյալի գործունեության հետ, որը Պարսկաստանից գալով Հայաստան, Արաքս գետն անցնելով՝ մտնում է Նահանգի հարավային գավառները: Առաքյալը քրիստոնեական վարդապետությունը սկսում է քարոզել Որդվատ (ներկայիս Օրդուբադը՝ Նախիջեւանի ԻՂ-ում) գյուղում, Արեւիք, Բաղք եւ Գողթն գավառներում եւ ունենում որոշակի հաջողություններ: Նրա կողմից քրիստոնյա են մկրտվում Գողթն գավառի իշխան Սիսակյան Շարը, Նրա որդի Խոսրովը, Վահան թոռը եւ կինը՝ Նշնան: Առաքյալը Նրանց համար կարգում է վերակացու, որպեսզի հանկարծ ետ չդառնան կռապաշտությանը, իսկ գավառի համար որպես հոգեւոր առաջնորդ՝ եպիսկոպոս է ձեռնադրում իր Կումսի անունով աշակերտին եւ թողնում այնտեղ: Առաքյալն այնուհետեւ գալիս է Երնջակ գավառի Վանանդ գյուղը, այնտեղ կործանում կռատունը, տեղում կառուցում մի համեստ եկեղեցի՝ սուրբ Թովմասի անունով: Այսպիսով, տեսնում ենք, որ տակավին առաջին դարում (60-68 թթ.) Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից մեկի՝ Բարդուղիմեոս առաքյալի գործունեությամբ, Հայաստանում առաջիններից մեկը, քրիստոնեական գորավոր համայնք է ձեւավորվում Սյունիքի հարավային գավառներում, մասնավորապես Գողթնում: Քրիստոնյաներ էին դառնում ոչ միայն հասարակ խավրի մարդիկ, այլեւ՝ իշխանական ընտանիքի անդամներ: Քրիստոնեությունն այստեղ տարածվել է ոչ առանց պայքարի: Օրբելյանը հաղորդում է, որ այդ գավառների քրիստոնյաները հետագայում մնում են առանց առաջնորդի եւ հեթանոսներից հալածվելով՝ ցաք ու ցրիվ գալիս: Սակայն Նոր վարդապետությունը խոր արմատներ էր ձգել մարդկանց հոգում եւ այն վերջնականապես արմատախիլ անել չհաջողվեց: Քրիստոնյաները պատասպարվում էին լեռներում, ապրում մենակեցությամբ ու չէին դադարեցնում իրենց քարոզները, մինչեւ որ Նոր կրոնը տարածվեց ամբողջ Հայաստանում, դարձավ պետական կրոն, եւ Գրիգոր Լուսավորիչը գողթեցիների համար կրկին առաջնորդ կարգեց եւ ենթարկեցրեց Սյունիքի եպիսկոպոսու-






Հնգադին կուրք՝ գտնված Հարժիսում, 2-րդ հազարամյակ մ.թ.ա., Գորիսի թանգարան

կում»<sup>3</sup>: Բայց կարող է հարց ծագել, արդյո՞ք Գողթնը մտնում էր Սյունիքի մեջ, եւ մենք իրավունք ունենք՝ ասելու, որ առաջին քրիստոնյաները հայերի մեջ սյունեցիները եղան: Հարցադրումը մտահոգել է նաեւ Օրբելյան պատմիչին, եւ նա, ընթերցողին հնարավոր թյուրիմացությունից զերծ պահելու համար վկայակոչելով Խորենացուն, շեշտում է, որ գողթնեցիները առաջներում Սյունիքից մեկուսացված չէին, իսկ Գողթնի իշխանները Սիսական տոհմից էին:

Հարյուրամյակների տեւած համառ պայքարից հետո միայն քրիստոնեությունը 301 թ. Հայաստանում ստացավ պաշտոնական ճանաչում եւ աշխարհում առաջինը հռչակվեց պետական կրոն: Այդ կարեւոր պատմական իրադարձությունը տեղի ունեցավ Տրդատ III Մեծ (298-330 թթ.) թագավորի օրոք: Հին ու նոր կրոնների երկարատեւ պայքարը բացատրվում է նրանով, որ հեթանոսությունը հազարամյակների պատմություն ուներ ու դարձել էր մարդկանց հոգեւոր կյանքի բաղկացուցիչ մասը: Կուրքերի պաշտամունքը խոր արմատներ ուներ նաեւ սյունեցի լեռնականների մոտ: Գորիսի Հարժիս գյուղում հայտնաբերվել են հեթանոսական տաճարի մնացորդներ, ամբողջական սրբատաշ սյուներ եւ հնգադին կուրքի հազվագյուտ քարարձան: Այն պահվում է Գորիսի երկրագիտական թանգարանում: Այնուամեն-

թյանը: Սյունյաց տան պատմիչը, խոսելով հայրենի երկրամասում Բարդուղիմեոս առաքյալի կատարած գործերի մասին, անշուշտ, օգտվել է նաեւ ավանդախառն գրույցներից: Որոշ պատմաբաններ, ինչպես Լեոն, ընդհանրապես ժխտում են առաքյալների գործունեությունը Հայաստանում: Սակայն, թերեւս, ընդունելի է Ն. Ադունցի կարծիքը, որը գրում է. «Հայաստանում առաքյալների քարոզչության վերաբերյալ ավանդությունները որքան էլ առասպելական լինեն, այնուամենայնիւ, պարունակում են որոշակի ճշմարտություն եւ ապացուցում, որ քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել առաքյալների ժամանա-



Գորիսի շրջան, Հարժիս գյուղ, մարդու դիմաքանդակ հեթանոսական տաճարի ավերակներից

Կռապաշտությունը ի չիք դարձնելու եւ հին աստվածների մեծիանները կործանելու նպատակով հայոց թագավորի ձեռնարկած ռազմական արշավանքին մասնակցել է նաեւ հայ եկեղեցու հիմնադիրը: Թագավորական գորքերը կռվում էին գլխավոր քուրմ Արծանի եւ նրա որդի Դեմետրեի զինված ջոկատների դեմ: Հեթանոսները հանուն հին աստվածների, վճռել էին մարտնչել մինչեւ վերջին շունչը՝ մահ կամ հաղթանակ. այս էր նրանց կարգախոսը: Կճռական ճակատամարտի ընթացքում տեղի է ունենում պատերազմի ելքի համար մի բախտորոշ միջադեպ, որում աչքի է ընկնում Սյունյաց տերը: Ճակատամարտի թեժ պահին Հաշտենի իշխան Խորճեւը դավաճանում է քրիստոնյաներին եւ յորժ հարյուր մարդուց բաղկացած ջոկատով անցնում հեթանոսների կողմը: Հեթանոսների գորքերի թիվը վեց հազարից ավելի էր: Քրիստոնյաների համար ճակատամարտի հաջող ելքը դառնում է կասկածելի, քանի որ Հաշտենի իշխանը քաջակորով այդ էր, եւ հայոց իշխանները վախենում էին նրանից: Թագավորական գորքերի հույսը մնում է Սյունյաց իշխանը: Ահա թե ինչպես է նկարագրում իրադարձությունները Ջենոբ Գլակը. «Այդ ժամանակ ամբողջ գորքը աղաղակ բարձրացրեց իշխանի առջեւ, իսկ սա, դիմելով Հաշտենից իշխանին,

նայնիվ, քրիստոնեությունը Սյունյաց լեռնաշխարհում տարածվեց ավելի հարթ ու խաղաղ, քան Հայաստանի այլ վայրերում:

Սյունյաց իշխաններն իրենց հզոր ռազմական ուժերով եռանդուն մասնակցություն ունեցան քրիստոնեության տարածման համապետական միջոցառումներին: Տրդատ III Մեծ թագավորի հետ Արածանի գետում Գրիգոր Լուսավորչի կողմից մկրտություն ստացավ նաեւ Սյունյաց իշխանը՝ իր չորս գնդերով:

Ջենոբ Գլակը գրի է առել Տարոնում քրիստոնյաների կողմից հեթանոսների դեմ մղած պայքարի մանրամասները: Դա մի իսկական պատերազմ էր:

ասաց. «Այ գալի ծագ, հիշեցիր քո հոր բարքը եւ նորից գիշակերութեան դարձար»: Իսկ նա ասաց. «Այ արծվի ծագ, որ թեւերովդ ես պարծենում, եթե ընկնես թակարդիս լարի մեջ, ես ցույց կտամ քեզ իմ գործությունը»: Իսկ Սյունյաց իշխանը, չհանդուրժելով այդ անարգանքը, հարձակվեց նրա վրա, հարվածեց մուրճով նրա սաղավարտին: Եվ առանձնացնելով նրան գործից, փախուստի մատնեց լեռան արեւելյան կողմը, ապա հասնելով նրան Իննակնյան վայրում, վար ձգեց ձիուց եւ, իջնելով, կտրեց նրա գլուխը, իսկ մարմինը գահավեժ անելով՝ ասաց. «Կտեսնեն քեզ անգղները եւ կիմանան, որ արծիվն է խփել նապաստակին»: Արծիվը եղել է Սյունյաց իշխանական տան խորհրդանիշը: Յեթանոս կամ գիսանյան (այդպես էին կոչվում երկար գես՝ ծամ, ունենալու պատճառով) քրմերը այս կռվում ծանր ու վերջնական պարտություն են կրում: Թագավորական գործերի պատերազմական գործողությունները ղեկավարող Սյունյաց իշխանը հնչեցնում է դադար եւ խաղաղություն ազդարարող փողը, թույլատրում թաղել սպանվածներին: Երկու կողմերից զոհերի թիվը եղել է հազար երեսունութ հոգի:

Վերոհիշյալ Սյունյաց իշխանը ակտիվ մասնակցություն է ունենում Իննակնյան վայրում Ս. Կարապետ հանգստարանի կառուցմանը (Մշո Ս. Կարապետ վանք) եւ տեղի Գլակա վանքում իր հիշատակի համար կանգնեցնում քրիստոնեական խաչ: Այնուհետեւ, հայոց թագավորից թույլտվություն ստանալով, ինչպես գրում է Օրբելյանը. «Սյունյաց իշխանը մեծ ուրախությամբ անցավ, եկավ իր աշխարհը, բոլոր յուրայիններին ավազանում մկրտեց լուսավորությամբ եւ կործանեց կուռքերի բոլոր բազիլները ու իր ամբողջ աշխարհը քրիստոնյա դարձրեց, բազիլների տեղերն էլ հատկացրեց եկեղեցիների ու աղոթատեղերի շինությանը»: Նույն այս Սյունյաց տերն էր, որ թագավորական պատվիրակության 16 իշխանների հետ Գրիգոր Լուսավորչին ուղեկցեց Կեսարիա՝ քահանայապետ օծվելու համար: Նա նաեւ այն սակավ հայ իշխանների մեջ էր, որոնք Տրդատ Մեծի եւ Գրիգոր Լուսավորչի հետ մեկնեցին Յոմ Կոստանդին կայսեր ի տեսություն:

Քրիստոնեական վարդապետությունը տարածելու նպատակով՝ Գրիգոր Լուսավորիչը, մեկնելով Վրաստան, Աղվանք, գալիս է փոքր Սյունիք (Արցախ), իսկ այնտեղից՝ անցնում Սյունիք: Սյունյաց նախարարը նրան ընդունում է շքեղ պատիվներով եւ ընծաներով, նրանք միասին շրջագայում են նահանգի գավառներում, համապատասխան տեղերում շինել են տալիս եկեղեցիներ, կանգնեցնում տերունական

նշանը, ամրապնդում քրիստոնեական հավատը: Սյունիքում լուսավորչական աշխատանքներն ավարտելուց հետո Գրիգոր Լուսավորիչը, ինչպես գրում է Օրբելյանը. «Գալով Վաղարշապատ՝ ծեռնադրում է իր մերձավոր աշակերտներից մեկին՝ ճշմարտախոս եւ լավ մի մարդու, լի բոլոր հմտություններով, երիտասարդ հասակով, Գրիգորիս անունով, տալիս է իշխանին տանելու եւ հաստատելու մեր Սյունյաց աշխարհի եպիսկոպոս: Այստեղից եղավ Սյունիքի եպիսկոպոսության սկիզբը»: Գրիգորիս եպիսկոպոսը Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդությունը պաշտոնավարում է 46 կամ 47 տարի: Պրոֆ. Գր. Գրիգորյանը գտնում է, որ Սյունյաց հոգեւոր թեմը հիմնվել է 320 թ., եւ Գրիգորիս եպիսկոպոսն այն պաշտոնավարել է մինչեւ 367 թ.:

Ելնելով Զենոբ Գլակի, ինչպես նաեւ Օրբելյանի հաղորդած տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում քրիստոնեության տարածման գործում հայ իշխանների մեջ ամենից երեւելի դերերից մեկը խաղացել է Սյունյաց տերը: Նրան մի քանի անգամ հիշատակում է նաեւ Ագաթանգեղոսը. Սյունյաց մեծ իշխանը ներկայանում է որպես քաջակորով, համբավավոր ու քրիստոսանվեր ազնվական: Ղետնդ Ալիշանն ավստոսում է, որ հայ պատմիչները չեն պահպանել այդ քաջ մարդու անունը: Բայց ինքը վրացական մի տարեգրության մեջ, որը վերաբերում է 332 թ. դեպքերին, հանդիպել է Պելուծավր Սյունեցի անվանը եւ կարծիք հայտնել, թե դա կարող էր նույն հռչակավոր իշխանը լինել:

Գրիգոր Լուսավորչի կողմից սահմանված կարգի համաձայն, հայ եկեղեցու կրոնական վեհաժողովում 36 եպիսկոպոսների մեջ Սյունյաց թեմի առաջնորդը նստում էր աջից յոթերորդ տեղը: Որոշ ժամանակ անց, Սյունյաց հոգեւոր թեմի վիճակը բարձրացվում է: Հայոց Արշակ II թագավորի (350-368 թթ.) ժամանակ հայրապետական աթոռին հաստատվելու համար Կեսարիա մեկնող Ներսես Մեծին ուղեկցում էին Սյունյաց նշանավոր իշխան Անդոկը եւ Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդ Գրիգորիսը: Վերջինս պատվիրակության մեջ հանդիսանում էր հայոց եպիսկոպոսների գլխավորը: Արշակ II թագավորի հրամանով Հայաստանում կարգաբերվում են եկեղեցու բոլոր ինը դասերը: Սետրոպոլիտներ են հռչակվում Սյունյաց, Վրաց եւ Մարդապետական եպիսկոպոսները: «Իսկ Սյունյաց մետրոպոլիտ Գրիգորին,- գրում է Օրբելյանը,- իր հետ Կեսարիա գնալու համար ավելի պատիվ անելով՝ սուրբ Ներսեսը նրան տալիս է ոսկեթել գահավորակ ու Սյունիքը հռչակում պատրիարքի նախաթոռ, որը հունարեն լեզվով կոչվում է պրոտոֆրոնտես»<sup>4</sup>: Օրբելյանի «Պատմու-

թիւն տանն Սիսական» գրքում Սյունյաց հոգեւոր թեմի անդրանիկ առաջնորդի անունը նշվում է Գրիգորիս, Գրիգորիոս, Գրիգոր ձեւերով: Գրիգորիսի մահից հետո, Անդոկ իշխանի խնդրանքով, Ներսես Մեծ կաթողիկոսի կողմից Սյունիքի մետրոպոլիտ է նշանակվում երանելի սուրբ Մաշտոցը (367-414 թթ.): Վերջինս աչքի էր ընկնում առաքինի վարքով, բարեպաշտությամբ ու քանադորությամբ: Այս Մաշտոցին չպետք է շփոթել Մեսրոպ Մաշտոցի հետ: Հինգերորդ դարի սկզբներին Սյունյաց հոգեւոր թեմը՝ Անանիա I մետրոպոլիտի (414-456 թթ.) օրոք, պատվի է արժանանում Աղվանքի եպիսկոպոսի կողմից: Վերջինս թեմին նվիրում է իր թագավորական կարմիր դրոշմ՝ ոսկերիզ նուրբ խաչվառով, գլխին ոսկե գունդ եւ պատվիրում դրանք միշտ տանել Սյունյաց եպիսկոպոսների առջեւից: Սյունյաց հոգեւոր թեմը գավառների թվին համապատասխան՝ ուներ տասներկու ենթակա եպիսկոպոս (քորեպիսկոպոս): Առանց Սյունյաց թեմի առաջնորդի, հայոց կաթողիկոս չէր ընտրվում:

Արշակունյաց թագավորության եւ մարզպանության շրջանում Սյունյաց հոգեւոր թեմը տվել է մի շարք նշանավոր առաջնորդներ, որոնք իրենց գործունեությամբ խոր հետք են թողել ոչ միայն հայ հոգեւոր մշակույթի պատմության մեջ: Այդ դեմքերից են Պետրոս Սյունեցին կամ Քերթողը (546-556 թթ.)՝ Մովսես Խորենացու աշակերտը, «մեծ քերթող եւ անհաղթ փիլիսոփա» Մաթուսաղան (634-652 թթ.), Ստեփանոս Սյունեցին (734-735 թթ.) եւ ուրիշներ: Թեմին կից գործում էր ողջ Հայաստանում հռչակ վայելող վարդապետարան, ուր ձեւավորվեց անգերազանցելի հայ թարգմանչական դպրոց: Թեմի գործունեությունը միայն Սյունիքով չէր սահմանափակվում: Դրա հետքերը երեւում են նույնիսկ հեռավոր Երուսաղեմում համայն քրիստոնեության մայրաքաղաքում: Այդ մասին հաղորդում է Ղեւոնդ Ալիշանը. «*Բայց Միսնիք ոչ յաշխարհի իւրեանց միայն, այլեւ ի հեռավոր Երուսաղեմ վանաշենք գլխան, քան գլոյովս ի քոռմից հայոց, քանզի յիշին անդ յանուն նոցա վանս Ս. Գեորգայ*»<sup>5</sup>:

## Ե. Սյունիքը Արշակունիների օրոք

Սյունյաց իշխանական տունը աչքի է ընկել նաեւ Արշակունյաց թագավորության քաղաքական կյանքում, թեպետ սյունեցիները ժառանգաբար արքունական որեւէ գործակալություն չէին ղեկավարում, ինչպես Մամիկոնյանները կամ Բագրատունիները: Այն ներկայացնում էր Արեւելյան Հայաստանի ամենանշանավոր նախարարությունը: Ահա թե ինչպես է բնորոշել Հայաստանի քաղաքական կյանքում արեւելյան երկրամասերի դերը Ն. Ադոնցը. «Հայաստանի արեւելյան կամ պարսկական մասը հայոց պատմության մեջ ունեցած իր դիրքով եւ նշանակությամբ էապես տարբերվում է Արեւմտյան Հայաստանից. նրան է պատկանում այն նվիրական սկզբունքների ու հիմունքների զարգացման եւ պահպանման գլխավոր դերը, որի վրա հենված էր հայոց պատմական կյանքը»: Հայաստանի արեւելյան կողմերում Սյունյաց իշխանական տան գլխավոր լինելը առաջին դարում, նախ հաստատում է Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակ (Տրդատ I) թագավորը: Նա, Օրբելյանի հավաստմամբ. «Հրաման է տալիս Սիսականներին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին եւ իր թագավորության երկրորդ եւ պատերազմով շարունակ դեմ կանգնել Հոնաց դռանը»: Հայ նախարարական տների դիրքը արքունիքում, նրանց գահին ու աստիճանը կարգավորում է նաեւ Տրդատ III Մեծը: Թագավորական հրամանի համաձայն, արքունական ընդունելության ժամանակ ճաշի սեղանին պետք է նստեին 400 նախարարներ եւ բոլորից վեր՝ ութ գահագլուխ իշխաններ, որոնց մեջ էր նաեւ Սյունյաց տերը: Թագավորն ամբողջ զորքերի հրամանատարներ է նշանակում չորս իշխանների: Արեւելյան կողմի հրամանատարն էր Սյունիքի տերը, որին ենթակա էին քսանմեկ իշխաններ: Օրբելյան պատմիչի վերը նշված տեղեկությունները հաստատվում են պատմական այլ փաստաթղթերով:

Արշակունյաց թագավորության ժամանակ նախարարական տների, նրանց հզորության եւ արքունիքում ունեցած քաղաքական կշռի ու դերի մասին մենք տեղեկանում ենք երկու հույժ կարեւոր եւ անգնահատելի պատմական վավերագրերից, որոնցից մեկը կոչվում է Գահնամակ, իսկ մյուսը՝ Զորանամակ: Գահնամակն Արշակունիների օրոք արքունիքում նախարարական տների գրաված տեղերի ու պատվաստի-

ճանների մասին թագավորի կողմից հատուկ հրովարտակով վավերացված փաստաթուղթ է: Գահնամակն ընդունված է կոչել Սահակյան, քանի որ այն կազմել է պարսից արքային է ներկայացրել Սահակ Պարթևը կաթողիկոսը 428 թ. հետո: Փաստաթղթում իշխանական տները նշված են որոշակի կարգով, հերթականությամբ, ըստ իրենց կարողության ու նշանակության: Հաջվի է առնված նրանց ծագումը, տոհմական վաղեմությունը, տնտեսական եւ ռազմական հզորությունը: Գահնամակը մեզ է հասել մի քանի տարբերակներով: Պատմական վկայագրերում Արշակունիների օրոք նշվում են հայ նախարարական տների տարբեր թվեր՝ 70, 167, 400, Նույնիսկ՝ 900: Սյունյաց իշխանական տունը Գահնամակի գրեթե բոլոր տարբերակներում նշվում է առաջինը: Դա նշանակում է, որ Սյունյաց իշխանական տունը Արշակունիների օրոք ամենահեղինակավոր ու հզոր նախարարությունն էր եւ կանգնած էր հայ իշխանների ավատական սանդղակի ամենավերին աստիճանի վրա: Գահնամակում հիշատակվում է Սյունյաց երկրորդ իշխանական տունը, իսկ նրա տարբերակներից մեկում՝ առանձին հիշատակվում են նաեւ Տաթևեանք կամ տաթևացիները:

Սյունեցիների բարձր դիրքը վկայող մյուս պատմական վավերագիրը Զորանամակն է: Սա ավելի էին փաստաթուղթ է, քան Գահնամակը եւ ստեղծվել է նախքան Խոսրով III Կոտակ (330-338 թթ.) թագավորը: Զորանամակն Արշակունյաց Հայաստանում օգտագործված պետական հրամանագիր էր, որով սահմանվում եւ դասակարգվում էին հայոց երկրի զինական ուժերն ըստ չորս զորավարությունների՝ հյուսիսային, հարավային, արեւմտյան եւ արեւելյան: Արեւելյան զորավարությունը, որի մեջ մտնում էին 21 նախարարություններ, հնուց ի վեր ղեկավարում էին Սյունիները: Զորահավաքի ժամանակ հայոց բանակին ամենից շատ զինվորներ տալիս էր Սյունիքը՝ 19400 մարդ եւ մտնում էր բյուրավորների շարքը: Իսկ այդ շարքում ընդամենը երկուսն էին՝ սյունեցիները եւ կադմեացիք: Վերջիններս տալիս էին 13200 զինվոր: Որպեսզի պարզ լինի Սյունյաց իշխանների ռազմական գերազանցությունը, նշենք, որ այնպիսի հայտնի նախարարական տներ, որպիսիք էին Բագրատունիները եւ Մամիկոնյանները, հայոց բանակին տալիս էին ընդամենը հազարական զինվոր: Սյունեցիներին էր հանձնարարված պահպանելու Այսրկովկասի հյուսիս-արեւելյան դարպասը՝ Դերբենտի (Ճորա, Հոնաց) ռազմավարական նշանակություն ունեցող կիրճը:


Անհնարին է ըստ հերթականության թվարկել Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի (62-428 թթ.) Սյունյաց բոլոր իշխաններին: Ալիշանը փորձել է պատկերել Սյունյաց իշխանական

տան կենաց ծառը, բայց այն հստակվում է միայն Անդոկ իշխանից սկսած՝ 4-րդ դարի կեսերից: Սյունյաց իշխանների մասին ամենահին տեղեկությունը տալիս է Մովսես Խորենացին: Այն վերաբերում է երկրորդ դարի կեսերին: Բակուր իշխանը ընթրիքի է հրավիրում Սյունիքում ապաստան գտած Տրդատ Բագրատունուն, որը խնջույքի պահին, խախտելով լեռնցիների հյուրասիրության կանոնները, սիրահետում է Բակուրի Նազենիկ անունով վարձակ նվագաժողին: Բակուր Սյունին գայրանում է եւ պատրաստ էր պատժել հյուրին: Սակայն Տրդատը կարողանում է հարձի հետ ձիով մի կերպ փախչել Սյունիքից: Պատմական այդ տեղեկությունն է ընկած Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի հիմքում:

Մենք արդեն գիտենք Սյունյաց անանուն (Ալիշանի մոտ կասկածանքով՝ Պելուժավր Սյունեցի), սակայն հանրահայտ իշխանի մասին, որը Տրդատ III Մեծ թագավորի օրոք աչքի ընկնող քաջագործություններ կատարեց քրիստոնեության տարածման ժամանակ: Նույն այդ իշխանն աչքի է ընկել մեկ ուրիշ պատերազմում եւս, որ Տրդատ Մեծը Հռոմից վերադառնալուց հետո մղել է՝ հյուսիսից Հայաստանը ասպատակելու եկած թշնամիների դեմ: Ամենայն հավանականությամբ, նրան հաջորդած Սյունյաց իշխանի անունը արդեն ստույգ հայտնի է: Հայոց Խոսրով III Կոտակ թագավորի ժամանակ հայտնի է դառնում Սյունյաց Վաղինակ անունով իշխանը: Հայոց թագավորի դեմ ապստամբել էր Աղձնիքի Բակուր բղեշխը եւ դիմել անլուր դավաճանության: Նա պարսից արքայի հետ համաձայնության գալով՝ ասպատակեց ու ավարի ենթարկեց հայոց արքունի տունը: Եվ ապավինելով պարսկական զորքերին, նա իսկական պատերազմ սկսեց հայոց թագավորի դեմ, բայց, ի վերջո, չարաչար պարտություն կրեց: Ապստամբության ճնշման գործում գլխավոր դերը խաղաց Սյունյաց երիտասարդ իշխան Վաղինակը: Ապստամբ բղեշխի սերունդը գլխատվեց, իսկ Բակուրի գլուխը մի դեռատի աղջկա հետ բերեցին հայոց թագավորի մոտ: «Եվ որովհետեւ նրա տոհմից ուրիշ ոչ ոք չէր մնացել՝ թագավորն այդ աղջկան կնության տվեց իր սիրելի Վաղինակ Սյունիին, գրում է Փավստոս Բուզանդը, - նրան տվեց նաեւ Աղձնյաց տունը եւ նրան դարձրեց բղեշխ եւ ժառանգ այդ տան»: Վաղինակ Սյունեցին հայոց արեւելյան զորքերի հրամանատարն էր եւ, ըստ Եղիշեի, սպանվել է Վասակի հրամանով: Ալիշանն այս Վաղինակի որդին է համարում Սյունյաց եւ հայոց ողջ պատմության մեջ ամենից նշանավոր իշխաններից մեկին՝ Անդոկին: Պատմիչները նրա անունը գրում են նաեւ Անդովկ, իսկ Խորենացին՝ Անտիոք ձեռով:

Անդոկ Սյունի իշխանը 4-րդ դարի հայ նշանավոր քաղաքական ու ռազմական գործիչ էր: Նա հայ իշխանների շարքում ամենահեղինակալն ու դրամատիկ կերպարներից է, որն իր մեջ խտացրել էր լեռնական սյունեցու բնավորության էական գծերը: Անդոկ Սյունին Սամիկոյանների փեռան էր: 338 թ. իր քենակալ Արշավիր Կամսարականի հետ վարել է սպարապետության պաշտոնը: Նա նշանակվել է Տիգրանակերտ քաղաքի կառավարիչ եւ կռվի ժամանակ խիստ դիմադրություն ցույց տվել պարսից արքա Շապուհի զորքերին: Խորենացին վկայում է, որ գազազաձ պարսից արքան հրամայում է սրի քաջել եւ ոչնչացնել Սյունյաց տոհմը: Սակայն այդ հրամանի կենսագործումն այնքան էլ հեշտ չէր նույնիսկ պարսից արքայի համար: Անդոկ իշխանն աչքի է ընկել նաեւ Ռսխայի 350 թ. հայտնի ճակատամարտում: Պարսից արքան մեծ բանակով մտել էր Հայաստան՝ երկիրը վերջնականապես նվաճելու եւ կործանելու մտադրությամբ: Հույներից օգնություն խնդրող հայկական պատվիրակության կազմում էր նաեւ Սյունյաց նահապետը: Հունա-հայկական եւ պարսկական բանակների միջեւ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Բասենի Ռսխա բնակավայրի մոտ: Ճակատամարտից առաջ Անդոկ Սյունին, կայսր Կոստանդինոսի եւ Արշավիր Կամսարականի հետ՝ կաղամբազաճառի շորեր հագած, շրջել է թշնամու բանակատեղում, զննել պարսկական դիրքերը: Հետախուզությունը վճռական դեր խաղաց ճակատամարտի հաղթական ելքի համար: Գերի ընկավ եւ պարսից արքայի կանանոցը՝ տիկնանց տիկին Բամբիշի հետ: Հաղթանակի շնորհիվ Հայաստանն ապահովեց իր անկախ գոյությունը: Մինչեւ Արշակ II-ի գահակալելը, Հայաստանի վերակացուներ նշանակվեցին Անդոկ Սյունին եւ Արշավիր Կամսարականը:

Անդոկ իշխանի կենսագրության հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Օրբելյանը: Պատմիչը նշում է, որ իր տեղեկությունները քաղել է Պետրոս Սյունեցու ձեռագրերից: 387 թ.՝ Հայաստանի առաջին բաժանումից հետո, Սյունիքը Արեւելյան Հայաստանի կազմում ենթակա էր պարսկական գերիշխանությանը: Հայ նախարարները պարսից արքունիքում ունեին իրենց հատկացված բարձերը՝ բազմոցները: Շապուհ արքան հրամայում է՝ պարզել հայ նախարարների կարգավիճակը եւ Սյունյաց իշխան Անդոկին հատկացնում է տասնչորսերորդ բարձը: Մինչեւ հոգու խորքը վիրավորված հպարտ սյունեցին այդ օրը ոչինչ չճաշակեց խնջույքի սեղանից: Շապուհը միայն քնծիծաղում էր՝ կարեւորություն չտալով Անդոկի խռովելուն: Լեռնցի իշխանը անկարող էր կուլ տալ նման անարգանքը: Եվ նա վրեժխնդիր եղավ: Երբ



Բաղաբերդ, III-IV դդ., Կապան

պարսից արքան գնաց պատերազմելու իր երկիրն ասպատակող խազիւների դեմ, Անդոկը վերցրեց 1700 մարդուց բաղկացած մի ընտիր



տալով, որ հայ կինը տղամարդուց ոչ պակաս կարող է անկուտրում ու հայրենասեր լինել: Սյունյաց կանայք մեծ համարում են ունեցել հին Հայաստանում եւ աչքի են ընկել ոչ միայն գեղեցկությամբ: Ռաւկատի ունենալով, Ալիշանը գրում է. «Ոչ ինչ ընդհատ յարանց՝ մեծ ոգիք եւ վեհագունք հանդիսանան ի վէպս եւ կանայք Սիւնեաց, պեսպես, չք-նաղ եւ վսեմական կերպարանօք առավել քան գայլ աշխարհս Հայոց»:

Սյունյաց Անդոկ իշխանի արու գավակներից էր Բաբիկը, որը ցուցաբերելով համառություն եւ հերոսություն, ի վերջո ժառանգում է հոր իշխանությունը եւ դառնում Սյունիքի տեր (Ն. Ադոնցը գտնում է, որ Բաբիկը ոչ թե Անդոկ Սյունու որդին է, այլ մերձավոր հաջորդը): Բաբիկը գտնվում էր Բյուզանդիայում եւ վարում էր իշխանավայել կյանք: Սակայն հոր մահից հետո Նա փափագում էր գալ Սյունիք եւ տեր կանգնել հայրենի ժառանգությանը: Չհայտնելով իր ուժ լինելը, Բաբիկը կամավոր զինվորական ծառայության է անցնում պարսիկների մոտ, բազմիցս աչքի ընկնում համապարսկական օլիմպիական խաղերում: Նա անուն հանած տղամարդ էր եւ պարսիկներին փրկում է մի արյունալի պատերազմից՝ մենամարտում հաղթելով հունների Հոնանգուրի հաղթող հերոսի ամեն մի ցանկություն: Ղեպքը առավել հետաքրքիր է ներկայացնում Մովսես Կաղանկատվացին. «Նա (Բաբիկը) խոսք խնդրելով ասում է. «Թող պղնձյա սանդը քո դռնից վերցվի»: Իսկ սանդը լցված էր հնոցի մոխիրով, ովքեր գալիս էին այդտեղ, խփում էին սանդին եւ ասում. «Սյունիքի իշխանությունը այս մոխրի հետ թող վայր թափվի՝ կյանքով եւ մտադրություններով»: Թագավորը մեծ զարմանքով հրամայում է սանդը իր տեղից վերցնել: Ապա Բաբիկն արքայից խնդրում է իր բնիկ հայրական երկիրը իրեն վերադարձնել»: Շապուհը տալիս է իր համաձայնությունը եւ արտոնում Բաբիկ Սյունուն գահակալ դառնալ Բագրատունի եւ Մամիկոնյան իշխանների հետ հավասար աստիճանով: Բաբիկը Սյունյաց իշխանապետությունը ստանձնում եւ ղեկավարում է 21 տարի: Նա Սյունիք է գալիս իր զինակից երկու պարսիկ իշխանների՝ Գորի ու Գազանի հետ: Պարսիկ եղբայրները ընդունում են քրիստոնեական հավատը, մկրտվում ու կալվածներ ստանում: Գորը ստանում է Խոտ գյուղը (Գորիս), իսկ Գազանը՝ Շաղատ գյուղաքաղաքը: Բաբիկը շենացնում է երկար ժամանակ անիշխան ու բարձիթողի մնացած հայրենի երկրամասը: Նա եռանդուն մասնակցություն է ունեցել Հայաստանի քաղաքական կյանքին: Սյունյաց Բաբիկ իշխանն էր, որ կռվելով Մանվել Մամիկոնյանի զորքերի շարքերում, իր ձեռքով սպանում է դավաճան Մերութան Արծրունուն:

Այդ մասին վկայում է Փավստոս Բուզանդը. «Անմիջապես Մանուելի նիզակակից Բաբիկը, Սյունյաց գավառի տերը, վրա է հասնում, նիզակով կողից վերեւից վար խփելով (Մերութանին) կարում է գետնին»:

Բաբիկ Սյունու դուստրն ամուսնանում է Հայոց Արշակ III թագավորի հետ (378-391 թթ.): Նրա որդի Ռարան դառնում է բյուզանդական Հայաստանի սպարապետ: Ռարան Արշակ III-ի հետ անցնում է բյուզանդական Հայաստան եւ սպանվում պարսիկների դեմ մղած ճակատամարտերից մեկում: Բաբիկի մյուս արու գավակն էր հանրահայտ Վասակ Սյունին: Վասակը որպես պատանդ մեծանում էր պարսից արքունիքում: 399 թ. մահանում է Սյունիքի տեր Բաբիկ Սյունին (378-399 թթ.): Բոլոր պարսից արքունիք է հասցնում Բաբիկի սենեկապետ Սամ Գևորգին: Վերջինս տեղեկանալով, որ պարսից արքան մտադիր է Սյունյաց իշխանական գահը հանձնել Վասակին, շտապում է նրան ավերելու լուրը. «Ի՛նձ է տեր դարձնում, երբ Սյունիքի ժառանգությունը իմ բուն հայրենականն է», - չոր պատասխանում է երիտասարդ Վասակը: Պարսկական արքունական դաստիարակությունը չէր ազդել լեռնցու ինքնասեր բնավորության վրա: Այդ խոսքերի համար պարսից արքան Վասակին պատժում է եւ Սյունիքի տեր է նշանակում քու Սամ Գևորգուն: Բայց սա իշխում է ընդամենը մեկ տարի եւ մահանում թունավորումից: Սամից հետո Սյունիքում իշխել է Վասակի հորեղբայր Վաղինակ Սյունին (400-409 թթ.):

Վաղինակ Սյունին աչքի է ընկել կրթական-լուսավորչական գործերով: Նա սիրով ընդունել եւ հովանավորել է Սյունիք եկած Մեսրոպ Մաշտոցին: Այդ ժամանակ երկրամասում տեղ-տեղ գլուխ էր բարձրացրել կռապաշտությունը, եւ Մաշտոցը՝ Վաղինակ իշխանի օգնությամբ, կարողացավ խաչառ վերացնել հեթանոսական աղանդները՝ խորտակելով թաքցրած կուռքերը: Սյունիքում Մաշտոցը բացեց դպրոցներ, մենաստաններ եւ այստեղ թողեց իր ընտրյալ աշակերտներ Բենիամինին ու Անանիային, որոնք հայտնի թարգմանիչներ էին: Անանիան հետո ընտրվում է Սյունյաց մետրոպոլիտ: Վաղինակ Սյունին իշխեց մինչեւ 409 թ.: Պատմական աղբյուրները վկայում են, որ Նա դարձավ դավաճանության զոհ: Ըստ Եղիշեի՝ դավադրության կազմակերպիչը եղել է Վասակ Սյունին, որը պարսից արքունիքում ամբաստանեց հորեղբորը եւ սպանել տվեց նրան: Այդ դեպքից հետո Վաղինակի Բաբկեն եւ Բակուր որդիները թշնամանում են Վասակի հետ եւ հեռանում Սյունիքից: Ահա այս ճանապարհով Սյունիքի տեր է դառնում հանրահայտ Վասակ Սյունին:



## Զ. Սյունիքը մարզպանական Հայաստանի կազմում եւ նրանից դուրս

428 թ.՝ հայոց Արշակունյաց թագավորության անկումից հետո, Հայաստանը վերածվեց պարսկական գերիշխանության տակ գտնվող մարզի ու սկսվեց ղեկավարվել պարսից արքունիքի կողմից նշանակվող մարզպաններով: Առաջին հայ մարզպանները եղել են Սյունիները: Մարզպանական Հայաստանում խիստ բարձրացավ Սյունյաց իշխանական տան քաղաքական կշիռը: Սակայն, ցավոք, այդ իշխանական տունը չկարողացավ դառնալ հայ ազգային ուժերը միավորող միջուկ, անչափ անմիաբան էին հայ նախարարական տները, թշնամանքի հասնող երկպառակություն էր տիրում նրանց միջեւ:

Վասակ Սյունին (387-455 թթ.) բարդ ու հակասական կերպար է հայոց պատմության մեջ: Մարզպանական Հայաստանում Սյունյաց իշխանական տան քաղաքական դերի բարձրացումը, անշուշտ, կապված է այդ մարդու անվան հետ: Նա Սյունյաց տեր դարձավ 409 թ. տակավին 22 տարեկան հասակում: Երիտասարդ Սյունյաց իշխանը աչքի ընկավ հայրենաշեն գործերով այն աստիճան, որ Կորյունը նրա մասին գրում է. «Այն ժամանակ Աստված փվեց, որ Սյունիքի իշխանության գլուխն անցավ քաջ Միսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագեղ, աստվածային իմաստության շնորհքով օժտված մի մարդ»<sup>10</sup>: Կորյունը նկատի ուներ այն, որ Վասակը մեծապես նպաստել էր Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքում ծավալած լուսավորչական, կրթական ու թարգմանչական գործունեությանը: Պարսից արքունիքում վստահում էին նրան: Հաշվի առնելով կարողությունները՝ 440 թ. նրան նշանակեցին Վրաստանի մարզպան: Պատմական աղբյուր տեղեկություններ կան, որ Վասակը Վրաստանում եղած ժամանակ գաղտնի կապեր է հաստատել կովկասյան լեռնականների հետ եւ Բաղասական թագավորի մասնակցությամբ ցանկացել ապստամբություն կազմակերպել պարսից գերիշխանության դեմ, որի հետեւանքը պիտի լիներ հայկական անկախ պետականության վերահաստատումը սյունեցիների գլխավորությամբ: Սակայն այդ դավադրությունը բացահայտվեց, բայց Վասակը փոքր-ինչ նույնիսկ կասկածանքի տակ չընկավ: Ավելին, 441 թ. նա պաշտոնում առաջ քաշվեց եւ նշանակվեց Հայաստանի մարզպան: Հայաստանի մարզպանից Հայաստանի թագավոր դառնալը ըն-

դամենը մեկ քայլ էր: Սակայն իրադարձությունները ծավալվեցին այլ կերպ, եւ 450-451 թթ. հայ ազատագրական պայքարի վճռական պահին Վասակը հայտնվեց պարսիկների կողքին եւ հռչակվեց դավաճան: Այնուամենայնիվ մի շարք հայագետներ՝ ինչպես Ա. Գարազաշյանը, Ն. Ադոնցը, Զ. Արմենը, Ստ. Մալխասյանցը, Մ. Հասարթյանը եւ ուրիշներ, Վասակ Սյունու՝ հայրենիքի դավաճան լինելը ընդունում են վերապահություններով: Նրանք գտնում են, որ Վասակ Սյունին, ի տարբերություն գինձորական Վարդան Մամիկոնյանի, գործել է որպես հեռատես եւ իրապաշտ քաղաքական գործիչ: Նա ապստամբությունից հրաժարվեց միայն այն պահին, երբ զգաց, որ Բյուզանդիայից եւ հուններից օգնություն ակնկալելն անիմաստ է: Իսկ այդ պահին պարսիկները պատրաստ էին զիջումների, մասնավորապես հավատափոխության հարցում: Վասակ Սյունուն կարելի է հասկանալ նաեւ որպես հայրենող. պարսկական արքունիքում պատանդ էին պահվում նրա երկու զավակները՝ Ներսիկը (Ատրնետեսի) եւ Բաբիկը: Եվ, վերջապես, պետք է նկատել, որ մշտապես Վասակ Սյունու հետ կային ոչ քիչ թվով հայ նախարարներ, որոնք կիսում էին նրա քաղաքական հայացքներն ու մոտեցումները: Որ Վասակ Սյունին պարսից արքունիքի համար եղել է ոչ ցանկալի քաղաքական գործիչ, վկայում է այն, որ, ի վերջո, Տիգրանում նրան դատապարտեցին մահվան: Ամեն դեպքում, եթե Վասակը դավաճանել է ապստամբներին, չի նշանակում, թե նա կողմ էր պարսկական լծին, հայերի ուժացմանը եւ զրադաշտություն ընդունելուն:

Վասակ Սյունուն տարբեր գնահատականներ են տվել նաեւ 5-րդ դարի հայ պատմիչները: Նրան անվերապահորեն դավաճան եւ մերժելի մարդ են համարել կրտսեր սերնդի պատմիչները՝ Եղիշեն ու Ղազար Փարպեցին: Ավագ սերնդի պատմիչները, մասնավորապես Խորենացին, նրա մասին որեւէ բացասական բան չեն ասում, իսկ Կորյունը, ինչպես տեսանք, նրան նույնիսկ գովաբանում է: Սյունյաց տան պատմիչ Ստ. Օրբելյանը եւս, առանց որեւէ վերապահության, նրան դավաճան է հռչակում եւ այդ առթիվ գրում. «Առաջ բանիս եւ եղուկ սկսմանս, զի ոչ խնդամարտար ինչ կամիմ ճանել վէպս. այլ լի երկմամբ եւ սգով, յոգնահոծ եւ քանցրապարտի մթացեալ ողբով»<sup>11</sup>:

Պատմիչի ներկայացմամբ՝ «Վասակ էր շքեղ եւ բարձր ի մեջ աշխարհիս Հայոց եւ յոյժ մեծարգոյ եւ երեսնի ի դրան արքունի»<sup>12</sup>:

Վասակի որդիներ Բաբիկն ու Ներսիկը (Ատրնետեսի), ինչպես նշեցինք, Վրաց Աշոտ Բ Բագրատի հետ միասին պատանդ էին վերցված Պարսից Հազկերտ արքայի մոտ: Երբ հայոց իշխանները առերես ուրացությունից հետո վերադարձան Հայաստան, ժողովրդական



հուզումների ալիքը բարձրացավ ամենուր, իսկ Վասակն իր սիրելի զավակների համար «*ոչ ունեւ քուն ի գիշերի կամ հանգիստ ի քունքիս*»<sup>13</sup> եւ չար հուսահատությունից դրդված՝ դիմում է ուրացության: Մի շարք իշխանների հետ միասին (Տիրոց Բագրատունի, Գադիշո խորխոռունի, Գյուտ Վահեունի, Վարազշապուհ Պալունի, Արտեն Գաբեղեանց) առանձնացան՝ Յազկերտ Բ-ից «շնորհուկս» ստանալու ակնկալիքով:

Այնուամենայնիվ, հավատարիմ մնալով Վարդանին, Սյունյաց ամբողջ այրուձին մասնակցեց Ավարայրի ճակատամարտին՝ քաջաբար կռվելով Վարդանանց շարքերում:

Վասակի հախուռն, հակասական կերպարը՝ սիրող ծնողի եւ փառամոլ քաղաքական գործչի նկարագիրը, ցայտուն կերպով արտացոլված է ականավոր վիպասան Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:

Վասակը, իրոք, եղել է համակովկասյան մասշտաբի խոշոր գործիչ: Նա, թերեւս, ցանկանում էր հայոց պետականությունը վերականգնել դիվանագիտական խաղերի ճանապարհով, առանց արյուն հեղելու, սակայն վճռական պահին, երբ արդեն ողջ ժողովուրդը կանգնել էր Վարդան Մամիկոնյանի ղեկավարած ազատագրական պայքարի դիրքերում, Վասակը թույլ տվեց ճակատագրական սխալ՝ այդ պահին մեկնելով Տիգրան: Այս արարքն, իրոք, դավաճանություն էր: Պարսից հազարապետ Միհրներսեսը դիվանագիտական մեքենայություններով կարողացավ հասնել իր նպատակին: Վասակ մարզպանին կտրեց իր ժողովրդից եւ հակադրեց նրան: «Հիմարեալ լինեւ անօրէնս Վասակ», - գրում է Ստեփանոս Օրբելյանը: Հոգեկան տառապանքների մեջ այստեղ էլ՝ Տիգրանում, ինչպէս նշվեց, վախճանվում է Վասակը:

Եղիշե պատմիչը, որ խորին ատելությամբ է արտահայտվում Վասակի նկատմամբ<sup>14</sup>: Վասակ անունը հետագա եկեղեցական պատմիչների մոտ հանդես եկավ իբրեւ դավաճանի խորհրդանիշ: Մատենագրական աղբյուրներում եւ վիմական արձանագրությունների անեծքի բաժնում Վասակը հիշատակվում է Կայենի, Հոտայի եւ այլ չարագործների կողքին:

Փաստենք, որ ապստամբության սկզբում Վասակ Սյունին հայ նախարարների ուխտի մեջ էր եւ դարձավ ազատագրական շարժման գլխավոր քաղաքական ղեկավարը: Ինքն էր զբաղվում արտաքին օգնություն ստանալու հարցերով: Նա նամակ հղեց բյուզանդական կայսրին, փորձեց կապեր հաստատել հունների հետ: Բայց նրա

ջանքերը ապարդյուն էին: Բյուզանդիան, բավարարված լինելով Հայաստանի՝ իրեն բաժին հասած տարածքներով, չէր ցանկանում Հայաստանը՝ վերստին տեսնել անկախ եւ, մանավանդ, հայերի պատճառով պատերազմել Պարսկաստանի դեմ:

Իսկ ինչո՞ւ Վասակը ետ կանգնեց ապստամբությունից, պարզապես դավաճան դառնալու ցանկությունն էր, ինչպես պնդում է Եղիշեն: Նա կարող էր հենց սկզբից հրաժարվել այդ ամենից եւ պարսկական արքունիքի առջեւ որեւէ բիծ չափել իր գործունեության վրա: Նա ինքն էր ծրագրում եւ նախապատրաստում ապստամբությունը, բայց կտրուկ դեմ էր վաղաժամ գործողություններ սկսելուն: Վասակը ապստամբությունից ետ կանգնեց այն ժամանակ, երբ տեսավ, որ հաղթանակի որեւէ հույս չկա եւ իզուր արյուն պիտի հեղվեր: Եվ, այնուամենայնիվ, որքան էլ որ քաղաքական հեռատես գործչի վարվելակերպի տեսակետից հասկանալի լինի այդ քայլը, Ավարայրի ճակատամարտի ժամանակ նա կանգնած էր հայերի դեմ կռվող պարսիկների հետ, եւ դա այլ բան, քան դավաճանություն, չի կարելի չորակել: Հետաքրքիր է այն փաստը, որ ապստամբության սկզբում եղել է մի պահ, երբ Վարդան Մամիկոնյանը ընտանիքով ցանկացել է հեռանալ Բյուզանդիա, եւ միայն Վասակի վստահություն ներշնչող նամակն է նրան ետ բերել: Նամակում հույս էր հայտնվում, որ օգնության կգան հոները, եւ իրենք կհաղթեն պարսիկներին: Այդ պահին ապստամբության ոգի տվողը եղել է մարզպան Վասակ Սյունին:

Միսիանի Անգեղակոթ գյուղից քիչ հեռու՝ Նախիջեան տանող ճանապարհի աջ կողմում, կա կիսավեր մի եկեղեցի, որին տեղացիները կոչում են «Վարդան գորավոր»: Տեղի բնակիչների մեջ այն կարծիքն է տիրում, որ այդտեղ է թաղված հայրենասեր զորավար Վարդան Մամիկոնյանը: Այդպիսի կարծիք է հայտնել նաեւ պատմաբան Մորուս Հասրաթյանը, գտնելով, որ զորավարի դին այստեղ են բերել Ավարայրից նախանշող զորքերը: Հնարավոր է, որ Ավարայրից Նախիջեանի վրայով Արցախ գնացող զորքերն անցնեին այդ ճանապարհով, բայց արդյո՞ք Վարդան Մամիկոնյանը կարող էր թաղված լինել իր քաղաքական հակառակորդ Սյունիների հողում, Սյունիքի այդ ժամանակվա մայրաքաղաք Շաղատից ոչ հեռու:

Վասակ Սյունին, ասես որպես դաս ուխտազանցների, ունեցավ աննախանձելի վախճան: Պարսիկների աչքին դուր գալու իր բոլոր ջանքերին հակառակ՝ նա Ավարայրի ճակատամարտից հետո հանվեց մարզպանի պաշտոնից: 452 թ. Տիգրանում, պարսից արքա Յազկերտ II-ի (438-457 թթ.) ներկայությամբ, տեղի ունեցավ հայերի ապստամբու-

թյան ղեկավարների դատ: Մեղադրվում էին 8 հոգեւորականներ եւ 31 իշխաններ: Մեղադրյալների մեջ էին նաեւ Սյունյաց Վաղինակ իշխանի Բաբկեն եւ Բակուր որդիները: Վասակ Սյունին Տիգրան ներկայացավ ոչ իբրեւ մեղադրվող եւ արժանացավ հարգարժան ընդունելության: Հայ նախարարները սկզբից եւեթ ապստամբության ամբողջ մեղքը բարդեցին նախկին մարզպանի վրա: Ռատարանում ի ցույց դրվեցին Բյուզանդիա մեկնող Վարդան Մամիկոնյանին ետ բերող եւ Բյուզանդական կայսրին՝ օգնության խնդրանքով Վասակ Սյունու գրած ու իր կնիքով վավերացրած նամակները: Պատմիչները չեն նշում, թե Վասակը ինչ բացատրություններ տվեց այդ առթիվ: Պարսից արքան սիրով արձակում է Վասակի մահվան դատավճիռը: Ամենայն հավանականությամբ, այդ վճիռը եղել է կանխորոշված, իսկ Տիգրանի դատը՝ դատախազ: Պարսից արքունիքում իր սեւ գործն էր անում Վասակի փեսա Վարազվաղանը, որը կռվելով աներոջ հետ՝ ապաստանել էր պարսից արքունիքում, նրա դեմ մշտապես որոգայթներ էր լարում մարզպան դառնալու ակնկալիքով: Մահվան վճիռը անսպասելի էր Վասակ Սյունու համար, ինչպես վկայում է Փարպեցին, նա Տիգրան էր մեկնել՝ արքունիքից պարզել ստանալու սպասելիքով: Վասակ Սյունին ենթարկվում է «պատուհասման»: Դատը ավարտելու հաջորդ օրը նրան արքունական ընթրիքի են ներկայացնում՝ շքագգեստով եւ պատվանշաններով պճնված: Արքունի սենեկապետը, ի տես բոլորի, մեկ-մեկ հանում է պատվանշանները, շքեղ գգեստները, զարդերը եւ նրան հազցնում մահապարտի շորեր: Դա ծանր, ուսանելի սեւ օր էր ոչ միայն սյունեցիների համար:

Վասակ Սյունու վրա բարդվեց նաեւ հարկերը յուրացնելու մեղադրանք եւ նշանակվեց խոշոր տուգանք: Եղիշեն գրում է, որ Վասակի ծառաները ստիպված հաց էին մուրում նրա համար: Դա, իհարկե, չափազանցություն է: Եղիշեն գրում է նաեւ այն մասին, որ իբր Վասակ Սյունին եղել է ուրացող, հավատափոխ, սակայն Փարպեցին այդ առթիվ որեւէ ակնարկ չի անում, եւ Եղիշեի պնդումը հավատ չի ներշնչում: Նախկին մարզպանի մահվան վճիռը անմիջապես ի կատար չածվեց: Նա պարսկական կալանքում ապրեց եւս մի քանի տարի ու մահացավ, ինչպես ենթադրում է Լեոն, 455 թ.:<sup>68</sup> տարեկան հասակում:

Հազկերտ II-ը Սյունյաց իշխանությունը հանձնում է հավատափոխ Վարազվաղանին, որն իշխում է 25 տարի (452-477 թթ.): Ժամանակի երկու խոշոր գերտերությունները՝ Բյուզանդիան եւ Պարսկաստանը, ամեն կերպ ջանում էին հայերին զրկել քաղաքական կարող ղեկավար

ուժերից, ջլատել հայ նախարարների շարքերը: Հայաստանի նկատմամբ պարսկական քաղաքականության կարեւոր խնդիրներից մեկը Սյունիքը հայ քաղաքական կյանքի ոլորտից մեկուսացնելն էր, այդ հզոր նախարարական տունը ուրիշ տների հակադրելը: Այդ գործում նրանք ունեցան որոշակի հաջողություններ:

Սյունյաց իշխան, ուրացող Վարազվաղանին Օրբելյանը կոչում է «դիվահար»: Նրան փոխարինել է Նույնպես հավատափոխ, «անհեթեթ» եւ «անճոռնի» հսկա Գդիհոն Սյունին (477-484 թթ.): 481-484 թթ. Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ սկսված ապստամբության ընթացքում հայերի դեմ կռվող պարսկական զորքերի շարքում էր նաեւ Գդիհոն Սյունին՝ իր հեծյալ գնդով: Այդ ամբարտաձան մարդուն են պատկանում հետեւյալ խոսքերը, որ մեջբերում է Ղազար Փարպեցին. «Ես Վահանի եւ ուրիշ հայերի հետ նետով չափտի կռվեմ, այլ գդգիկով, նետի կոթով, բոլորիդ կցրեմ ու կոչնչացնեմ, այս ու այնտեղ՝ ծորերում ու դաշտերում ցիրուցան անելով»: Դավաճանի խոսքերը իրականություն չդարձան: Առաջին անգամ նա ճողոպրելով՝ մահից խուսափեց 482 թ. Ակոռիի հայտնի ճակատամարտում: Ակոռիի ճակատամարտի հերոսներից էր Վահանի զինակից «լավ այր» Բաբկեն Սյունին: Օրբելյանի բնորոշմամբ՝ ահավոր «բուրգ» Գդիհոն Սյունին սպանվում է 484 թ. Շիրակի Ըշտե կամ Շովա գյուղի մոտ: Դա ապստամբների համար մեծ հաջողություն էր: Սյունյաց հեծելազորը, մնալով առանց հրամանատարի, ցրվեց եւ մաս-մաս վերադարձավ իր երկիրը: Վահան Մամիկոնյանի դեմ կռվել նրանց ստիպում էր Սյունյաց իշխանը: Գդիհոնի ծառաները եւ ազգականները նրա փորոտիքը թափեցին, դին եղեգներով ծածկեցին ու բերեցին Սյունիք: Այսպես, անփառունակ վախճան ունեցավ մի դավաճան իշխան եւս:

Սյունիքի համար ծանր փորձությունների ժամանակաշրջանում, երբ Սյունյաց իշխանները, հավատափոխ լինելով, դարձել էին պարսկամետ, ուրախալի է, որ եղել են նաեւ քաջակորով սյունեցի հայրենասեր իշխաններ: Դրանց մեջ առանձնանում է Յազդ կամ Հազդ անունով կրտսեր իշխանը, ըստ Փարպեցու՝ Նույն այդ Գդիհոնի եղբայրը: Հազդի հերոսական կերպարն է ստիպում Օրբելյանին՝ գրելու հետեւյալ տողերը. «...գի քէ միով իւիք պարտեալ ամաչեցաք եւ կորագոյնի եղաք վասն ամօթալի գործոց իշխանացն Սյունի, սակայն միտովս բարձր ի գոյնի պարծինք եւ ... բժշկինք...»<sup>69</sup>: Վահան Մամիկոնյանի կողմից կռվող Հազդը գերի է ընկնում: Նրան առաջարկում են (նաեւ եղբայր Գդիհոնը) հավատափոխ լինել եւ արժանանալ պատիվների: Սակայն երիտասարդ սեպուհը գերադա-

սում է մահը: Զրիստոնեական հավատի մեջ անհողորդի իշխանին պարսիկները մորթում են Բագրեանդ գավառի Նպատ լեռան լանջին գտնվող Բագարան գյուղում:

Ուրացող իշխաններ Վարազվադանից եւ Գդիհոնից հետո Սյունիքի նախարարները վարել են խիստ պարսկամետ քաղաքականություն, թեեւ նրանց շարքում այլեւս հավատափոխներ չենք տեսնում: Գնալով խորանում էին Սյունիքի եւ մյուս հայ նախարարական իշխանությունների միջեւ եղած հակասությունները:

6-8-րդ դարերում Սյունիքում կատարված իրադարձությունների մասին պատմական աղբյուրները սակավախոս են: Այդ շրջանում ապրած հայ պատմիչները, ինչպես օրինակ Սեբեոսը, ընդհանրապես չկամությամբ են խոսում Սյունիքի մասին: Սյունյաց տան պատմիչը նույնպես քիչ տեղեկություններ ունի այդ ժամանակաշրջանի անցքերի, Սյունյաց իշխանների, նրանց կատարած գործերի մասին: Օրբելյանը քիչ թե շատ ավելի հանգամանորեն փորձում է ներկայացնել երկրամասի հոգեւոր կյանքը, որի շնորհիվ եւ տեղեկանում ենք մի քանի կարեւոր իրադարձությունների մասին:

6-րդ դարի սկզբին Սյունիք է այցելում Մուշե հայոց կաթողիկոսը (526-534 թթ.): Նրան այստեղ է հրավիրում իշխանուհի Սահակիան, որը ամուսնու մահից հետո ղեկավարում էր իշխանական տունը: Հանդես բերելով նախաձեռնություն, Սահակիան՝ կաթողիկոսի օգնությամբ, վերանորոգում է Սյունիքի հոգեւոր կյանքը, հիմնում վանքեր, կառուցում եկեղեցիներ: 554 թ. Ղվինում հայկական Նոր տոմարի ընդունման առիթով Օրբելյանը նշում է, որ Սյունյաց իշխան Միիր-Արտաշիրը եւ հոգեւոր առաջնորդ Տեր-Վրթանեսը, միաբանելով ժողովին, ուղարկեցին իրենց գիտուն վարդապետներին՝ Նշանավոր գիտնականների, որոնք հայոց վարդապետների մեջ նախաթոռ էին:

7-րդ դարի սկզբին Սյունիքի իշխանն էր Սիսակյան Սահակը, որը Ղվինում իր ստորագրությունն է դնում հայ եկեղեցու միասնության ուխտին: Հավանաբար, այս Սահակ իշխանի կինն էր Բյուրեղը, որը ամուսնու մահից հետո կառավարեց Սյունիքում եւ 624 թ. դիմավորեց Արցախից Նախիջեւան նահանգող բյուզանդական Յերակլ կայսրին: Տիկին Բյուրեղը կռվել է պարսիկների դեմ:

## Է. Սյունիքի քաղաքական եւ հոգեւոր կյանքը VI-IX դարերում

7-րդ դարի կեսերին հայկական լեռնաշխարհում հայտնվում են Նոր նվաճողներ՝ արաբները: Նրանց հուժկու հարվածներից կործանվում է երբեմնի հզոր Սասանյան Պարսկաստանը: Ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ սյունեցիների համար ստեղծվում է քաղաքական Նոր կացություն: Այլեւս գոյություն չունեւ դարավոր պարսկական լուծը: Սյունիքը շարունակում էր իր կիսանկախ գոյությունը: Արաբական առաջին արշավանքները դեպի Հայաստան կատարվել են Սյունիքի սահմանակից Նախիջեւանի վրայով, սակայն նրանք, հավանաբար, շրջանցել են Սյունիքը: Այդ արշավանքներին ժամանակակից պատմիչները, հետազայում չեն: Օրբելյանը, որեւէ ակնարկ չեն անում Սյունիքի կամ սյունեցիների մասին: Իսկ ահա Սեբեոս պատմիչը, խոսելով 652թ. արաբական ապագա խալիֆ Սուամիայի հետ Թեոդորոս Ռշտունու կնքած պայմանագրի մասին, նշում է, որ արաբական գերիշխանությունն ընդունեցին «գՀայս եւ զՍիւնիս»: Սյունյաց իշխանները աջակցում էին Հայաստանի կառավարիչ Թեոդորոս Ռշտունու՝ արաբների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու դիվանագիտական ձեռնարկումներին, թեպետ փաստը, որ պայմանագրում Սյունիքը նշվում է առանձին, վկայում է, որ պարսկական լծի վերացումից հետո Սյունիքը գերադասել է իր անկախ քաղաքական գոյությունը եւ հանդես եկել որպես առանձին վարչատարածքային միավոր: Շատ հնարավոր է, որ Սյունյաց իշխաններն արաբական գերիշխանությունը ընդունել են կամովին, առանց դիմադրության եւ արյուն հեղելու: Սակայն, արաբական արշավանքների տարիներին Սյունիքը գերծ չի մնացել ասպատակություններից ու ավերումներից: Այդ մասին խոսում է Օրբելյանը, գրելով, որ Մաթուսաղայի մահից հետո (643 թ.) Սյունյաց մետրոպոլիտության աթոռն «ուր» տարի մնաց թափուր՝ ավազակային հարձակումների ու խռովությունների պատճառով՝ երբեմն Պարսկաստանի, երբեմն Բյուզանդիայի, երբեմն՝ հունների կողմից»: 652 թ. Կոնստանդ II բյուզանդական կայսրը, արշավելով Հայաստան, մի առանձին գունդ է ուղարկել Սյունիք: Սյունիքը հարձակման է ենթարկվել նաեւ 654 թ. արաբ զորավար Հաբիբի արշավանքի

Ժամանակ: Արաբ պատմագիրները Սիսաջան ցեղը համարում են քաջ եւ պատերազմասեր: Հաբիբը հանդիպում է խիստ դիմադրության եւ գլխահարկ վերցնելու պայմանով՝ հաշտվում:

8-րդ դարի սկզբից, արաբական տիրապետության ժամանակ Սյունիքը մտել է Արմինիա ոստիկանության Առաջին Արմինիա երկրամասի մեջ, որի մեծ մասը կազմում էր Աղվանքը: Արաբական աղբյուրներում Սյունիքն անվանվում էր Սիսաջան: Արաբական տիրապետությունը Սյունիքի համար առանձնապես ծանր չէր: Ղնդիակառակը, Սյունյաց իշխանությունն ավելի գործեցազուրկ զարգանում էր երկրամասի տնտեսությունը, վերածնունդ էր ապրում հոգեւոր կյանքը: Արաբական լուծը թոթափելու պահին Սյունյաց իշխանական տունը կանգնած էր Հայաստանի երեք հզորագույն նախարարական տների շարքում, Բագրատունիների եւ Արծրունիների հետ միասին:

Թեպետ Սյունիքը արաբների օրոք վարչականորեն կտրված էր հայկական միջնաշխարհից, հետեւապես՝ նաեւ Հայաստանի քաղաքական կյանքից, սակայն հոգեւոր եւ մշակութային առումներով միասնական էր: Երբ հայ լուսավորչական եւ հունական ուղղափառ եկեղեցիների դավանաբանական հարցերով Հերակլ կայսեր հրամանով 633 թ. գումարվում է Կարսո ժողովը, հայոց մարզպան Թեոդորոս Ռշտունին Եզր կաթողիկոսին հրահանգում է, առանց Սյունյաց վարդապետարանի ռաբունապետ Մաթուսաղայի, այդ ժողովին չներկայանալ, քանի որ Մաթուսաղան հանրահռչակ գիտնական այր էր, անհաղթ փիլիսոփա, աստվածաբան, եւ նրանից գատ ուրիշ մեկը բովանդակ Հայաստանում լավագույնս չէր կարող մեկնել հայ եկեղեցու դավանանքը, պաշտպանել նրա շահերը: Սյունյաց վարդապետարանը Հայաստանում համարվում էր ամենաառաջնակարգը:

8-րդ դարում Սյունիքի հոգեւոր եւ մշակութային կյանքը նշանավորվում է նրանով, որ Բաբկեն եւ Ջուրդո իշխանների օրոք Սյունյաց հոգեւոր թեմը գլխավորում ու իր գործունեությունն է ծավալում հայ հոգեւոր եւ մշակութային նշանավոր գործիչ Ստեփանոս Սյունեցին: Նա Դվինի մայր եկեղեցու ավագ քահանայի որդին էր, նախնական կրթությունը եւ դաստիարակությունը ստացել էր կաթողիկոսարանում: Ձգտելով հագեցնել գիտելիքների ծարավը՝ տալիս էր երիտասարդ հասակում նա գալիս է Սյունիք, որը որպես կրթավայր հռչակված էր ողջ Հայաստանում: Օրբելյանը գրում է. *«Մակն որոյ ելեալ ի մենարանի անդի փութայ ճնալի յաղբիւրն իմաստից ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, ի պայծառացեալ դպրոցքն, որի նմա»*<sup>16</sup>: Դրա համար դուրս գալով այն

մենաստանից՝ շտապով դիմում է դեպի գիտությունների աղբյուրը՝ Սյունյաց վարդապետարանը, որը Հայաստանի բոլոր գիտունների գլխավոր տեղն էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկած էին: Մեզ են հասել Ստ. Սյունեցու գրվածքները, հիմնականում Աբ. Գրքի մեկնություններ: Օրբելյանի պատկերավոր արտահայտությամբ՝ դրանք ուրիշ մեկնիչների գործերի մեջ փայլում են պայծառ ջահի նման: Կարծիք կա, որ նա եղել է հայկական նոտաների՝ խազերի հայտնագործողը: Լսենք Օրբելյանին. «Գրեց նաեւ (Ստ. Սյունեցին) բազմաթիվ ճառեր. ութ եղանակները բաժանեց, կարգեց, շարեց Հարության օրհնությունները, երգեց եւ քաղցրալուր կցուրդներ հարմարեցրեց «Յիւնանցի»-ի տաղաչափությանը յոթ եղանակներով»: Հայտնի էր նաեւ Ստեփանոսի Սահակոյութս քույրը, կուսավար ճգնավորուհին, որի մասին Օրբելյանը գրել է. «Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը եւ սովորեցնում էր շատերին՝ վարագույրի ետեւ նստած, նաեւ ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ եւ մեղեդիներ, որոնցից մեկը (նվիրված) սուրբ Մարիամին, որն իր անունով հորինեց»: Մեզ է հասել նրա գրած «Սրբուհի Մարիամ Սափոր ոսկի» շարականը: Ստ. Սյունեցին ունեցավ եղերական վախճան. 735 թ. հուլիսի 21-ին Վայքի Մոզ ավանում, քնած պահին, նրան սրախողխող արեց մի պոռնիկ կին: Այս դեպքից հետո Վայոց ձորում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը, որը կործանեց Մոզ ավանը եւ տարավ շուրջ 10000 մարդկային կյանք, Օրբելյանը կապում է Աստծո բարկության հետ, որով նա պատժեց սուրբ մարդուն սպանող բնակիչներին:

Սյունյաց իշխանական տան պատմության մեջ նոր էջ է բացում Վասակ Սյունի իշխանը, որին Ալիշանը գնահատել է որպես Սյունյաց նոր նահապետի: Նա իշխել է 9-րդ դարի առաջին քառորդում: Նրա օրոք Սյունիքը բարգավաճող երկրամաս էր՝ հարուստ տնտեսությամբ եւ ծաղկուն հոգեւոր ու մշակութային կյանքով: Վասակը կարգաբերեց Սյունիքի վարչական տարածքները, նշանակեց գավառները կառավարող իշխանների, վարեց ճկուն ներքին եւ արտաքին քաղաքականություն: Սյունյաց իշխանաց իշխանը, սակայն, թույլ տվեց մի սխալ, որ կարող էր ճակատագրական դառնալ Սյունիքի համար: Նրա օրոք Սյունիքն առնչվում է արաբական տիրապետության դեմ Ատրպատականում սկսված ապստամբական շարժման ղեկավար Բաբեկի, կամ ինչպես հայկական աղբյուրներն են կոչում Բաբանի հետ: Օրբելյանը գրում է՝ Վասակը պարսիկ Բաբանին կանչեց՝ կռվելու Սյունիքն ասպատակող արաբ Մրվանի դեմ: Իսկ

Մովսես Կաղանկատվացին հավաստում է, որ Բաբելը կանչվեց կռվելու մեկ ուրիշ ապստամբի՝ Սեադայի դեմ, որը գրավել էր Սյունիքի Շաղատ մայրաքաղաքը: Ամեն դեպքում, Վասակի հրավերով Բաբելը հայտնվեց Սյունիքում, կարողացավ վերագրավել Շաղատը՝ 821թ.: Բայց նույն թվականին մահացավ մեծ իշխան Վասակը, եւ Բաբելը, որ նրա մահվանից հետո կնության էր առել Վասակի աղջկան, իսկական պատուհաս դարձավ Սյունիքի գլխին: Սա փորձեց օգտագործել փեսայի իր իրավունքը եւ տեր դառնալ ողջ Սյունիքին, սակայն հանդիպեց դիմադրության: Եվ սկսվեցին Բաբելի վայրագությունները: 829 թ. նա հարձակվեց Գեղարքունիքի վրա, եւ պատմիչների տվյալների համաձայն, սրածեց 15000 մարդ, հիմնականում խաղաղ բնակիչների, ավերեց վանքերն ու եկեղեցիները, որոնց թվում նաեւ հռչակավոր Մաքենյաց վանքը: Բաբելին չենթարկվեց նաեւ Բաղք գավառը, եւ նա մի պատժիչ արշավանք ձեռնարկեց՝ նորից մահ ու ավեր սփռելով: Արկածախնդիր Բաբելը, բարեբախտաբար, երկար չշարունակեց իր մահասփյուռ կյանքը: 837 թ. նա գերվեց Արցախում Առնաշխարհիկ Սահլ (Սահակ) Սմբատյանի (արաբական աղբյուրներում Սահլ իբն-Սումբատ) կողմից, հանձնվեց արաբական իշխանություններին եւ քառատվեց: Այդպես է վկայում արաբ պատմիչ Աբու-խանիֆա ադ-Դինավարին:

Սյունյաց իշխանությունը վերստին ծաղկում ապրեց Վասակ մեծ իշխանի որդիներ Փիլիպեի եւ Սահակի օրոք: Վերջինս հիմք դրեց նոր գահակալ իշխանության, որը հայտնի է «Հայկազուն» անունով:

Այդ ժամանակաշրջանում տեղի էր ունեցել մի զարմանահրաշ դեպք, որը բանաստեղծական շնչով պատմում է Օրբելյանն իր գրքի 34-րդ գլխում: Գորիսից Տաթև տանող ճանապարհին՝ Հալիծորի անտառի դիմաց, բարձր գահավեժ քարափներ կան, որոնցից մեկը կոչվում է Հարսնաձոր: Այնտեղ այն անվանում է հարսնավազ, այսինքն՝ հարսի վազելու տեղը: Տեղանունը կապված է Օրբելյանի հաղորդած ավանդազրույցում պատմվող իրադարձության հետ: Սյունյաց իշխաններից մեկը Աղվանքի գահերեց իշխան Վարազ-Տրդատի՝ «լուսատարր օդից եւ նրբանուրբ շողերից» կերպարանավորված աղջիկ Շահանդուխտին հարս էր բերում իր ծննդավայրը: Այդ մասին նախօրոք իմանալով, ճանապարհին դարանակալ պարսիկները հարձակվում են հարսանքավորների վրա եւ ցանկանում ամենամեծ գեղեցկուհի հարսին: Շահանդուխտը տեսնելով, որ այդ ամենն իր պատճառով է, ձիով թռչում է դեպի անդունդը եւ հրաշքով փրկվում: Օրիորդը այլեւս չի ցանկանում ամուսնանալ, իր անձը նվիրում է Զրիստոսին, մնում նույն

ձորում, Որոտան գետի ափին եւ հիմնում անապատ: Հետագա դարերում այդ ձորում մշտապես գործել են կուսանաց անապատներ (Շի-նուխայր, Հալիծոր):

Սյունյաց «Հայկազուն» գահակալների օրոք սերտ կապեր են հաստատվում ուրիշ նախարարական տների, մասնավորապես Բագրատունիների հետ: Սյունյաց Սահակ իշխանը սպարապետ Սմբատ Բագրատունու հետ Կավակերտի ճակատամարտում կռվել է արաբ ոստիկան Հուլի զորքերի դեմ: Սահակից հետո՝ 840-ական թվականներին, Սյունիքում իշխել է Գրիգոր Սուփանը: Նա այդ մականունն ստացել է մեծահոգի, խելոք եւ ձեռներեց լինելու համար: Նա է վերականգնել Բաբելի կողմից ավերած Մաքենյաց վանքը: Գրիգոր Սուփանը մեռնում է եղբայրասպան կռվում Սիսական Բաբկենի կողմից: Այնուհետեւ Սյունյաց գահերեց իշխանությունն անցել է Վասակ Գաբուռին: Սյունյաց այս իշխանը փեսայացավ՝ հետագայում հայոց թագավոր դարձած Աշոտ Բագրատունու՝ ամուսնանալով նրա դուստր Մարիամի հետ: Վասակ Գաբուռը մահացել է երիտասարդ հասակում եւ թաղվել մեծ թափորով ու ողբով, «փողիարներով եւ քնարահարներով»: Հետո իշխանությունն անցել է Գաբուռի որդի Գրիգոր II Սուփանին: Վերջինս կարգաբերեց իշխանական տան գործերը, աչքի ընկավ աստվածապաշտությամբ եւ շինարարական աշխատանքներով: Աստվածահաճո շինարարական գործերով աչքի ընկավ նաեւ Սյունյաց իշխանուհի Մարիամը՝ Գրիգոր II Սուփանի մայրը: Նրա հովանավորությամբ են 874 թ. կառուցվում Սեւանա կղզու զույգ եկեղեցիները:

Սյունյաց Գրիգոր II Սուփանին հաջորդել է Վասակ Իշխանիկը: Այս երկուսը՝ ուրիշ հայ իշխանների հետ միասին, արաբների մոտ եռանդուն ջանքեր գործադրեցին՝ Աշոտ Բագրատունու հայոց թագավոր (885-890 թթ.) ճանաչելու ուղղությամբ: Աշոտին հաջորդած Սմբատ Բագրատունի հայոց թագավորի (890-914 թթ.) օծման արարողությանը մասնակցել է Սյունյաց գահերեց իշխան Աշոտը:

9-րդ դարում, Սյունյաց իշխանական տան հզորացմանը զուգահեռ, հատկապես դարավերջին, նկատելի են դառնում Սյունյաց ավատական տան մասնատվածության նշանները: Իշխանական տան տարբեր ճյուղերի միջեւ գահերեցության եւ հողատարածքների համար երկպառակությունները, երբեմն վեր էին անվում արյունալի ընդհարումների:

9-րդ դարի վերջին երկրամասը բաժանված էր իշխանական տան երեք ճյուղերի միջեւ, որոնցից մեկը շարունակում էր մնալ գահերեց: Սյունիքի տարածքի զգալի մասը՝ Եղեգիս կենտրոնով, պատկանում էր

Փիլիպեի որդի Աշոտ գահերեց իշխանին: Բաղք եւ Ձորք գավառները՝ Կապան կենտրոնով, պատկանում էին Ձագիկ Սյունի իշխանին, իսկ Գեղարքունիքը՝ Կոթ կենտրոնով, Գրիգոր Սուփանի սեփականությունն էր: Մի որոշ ժամանակ հետո Գեղարքունիքն անցնում է Բագրատունիների տիրապետության տակ: Հետագայում Սյունյաց իշխանության գահերեցությունը փոխանցվում է Ձագիկյաններին եւ, բնականաբար, Սյունիքի վարչական կենտրոնը տեղափոխվում է Կապան: Այստեղ էլ ձեւավորվում է Սյունյաց կամ Կապանի թագավորությունը:

6-9-րդ դարերում Սյունյաց լեռնաշխարհում տեղի ունեցած իրադարձությունները պատճառ հանդիսացան, որպեսզի փոփոխվեն Սյունիքի՝ հնուց եկող վարչական, հոգեւոր եւ կրթական կենտրոնները: Երկար դարեր Սյունիքի վարչական, ինչպես նաեւ հոգեւոր կենտրոնը եղել է Շաղատ գյուղաքաղաքը, որը գտնվում է Սիսիանի շրջանում: 7-րդ դարում այստեղ է տեղափոխվում նաեւ Սյունյաց հռչակավոր վարդապետարանը, որը մինչ այդ գործել է Գեղարքունիքի գավառի Մաքենյաց վանքում (Վարդենիսի շրջան): Սյունյաց Շաղատ մայրաքաղաքի անկումն սկսվում է 9-րդ դարի 1-ին քառորդում, երբ այն գրավվում է ապստամբ իշխանների (նաեւ սյունեցի) կողմից, եւ Վասակ Նոր Նահապետ իշխանը Նրանց դեմ պայքարելու համար օգնության է կանչում Բաբեկին: Պատմիչը նշում է, որ Բաբեկին հաջողվեց Շաղատից դուրս քշել խռովարարներին: Դա տեղի է ունեցել 821 թ.: Իսկ ահա 839 թ. Սյունիքի հոգեւոր կենտրոնը տեղափոխվում է Տաթեւ:

Օրբելյանը հոգեւոր կենտրոնի՝ Նոր վայր տեղափոխվելու գլխավոր պատճառը համարում է այն, որ հոգեւորականները ցանկանում էին առաջնորդարան ունենալ խաղաղ եւ աշխարհիկ կյանքից հեռու մի տեղում: Օրբելյանն ինքն իրեն հարցնում է, թե ե՞րբ եւ առաջինը ո՞ր եպիսկոպոսը եկավ Տաթեւ ու պատասխանում, որ չգիտի: Պրոֆ. Գր. Գրիգորյանի հաշվարկների համաձայն, դա տեղի է ունեցել 839 թ. եւ ըստ նրա կազմած Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդական ցուցակի՝ Թեոդորոսի ժամանակ (838-846 թթ.): Հոգեւոր առաջնորդարանի՝ Տաթեւում հաստատվելուց մի որոշ ժամանակ անց, այստեղ է տեղափոխվում նաեւ Սյունյաց վարդապետարանը՝ իր ուսանողներով եւ դասախոսներով (րաբուններով): Իսկ Շաղատը դադարում է նաեւ Սյունիքի վարչական կենտրոնը լինելուց, երբ իշխանության գահերեցությունն անցնում է Վայոց ձորի տերերին, իսկ նրանք էլ նստավայր են դարձնում Եղեգիս ավանը՝ Նույնանուն գետի հովտում, ուր այսօր 3-4 կմ ձգվում են հին բնակավայրի ավերակները:

## Ը. Սյունիքի մշակույթը հին ժամանակներից մինչեւ IX դար

Սյունիքում ստեղծված հոգեւոր եւ նյութական արժեքները համահայկական քաղաքակրթության անկապտելի մասն են: Հայոց պետականության կայացման ու գոյատևման մեջ Սյունիքի աշխարհիկ իշխանության դերի համեմատ, դրանք ոչ պակաս կարեւոր տեղ են գրավում համահայկական մշակույթում: Դա նշանակում է, որ հին Սյունիքում ստեղծված մշակութային շատ արժեքներ հայկական քաղաքակրթության ներկայանալի նմուշներն են:

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհում ստեղծված մշակույթի արժեքավոր գործեր են 5-7 հազար տարի առաջ արված ժայռապատկերները: Սյունիքի հնագույն բնակիչների՝ շուրջ 2000 քարաբեկորների վրա վեմը 1-6 մմ խորությամբ քերելու կամ փորելու միջոցով արված պատկերները, որոնց ժողովուրդն անվանում է «իծագրեր», ինչպես վերը նշեցինք, փռված են Մեծ Իշխանասար լեռան արեւմտյան փեշերին՝ Ուղտասար եւ Ջերմաջուր կոչվող հնավայրերում: Ժայռապատկերները գտնվում են ծովի մակերեսից 3300 մ բարձրության վրա: Տեղանքը մատչելի է դառնում միայն ձյան ծածկույթի վերանալուց հետո, լեռնային կարճատեւ ամռան ընթացքում: Ժայռապատկերների մոտ հայտնաբերվել են նաեւ կիկլոպյան ամրոցի հետքեր, արհեստական քարակույտեր, կացարանների ավերակներ: Ժայռապատկերներից մի քանիսը 1980 թ. բերվել եւ ցուցադրվում են Սիսիանի երկրագիտական թանգարանի բակում: Սյունիքի ժայռապատկերները աղբյուրներ ունեն Հայկական լեռնաշխարհում (Արագած, Գեղամա լեռներ) եւ այլ երկրներում (Իտալիա) հայտնաբերված Նույնատիպ պատկերների հետ: Սյունիքի հնաբնակները ժայռապատկերներն ընտրել են որպես ապագա սերունդներին հաղորդակցվելու հուսալի միջոց: Դրանցում ուրվագծված են երկրամասի հին բնակիչների կյանքը, կենցաղը, հավատալիքները, իղձերն ու խոհերը: Պատկերները պարունակում են խորհրդանշական, երբեմն անբացատրելի շատ գաղտնիքներ: Դրանք, նախ եւ առաջ, պատկերացում են տալիս հին Սյունիքի ընտանի եւ վայրի կենդանական աշխարհի մասին: Այստեղ հանդիպում ենք լեռնաշխարհի համար այսօր ոչ բնորոշ, վաղուց անհետացած կենդանիների, ինչպես զբերը կամ ա-

ոյունք: Ավելի հաճախ պատկերված են քարայծեր, որոնք եղել են պաշտամունքային կենդանիներ եւ մինչեւ օրս պահպանվել են լեռնաշխարհում: Հանդիպում են ընտանի կենդանիներ, երկանիվ, քառանիվ սալյէր: Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում տիեզերաբանական բովանդակություն եւ պատկերացումներ պարունակող, մասնավորապես, արեւի պաշտամունքի հետ աղերսվող պատկերները: Դրանք հանդես են գալիս կեռիսաշի (սվաստիկա), շրջանի կամ բուլբուլի մեջ առնված խաչի, ինչպես նաեւ սովորական խաչանշանի ձեւերով: Կեռ թելերով խաչը պահպանվում է Սյունիքի հետագա զարդարվեստում եւ եղել է Սյունյաց իշխանական տան խորհրդանշանից: Գորիսի թանգարանում պահվում է 19-րդ դարի մի գորգ, որի կենտրոնական զարդերից են ետ շրջված թելերով զույգ խաչերը: Ժայռապատկերներում տեղ են գտել կենցաղային, որսի տեսարաններ, ծիսական պարեր ու գործողություններ: Քարերի վրա արված բոլոր պատկերները շարժուն են, շնչում են կենդանությամբ եւ համարյա չեն տուժել հողմահարությունից:

Սիսիանից Գորիս տանող ճանապարհին է գտնվում, ինչպես վերնակնարկեցինք, գիտական շրջաններում հայտնի մի հնավայր, որ կոչում են Զորաց քարեր: Այն համարվել է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի մեգալիթյան կառույց: Ն. Ադոնցը գտնում է, որ օղակաձեւ դասավորված այդ քարակառույցները եղել են բերդեր, որ շրջապատել են սրբավայրերը: Սիսիանի Զորաց քարերի բնակատեղին ունեցել է կանոնավոր փողոցներ, հատակագծված կացարաններ, լավ են պահպանվել պարիսպները: Մասնակի պեղումներից հայտնաբերվել են գործիքներ, խեցանոթներ: Ն. Ադոնցը առեղծվածային է համարել կառույցից մի քանի հարյուր մետր ձգվող պատերը, որ երբեմն խաչաձեւվում են: Հնավայրը գտնվում է Սիսիանից շուրջ 3 կմ հեռավորության վրա: Ծովի մակերեւույթից 1770 մ բարձր եւ ավելի քան 3 հա զբաղեցնող հնավայրն իրենից ներկայացնում է հողի մեջ ցից կանգնեցված հարյուրավոր քարեր: Կենտրոնում ձվաձեւ դասավորված է 39 քար: Քարերի մի մասի վրա փորված են անցքեր: 1994, 1995 եւ 1996 թթ. ակադեմիկոս Պարիս Հերոնու ղեկավարությամբ գիտական արշավախմբերը տեղում կատարել են հետազոտություններ: Ըստ ուսումնասիրողների, ապացուցվել է, որ Զորաց քարերը 4000 տարվա հնություն ունեցող աստղադիտարան է, որը միաժամանակ եղել է ուսումնական կենտրոն: Զորաց քարերի նմանակն է աշխարհահռչակ անգլիական Սթոունհենջը: Ակադ. Պ. Հերոնին առաջարկում է հնավայրը կոչել Զարահունջ: Սթոուն անգլերեն նշանակում է քար: Սակայն հնավայրի

նոր անվանումն անգլիական նմանակի անվան՝ Սթոունհենջի բառացի թարգմանությունը չէ: Ստ. Օրբելյանը 13-րդ դարում Այլախ գավառում նշում է Զարունջ-Զարահունջ գյուղը: Հնավայրը մտնում էր այդ գավառի մեջ, իսկ Գորիսի ներկայիս Զարահունջ գյուղանունը վերանվանություն է, քանի որ պատմիչը Հաբանդ գավառում այդ անունով գյուղ չի նշում:

Սյունիքի հեթանոսական շրջանի մշակույթի մասին նյութեր են տալիս հնագիտական պեղումները: Դրանք կանոնավոր բնույթ չեն կրել: Այնուամենայնիվ, հայտնաբերված նյութերը որոշակի պատկերացում են տալիս նախաուրարտական եւ ուրարտական ժամանակաշրջանի կավագործության, մետաղագործության, զարդարվեստի զարգացածության մասին: Մ. թ. ա. 10-րդ դարով թվագրվող Տեղ գյուղի (Գորիս) դամբարանից պեղվել են մետաղե զանգվածեղ գուրգեր, կոճգամեր, կավե պաշտամունքային անոթներ, վանակատե նետասլաքներ: Գորիսի երկրագիտական թանգարանում պահվում է ուրարտական ժամանակների արվեստը ներկայացնող առյուծի բրոնզե արձանիկ: Ըստ տեղեկությունների, արձանիկի երկրորդ օրինակը տարվել է Ռուսաստան: Առյուծի արձանիկը, արվեստի կատարյալ ստեղծագործություն լինելով, միաժամանակ վկայում է մետաղամշակման բարձր տեխնիկայի մասին: Ուրարտական դարաշրջանի խեցեգործության, կավագործության, մետաղամշակման արվեստի բազմապիսի արժեքավոր նյութեր են տվել Սյունիքի տարբեր բնակավայրերում հնագետ Օ. Խնկիկյանի՝ 1986-87թթ. իրականացրած պեղումները: Նյութերը պահպանվում են ինչպես Երեւանի, այնպես էլ Գորիսի եւ Սիսիանի թանգարաններում:

Յավոք, Սյունիքի հեթանոսական շրջանի ճարտարապետական կառույցներից մեզ համարյա ոչինչ չի հասել: Թերեւս բացառություն կարելի է համարել Գորիսի Հարժիս գյուղում գտնված հեթանոսական տաճարի մնացորդները: Տաճարից գտնված հնգադեմ քարե կուռքը ներկայումս պահվում է Գորիսի թանգարանում: Կուռքն ունի 58 սմ բարձրություն: Քանդակն արված է ճաշակով եւ դարձել է թանգարանի ուշագրավ ցուցանմուշներից մեկը: Տաճարի քարե կլոր, լավ հղկված հսկա սյուները ընկած են գյուղի կենտրոնում, որտեղ եւ եղել է տաճարը: Գորիսի Ակներ գյուղի մոտ մտնում են կիկլոպյան ամրոցի ավերակները:

Սյունիքի հեթանոսական շրջանի մշակույթի, մասնավորապես երաժշտության, վիպերգության մասին վկայում է Մովսես Խորենացին: Պատմահոր գրի առած ավանդազրույցներն ու առասպելները հայտնի

են Գողթան երգեր անունով: Գողթն գավառը, որի մի մասն էր կազմում Արեւիքը (ներկայիս Մեղրին), մտնում էր Սյունիքի մեջ: Խորենացին իր առասպելների մեծ մասը բառացի գրի է առել գողթան երգիչներից: Դրանք հայ բանաստեղծության հնագույն շրջանի մարգարիտներ են: Գուսանական արվեստը Սյունիքում վաղուց ի վեր զարգացած էր եւ դրա ավանդները շարունակվում են առ այսօր: Գուսանների ելույթներն, ըստ էության, տոնական ներկայացումներ էին, որոնց մասնակցում էին պարուհիներ: Խնջույքների ժամանակ հանդես եկող դերասանուհի-պարուհիները կոչվում էին վարձակներ: Երկրորդ դարում Բակուր Սյունեցու կազմակերպած խնջույքում հանդես եկող վարձակ Նազենիկի մասին գրել է Խորենացին: Նազենիկը անչափ գրավիչ էր, գեղեցիկ եւ երգում էր «ձեռամբ», այսինքն՝ ելույթ էր ունենում մնջախաղով: Պատահական չէ, որ այսօր Նազենիկ անունն է կրում Հայաստանի թատերական բարձրագույն մրցանակը:

Հեթանոսական շրջանի կիրառական արվեստի գեղեցիկ նմուշներ են Սիսիանում գտնված վիշապազուխ ոսկյա ապարանջանները, արծաթա թասերը, ականջօղերը, կրծքազարդ կախիկները եւ այլն: Դրանք 2000 տարվա վաղեմություն ունեն:

Երկրամասում հայտնաբերված Արգիշտի II-ի սեպագիր եւ Արտաշես I-ի արամեերեն արձանագրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ տեղում դրանք կարդացողներ պետք է լինեին, եւ որ քրիստոնեական շրջանում Սյունյաց համբավավոր կրթարանները հեթանոսական շրջանում ունեցել են իրենց նախատիպ կրթօջախները, ուր ուսանել են ժամանակի պետական, պաշտոնական գրագրությունների լեզուն:

Երկրամասում քրիստոնեական շրջանի մշակույթը սկզբնավորվում է Գրիգոր Լուսավորչի կողմից 320 թ. Սյունյաց հոգեւոր թեմի հիմնադրմամբ, թեպետ հայտնի է, որ քրիստոնեական վարդապետությունն այստեղ արմատներ էր ձգել տակավին առաջին դարում, երբ քարոզչական գործունեություն էր ծավալել Բարդուղիմեոս առաքյալը: Առաքյալը Երնջակ գավառում կառուցում է եկեղեցի: Օրբելյանը հաղորդում է, որ Գրիգոր Լուսավորիչը, Սյունիքում եղած ժամանակ, կառուցել է տալիս եկեղեցիներ, կանգնեցնում տերունական խաչը: Լեռնաշխարհում պահպանվել են 4-րդ դարում կառուցված մի քանի (Ծիծեռնավանք, Վերիշեն) բազիլիկ եկեղեցիներ, բայց որեւէ հիմք չկա պնդելու, թե դրանց հիմնադրումը կապված է հայոց առաջին կաթողիկոսի անվան հետ:


5-րդ դարը հայ մշակույթի պատմության մեջ ընդունված է կոչել

Նաեւ թարգմանչաց դար: Սյունիքում 5-րդ դարի սկզբին ստեղծվեց ժամանակի ամենանշանավոր գիտակրթական կենտրոնը, ուր հատկապես աչքի ընկան թարգմանիչները: Պատահական չէ, որ հենց Սյունիքի դպրոցն իրականացրեց հայ թարգմանչական արվեստի գլուխգործոցի՝ «Աստվածաշնչի» հայերեն թարգմանությունը: Դա հայերեն գրերով գրված առաջին գիրքն է, որի վրա հենվեց հայ գրականության՝ հետագայում կառուցված շենքը: «Հայոց մեջ նախաթոռ վարդապետությունը եւ գրքերի մեկնության ոթարգմանության իրավունքը միայն սրանց շնորհվեցին սուրբ Սահակի եւ Երանելի վարդապետ Մեսրոպի կողմից»: Օրբելյանի այս հաղորդածը լրացնում է Գր. Գրիգորյանը. «Հայկական լեռնաշխարհի այս տարածքը խոշոր դեր է կատարել իբրեւ քաղաքակրթության օրրաններից մեկը: Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը Սյունյաց (Շաղատի) վարդապետարանին վստահեցին Ս. Գրքի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանութեանց»: Սյունյաց թարգմանչական դպրոցի, Սյունիքում պահվող հայերեն առաջին թարգմանությունների մասին վկայություն ունի Խորենացին: Հիշատակելով Մեսրոպ Մաշտոցի ցուցումով հայերեն թարգմանված եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն» գիրքը, Նա գրում է. «Փնտրել տուր այս գիրքը Գեղարքունիքում, Սյունյաց գավառում, եւ կարծում եմ, որ մինչեւ այժմ էլ պահվելիս կլինի նույն քաղաքում»: Կասկածից վեր է, որ պատմահայրն անձամբ տեսել է այդ ձեռագիրը: Այդ թարգմանիչներից մեկը՝ Մաշտոցի աշակերտ Անանիան, ձեռնադրվեց Սյունյաց մետրոպոլիտ ու թեմը ղեկավարեց 42 տարի (414-456 թթ.): Պատմիչները տալիս են մեկ ուրիշ թարգմանչի անուն եւս՝ Բենիամին: Մեսրոպ Մաշտոցի հանձնարարությամբ Անանիան եւ Բենիամինը մեկնում են Աղվանք եւ օգնում ստեղծելու նրանց այբուբենը: Օրբելյանն այս իրողությունը շեշտում է, ասելով, որ ինքն օգտվել է Խորենացու աշակերտ Պետրոս Սյունեցու թղթերից: Հայտնի է, որ Սյունիքում կրթական-լուսավորչական լայն աշխատանքներ է ծավալել Մեսրոպ Մաշտոցը, նրան այդ գործում օգնել են Սյունյաց Վաղինակ եւ Վասակ իշխանները:

Խոսելով Սյունիքի 5-րդ դարի հոգեւոր մշակութային կյանքի մասին, անկարելի է չգայթակղվել ու չանդրադառնալ հայագիտության մեջ արտահայտված այն տեսակետին, որ Պատմահայր Մովսես Խորենացին Սյունիքի ծնունդ է: Խորենացին ծնվել է 410 թվականին: Նրա ծննդավայրի մասին հուշում է ազգանունը, քանի որ ինքը կամ ուրիշ մեկը, այդ մասին չեն նշել: Նա ծնված պետք է լինի Խորեն կամ Խո-



րեան անունով բնակավայրում: Ընդունված է, որ Նա Տարոնի խորոն գյուղից է եւ Նրան երբեմն կոչել են խորոնացի կամ Տարոնացի: Հիմնավորապես այլ կարծիք է հայտնել խորենացու գրաբարյան «Պատմություն հայոցի» լավագույն թարգմանիչ ու մեկնաբան, ակադեմիկոս Ստ. Մալխասյանը: Նա գրում է. «Ավելի հավանական է կարծել, թե Նա ծնված է Սյունիքի Հաբանդ գավառի խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստ. Օրբելյանը տասներեքերորդ դարի վերջում»: Այդ գյուղանունը փոխանցվել է Գորիսի Կոնսիժոր գյուղին: խորենացու սյունեցի լինելը վկայում է Նրա անթաքույց սերը Սյունիքի եւ Սիսական իշխանական տան հանդեպ: Նա առանձնակի ջերմությամբ է կերտել Սիսակ Նահապետի քաջ ու առնական կերպարը, շարադրել Սիսականների՝ Հայկ Նահապետից սերելու մանրամասները: Հետագա հայ պատմիչներից այլեւ ոչ ոք (բացառությամբ Ստ. Օրբելյանի) չի խոսում այդ իշխանական տան ծագման մասին: խորենացին լավ գիտեր Սյունիքը: Սյունիքի ժողովրդական երգերն ու ասքերը գրական գոհարների պես հայտնվել են Նրա պատմագիտական երկում: Բացառված չէ, որ Նա իր «Պատմություն հայոցը» գրել է ծննդավայրում<sup>7</sup> Սյունիքի Հաբանդ գավառում, ուր Նա, հոգնած հետադեմ հոգեւորականների հալածանքներից, անց էր կացնում իր կյանքի վերջալույսը: Որ խորենացին կյանքն ավարտելու էր Սյունիքում, վիճարկելու հարց չէ, այդ մասին, որպես ականատես վկայում է 5-րդ դարի մեկ ուրիշ պատմիչ՝ Ղազար Փարպեցին: «Եվ գնալով Սյունիք,- գրում է Փարպեցին,- երկու տարի այնտեղ մնացի, ծմեռը՝ քարայրում, գավառի ամբողջ բնակչության մեջ բոլոր կրոնավորներից ամենից հռչակավոր մի մարդու հետ, որի անունն է Մովսես»: Բոլոր հետազոտողները միանշանակ գտնում են, որ Փարպեցու խոսքը խորենացի Մովսեսի մասին է: խորենացին մահացել ու թաղվել է Սյունիքում: Նրա գերեզմանի տեղը գտնելը սերունդների սուրբ պարտքն է: Ս. Խանգադյանը «Հայրենապալումի» մեջ գրում է, որ Տեղ գյուղի բնակիչների պատմելով՝ Պատմահայրը թաղված է Սոփ եղցի եկեղեցում: Սոփ եղցին (սեռ-լեռներակ կամ գուցե Սրբի եկեղեցի) մի փոքրիկ, շատ հին, առանց արձանագրության մատուռ է բարձր քարափի վրա: Ծրջակայքում կան հնադարյան գերեզմաններ: Մնառանձի մոտակայքում խորեա-խորով գյուղատեղն է, մի փոքր հեռու՝ Ներկայիս Կորնիժորը: Քերթողահայրը Սյունիքում թողել է աշակերտներ, որոնցից էր Պետրոս Սյունեցին՝ Սյունյաց հոգեւոր թեմի առաջնորդներից մեկը (546-556 թթ.), որին որպես քերթող եւ թարգմանիչ, հռետոր ու փիլիսոփա, բարձր է գնահատել Ստ. Օրբելյանը:




Ծիծեռնավանք (Քաղաքադի մարզ, IV-V դդ.)

5-9-րդ դարերում Սյունիքում ապրել ու ստեղծագործել են նշանավոր հայ մտավորականներ, հոգեւորականներ եւ մշակույթի գործիչներ: 7-րդ դարի առաջին կեսին Սյունյաց հոգեւոր թեմը 18 տարի (634-652 թթ.) ղեկավարել է Մաթուսաղա Քերթողը՝ ժամանակի հանրահայտ գիտնականներից մեկը, որին Օրբելյանը կոչել է «մեծ քերթող եւ անհաղթ փիլիսոփա»: Մաթուսաղայի աստվածաբանական որոշ մեկնություններ՝ Օրբելյանի, շնորհիվ հասել են մեզ: Նա նաեւ եղել է Սյունյաց հռչակավոր վարդապետարանի ղաբունապետը:

8-րդ դարի սկզբներից Սյունիքում իր գործունեությունն է ծավալում, ինչպես նշեցինք, հայ հոգեւոր մշակույթի երեւելի դեմքերից Ստեփանոս Սյունեցին: Նա, ուսանելով Սյունիքում, այնուհետեւ գիտելիքները խորացրել է Կոստանդնուպոլսում, Աթենքում, Հռոմում, դարձել ժամանակի մեծ համբավ ունեցող գիտնականը Հայաստանում:

Սյունիքում մշտապես զարգացում են ապրել շինարարական արվեստը եւ ճարտարապետությունը: Երկրամասը հռչակված է եղել անմատչելի բերդերով: Դրանցից հնագույնը եւ անառիկը 4-րդ դարից հիշատակվող Բաղաբերդն է, որը հետագայում եւս մնաց որպես գլխավոր ամրոց: Սյունիքում պահպանվել են հայ եկեղեցաշինության նախնական փուլը ներկայացնող հայտնի բազիլիկ կառույցներ: Դրանցից



Սյունի վանք (Միսիան, VI-VII դդ.)

Նշանավորներն են Ծիծեռնավանքը՝ Աղահեճք-Քաջաթաղում եւ Ս.Յովսիսիմեն՝ Գորիսի Վերիշեն գյուղում: Ծիծեռնավանքը Սյունյաց աշխարհի հնագույն եւ խոշոր հոգեւոր կենտրոններից էր: Գտնվում է Գորիսի հանածախ գյուղից դեպի արեւելք՝ 5 կմ հեռավորության վրա: Վանքի անվան բացատրության ավանդություններից մեկի համաձայն, այստեղ է թաղված Պետրոս առաքյալի ծիծեռ (ճկույթ) մատը: Վանքը կառուցված է Աղավնո գետի գեղատեսիլ ափին, բլրակի վրա: Սրբատաշ բազալտից կառուցված շենքն ուղղանկյուն հատակագծով, 25,5x12 մ չափերով անգմբեթ, ներքին սյունաշարերով առինքնող բազիլիկ կառույց է: «... շենքի ճարտարապետական առանձնահատկությունները ոչ մի կամպած չեն հարուցում, որ այն 4-5-րդ դարերի հնագույն բազիլիկ է»<sup>18</sup>, - գրում է Ս.Բարխուդարյանը: 4-5-րդ դարերում է կառուցվել նաեւ Վերիշենի Ս. Յովսիսիմե միանավ, իր չափերով Հայաստանում



Աղուդի մատարձան, V-VII դդ., (Միսիանի շրջան)

ամենախոշոր բազիլիկ եկեղեցին, որի երկարությունն է 27,3 մ: Անտաշ քարից շարված հսկա կառույցը նման է նավի կամ տապանի: Օր-

բեյանը վկայում է, որ 4-րդ դարում Շաղատ մայրաքաղաքում կառուցված էր Ս. Ստեփանոս գմբեթավոր չքնաղ մայր եկեղեցին, որի նման ...իրաջալի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար, գմբեթն ու խորանները քառակողմ էին, միահարկ, մեկ (ընդհանուր) տանիքով եւ ոչ թե առանձին-առանձին, ինչպես ուրիշ քարակերտ եկեղեցիներն են<sup>12</sup>:

6-7-րդ դարերում Սյունիքում կառուցված նշանավոր ճարտարապետական շինություն է Սիսիանի կամ Սյունիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի հարեանությամբ եղել են իշխանանիստ ապարանքներ: Կառույցը շատ քիչ է տարբերվում էջմիածնի Ս. Զնիփսիմե տաճարից: Այն ներկայումս գործող եկեղեցի է Սիսիանում, վերանորոգվել է 1959-61 թթ.: Սյունիի եկեղեցին կառուցել է Վարազդուխտ իշխանուհին: Վաղ միջնադարյան հայ ճարտարապետության բարձրարժեք հուշարձաններից է Աղուդիի (Աղիտու) մահարձանը Սիսիանի շրջանում: Ավանդության համաձայն, այն կառուցված է ի հիշատակ երկու իշխանագուն եղբայրների: Դամբարանի վրա վեր են խոյանում երկու ուղղանկյուն մույթեր, իսկ կենտրոնից բարձրացող ութանիստ սյունն ավարտվում է ոլորազարդ խոյակով: Կոթողը դրվագված է նռան, խաղողի, բուսական եւ երկրաչափական զարդաքանդակներով, նման Սիսիանի տաճարի եւ Զվարթնոցի քանդակներին: 5-րդ դարի կառույց է կարմիր քարով շարված Թանահատի վանքը՝ Սիսիանի Արեփս գյուղի մոտ:

## Թ. Սյունիքի թագավորությունը (X-XII դդ.)

Սյունիքի ավատական թագավորության մասին խոսելուց առաջ նշենք, որ առանձին մանր թագավորությունների հանդես գալը բզկտում էր առանց այդ էլ բզկտված Հայաստանը, քանզի համազգային-համապետական շահերը մղվում էին հետին պլան՝ ի հեճուկս իշխանական փառամոլության հետեւանքով առաջացած գերագահության պայքարի:

Հայաստանի օտար կառավարիչներին, անտարակույս, ձեռնտու էր՝ ոսկեհուռ թագեր բաժանելով ռազմական ներուժով օժտված քնիկ տերերին, իրար դեմ գրգռել նրանց՝ հորինելով ամենատարբեր պատրվակներ:

Ծիշտ է, հայ իշխանները, երբեմն շատ ուշացումով, հասկանում էին օտար միջամտության ողջ վտանգավորությունը եւ ձգտում էին միավորվել, սակայն դաժան իրականությունն ուրվագծում էր քաղաքական հարաբերությունների նոր պատկեր: Միշտ էլ ուշացած է, երբ հանդես է գալիս լինել-չլինելու «Դամոկլյան սուրը»:

Միջնադարյան Հայաստանի քաղաքական կազմավորումների պատմության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում Սյունիքի ավատական թագավորությունը, որի հանդես գալու համար 10-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվել էին մի շարք նախադրյալներ, որոնցից հիշատակելի են՝

1. Միջավատական հարաբերությունների հստակեցման մղումով առաջացած սուր ճգնաժամը:
2. Հզոր իշխանական տոհմերի մրցապայքարը գերագահության համար, տարածքային հավակնությունները:
3. Բազրատուկյաց թագավորության ժամանակավոր թուլացումը:
4. Արտաքին ուժերի խանգարիչ գործոնը (միջամտությունը):

Ընդամենը 21 տարի էր անցել հայկական պետականության վերականգնման ժամանակից (885 թ.), երբ աշխարհի քնիկ տերերը, սիրո եւ միաբանության նշանաբանով, հավաքվել էին Տաթևում՝ Պողոս-Պետրոս մայր տաճարի նավակառուցիչ մասնակցելու համար: 906 թ. այստեղ էին ժամանել հայոց թագավոր Սմբատ 1-ին Բազրատունին, պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին, Սյունիքի, Աղվանքի, Վասպուրականի իշխաններն ու գահակալները... հայ

Ժողովուրդը ցնծության մեջ էր:

Սակայն չէր անցել նույնիսկ երկու տարի, երբ արտաքին ուժերի սադրանքով եւ դրդմամբ Գագիկ Արծրունին արաբական ոստիկան Յուսուփի աջակցությամբ 908 թ. իրեն հռչակեց Հայաստանի թագավոր՝ առաջին սեպը խրելով հայոց միաբանության մեջ: Պատճառը, ինչպես նշեցինք, Նախիջեանն էր, որ Սմբատ 1-ին Բագրատունին առանձնացրեց Վասպուրականից եւ տվեց Սյունյաց գահերեց իշխանին:

Սա, թերեւս, առաջին լուրջ սխալն էր, որ թույլ տրվեց Բագրատունիների կողմից եւ, փաստորեն, առիթ հանդիսացավ քաղաքական երկպառակության համար:

Առանձին թագավոր ունենալու խմորումներ առաջացան նաեւ Սյունիքում, որի հզոր տերերից Վասակ Գաբուռն ամուսնացած էր Բագրատունյաց արքայադուստր Մարիամի հետ: Սյունյաց բարձրաստիճան հոգեւորականությունը եւ հատկապես Վահան եպիսկոպոս (հետագայում՝ կաթողիկոս) Ջեւանշերյանը՝ Բաղքի գահակալ Ջագիկի թոռը, նպաստեց այդ գաղափարի իրականացմանը: Եվ ահա, 970 թ. (այլ ուսումնասիրողների կարծիքով՝ 987 թ.) Սյունյաց գահերեց իշխան Աշոտի թոռը՝ Սահակի որդի Սմբատը, նույնպես արտաքին ուժերի թելադրանքով, իրեն հռչակեց Սյունիքի թագավոր<sup>19</sup>:

Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ցանկանում է արդարացնել թագավորության առաջացումը պատմական թատերաբեմում, թեեւ չէր կասկածում, որ ինչպես Սյունիքի, այնպես էլ Աղվանքի (Փամբուսի)<sup>20</sup>, Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյանների), Կարսի (Վանանդ-Բասենի) եւ այլ փոքրիկ թագավորությունների հանդես գալը<sup>21</sup> խարխուլում եւ բզկտում էր Հայաստանի միասնական պետության քաղաքական եւ տնտեսական հիմքերը, ինչին ձգտում էին օտար իշխանությունները, տվյալ դեպքում՝ Արաբական խալիֆայությունը: Մինչ այդ էլ արաբական կուսակալ Ափշինն ամեն կերպ գրգռում էր Վասակ իշխանին՝ «թագ կապել» Սյունյաց աշխարհում, սակայն, ինչպես նույն պատմիչն է վկայում, այս հեռատես իշխանը «ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել» եւ կտրականապես մերժեց նրան<sup>22</sup>:

Սյունիքում առանձին թագավորություն ստեղծելու փաստը Ստ. Օրբելյանը հիմնավորում է Բագրատունյաց տան ազդեցության ոլորտների նվազեցմամբ, ինչպես նաեւ նահանգի հեռավորությամբ, քանզի Բագրատունիներն իշխում էին Շիրակում, Այրարատում,

Գեղարքունիքում, Կարինում, մինչեւ Ձորագետ, եւ Սյունիքը կտրված էր Բագրատունիներից: Հեռավորության այս վարկածը տրամաբանական չէ եւ անընդունելի է: Երկրորդ վարկածը բխում է տոհմական փառասիրությունից եւ ուղղված է Բագրատունիների՝ իբրեւ երկրի սյուզերենների ոչ հայկական ծագում ունենալու, սակայն իշխելու իրավական կարգավիճակի հիմնավորվածության խնդրին: Այդ ինչու՞, գրում է Սյունյաց պատմագիրը, Հրաչեի կողմից գերեվարված Բագրատունիների ժառանգներից կարող են օծվել հայոց թագավորներ, իսկ Սյունյաց աշխարհից՝ ոչ: Չէ՞ որ «*Ի Հայկայ երեսկի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով եւ փրութեամբ եկեալ հասեալ էին մինչեւ ցայժմ*»<sup>23</sup> եւ «*երբեք ոչ ըմբոստացան ի հայրենի փրութեանցն*»<sup>24</sup>:

Սյունիքի թագավորությունը պատմագիտական գրականության մեջ կոչվում է նաեւ Բաղաց կամ Կապանի: Նրա առաջին գահակալը՝ Սմբատ Սահակյանը, վախճանվեց 998 թ. եւ ամփոփվեց Տաթևի վանքում: Գահը ժառանգեց նրա որդի Վասակ Կորիճը (998-1040), որը «ազատակոյտ բազմութեամբ» օծվեց Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով<sup>25</sup>: Կրտսեր եղբայր Սեադան դարձավ իշխանաց իշխան: Վասակ Սյունյաց թագավորի դուստրը՝ Կատրանիդեն, որին ժամանակագիր Մատթեոս Ուռնայեցին սխալմամբ կոչում է վրաց թագավոր Գեորգիի դուստր<sup>26</sup>, ամուսնացած էր Գագիկ I Բագրատունի թագավորի հետ (989-1020) եւ իր մոր՝ Շահանդուխտի նման զբաղված էր լայն շինարարական գործունեությամբ՝ շարունակելով կառուցել Անիի մայր տաճարը<sup>27</sup>: Վասակ թագավորի խնդրանքով եւ Կատրանիդեի միջամտությամբ, վերականգնվում է Սյունյաց միտրոպոլիտությունը<sup>28</sup>, որը, ինչպես նշեցինք, շնորհված էր նահանգի հոգեւոր առաջնորդներին դեռեւս 4-րդ դարում Ներսես Մեծի կողմից եւ վավերացվել Ամանիա կաթողիկոսի կոնդակով 10-րդ դարի 60-ական թվականներին:

Պատմական որոշակի արժեք է ներկայացնում Սարգիս Սեւանցի կաթողիկոսի 1006 թ. շրջաբերական նամակը՝ ուղղված Վասակ թագավորին եւ Սյունյաց Սեադա ու Աշոտ իշխաններին՝ Սյունիքի հոգեւոր թեմին ենթակա գավառների մասին: Ի թիվս այլ գավառների՝ նահանգի մետրոպոլիտի ենթակայությանն են անցնում Նախիջեանը, Ագուլիսը, Որդվատը (Օրդուբադը), Երնջակը, Ճահուկը եւ այլ բնակավայրեր<sup>29</sup>:

Մեզ են հասել Վասակ թագավորի մի շարք հրամանագրերն ու կալվածագրերը, որոնք սկսվում են ընդհանուր բանաձեւային կաղապարներով<sup>29</sup>: Հրամանագրերը ստորագրում եւ վավերացնում էր

անձամբ թագավորը. «Գրեցաք եւ կնքեցաք մերով արքունական հրամանաւ եւ մատանեալ»<sup>30</sup>:


Վասակ թագավորն իր քրոջն ամուսնացրել էր Բաղքի գահակալ իշխան Աշոտի (Աշոտիկի) հետ, որը երկրորդ դեմքն էր Սյունյաց թագավորությունում: Այս մասին հիշատակված ենք գտնում 1019 թ. կալվածագրերից մեկում<sup>31</sup>. «Ես՝ Սմբատ իշխան, վկայ եմ քեռայս՝ աստուածապսակ թագաւորիս հրամանացս»: Նույն կերպ է ստորագրել իբրեւ վկա հանդես եկող Գրիգորը՝ Սյունիքի ապագա թագակիրը<sup>32</sup>:

Վասակ թագավորը գահակալեց ավելի քան 40 տարի: Նա վախճանվեց եւ թաղվեց Տաթևի վանքում՝ «ընդ հօր իւրում Սմբատայ»<sup>33</sup>:

Վասակն արու գավակ չունեւ, եւ Սյունյաց տերերը որոշեցին գահին բազմեցնել իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի) ավագ որդի Սմբատին (1040-1051), իսկ եղբայրը հոր փոխարեն հռչակվեց «իշխանաց իշխան Սիսական աշխարհի»<sup>34</sup>: Սմբատը որքան «քաղցր ու հեզահամբոյր» էր յուրայինների հանդեպ, նույնքան «էր ահարկու շրջակայ ազգս»<sup>35</sup>:

Մատթեոս Ռոմիայեցին գրում է, թէ ինչպես Ղվինի Արուստու Պ (Արուս-Ասվար) Շեղադյան ամիրան, ցանկանալով իրեն ենթարկել Ղափիթ Ա Անիոդինին (989-1048), 150 հազար զորքով ներխուժեց Լոռի: Ղափիթն օգնության դիմեց Անիի Հովհաննես-Սմբատ արքային, վերջինս էլ խնդրեց Կապանի թագավորին, որը Լոռի եկավ իր 2000-անոց այրուձիով<sup>36</sup>: Կապանի տերը Սմբատ Բ Սյունյաց թագավորն էր: Տասնմեկ տարի թագավորելուց հետո (եւ ոչ՝ 4, ինչպես սխալմամբ նշված է ուսումնասիրողների մոտ) Սմբատը վախճանվեց Կապան մայրաքաղաքում եւ թաղվեց Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում: Մեր կողմից հայտնաբերված նրա տապանաքարին փորագրված է. «Սմբատ քազաւոր, թվականին՝ Հ. (1051)»<sup>37</sup>:

Սյունյաց գահին բազմում է նրա եղբայր Գրիգորը, քանզի Սմբատը ժառանգ չունեւ: Այս երկու եղբայրներն իրենց հոր անունով կոչվում են «Աւագ Աշոտեանք»: Գրիգոր 1-ին Սյունյաց թագավորն ամուսնացած էր Արցախի ականավոր իշխան Սահակ-Սեւադա Բ-ի դստեր՝ Շահանդուխտի հետ (Շահանդուխտ Բ Սյունյաց թագուհի, մահ. 1116թ.): Նրանք նույնպես ժառանգ չունեին, որպիսի փաստը արձանագրված է Վահանավանքի Ա. Աստվածածին կրկնահարկ եկեղեցու լուսնափայլ թ. վիմական բնագրում, ուր, մասնավորապես, կարդում




Սյունիքի Սմբատ Բ թագավորի տապանաքարը Վահանավանքում (1051 թ.)

**«Ի ՀԼԵ (1086) թվականին եւ Շահանդուխտ դուստր Սեւադայի Աղվանից քազաւորի եւ անուսին Գրիգոր քազաւորի որդո Աշոտկա, վասն ոչ զոր մեր ի միասին ժառանգ (ըստ մարմնո...)»<sup>38</sup>:**

Ի դեպ նշենք, որ Նախորդ ընթերցողներն այստեղ կարդացել են ԿԱՎԱՍՆ իշխանագնի անունը, որպիսին իրականում գոյություն չունի. անձնանունն առաջացել է կապակցության սխալ բառանջատման պատճառով, ուստի եւ տեղ է գտել Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» մեջ: Իրականում գրված է ... ԱՇՈՏԿԱ ԿԱՍՆ...:

Սմբատ Բ եւ Գրիգոր Ա թագավոր եղբայրները զբաղվել են լայն շինարարական աշխատանքներով: Աջակցել եւ «ամենայն պիտոյիք» օգնել են Տաթևի վանքի, Վահանավանքի, Բղենո Նորավանքի եւ այլ հոգեւոր-կրթական կենտրոնների վերանորոգման աշխատանքներին: Երկու եղբայրների անվան հիշատակությամբ Կապանի հնագիտական արշավախումբը Վահանավանքում հայտնաբերել է հետեւյալ արձանագրությունը, որն, անշուշտ, ունի պատմագիտական կարեւոր արժեք.

**«ԹՎ ՆՂԵ (1046). Ողորմեա ՔՍ ՄԵՍնպարա քազաւորի եւ**



Վահանավանք, Սյունիքի Սկրայ Բ և Գրիգոր Ա բազավորների 1046 թ. շինարարական արձանագրությունը (Կապան)

**խր եղբարն Գրիգորո, շինողի սրբո եկեղեցոյս, սրահիս և ժամատանն, որք մտանէր յարկս սրբութեան, զոցս յաղաքս յիշեցէր»<sup>39</sup>:**

21 տարի (եւ ոչ 40, ինչպես սխալմամբ ընդունված է պատմագիտական գրականության մեջ) թագավորելուց հետո Գրիգոր Ա-ն մահանում է թաղվում է Վահանավանքի մեծ տաճարի սյունասրահում: Կապանի հնագիտական արշավախումբը հայտնաբերել է նրա տապանաքարը՝ հետեւյալ մակագրությամբ.

«Թ: ՇԻԱ: (1072). ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՎՈՐ, ՈՐՈՂԻ ԱՇՈՏԿԱ»<sup>40</sup>:


Ուրեմն, վերջնականապես ճշտվում է Սյունյաց այս թագավորի գահակալության տարիների թիվը, այն է՝ 1051-1072 թվականներ, ուստի էլ մերժվում է նրա գահակալելու՝ 1044-1084 թվականների վարկածը: Գրիգոր Ա-ի մահվանից հետո, Սյունյաց ազնվականության միահամուռ որոշմամբ, գահին է բազմում Գրիգորի կնոջ՝ Շահանդուխտ թագուհու կրտսեր եղբայր Սենեքերիմը, որը, պատմիչի վկայությամբ, եղել է «յոթ գեղեցիկ տեսեամբ եւ առոյգ հասակաւ՝ հանճարեղ եւ իմաստուն» պատանի: Նա բարեկամական հարաբերություններ է հաստատում սելջուկյան սուլթան Մելիք-Շահի (1072-1092) հետ՝ ձգտելով հետ վերադարձնել սելջուկ-թուրքերի բռնագրաված Սյունյաց գավառները: «Յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս՝ ի ձեռաց քնիկ տերանց», - գրում է Ստեփանոս Օրբելյանը<sup>41</sup>: Եվ պատահական

չէ, որ օգտվելով Մելիք-Շահի բարյացակամ վերաբերմունքից, այս դիվանագետ թագավորը, երբեմն դիմելով նաեւ սրի՝ «ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ եւ բազում ամօք վարեաց զթագաւորութիւնս եւ խաղաղական կնքօք մինչեւ ի մահ Մելիք սուլթանին, որ մեռաւ ի 541 (1092) թվականին»<sup>42</sup>: Իր հրամանագրերից մեկում Սենեքերիմը գրում է. «Աստուած անյիշաչար եղեւ առ իս եւ ողորմեցաւ ինձ եւ կրկին հաստատեաց ի յիս զհայրենի տէրութիւն իշխանութեան իմոյ, որ խախտեալ էր ի ձեռն Իսմայէլականացն»<sup>43</sup>: Նա հաղթական պատերազմներ է մղել Սյունիքի Կովսական (այժմյան Զանգեզանի շրջան) ներխուժած Փատլուն ամիրայի դեմ<sup>44</sup>:

Մատենագրական աղբյուրների համաձայն, Սենեքերիմն ուներ երեք ուսոր (Գրիգոր, Սմբատ, Սեադա) եւ մեկ դուստր: Սակայն Վահանավանքի պեղումների ժամանակ հայտնաբերվեց մի տապանագիր, որը վկայում է Սենեքերիմի՝ 4-րդ արու զավակ ունենալու փաստը. «ԶԿԻՐԿԷ, ՈՐՈՂԻ ՍԵՆԻՔԱՐԵՍ ԹԱԳԱՎՈՐԻ ԿԻՍԱՎՈՐԵ ԶԱՆԳՈՒՅԵԱԼ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՅԵՐ, /ԹՈՒԿԱՄԻՆ/. ՇԽԸ. (1099)»<sup>45</sup>: Ինչպես տեսնում ենք, նա ունեցել է Կյուրիկե անունով եւս մեկ որդի, որ վախճանվել է երիտասարդ հասակում 1099 թ.:

Սենեքերիմի մայրը՝ Սուփիան, արձանագրություններում կոչված է «Աղվանից թագուհի»: Սեզ բախտ վիճակվեց հայտնաբերելու նաեւ նրա տապանաքարը՝ հետեւյալ արձանագրությամբ. «ՍՈՓԻ՝ ԱՂՎԱՆԻՑ ԹԱԳՈՐԻՔԻ, ԶՈՔԱՆՉ ԳՐԻԳՈՐ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ՈՐՈՂՈ ԱՇՈՏԿԱ, ՍԱՅՐ ՇԱՅԱՆԴԻՏՈ. Թ. ՇԼ. (1081)»<sup>46</sup>: Նույն 1081 թվականին, նրա զավակներ Շահանդուխտ թագուհին, Սենեքերիմը եւ «սրբասնունդ օրիորդ» Կատան գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել Վահանավանքի մեծ տաճարի արեւելյան սարավանջին: Վահանավանքի կրկնահարկ եկեղեցու արեւմտյան գավթում է թաղված Աղվանից կաթողիկոս տեր Ստեփանոսը, որը Կապան էր եկել «Նեղեալ ի Տաճկաց», հավանաբար 11-րդ դարի 70-ական թվականներին: Սելջուկ-թուրքերը, Մելիք-Շահի մահվանից հետո, ամեն կերպ ցանկանում էին վերացնել Սյունիքի թագավորությունը, «գոր խոչ մեծ համարէին ինքեանց»:


Այս կապակցությամբ հարկ ենք համարում համառոտակի խոսել Սյունյաց թագավորների քաղաքական կողմնորոշման մասին: Ի տարբերություն Վասպուրականի իշխանավորների, որոնք քրիստոնյա Բյուզանդիայի աջակցությամբ, փաստորեն, կործանեցին իրենց երկիրը՝ փոխանակելով այն Կեսարիայի հետ, Սյունիքի տերերն իրենց հեռատես եւ հմուտ դիվանագիտական քայլերի շնորհիվ մտերիմ հարաբերություններ հաստատեցին սելջուկ սուլթանների հետ եւ պահպա-



Մյունիքի Գրիգոր Ա թագավորի տապանաքարը Վահանավանքում (1072 թ.)

Նեցին Սյունյաց աշխարհը աներից ասպատակություններից: Այս տեսանկյունից հատկապես առանձնանում է Սյունյաց արքա Սենեքերիմը, որն ազատ ելումուտ ուներ սուլթան Մելիք-Շահի արքունիքում: Եվ պատահական չէ, որ այս բռնակալի հովանավորությունն օգտագործելով՝ 1086 թ. նա դուրս վնդեց Սյունիքի Կովսական գավառ ներխուժած սելջուկ-թուրքական ավազակախմբերին: Ուրեմն, իբրեւ սկզբունք, Սենեքերիմը չի ղեկավարվել կրոնական-դավանական առաջնայնության գաղափարով: Ընդհակառակն, օտար ներխուժումից երկիրը փրկելու համար՝ նա համագործակցել է օտար հզորի հետ մյուս օտարին ոչնչացնելու նպատակով: Այս նուրբ, ճկուն եւ հեռատես քաղաքականությունը հետագայում որդեգրեցին հատկապես Օրբելյան եւ Պռոշյան իշխանները, երբ մոնղոլների աշխարհավեր արշավանքներից հետո հարաբերական կայունությունն օգտագործելով՝ ստեղծեցին Սյունյաց լեռնաշխարհի խոշորագույն ուսումնագիտական օջախը՝ Գլաձորի համալսարանը: Ուրեմն, քաղաքական իրադրության ճիշտ ընկալումից էին բխում Սենեքերիմի դիվանագիտական քայլերը, որոնք ուսանելի են նաեւ մեր օրերում:

Իրադրությունը Սյունիքում կտրուկ փոխվեց Մելիք-Շահի մահվանից հետո:



Մյունիքի Գրիգոր Ա թագավոր (դեմքի վերականգնումը պրոֆ. Ա. Ճաղարյանի)


1094 (կամ 1096) թվականին խաղաղության դաշն կնքելու պատրվակով, միջնորդ ունենալով Շիրակի Գրիգոր Ապիրատ իշխանին, Ելտկուզ ամիրան ժամանում է Կապան, որտեղ՝ Բաղաբերդ ամրոցում, ճակատամարտի էր պատրաստվում Սենեքերիմ արքան: Բանակցությունների ժամանակ «չարաթոյն գազան» Գանձակի տիրակալը «ստեաց ուխտին, եւ յարձակեալ մոմռանօք ի վերայ՝ էսպան զթագաւորն» Սենեքերիմ: «Այսպես շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր մնացեալ յամուրսն Բաղաց», - գրում է պատմիչը<sup>47</sup>: Սենեքերիմը նույնպես թաղվեց Վահանավանքի արքունական դամբարանատանը՝ «ի շիրմի ընդ այլ թագաւորսն»<sup>48</sup>:

Մեզ են հասել նաեւ Սենեքերիմ թագավորի մի շարք իրամանագրերը: Դրանցից մեկն սկսվում է այսպես. «Կամաւ կարող հզօրին Յիսուսի՝ ես՝ Սենեքերիմ թագաւոր Յայոց, կացեալ ի Սիսական եւ Բաղաց աշխարհիս»<sup>49</sup>:

Սենեքերիմին հաջորդում է նրա որդի Գրիգորը (Գրիգոր Բ), որն «ընդ աղօտ թագաւորեալ»:

1103 թ. սելջուկ-թուրքերը՝ Մելիք-Շահի երբեմնի մատուցակ Չորթմանի գլխավորությամբ, ներխուժեցին Բաղք գավառ: Նրանց հիմնական նպատակն էր գրավել Սյունյաց մայրաքաղաք Կապանը<sup>50</sup>, ոչնչացնել գիւնական ուժը եւ վերջնականապես լուծել «Սյունյաց խոչընդոտի» հարցը: Չորթմանի հրոսակները կոտորածն սկսում են Ջիտաթաղ կոչված արվարձանից, որտեղ, ըստ որոշ ուսումնասիրողների, ապրել են հրեաներ, որպիսի վարկածը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ: Թշնամին չի կարողանում գրավել արքայանիստ Բաղաբերդ ամրոցը եւ թալանած հարուստ ավարով հեռանում է քաղաքից: Սելջուկյան գահին բազմած Բակիարուխը՝ Մելիք-Շահի որ-





Սոփի բազուկու տապանաքարը  
Վահանավանքում (1081 թ.)

դին, ի վիճակի չէր սանձահարել իր արյունառու ցեղակիցներին, գուցե եւ ինքն էր նրանց հորդորում Սպահանի իր արքունական պալատից: Սյունիքի 43 ամրոցներն ու 1400 (1008) բնակավայրերը հեշտությամբ չէին կարող նվաճվել, ուստի Բաղք-Ջորքը թողած՝ նրանք հարձակման սլաքն ուղղեցին Որոտն, ապա Բղեն գավառների կողմերը: Կատաղի մարտերը տեւեցին մեկ տարի: 1104 թ. նրանք ներխուժեցին Որոտան եւ Բղենո գավառ, գերեվարեցին խոսրովիկ իշխանին, սակայն առաջանալ չկարողացան: Սյունիքն ազատ շունչ քաշեց եւս 22 տարի: 1126 թ. Զարոն ամիրան գրավեց Արեւիք գավառը՝ Մեղրին, 1152 թ. թուրքերին հաջողվեց նվաճել Շիրուտի բերդը, իսկ հինգ տարի հետո՝ 1157 թ. ընկավ Մեղրու բերդը:

1170 թ. մատնությամբ գրավեց Սյունյաց նահանգի «հոյս եւ ապաւն» Բաղաբերդ ամրոցը: Հրկիզվեցին եւ ոչնչացվեցին այստեղ ամբարված ավելի քան 10000 ձեռագիր մատյաններ ու սրբություններ, կողոպտվեցին արքունական գանձերը: Բաղաբերդի անկումը պատմիչը համեմատում է Նաբուգոդոնոսոր արքայի կողմից Երուսաղեմը կործանելու հետ:

Գրիգոր Բ թագավորը, որը միակ դստերը՝ Կատային կնության էր տվել խաչենցի իշխանագն Զասան Գեռաքարեցուն, իր եղբայր Սմբատի հետ մահացավ 1166 թ.՝ մինչ այդ Սյունյաց գահաժառանգ իռչակելով իր փեսային՝ Զասանին: Վերջինիս ոչինչ չէր մնում անելու, քան կնոջն առած հեռանալ դեպի Արցախ:

Սյունիքի վերջին թագավորների մասին հատուկ հիշատակում է Ստեփանոս Օրբելյանն իր «Ողբք եւ Զառաչանք ի դիմաց

Կաթողիկէին» քնարական-պատմողական պոեմում, որը գրված է 1300 թ.: Այստեղ մասնավորապես, կարդում ենք.

«... Որոյ (իմա՝ Սյունիքի թագավորության) վերջին Սենեքերիմ Նաւ Գրիգոր որդի Նորին,  
Ապա եւ զայս ի բարձ բարձին՝  
Ի ժամանակս Ելտըկուզին  
Ազգն այլասեռ պարսկային,  
Որք հրով զաշխարհ տոչորեցին՝  
Ի 600 մեր թուականին  
Եւ 15 յաւելուածին...»<sup>51</sup>:

Այսպիսով, պատմության ասպարեզից վերացավ Զայաստանի վերջին քաղաքական կազմավորումը (բուն Զայաստանում)՝ Սյունյաց թագավորությունը, որը համառոտեւ գոյատեւեց 200 տարի շարունակ:

Վիմագրական եւ մատենագրական սկզբնաղբյուրների համադրությամբ այսօր, թերեւս, կարելի է կազմել Սյունյաց գահացանկը՝ թագավորների գահակալության տարիներով հանդերձ.

1. Սմբատ 1-ին՝ որդի Սահակի - 970(987)-998<sup>52</sup>
2. Վասակ՝ որդի Սմբատի - 998-1040
3. Սմբատ 2-րդ՝ որդի Աշոտի - 1040-1051
4. Գրիգոր 1-ին՝ որդի Աշոտի - 1051-1072
5. Սենեքերիմ՝ որդի Սեադայի - 1072-1094 (1096<sup>53</sup>)
6. Գրիգոր 2-րդ՝ որդի Սենեքերիմի - 1096 (?) - 1166
7. Զասան խաչենցի - 1166-1170<sup>53</sup>:



## Ա մ փ ո փ ե ն ք

1. Սյունիքի, ինչպես նաև այլ ավատական փոքրիկ թագավորությունների հանդես գալը պատմականորեն չի արդարացվում, քանզի այդ կազմավորումները պառակտում, տարանջատում եւ ի վերջո կործանում էին միասնական պետության քաղաքական հիմքերը եւ թուլացնում նրա տնտեսական եւ պաշտպանական համակարգերը:
2. Հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջանների ծախքերն ուսումնասիրելիս ամենուր երեւում է արտաքին ուժի ոչ միայն ռազմական, այլեւ դիվանագիտական միջամտության քայքայիչ ազդեցությունը:
3. Սյունիքը, լինելով Հայաստանի խոշոր եւ ռազմական կարողության տեսակետից՝ հզոր նահանգներից մեկը, վաղնջական ժամանակներից ցայսօր մնում է մեր ժողովրդի հյուսիս-արեւելյան (ցավոք, այժմ հարավային) սահմանների հուսալի պատվարն ու պահապանը:
4. Սյունիքի, մասնավորապես Ջազեձոր-Ջանգեզուրի, խաղացած դերն առավել կարեւորվում է այսօրվա Հայաստանի համար, քանզի քաղաքական սարքանքների պատճառով թեեւ նա զրկվել էր իր մի շարք սեփական տարածքներից՝ Աղախեճք-Քաշաթաղից (Լաչինի շրջան), Կովսական գավառի մեծագույն մասից (Ջանգելանի շրջան) եւ այլ բնակավայրերից, այնուամենայնիվ՝ դրանք հետ վերադարձվեցին հերոսական պայքարի գնով: Նավթագարությամբ տառապող աշխարհի հզորները տեսնում են, որ Հայոց լեռնաստանը շարունակում է մնալ վրանաբնակ ցեղերի մերօրյա ժառանգների թիրախը, ինչու չէ՞ նաեւ ահ ու սարսափը:
5. Պատմությունը կրկնվում է, եւ մենք պարտավոր ենք դասեր քաղել:

\*\*

Բաղաց թագավորության անկումից հետո քաղաքական ասպարեզից աստիճանաբար վերացվում են տեղի նշանավոր տոհմերը: Սկսվում է Սյունյաց ազատման զանգվածային արտագաղթը հայրենի երկրից: Տոհմիկ իշխաններ Ջուրջն ու Խոսրովիկը գերության մեջ մեռնում են Նախիջեւանում եւ թաղվում Ճահուկ ավանում: Կապանի Մահեան իշխանը փախչում է Անի: Բաղքի ականավոր զորավար Հասանի որդի Համտունը (Ավագ Համտունի թոռը) Վայոց ձորում ապաստան է գտնում եղբոր՝ Հովհաննեսի մոտ, որ կրոնավորի սքեմ հագած՝ Նորավանքի մենաստանում ողբում էր իր երկրի կործանումը: Գոյությունը պահպանելու նպատակով՝ Համտունը Նույնպես դառնում է կրոնավոր եւ հայրենագուրկ վիճակում իր մահկանացուն կնքում 1231 թ.:

Վայոց ձորի մի շարք վիմագրերից կարելի է եզրակացնել, որ Կապանի իշխանական տոհմերի զգալի մասը՝ թագավորության վերացումից հետո, բնակություն է հաստատում Վայոց ձոր գավառում եւ հատկապես Արփա (այժմ՝ Արենի), Եղեգիս (այժմ՝ Նույն անունով, մինչեւ 1988 թ.՝ Ալալազ), Արտաբոյն (այժմ՝ Եղեգիս) եւ այլ ամրոցամերձ վայրերում:

Լեռնաշխարհի համար առավել քայքայիչ եւ ողբերգական հետեւանքներ ունեցավ աշխատավոր զանգվածների արտագաղթը դեպի օտար երկրներ: Ղարերով մշակված արտերին ու այգիներին, դաշտերին ու բարեբեր հողատարածություններին, կանաչազարդ հովիտներին տեղ էին դառնում վաչկատուն վրանաբնակները: Հայոց լեռնաշխարհի մշակութային օջախներն ամենուր վերածվում էին ախոռների, իշխանական դղյակներն ու օթոցները՝ մակաղանոցների: Հայազուրկ էր դառնում Սյունյաց աշխարհի քաղաքամայր Կապանը: Վայրագ ցեղերից հետապնդվող ռամիկն ու գյուղացին, բազմապիսի ծանր զրկանքներ կրելով, այնուամենայնիվ, բնկալում էին հայրենի լեռների անառիկ ծերայերի մեջ, մութ ու սառն քարանձավներում:

Բազմաթիվ ազնվագարն սյունեցիներ գաղթեցին նաեւ Վրաստան, որն այդ տարիներին՝ Գեորգի Գ Բագրատունիանի իմաստուն քաղաքականության շնորհիվ, օրավուր հզորանում էր եւ դառնում Հայաստանի տարածքը զավթած թուրքական ամիրայությունների ահեղագույն մրցակիցը:

### Ժ. Ժողովրդի սոցիալական վիճակը

Հայաստանում, ընդ որում նաեւ Սյունիքում, տիրապետող կացութեւնը գյուղացիական համայնքն էր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասական իմաստով Սյունիքում ճորտատիրություն չի եղել: Գյուղը ղեկավարում էր գեղջավազը՝ գյուղապետը, որը ճանաչում էր գահակալ իշխանի գերագահությունը, գյուղացիներից հավաքում իշխանին հասանելիք արդյունքը եւ եկեղեցական տասանորդը, մուծում նախատեսված պետական եւ տեղական հարկերն ու տուրքերը, անհրաժեշտության դեպքերում կազմակերպում էր արտատնտեսական բնույթի աշխատանքներ: Թագավորի կամ տեղական իշխանների կարգադրությամբ գյուղացիները պարտավոր էին մասնակցել ճանապարհների, կամուրջների, հոգեւոր-կրթական օջախների շինարարական աշխատանքներին:

Տաթևի վանքի Մայր տաճարի՝ Պողոս-Պետրոսի կառուցումից հետո (895-906 թթ.), Սյունիքի եպիսկոպոսական աթոռը ցանկանում է ընդարձակել վանական տիրույթները՝ աստիճանաբար յուրացնելով շրջակա գյուղերի հողակտորները:

915 թ. բռնկվեց Յուրաբերդ<sup>54</sup> գյուղի բնակիչների ապստամբությունը Տաթևի վանքի դեմ: Ժողովրդական հուզումների ալիքը տարածվեց մյուս հարեւան գյուղերում՝ Տամալեկում, Ավելադաշտում եւ այլուր: Սյունյաց եպիսկոպոսը դիմեց գահերեց իշխան Սմբատին, որը հիմնովին ոչնչացրեց Յուրաբերդը՝ վտարելով այնտեղից գյուղացիական զանգվածներին եւ վերադարձնելով Տաթևին այդ տիրույթներն ի սեփականություն: 85 տարի հետո՝ 999 թ., Յուրաբերդի, Ավելադաշտի եւ այլ գյուղերի բնակիչները դարձյալ հարձակվեցին Տաթևի վանքի միաբանության վրա, ներխուժեցին սրբավայր՝ գանահարելով եւ սպանելով հոգեւորականներից ոմանց, թափեցին (վայթեցին) սուրբ մեռնող կիրճն ի վար, ջարդոտեցին եկեղեցու սրբազան մասունքները եւ վերագրավեցին իրենց հողակտորները: Այս անգամ Սյունյաց թագավոր Վասակը ստիպված էր գնալ որոշ զինուժների, այսինքն՝ գեղջավազի միջոցով տրամադրեց դրամական հատուցում՝ բնակիչների ժառանգական տիրույթների դիմաց:

Պատմիչ Ստ. Օրբելյանը վկայում է, որ այդ գյուղացիները «հին հայրենի տերք» էին՝ օժտված ժառանգական սեփականության իրավունքով: Այս եւ նման պատմական փաստերը վկայում են, որ



Տաթևի վանք (IX-XIII դ.դ.)

Սյունիքում, ի տարբերություն Հյուսիսային Հայաստանի, իրավական իմաստով ճորտատիրություն գոյություն չի ունեցել, թեեւ եղել են տնային ծառաներ՝ գտնվելով առանձին ընտանիքներից ճորտական կախման մեջ:

Իսկ ինչպե՞ս հասկանալ այն իրողությունը, երբ առանձին գյուղեր՝ իրենց բնակիչներով, նվիրաբերվում կամ օտարվում էին առանձին վանքերին կամ այլ հոգեւոր հաստատություններին: Կարծում ենք, նման դեպքերում վաճառվում էր հարկապահանջության իրավունքը, այսինքն՝ սահմանված հարկը գանձելու իրավունքն անցնում էր նոր տիրոջը, նոր ավատին: Գյուղացու սոցիալական վիճակի մեջ էական փոփոխություն տեղի չէր ունենում. նա գանձվելիք հարկը կամ տուրքը տալիս էր նոր տիրոջը<sup>55</sup>:

Մատենագրական աղբյուրներում եւ վիմական արձանագրություններում կան մի շարք փաստեր առանձին ընտանիքների կամ անհատների նվիրատվության մասին: Օրինակ՝ Տարսայիճ Օրբելյանն իր ավագ եղբոր՝ Սմբատի դամբարանը կառուցող Սիրանես ճարտարապետին իբրեւ վարձատրություն նվիրաբերում է նաեւ Աղազար Ըղուերծե-

ցուն (Ըղուերծը այժմյան Սիսանի շրջանի Դարբաս գյուղն է), այսինքն՝ Աղագարը դառնալու էր, ճարտարապետ Սիրանեսի տնային ծառան:

Սյունյաց լեռնաշխարհի բնակիչները սոցիալ-իրավական վիճակով մշտապես եղել են ազատ, կրկնում ենք՝ ճորտատիրական հասարակարգ այստեղ երբեք գոյություն չի ունեցել:


## ԺԱ. Սյունյաց նահանգի ազատագրումը եւ Օրբեյան տոհմի հաստատումը Սյունիքում

ՕՐԲԵՆՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՏՈՂՄԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Պատմիչ Ստ. Օրբեյանը գտնում է, որ իր նախնիները ծագումով եղել են ճենաստան աշխարհից, արքայատան ժառանգներ, որոնք գահակալական կռիվների պատճառով հեռացել են իրենց երկրից եւ հանգրվանել նախ՝ Վրաստանում, ապա՝ նաեւ Հայաստանում: Այս հարցերը հանգամանորեն քննարկում է մեծանուն պատմաբան Ն. Ադունց իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծարժեք աշխատության էջերում: Գիտնականի կարծիքով՝ ճենաստանը ոչ թե Հիւսստանն է, այլ՝ ճանաստանը՝ Վրաստանի հյուսիս-արեւմուտքում գտնվող ճանեթիան-Ճանարքը (Սվանեթիան)<sup>56</sup>: Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը նշում է. «Ադունցի կարծիքը, որ Մամիկոնյանները Տայքի արեւմտակողմում ապրող ճանեթից են ծագում, միանգամայն անընդունելի կռահումն է, որից նա հրաժարվել է ինքը իր վերջին աշխատություններից մեկում»<sup>57</sup>: Որովհետեւ ինչպես Օրբեյանները, նույնպես եւ Մամիկոնյանները, պարուրված են նույն ընտանեկան լեգենդի շղարշով: Պետերբուրգի կայսերական համալսարանի պրոֆեսոր Զ. Պատկանյանը<sup>58</sup>, եւ նրան հետեւելով՝ Դ. Ե. Երեմենկո<sup>59</sup>, ծայրահեղ տեսակետ են հայտնել՝ իբրեւ թե ճենեթը ազգությամբ եղել են պարզապես թուրքեր:

Մենք պաշտպանում ենք Ն. Ադունցի տեսակետը. Օրբեյանները եղել են Մամիկոնյանների ժառանգներ, որոնք իրենց առաջին հանգրվան Օրբեթի բերդի անունով Վրաստանում կոչվել են Օրբուլք, այսինքն՝ օրբեթեցիք եւ ապա՝ նաեւ Օրբելի (Օրբելիանի): Ստ. Օրբեյանի կարծիքով՝ տոհմական այս վերանվանումը տեղի է ունեցել իրենից ավելի քան 1000 տարի առաջ՝ 216-252 թթ. արանքում, Տրդատ Բ-ի օրոք: Պատմիչը վկայակոչում է Օրբեյան տոհմին հատուկ մի շարք անձնանուններ՝ Ելիկում, Բուրթել, Տարսայիճ եւ այլն, որոնք իբրեւ թե ճենական ծագում ունեն:

1177-1178 թթ. վրաց եւ հայ իշխանները ապստամբեցին Գեորգի Գ թագավորի դեմ: Ապստամբության բուն պատճառը վրաց հանգուցյալ թագավոր Դավթի որդու՝ Դեմնայի (Դեմետրեի) գահակալության



Սմբարաբերդ, հյուսիսային մուրքը (Վայոց ձոր)

խնդիրն էր: Սպասալար Իվանե Օրբելին, որի մոտ ապաստանում էր օրինական թագաժառանգը, երդվել էր մահամերձ Դավիթ թագավորին, որ հասունանալուց հետո գահին է բազմեցնելու Դեմնային, իսկ մինչ այդ թագավորելու է նրա եղբայր Գեորգին: Վերջինս՝ տարած փայլուն հաղթանակներից հետո, հրաժարվում է գահին բազմեցնել անփորձ պատանուն: Սկսվում է ալեկոծությունների շրջանը: Իվանե Օրբելու կողմնակիցներն աստիճանաբար տեղի են տալիս եւ անցնում Գեորգիի կողմը: Այդպես են վարվում նաեւ Սարգիս Զաքարյանը, Սարուն Արծրունին եւ մյուս հայ իշխանները: Մինչ այդ Իվանե Օրբելին իր եղբորը՝ Լիպարիտին, էլիկում եւ Իվանե զավակների հետ միասին, ուղարկում է Գանձակի ամիրայի մոտ՝ զորակցություն խնդրելու ակնկալիքով, սակայն արդեն ուշ էր. Գեորգին ճնշել էր ապստամբությունը, իսկ Իվանեին կուրացրել: Նա հրամայում է եղբորորդի, գահաժառանգ Դեմնային ներքինացնել:

1183 (1184) թ. վախճանվում է Գեորգի Գ-ն: Վրաց գահը ժառանգում է նրա միամորիկ դուստր Թամարը (1184-1213): Թամար թագուհին, խաղաղությունը վերականգնելու նպատակով, ներում է

ապստամբ իշխաններին եւ աստիճանաբար հետ վերադարձնում նրանց տիրույթները: Վրաստան է վերադառնում ապստամբության առաջնորդ Իվանե Օրբելու եղբորորդի Իվանեն՝ ստանալով հայրենական Օրբեթ բերդը միայն: Նրա եղբայր էլիկումը մնում է Գանձակի ամիրայի մոտ՝ տոհմական վրեժը լուծելու նպատակով:

Այսպիսով, Նախիջեանում գտնվող էլիկումից առաջ են գալիս հայ Օրբելյանները, իսկ Վրաստան վերադարձած Իվանե եղբորից՝ վրաց Օրբելիները (Օրբելիանի):

Նախիջեանում էլիկումը ամուսնանում է տեղի Ստեփանոս եպիսկոպոսի քրոջ դստեր՝ Խաթունի հետ, որի հայրը մեծահարուստ Աբաս Ճահկեցին էր: Խաթունից եւ էլիկումից ծնվում է մի արու զավակ, որին պապի անունով կոչում են Լիպարիտ:

1184 թ. Գանձակի ճակատամարտում սպանվում է էլիկում իշխանը: Նրա ընտանիքը հատուկ հսկողությամբ պահվում է Ճահուկ ավանում: Այստեղ տաճիկներից մեկը բռնությամբ ամուսնանում է Խաթունի հետ:

Հայ-վրացական միացյալ զորքերի հաղթարշավը մոտենում է Սյունյաց լեռնաշխարհին, մտնելով Վայոց ձոր: Ստեփանոս սրբազանը Իվանե Զաքարյանին տեղակացնում է, որ հարեան զավառում է գտնվում Օրբելյան իշխանազուն Լիպարիտը՝ իր մոր հետ: Թամար թագուհու համաձայնությամբ, նրա որդի, վրաց գահաժառանգ Գեորգի Լաշան եւ Իվանե Զաքարյանը փախցնում են գերյալներին եւ բերում Վայոց ձոր: Լիպարիտը ներկայանում է Իվանե Աթաբեկին, որը նրան նշանակում է իր զինաջոկատներից մեկի հրամանատար: Իվանե Զաքարյանը ցանկանում է իր դուստր Թամթային ամուսնացնել Լիպարիտի հետ, սակայն նրան կանխում է ավագ զորապետ, իշխան Բուպան (Բուպաք)՝ իր դուստր Ասփային կնության տալով Լիպարիտին:

Այսպիսով, հիմնադրվում է Սյունյաց Օրբելյանների իշխանությունը:

Այս ամենի մասին պատմվում է Ամադուի Նորավանքի 1221 թ. ընդարձակ արձանագրության մեջ<sup>60</sup>: Հիշյալ վիմագրից երեւում է, որ Լիպարիտ Օրբելյանը տիրույթներ է ունեցել ոչ միայն Վայոց ձորում, այլեւ՝ Գեղարքունիքում, Կոտայքում եւ Կայենում (Աղստեփի հովտում):

Լիպարիտն ու Ասփան ունենում են 5 զավակներ՝ էլիկում, Սմբատ, Իվանե, Փախրադուլա (Փախրադապա) եւ Տարսայիճ:

Վայոց ձորի վիմագրությունները ցույց են տալիս, որ այս զավառը սելջուկ-թուրքերից ազատագրել է Վասակ Խաչենցին: Այս մասին կարդում ենք Արատեսի վանքի (Վայոց ձոր) 1220 թ. արձանագրության մեջ:

*«ՈԿԹ (1220). Ի թագաւորութեան Վրաց Լաշայի եւ յաշխարհակալութեան Իւան(Է)ի Աթաբեկի, եւ Վասակ որդի խաղբակաւ, կողմնապահ ի Գառնոյ մինչեւ ի Բարգուշաք, եւ առի զամրոցանիս Եղեգեաց չորոյս...»<sup>61</sup>:*

Ստ. Օրբելյանի կարծիքով, Սյունիքն ունեցել է 2 կողմնակալներ, որոնցից մեկը եղել է իր պապ Էկապրիտ իշխանը:

«Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ եւ Աթաբեկն Իւանէ զԷկապրիտն կողմնակալ յայսմ աշխարհի, նմանապէս եւ զմիւս իշխանն՝ զամենօրինեալ զՎասակ խաչենեցին, զհայրն բարեպաշտ պարունին Պռոշայ կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»<sup>62</sup>: Սակայն Օրբելյանները Սյունիքի լիիրավ տերեր դարձան 13-րդ դարի 2-րդ կեսին՝ մոնղոլների տիրապետության օրոք, շնորհիվ իրենց վարած ճկուն դիվանագիտության:

1211 թ.՝ Սյունիքի ազատագրումից հետո, մասնավորապէս Վայոց ձորում, հաստատվեցին նաեւ այլ իշխանական տոհմեր՝ Հասան-Համտունյանները, Մահեւանյանները, Շահուռնեցիները, Արփայի Ախթամարյանները, որոնք ընդարձակ կալվածների տեր դարձան Զաքարյանների շնորհիվ:

Սկսվեց խաղաղ մի ժամանակաշրջան, որը տեւեց 25 տարի շարունակ: Այդ խաղաղությունն այս անգամ խախտեցին մոնղոլները, որոնք հայկական սկզբնաղբյուրներում կոչվում էին «Ազգ նետողաց»:

## ԺԲ. Մոնղոլական արշավանքները եւ Սյունիքը

13-րդ դարի 20-ական թթ., հետապնդվելով մոնղոլական զորքերից, Անդրկովկաս ներխուժեցին Խորեզմշահի որդի Զալալեդդինի հոր-սակները: Հայ-վրացական միացյալ զորքերը հանպատրաստից դիմագրավեցին նրանց, սակայն Գողթի մոտ (Գառնիի մերձակայքում՝ Գեղարդի ճանապարհին) 1224 թ. ճակատամարտում կրեցին պարտություն: Վրաց արքունիքը՝ մասնավորապէս Ռուսուդան թագուհին, անկարող գտնվեցին դիմակայել թշնամուն: Զալալեդդինի զորքերն ամենուր ասպատակ սփռեցին: Այս մասին պահպանվել են նաեւ վիմագիր վկայություններ Վայոց ձորում եւ Գեղարքունքիում<sup>63</sup>:

1236 թ. (1221 թ. հետախուզական արշավանքից 25 տարի հետո, երբ մոնղոլները մտան Մուղանի դաշտավայր) մոնղոլական 30 հազարանոց բանակը՝ Զարմաղանի գլխավորությամբ, ներխուժեց Անդրկովկաս: Զգալիորեն թուլացած հայ-վրացական զորքերը Անիում եւ Շամքորում կարողացան ցույց տալ որոշակի դիմադրություն, սակայն ուժերն անհավասար էին եւ ստիպված ճանաչեցին մոնղոլ մեծ խանի գերիշխանությունը:

Զարմաղանին առաջինը հպատակություն հայտնեց Ավագ Զաքարյանը, ապա՝ Վահրամ Զաքարյանը, այնուհետեւ՝ Լոռու տեր Զաքարեն, Արցախի մեծ իշխան Հասան-Զալալ Դուլան եւ ուրիշներ:

Սյունիքում այդ ժամանակ իշխում էր Էկապրիտ իշխանի ավագ որդի Էլիկումը: Սյունիքը նվաճելու բաժին էր հասել Ասլան Նոյինին, որը ներխուժեց Վայոց ձոր եւ պաշարեց Էլիկումի Հրաշկաբերդ (Հրասեկա բերդ) ամրոցը: Ասլան Նոյինը պատգամախոսներ ուղարկեց Սյունյաց իշխանի մոտ՝ առաջարկելով խաղաղությամբ իջնել եւ հանձնվել: Մոնղոլ զորապետն Էլիկումին ասում էր. «Արա ընդ մեզ սեր եւ բազում բարութիւն գտցես ի մենջ»<sup>64</sup>: Հակառակ դեպքում նա սպառնում էր կործանել նրա երկիրը եւ խստորեն պատժել անհնազանդ իշխանին: Էլիկում Օրբելյանը, նախապէս երդմնագիր պահանջելով, «բազում ընծայիւք» իջնում է ամրոցից եւ ներկայանում Ասլան Նոյինին: Կնքվում է դաշնագիր, որի համաձայն՝ Էլիկումը մնում է իշխող դիրքում, սակայն պարտավորվում է այսուհետեւ մասնակցել մոնղոլական հետագա արշավանքներին իր իսկ զինաջոկատով:

1260 թ. Սուֆարդինի (Նփրկերտի) ճակատամարտում էլիկումը զոհվում է: Նրա դին տեղափոխում են Վայոց ձոր եւ ամփոփում Նորավանքի՝ Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը: Տապալաքարին փորագրված է. *«Բարեպաշտ իշխանաց իշխանին Այլակումի է տապան»*<sup>65</sup>:

Սյունյաց Օրբելյանների իշխանության գլուխ է անցնում ոչ թե նրա մանկահասակ որդի Բուրթելը, այլ եղբարը՝ Սմբատ իշխանը (1253-1273), որն օժտված էր զորականի եւ փայլուն դիվանագետի արտակարգ տաղանդով:

Ստ. Օրբելյանը հիացական խոսքերով է ընթերցողին ներկայացնում հարազատ հորեղբոր (որին որդեգրված էր) կերպարը: *«Նա հանճարով մեծ էր, - գրում է պատմիչը, - խորհրդով ուժեղ, հնարքներով բազմազեղ, ինչոր աննման, խոսքերով առաջ, քաղցր լեզվով, ճարպար, դափաստանի ժամանակ անպարտելի»*<sup>66</sup>: Սմբատը գիտեր 5 լեզու՝ հայերեն, վրացերեն, ուղուրերեն, ֆարսերեն եւ մոնղոլերեն:

Սմբատ Օրբելյանը Լիպարիտից եւ Ասփայից ծնված 5 զավակների 2-րդն էր: Նա ամուսնացած էր իշխանուհի Ռուզուբանի հետ, սակայն զավակ չունեւ եւ մանկուց որդեգրել էր իր ամենակրտսեր եղբայր Տարսայիճի որդի, տաղանդաշատ Ստեփանոսին, որին հետագայում բախտ էր վիճակվելու դառնալ Սյունյաց մեծերից առավել ականավորը:

Սմբատ Օրբելյանի կառավարման տարիներին զգալիորեն հզորանում է Օրբելյան իշխանապետությունը, որը նախանձ է հարուցում օրավոր նսեմացող Զաքարյան իշխանների մոտ: Զաքարյան-Օրբելյան հակամարտությունը թշնամության վերածվեց 13-րդ դարի 2-րդ կեսին՝ Ավագ Զաքարյանի մահվան (1250 թ.) ժամանակից, երբ Զաքարյանների իշխանությունն անցավ Ավագի կին Գոնցայի ձեռքը, որը Ռաճայի էրիսթավ Կախաբերիձեի դուստրն էր եւ ամուսնու մահից հետո կրկին ամուսնացել էր վրաց թագավոր Ուլու Դավթի հետ:

Երկու խոշոր ազնվական տոհմերի մրցապայքարն ավարտվեց Օրբելյանների կատարյալ հաղթանակով: Վերջիններին ենթարկվեցին նաեւ Վայոց ձորի Պռոշյանները:

1249 թ. անդրկովկասյան մի շարք իշխաններ որոշեցին ապստամբություն բարձրացնել մոնղոլական իշխանության դեմ, սակայն այն ճնշվեց իր իսկ խանձարովում: Այլ իշխանների հետ միասին ձերբակալվեց Սոնաց (Սվանեթիայի) թագավոր Դավիթը (Ռուսուդանի որդին) եւ արգելափակվեց Զագեձորի (Գորիսի)

կալանավայրում Զարմաղանին փոխարինած Բաջու Նոյինի հրամանով: Դավիթ թագավորին հաջողվում է իր երեք ուղեկիցներով փախչել բանտից եւ, անցնելով Սմբատ Օրբելյանի վայոցձորյան տիրույթներով, շտապ հեռանալ դեպի Վրաստան: Նրանց նկատում է Սմբատ Օրբելյանի պարեկապետ Թանկրեդուլը, որը Գուստնի գյուղի գեղջավազն էր: Դավիթը, կաշառք տալով մի թանկարժեք քար, խնդրում է իրենց ազատ արձակել:

Դավիթ Նարինը շարունակում է ճանապարհը դեպի Վրաստան: Տեղեկանալով այս փախուստի մասին՝ իշխանուհի Գոնցան մոնղոլ կուսակալին համոզում է, թե Սմբատ Օրբելյանն է կազմակերպել վրաց թագավորի ապահով հեռացումը: Սպասվում էր մեծ դատաստան մոնղոլների մայրաքաղաքում: Բաջու Նոյինը 1251 թ. գինաջուկատի ուղեկցությամբ Սմբատին ուղարկում է մեծ խանի մոտ՝ Կարակորում: Այստեղ է, որ փայլում է Սմբատ Օրբելյանի դիվանագիտական տաղանդը: Սմբատը դուրս է գալիս հաղթանակով, անշուշտ, նաեւ թանկագին գոհարի նվիրատվությամբ:

Դեռ ավելին: Մանգու խանը նրան տալիս է «ինչու»-ական իրավունք, այսինքն՝ Օրբելյանների տիրույթները հայտարարվում են արքունական կալված, ուստի Սյունյաց իշխանապետը այլեւս չէր ենթարկվելու վրաց թագավորին եւ պատասխանատու էր միայն մեծ խանի առջեւ: Շարունակվում էին ընդլայնվել Օրբելյանների իշխանության սահմանները: Ապահովվելով քաղաքական կայունության հիմքերը՝ Սմբատ գահերեցն այժմ կարող էր, ինչպես սպասվում էր, ուշադրությունը բեւեռել նահանգի շինարարական աշխատանքներին, ազատել եկեղեցիներն ու վանքերը պետական հարկերից, վերադարձնել նրանցից խլված նախկին տիրույթները:

Սկսվում է Սբատ Օրբելյանի փառաբանության ժամանակաշրջանը: Սկզբնաղբյուրներում նա հիշատակվում է «մեծ իշխան», «իշխանաց իշխան», նույնիկ «Սմբատ արքա» տիտղոսներով, ինչպիսին փորագրված է նրա դամբարանի սալաքարին: Շեշտակիորեն բարձրանում է Օրբելյանների տոհմի հեղինակությունը մյուս իշխանական տների համեմատությամբ:

1254 թ.՝ աշխարհագիր կատարելու նպատակով Տփղիս է ժամանում մոնղոլ մեծ խանի «վագիր եւ պասխաղ» Արղունը: Խոշաքն ու յուրայինները նրա մոտ բամբասում են Սմբատի հասցեին եւ առժամանակ վերջինիս զրկում մի շարք տիրույթներից:

1256 թ. Սմբատ գահերեցը կրկին մեկնում է Կարակորում մեծ խանին բողոքելու համար: Մոնղոլական մայրաքաղաքում նրան տեղե-

կացնում են, որ «վասն մատնության ինչ» արքունիք է հրավիրվել նաեւ Արդուն խանը, որն արդեն գնդան էր նետվել խաքանի հրամանով: Նրա հակառակորդներից Սեփինք բեկն ու Շարափաղինը անդրկովկասյան հարկահավաքին մեղադրում էին կաշառակերության եւ անտեղի սպանություններ կատարելու մեջ: Սմբատը շահադիտական նպատակով կեղծ վկայություն է տալիս հոգուտ Արդունի: Արդունն ազատվում է, իսկ Սմբատի ոխերին թշնամի Սեփինք բեկն ու Շարափաղինը, մեծ խանի հրամանով, անմիջապես գլխատվում են:

Սմբատը Արդունի հետ միասին վերադառնում է Անդրկովկաս:  
Սկսվում է նրանց թշնամիների ճշման գործընթացը:

1259 թ. մեռնում է Մանգու խանը (1251-1259): Օգտվելով մոնղոլական արքունիքում տիրող խառն վիճակից՝ անդրկովկասյան մի շարք իշխաններ կրկին բարձրացնում են ապստամբության դրոշմ: Հայ ավատատերերից առավել եռանդազին գործունեություն են ծավալում Արցախ-խաչենի հզոր իշխան Հասան-Ջալալը, Ջաքարե Ջաքարյանը (Շահնշահ Ջաքարյանի որդին, Մեծն ամիրսպասալար Ջաքարեի թոռը) եւ ուրիշներ: Մոնղոլական Արեւմտյան իշխանության հիմնադիր Հուլաղուն (Հուլաու) (1256-1265) Արղունին կարգադրում է ճնշել ապստամբությունը, իսկ նրա պարագլուխներին ենթարկել մահապատժի:


1261 թ. Արդունին հաջողվում է ձերբակալել Հասան-Ջալալին, որին, Վարդան Վարդապետի վկայությամբ, «Տարեալ ի Տաճկաստան ի խազուին, եւ անդ ի գիշերի յօղակոտոր արարեալ սպանին»<sup>67</sup>: Նույն կերպ հաջվեհարդար են տեսնում Ջաքարե Ջաքարյանի հետ. «Ի:ՉԺ: (1261) Արդուն եսպան զբարեպաշտ զմեծ ըսպարապետն Վրաց Ջաքարե, որդի Շահնշահին»<sup>68</sup>:

Օրբեյանս իշխաններն, ըստ երեւոյթիս, չեն մասնակցել 1259-1261 թթ. ապստամբական շարժմանը: Սա երեւում է Հոլպարդի եւ Սմբատի ջերմ հարաբերութիւններից, որոնց մասին հրճանքով խոսում է Ստեփանոս Օրբեյանը.

«2ի այնքան լսող էր Հուլաուն նմա (Մերադիկ), զի ում կամէր մահ տայր ածել, եւ ում կամէր կեանս շնորհէր. վասն որոյ ամենայն ոք դողայր ի նմանէ եւ ամենեցուն աչք ի նա հայեին».<sup>69</sup>

Մոնղոլների փաստական զինակից Սմբատն այժմ արդեն սկսում է միջամտել վրաց արքունական գործերին: Նրա ջանքերով վրաց թագավոր է հռչակվում Գեորգի Լաշայի որդի Դավիթը, եւ ոչ Ռուսուդանի որդին, որին Նուկաեւ Դավիթ էին կոչում: Սմբատ

ՍՅՈՒՆԻՔԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ  
ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ



**Կազմեց՝ Գր. Մ. Գրիգորյանը**

գահերեցը նշանակվում է վրաց գահաժառանգի խնամակալ: Սյունյաց իշխանի խնդրանքով, Դավիթ թագավորը ոչնչացնել է տալիս Գեորգի Գ թագավորի «Նզովագիրը»՝ 1178 թ. ապստամբության ճնշման կապակցությամբ:

13-րդ դարի 60-ական թվականները ողբերգական դարձան Օրբելյան ընտանիքի համար: 1260 թ. վախճանվում է նրա եղբայր Իվանեն՝ թողնելով Լիպարիտ անունով արու մի զավակ: Որոշ ժամանակ հետո իր մահկանացուն է կնքում մյուս եղբայրը՝ Փախրադուլան (Փախրադալա): 1261 թ. Յուզվադու խանի հետ ղփչաղների դեմ պատերազմելիս՝ Թերեք գետի ափին զոհվում է նրա մեծ եղբայր Էլիկումի որդի Բուրթելը (Բուրթել Մակավալյաց)՝ 1262 թ. վախճանվում է Սմբատի մայր, իշխանուհի Ասփան<sup>71</sup>:

1265 թ. Յուզադուն եւ իր կին Տոնդուզ խաթունը դեղակուր են լինում Սահիպ Դիվանից (Մուհամմեդ Շամս ադ-դին Ջուլեյնի), որը մոնղոլ խաների երկար տարիների մեծ վեզիրն էր: Սմբատը կարողանում է սերտ հարաբերություն հաստատել նոր կուսակալի՝ Աբաղա խանի (1265-1282) հետ: Սա Յուզադուի 30 որդիներից ամենահաջողակն էր<sup>72</sup>, քանզի սկսում է շարունակել հոր քաղաքականությունը նվաճված ժողովուրդների կրոնական զգացմունքների նկատմամբ: Թերեքս այս է պատճառը, որ սկզբնաղբյուրներում Աբաղան ներկայացված է «սիրող քրիստոնեից», «բարեպաշտ» եւ այլ շոյող մակդիրներով:

Աբաղայի օրոք առավել հզորանում է Օրբելյանների իշխանապետությունը: Սմբատը հրավիրվում է մոնղոլական արքունիքում բարձր պաշտոն վարելու համար: Թերեքս այստեղ էլ՝ Թավրիզում, նրա մեջ հղանում է Հայաստանում պետականությունը վերականգնելու գաղափարը, մանավանդ երբ Եղեգիսում կառուցած արքունական պալատն արդեն պատրաստ էր:

Սակայն վերահաս մահը խանգարեց նրա քաղաքական ծրագրերի իրականացմանը: Նա վախճանվեց Թավրիզում 1273 թ.՝ Սյունյաց իշխանությունը հաջողությամբ վարելով 20 տարի շարունակ: Նրա դին տեղափոխվեց Վայոց ձոր եւ ամփոփվեց Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը: 1275 թ. նրան փոխարինած Տարսայիճ եղբայրը՝ Սիրանես ճարտարապետի նախագծով, կառուցեց Ս. Գրիգոր գողտրիկ եկեղեցին, որ հայտնի է «Սմբատի դամբարան» անունով: Տապանաքարին փորագրված է՝

«ՍՄՊԱՏ ԱՐԵԱԻՆ ԵՏԱՊԱՆՍ, ՅԻՇԵՏԵՔ.: ՉԻԲ:(1273)»<sup>73</sup>:

Սմբատ Օրբելյանի «արքա» տիտղոսը, ըստ համբավի, չանցավ Սյունյաց լեռներից այն կողմ, թեեւ Սյունիքն իրոք նվաճել էր

կիսանկախ կարգավիճակ, իսկ մեծ իշխանին պակասում էր միայն արքայական թագը՝ անկախության խորհրդանիշը:

Ինչպես սպասելի էր, Աբաղա խանը Սյունյաց իշխանապետ ճանաչեց Սմբատի կրտսեր եղբայր Տարսայիճին, որն այդ ժամանակ Որոտան գավառի տերն էր եւ մոնղոլական հայտնի զորապետ:

Պատմիչ Ստ. Օրբելյանը հրճվանքով եւ հպարտությամբ է ներկայացնում հարազատ հոր կերպարը: Իր հայր Տարսայիճը, գրում է Նա, եղել է տաղանդավոր զորավար, քաղաքական հմուտ գործիչ, շահել է 9 ճակատամարտ՝ հորասանում, Դարբանդում եւ այլուր, արժանացել է մոնղոլական «Ոսկե բալիշի» (բարձրագույն պարգև):

Տարսայիճն ամուսնացած էր Արուզ խաթունի հետ, որը քրիստոնեություն ընդունած այլազգի էր (հավանաբար՝ արաբուհի կամ մոնղոլուհի): Նրա մասին որդիական ջերմ սիրով է արտահայտվում Սյունյաց պատմագիրը:

Արուզից եւ Տարսայիճից ծնվում են 3 որդիներ՝ Էլիկում, Ստեփանոս (պատմագիրը) եւ Փախրադուլա, որը մահանում է երիտասարդ հասակում (թաղված է Սմբատի դամբարանում):

Սակայն Տարսայիճը, որդու կարծիքով, թույլ է տալիս օրինազանց արարք՝ մոր կենդանության ժամանակ կրկին ամուսնանալով մեկ այլ իշխանուհու՝ Հասան-Ջալալի դստեր՝ Մինա խաթունի հետ: Ստ. Օրբելյանը դատապարտում է հոր վարմունքը՝ նկատի չունենալով այն հանգամանքը, որ Տարսայիճ իշխանը, ամուսնանալով արցախյան հզոր իշխանական տան դստեր հետ, նպաստեց Սյունիքի քաղաքական հեղինակության ամրապնդմանը, իսկ Արցախը ձեռք էր բերելու հզոր մի դաշնակից, որը մեծ հեղինակություն եւ կշիռ ուներ մոնղոլական արքունիքում: Ամրապնդվում էր Սյունիք-Արցախյան ռազմա-քաղաքական դաշինքը, որը դառնալու էր այդ տարածաշրջանի խաղաղության հուսալի երաշխիքը:

Մինա խաթունից Տարսայիճն ունենում է եւս 3 զավակ. մեկ ուստր՝ Ջալալ անունով, եւ երկու դուստր, որոնցից Ասփան ամուսնանում է Հասան Դոփյանի որդի Գրիգոր Բ խաչենցու հետ, իսկ Մամբանը դառնում է վրաց վաղամեռիկ արքաեղբայր Մանուելի (մահ. 1270 թ.) կինը:

Դեռեւս 1272 թ., Սմբատ գահերեցի կենդանության ժամանակ, Տարսայիճը աջակցում է, որպեսզի վրաց գահին բազմի Դավիթ թագավորի որդի Դեմետրե (Դեմետրե Բ, 1272-1289): Իբրեւ երախտագիտության ապացույց, Դեմետրե Բ-ն Տարսայիճին հռչակում է պետության աթաբեկ եւ վրաց թագաժառանգի խնամակալ:



1282 թ. մեռնում է Աբաղա իլխանը: Նրան հաջորդած Թագուդարը, ընդունելով իսլամ, վերանվանվում է Ահմադ (1282-1284): Սկսվում է հալածանք քրիստոնյա ազգերի նկատմամբ: Այս բռնակալը ձգտում է սպանել տալ Աբաղայի որդի Արդունին, որն այդ ժամանակ գտնվում էր խորասանում:

Օրբեյան եւ Պռոշյան իշխանները պաշտպանում են Արդուն խանին, որին հաջողվում է ձերբակալել Ահմադ-Թագուդարին եւ անմիջապես գլխատել:

Արդուն խանը (1284-1291) բարձր պատիվների է արժանացնում հատկապես Տարսայիճ Օրբեյանին՝ նշանակելով նրան զորաց հրամանատար եւ գործակալ: Տարսայիճի իշխանության սահմաններն ընդարձակվում են մինչեւ Տփղիս, Անի ու Կարս, իսկ հարավից՝ մինչեւ Աղվանո գետ (այժմյան Քաջաթաղի շրջանում): Նա պետական հարկերից ազատել է տալիս Նահանգի ավելի քան 150 վանքերի, նպաստում եկեղեցիների նորոգմանը:

Տարսայիճի անվան շուրջ հյուսվում են ժողովրդական գուսանական երգեր, որոնք կատարվում են հարսանյաց հանդեսներում եւ տոնախմբությունների ժամանակ:

Սյունյաց մեծափառ իշխանը ցանկանում է իր տոհմի մենաշնորհը դարձնել Սյունիքի ոչ միայն քաղաքական իշխանությունը, այլեւ՝ հոգեւոր նվիրապետությունը: Թերեւս, այդ էր հիմնական պատճառը, որ նա իր համալսարանավարտ որդուն՝ Ստեփանոսին, ուղարկեց Կիլիկիա՝ հայոց կաթողիկոսից եպիսկոպոսական գավազան ստանալու նպատակով:

1289 թ. զորապետ Բուղան իր համախոհներ Ղազանի, Թուխլուխ հազարապետի, Արուխի ու Օճանի հետ միասին ապստամբություն են կազմակերպում Արդուն խանի դեմ: Արդունը ոչնչացնում է իր հակառակորդներին: Նրա հրամանով մորթագերծ է արվում Նաեւ վրաց Դեմետրե թագավորը, որը, Ստ. Օրբեյանի վկայությամբ, բացարձակապես անմեղ էր եւ դարձել էր բամբասանքի զոհ: Դեմետրե Բ-ին գլխատում են Կուր գետի ափին<sup>74</sup>:

Մեզ ստույգ հայտնի չէ, թե ինչ դիրք գրավեցին Օրբեյանները 1289 թ. դեպքերի ժամանակ:

17 տարի վարելով Սյունյաց իշխանապետությունը՝ Տարսայիճ Աթաբեկը մահացավ 1290 թ. Արփա (այժմ՝ Արենի) գյուղում եւ ամփոփվեց իր ավագ եղբայր Սմբատի կողքին՝ Նորավանքի դամբարանատանը:

Տարսայիճ իշխանը սկզբնաղբյուրներում ներկայացված է իբրեւ

«կողմնակալ այսմ (իմա՝ Սյունյաց) Նահանգի...ի Բարկուշատայ մինչեւ ի Ղաշտն Դնայ»<sup>75</sup> «իշխեցող ի Բարկուշատայ մինչեւ Գառնի, մինչեւ Երասխ»<sup>76</sup> մեկ այլ վավերագրում նրա իշխանության սահմանները նշված են մինչեւ Բջնի:


Տարսայիճ Օրբեյանի մահվանից հետո սկսվում են գահակալական վեճերը գահերեցության համար: Ակնհայտ պայքար է գնում Էլիկումի, Ջալալի եւ Լիպարիտի միջեւ: Արդուն խանը Սյունյաց իշխանապետ է նշանակում Տարսայիճի Էլիկում<sup>77</sup> որդուն, մյուսները ստանում են իրենց ժառանգաբաժինը:

Նույն 1290 թ. Մուղանի դաշտում «հարճ մի յոյժ սիրեցեալ» թունավորում է Արդուն խանին<sup>78</sup>: Դարձյալ սկսվում են գահակալական կռիվներն ու սպանությունները, արքունական գանձերի հափշտակություններն ու յուրացումները: Բայտուն-Քեյղաթու հակամարտության մեջ առժամանակ հաղթող է դուրս գալիս վերջինիս Արդունի եղբայր Քեյղաթուն: Սակայն, շուտով Տաթեւի վանքի գաղտնարանում ապաստանած Խուռումչի զորապետի շեշտակի հարվածով Քեյղաթուն ձերբակալվում է եւ խեղդամահ արվում: Խորասանից զորքով հարձակվում է Ղազանը եւ բոլորին ճնշելով՝ բազմում իլխանության գահին:

Ահա այսպիսի խառնակ մի ժամանակաշրջան էր, երբ Էլիկում Օրբեյանն անցավ Սյունյաց իշխանության գլուխ: Անշուշտ, նա թույլ տվեց քաղաքական աններելի սխալ, երբ Սյունիքի ընդարձակ իշխանությունը բաժանեց եղբայրների ու ազգակիցների միջեւ: Այս անհեռատես արարքը, անտարակույս, ձեռնառու էր մոնղոլական իսլամամետ վերնախավին: Էլիկումը, սակայն, լինելով զարգացած իշխանագուն, իր կրտսեր եղբայր Ստեփանոս մետրոպոլիտի եւ այլոց հետ միասին, ստորագրեց Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին հղված մերժողական նամակը՝ Զոմի պապի գերիշխանությունը չճանաչելու կապակցությամբ: Այս միաբանության թուղթը, երկար մտորումներից հետո միայն՝ 1302 թ. ուղարկվեց Կիլիկիա՝ հայրապետարան:

Էլիկում Օրբեյանի կառավարության տարիներին Սյունիքը, մասնավորապես Վայոց ձորը, պատմից խոսքերով՝ նմանվում է Նոյան տապանի, քանզի այստեղ էին ժամանում Զայաստանի ավերված Նահանգների բազմաթիվ ընտիր մտավորականներ, որոնց ձգում էր հատկապես Սյունիքի խաղաղ անկյունը:

Հոգեւոր իշխանությունը գտնվում էր մեկ եղբոր ձեռքին, իսկ քաղաքական լծակները՝ մյուսի: Այս կենտրոնացումն էր հիմնական



Յաղացքար. Արծվի գինանշան (XIII դ.)

գրավականը, որ Վայոց ձորը աստիճանաբար դարձավ գիտության եւ մշակույթի, գրչության եւ դպրության համահայաստանյան կենտրոն:

Էլիկում Օրբելյանն ամուսնացած էր Թամթա խաթունի հետ, ուներ 2 ուսուր՝ Բուրթել ու Բուղտա, եւ 2 դուստր, որոնցից Մամախաթունն ամուսնացած էր Էաջի Պռոշյանի<sup>79</sup>, իսկ Ռուզաբանը՝ Արցախի իշխան Հասանի հետ: Էլիկում իշխանը մահացավ 1300 թ.՝ Սյունյաց իշխանությունը վարելով 10 տարի շարունակ: Նրա մարմինը նույնպես ամփոփվեց Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը: Յարդ պահպանվող նրա տապանաքարին կերտված է առյուծի կերպար, որի շուրջ փորագրված է.

**«ԹՎԻՄ: ՉԽԹ: (1300). Չգեղեցկապիպն Էլիկում, որդի մեծի  
Տարսայիմին, որ առոյծարուն խրոխտ մոնչեր բնդ(դ)էմ  
այլասեռ գնդին, աղաչեմ յիշել յաղաքս»<sup>80</sup>:**

Այս իշխանի անվան հիշատակությամբ բազմաթիվ վկայություններ են պահպանվել մի շարք սկզբնաղբյուրներում:

1300 թ. Սյունիքի իշխանության գլուխ է անցնում Էլիկումի ավագ որդի Բուրթելը, որը գրականության մեջ առավելապես հայտնի է



Հերիհր. Մ. Սիոնի վանք. Արծվի գինանշան (XIII դ.)

Բուրթել Մեծ կամ Բուրթել Երկարակյաց հորջորջումներով: Սկզբնական շրջանում նա սկսում է Սյունիքը կառավարել իր եղբայր Բուղտա գորավարի հետ միասին: Սակայն վերջինիս բախտ չէր վիճակվելու երկար ապրել: Նա սպանվում է Աբու-Սայիդի զորքերի կազմում մղված ճակատամարտում 1317 թ. դեկտեմբերին 18-ին<sup>81</sup>:

Բուրթել Մեծի գահակալության շրջանը նկատի առնելով, Մաղ. Օրմանյանը գրում է, որ 14-րդ դարի սկզբներին «լաւագոյն կացութիւն մը կը տիրէր Սիւնիքին կողմերը, ուր արեւելեան հայութեան կեդրոն դարձած էր Օրբելեանց իշխանութեանց ներքեւ»<sup>82</sup>:

Մատենագրական եւ վիմագրական սկզբնաղբյուրներում ջերմ խոսքեր կան Բուրթել Մեծի եւ նրա վաղամեռիկ եղբայր Բուղտայի հասցեին<sup>83</sup>:

Բարդախ (Բարդուղ) գրիչը Եղեգիսում գրած հիշատակարանում Բուրթելին կոչում է **«Արեաց վեհագույն, իշխանանց իշխեցող, մեծ կոմս եւ կողմնակալ»<sup>84</sup>**: Համանման ածականներով է նրան ներկայացնում



Իշխան Էլիկունի տապանաքարը  
(Ամաղուի Նորավանք)

քան 40 տարի, նա կարողացավ նպաստավոր պայմաններ ստեղծել Սյունիքի ոչ միայն քաղաքական կայունության, այլև Գլաձորի համալսարանի բարգավաճման համար:

Բուրթել Մեծի եւ Բուրթեյանների մասին հանգամանորեն շարադրված է ակադ. Լ. Ս. Խաչիկյանի՝ «Սյունյաց Օրբեյանների Բուրթեյան ճյուղը» արժեքավոր ուսումնասիրության մեջ: Օրբեյան տոհմանունը նրանից հետո հաճախ սկսվեց կոչվել Բուրթեյան<sup>87</sup>: Նա հիշատակված է բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Նրա անունով կան բնակավայրեր (օր. Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի Բրդենանցը): Այս իշխանի կյանքի առանձին դրվագներ արտացոլված են բանավոր գրույցներում, որոնք իբրեւ բանահյուսական Նորավանքի մեզ են հասել ձեռագիր մատյաններում:

Բուրթել Մեծը Գլաձորի համալսարանի ռաբունապետ Եսայի Նշեցու մտերիմ բարեկամն էր եւ հովանավորողը:

միջնադարի ականավոր բանաստեղծ, Գլաձորի համալսարանի սան Խաչատուր Կեչառեցի<sup>85</sup>: Մեկ այլ հիշատակագիր Բուրթելին կոչում է «տէր Տանն Սիսակա», «մեծ սպարապետ Զայոց եւ Վրաց, թագազարմ իշխան», «հյուպատոս»: Ղ. Ալիշանի կարծիքով՝ «հյուպատոս» տիտղոսը նրան տրված էր «ի կայսերաց Յունաց»<sup>86</sup>:

Բուրթել Մեծի կինը իշխանուհի Վախախն էր, որի մասին մի շարք հիշատակություններ կան առավելապես վիմական արձանագրություններում:

Պատմական իրողություն է, որ Սմբատից եւ Տարսայիճից հետո, Բուրթելը ամենաինքնակավոր քաղաքական դեմքն է եղել ողջ Արեւելյան Զայաստանում: Շրջապատված թշնամական ցեղերով, ավելի

Սյունյաց իշխանությունն սկսեց անկում ապրել, երբ իշխանապետ Բուրթել Մեծը իշխանության արքունիքի կողմից նշանակեց Սուլթանիայի եւ Թավրիզի քաղաքագլուխ: Մոնղոլները գիտակցաբար զրկեցին ժողովրդին իր հզոր առաջնորդից, որը գահակալեց մինչեւ 1348 թվականը: Սրանից հետո Բուրթել Մեծի մասին աղբյուրները լռում են:

Սյունյաց իշխանության ղեկն անցնում է նրա որդի Բեշքենին (ըստ Զր. Աճառյանի բացատրության՝ Բեշքեն պարսկերեն նշանակում է արվեստ):

Ահա Բեշքենի մասին վկայություններից մեկը.

*«Յիշխանութեան եւ ի տէրութեան, որ ի կայս եւ ի կոյս նահանգաց Միւնեաց... իշխանաց իշխանին Բեշքենայ եւ հարսզար եղբարն նորին Իւանէին, որոնց բարի պաշտմամբ փոխեցիլոյ առ Քրիստոս յոյսն ամենեցուն պարոն Քիթէլին»<sup>88</sup>:*

Բեշքենը հոր հետ միասին Սուլթանիա եւ Թավրիզ քաղաքներում եղել է զինավորական ծառայության մեջ, մասնակցել պատերազմական գործողություններին:

Աղոտ վկայություններ կան, որ այս իշխանի անունով էր կոչվում Իրանի տարածքում գտնվող Բիշքին (հետագայում Միշքին) քաղաքը:

Բեշքենի եւ նրա եղբայր Իվանեի մասին վկայություններ են պահպանվել ձեռագիր հիշատակարաններում եւ վիմական արձանագրություններում:

Բեշքենի զավակներից հայտն է միայն մեկը՝ Էլիկունը, որին փաղաքշական ձեռով կոչել են Նաեւ Կուկա:

Բեշքենը մահացել է մինչեւ 1377 թվականը, քանզի դրանից հետո միայնակ հիշատակվում է նրա Իվանե եղբայրը, որն իր մահկանացուն կնքել է 1386 թ., այսինքն՝ մինչեւ մոնղոլական կայսրության քայքայումը եւ Լենկթեմուրի արշավանքների սկիզբը:

Յետադարձ հայացք գցելով միջնադարի սոցիալ-քաղաքական հարաբերությունների զարգացման ընթացքին՝ տեսնում ենք համընդհանուր թվացող մի երեւույթ, երբ ուժեղ անհատի բացակայության պատճառով անմենագոր քաղաքական կազմավորումները ենթակա են քայքայման եւ փլուզման:

Բացառություն չէր կազմելու Նաեւ Սյունիքի Օրբեյանների իշխանությունը:

14-րդ դարի Օրբեյանների ազգատոհմի շառավիղների մեջ զգալի հռչակ է ձեռք բերում Տարսայիճ մեծ իշխանի եղբայր Իվանեի որդի Լիպարիտը, որի գահակալությունը, ամենայն հավանականությամբ, եղել է այժմյան Եղեգնաձորի շրջանի Զորս գյուղը, ուր կիսավեր վիճակում

առ այսօր պահպանվել են իշխանական դոյակի բազալտակերտ շենքերի մնացորդները: Լիպարիտի տիրույթներն են կազմել Յորս, Սալլի, Աղնջաձոր, Քարագլուխ եւ հարակից մի շարք բնակավայրեր:

Լիպարիտն ամուսնացած էր Նանայի հետ եւ ուներ 5 զավակ, որոնցից ավագը՝ Սմբատը, 1317 թ. առաջ, մոնղոլական զորքերի կազմում, եգիպտոսյան արշավանքի ժամանակ գերեվարվել էր եւ գերության մեջ մնացել 12 տարի շարունակ: Վերադառնալով հայրենիք, նա ստանում է իր իշխանական ժառանգաբաժինը՝ առատ նվիրատվություններ կատարելով Վայոց ձորի հոգեւոր-կրթական օջախներին: Այս իրադարձությունների մասին հիշատակություններ են պահպանվել Յերիների (Յերիեր՝ բառացի նշանակում է քարանձավներ) Ս.Սիոնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու պատերին<sup>89</sup> եւ այլուր:

Լիպարիտ իշխանի որդին էր միջնադարյան Հայաստանի ականավոր կրոնական եւ քաղաքական գործիչ Հովհաննես Օրբելը, որը դեռեւս Ստեփանոս Օրբելյանի կենդանության օրոք՝ 1302 թ. բազմել է Սյունիքի մետրոպոլիտության գահին:

Նույն շրջանում մեծ համբավ ձեռք բերեց Լիպարիտ իշխանի նաեւ մյուս որդին՝ Չեսարը, (Կեսար բառից - անվան ծագումը՝ Հուլիոս Կեսարից), որը 1332 թ. Գեղարքունիք-Վայոց ձոր ճանապարհի վրա կառուցեց քաղաքացիական ճարտարապետության առավել նշանակալից կառույցներից մեկը՝ Սելիմի կարավանատունը: Առաջին դահլիճի երկլեզվյան (հայերեն եւ արաբատառ պարսկերեն) արձանագրության մեջ, Օրբելյան իշխանագույններից զատ, հատուկ նշվում է նաեւ մեծ ուսուցչապետ Եսայի Նչեցու անունը, որի օրինությամբ եւ աղոթքով սկսվել է այդ իջեանատան կառուցումը:

## ԺԳ. Սյունիքը թուրքմենական ցեղախմբերի արշավանքների շրջանում

### 1. ՕՐԲԵԼՅԱՆ ՏՈՂՄԻ ՏՈՐՀՈՒՄԸ ԵՎ ԶԱՅԶԱՅՈՒՄԸ

«Նետողաց ազգի»՝ մոնղոլների տիրապետությունը Հայաստանում չէր բոլորել 150 տարին, երբ արեւելյան-միջինասիական տափաստաններից Կովկաս ներխուժեցին լենկթեմուրյան հորդաները: Մոնղոլական բզկտված իշխանություններն ի վիճակի չէին դիմագրավել այդ արհավիրքին. իլխանության գահակալական կոիվները, երկպառակությունները, ենթակա ժողովուրդների ատելությունը, հարկահավաքների կամայականությունները պարարտ հող էին ստեղծել մոնղոլական կայսրության տապալման համար:

Դեռեւս 1385 թ. Անդրկովկաս էին ներխուժել Թոխթամիշ խանի զորքերը, որոնք իրի ու սրի մատնելով գրաված բնակավայրերը, 200000 գերիներով ետ վերադարձան Ղաշտային Ղարաբաղի, Նախիջեանի եւ Սյունիքի վրայով: Թոխթամիշի արագ վերադարձը պայմանավորված էր իր իսկ իշխանության անկայուն վիճակով:

1386 թ.՝ առանց լուրջ դիմադրության հանդիպելու, Սամարղանդի տիրակալի զորքերը ներխուժեցին Անդրկովկաս՝ մոխիր սփռելով ամենուր:

Գրիչները սարսափազդու բառերով են ներկայացնում լենկթեմուրյան արյունառու զորքերի ավերածությունները:

Ժամանակակից բանաստեղծ Գրիգոր Խլաթեցին (Ծերենց) իր «Յիշատակարանք աղտից» պատմական վիպասանության մեջ գրում է.

*«Առին աւար եւ գերեցին...  
Տապալեցին, յապակեցին  
Անխնայաբար խոցուրեցին,  
Չարսս սրոյ ճարակ տրւին  
Եւ զկանաչսն գերեցին  
Չոմանց ըզգյուխսն քերթէին,  
Հանդերձ հերաքն խրդէին,  
Չայլոց զշունչսն արգելուին...  
Չկէտրս հըրով խորովէին  
Եւ ճենճերովքն ցնծային...»<sup>90</sup>:*

Աղթամարում օրինակած «Ճառընտիրի» հիշատակարանում Կարապետ գրիչը իբրեւ դեպքերի ականատես, լենկթեմուրյան խառնամբոխի մասին գրում է.

*«Հայկազեան ազգիս բունյս փունարի ՊԼԶ (1387) ելեալ այրն օնօրէն... Լանկ-Թամուր կոչեցեալ... ի ծահասպանէն, որոյ անուն կոչի Սմբողոն»:* Ապա շարունակում է. *«Եւ եթէ որ բնորդիմանայր նոցա անառիկ դղեկաւ, վաղվադակի անոր ժամանէին, իբրեւ զբազմութիւն մարախոյ, բոյորէին, ճչէին, գոչէին, ոռնային, բառաչէին, հաջէին, հառաչէին, խրխնջէին, որոպային, զդիւալսն դմդմէին, զնաղարայսն հարկանէին, զչարին լարէին, զնկոսս փեղային... որմբաբարսն հոլովէին, զբլզփհոնն չգէին, զնմանեղ մեքենայից... փակէին, բանդէին, քարայարակէին, փորէին, փոս հափանէին, կոփէին, կռանէին, զամաց հազարաց շինուածս միարեաւ անհնար կորուսանէին: Իսկ նոքա, որ ի ներքս ամրոցին էին փառապէին, փազնապէին, բուլանային, սարսէին, սարսափէին, ծարաւէին, նքքէին, նքողէին, երկիւղիւ երկնչէին...»<sup>91</sup>:*

Լենկթեմուրյան զորքերը 1386-1403 թթ. ընթացքում Հայաստանում ասպատակ են սփռել մի քանի անգամ. անգթաբար կործանել մշակութային-կրթական օջախները, հրկիզել գյուղերը, բռնի կրոնափոխել քրիստոնյա ազգերին: Ամենուր մոլեգնում էր սովը, առաջ էր գալիս մարդակերությունը: Ավերակների էր վերածվել նաեւ Վրաստանը, որը ասպատակվեց 6-րդ անգամ, թեեւ ականա մահմեդականություն էր ընդունել վրաց Բագրատ թագավորը:

1387 թ. թեմուրյանները ներխուժեցին Սյունիք: Տեղի՝ մարելու աստիճանի թույլ իշխանությունները, մասնավորապես՝ Օրբելյանները, անկարող գտնվեցին դիմագրավել ահեղ թշնամուն: Բուրթել Մեծի թոռ (Իվանեի որդի) Սմբատն այդ ժամանակ իր զինաջոկատով ամրացել էր Որոտնաբերդում (այժմյան Սիսանի շրջանում), սակայն նրան եւս ոչինչ չէր մնում անել, քան ականա հնազանդություն հայտնել Լենկթեմուրի զորապետներին: «Հայրենագուրկ արարին զպարոն Սմբատն, որդի Նանիկին», - գրում է ժամանակագիրը<sup>92</sup>:

Լենկթեմուրի զորքերը թալանեցին եւ հրկիզեցին Տաթևի վանքը, սրատեցին հոգեւորականներին: Նրանք հետապնդեցին նաեւ Հովհաննես Որոտնեցուն՝ Տաթևի համալսարանի հիմնադրին, որը ծագումով Սյունյաց իշխանագուն էր, հնագույն տոհմերից մեկի ժառանգ:

Հայաստանի կառավարումը Լենկթեմուրը հանձնեց իր որդի Միրանշահին, որն իր դաժանությամբ չէր զիջում բռնակալ հորը:

Հոգեվարք էին ապրում Օրբելյան եւ Պռոշյան տոհմերը: 1401 թ. Սյունյաց իշխաններ են դեռեալ հիշատակվում Իվանեի որդիներ Սմբատ եւ Բուրթել եղբայրները, որոնք նույնպես ստիպված էին առժամանակ ընդունել մահմեդականություն: Միրանշահը, ապա եւ նրա որդի Օմարը, հայ իշխաններին իրենց կալվածների տերեր էին ճանաչում ոչ միայն Սամարղանդի տիրակալի գերիշխանությունը ճանաչելու, այլեւ իսլամ ընդունելու պայմանով:

Բռնի հավատարացության բազմաթիվ դեպքեր են արձանագրված ականատեսների վկայագրերում: Բուրթելն ու իր եղբայր Սմբատը տարվում են Սամարղանդ, որտեղից մի կերպ վերադառնում են հայրենիք, իսկ Գորգ (Գորգուն) իշխանագունը, տանել չկարողանալով բռնի կրոնափոխությունը, «դարդամահ եղել»<sup>93</sup>, այսինքն՝ վշտից մահանում է:

1407 թ. Սյունիքում տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ: Ի թիվս այլոց, փլատակների տակ զոհվում է Բուրթել իշխանը՝ իր երկու մանկահասակ զավակներով:

Ահա այդ ժամանակներում էր, որ առաջ եկավ Կարա-կոյունլու եւ Ակ-կոյունլու թուրքմենական ցեղախմբերի բախման թատերաբեմը, որը դարձյալ լինելու էր Հայկական լեռնաշխարհը: Օրբելյան բոլոր տիրույթներն անցնում են «ընդ ձեռամբ անօրինաց»<sup>94</sup>: Սյունյաց իշխանագուններն ստիպված էին լուրջ մտածել իրենց ֆիզիկական գոյության մասին:

2. ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԳԱՂՁՆ ԴԵՊԻ ԿՐՍՆՏԱՆ:  
ՌՈՒՍԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԾՈՒԳԻՐՈՆ

Լենկթեմուրի մահվանից հետո (1405 թ.) Կարա-կոյունլու ցեղի առաջնորդ Յուսուֆն իրեն ենթարկեց Հայաստանը, Ադրբեջանը եւ այլ երկրներ, որոնք երբեմն մտնում էին Հուլավյան լայնածավալ պետության կազմի մեջ: Կարա Յուսուֆի մասին բազում տեղեկություններ են պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում: Մեկ տեղ նա կոչված է «քրիստոսասեր», «հարգող քահանայից», մեկ այլ տեղ հանդես է բերված իբրեւ «արիւնարու գազան»: Նա Շահռուխի դեմ անհաջող ճակատամարտի ժամանակ հանկարծամահ եղավ (1420 թ.): Ցեղապետ ընտրվեց նրա որդի Իսկանդարը, որը շարունակեց պատերազմել մի կողմից՝ Ալ-կոյունլուների, մյուս կողմից՝ Շահռուխի դեմ: Ռազմական գործողությունների ժամանակ նա հենվում էր ոչ միայն քոչվոր ցեղակիցների, այլեւ՝ տեղական բնակչության աջակցության վրա: Սալմաստի ճակատամարտում նրա զորքերի կազմում կմվում էին բազմաթիվ հայեր, որոնց համակրանքը շահելու նպատակով՝ նա իրեն հռչակեց «Շահ-ե Արման»՝ Հայոց թագավոր: Պարզամիտ գրիչներից ոմանք այս բռնակալին վերագրեցին հայկական ծագում՝ «Թուրքման» բառը վերափոխելով «Թորգոմա»: Միայն գրիչ Թուման էր, որ հայ ժողովրդին զգուշացնում էր չհավատալ կեղծիքին, որովհետեւ «Ամիրգա Սքանդարն՝ տերն Թաւրիզոյ» «ազգաւ թուրք է» եւ «արիւնարու գազան», ինչպես Նշել է մատենագիր Թովմա Մեծոփեցին<sup>95</sup>:

Կարա-Իսկանդարի ժամանակ քաղաքական ասպարեզ իջավ Բեշքեն Օրբելյանի որդի Ռուստամը, որի հայրը, խուսափելով Շահռուխի հալածանքներից, 6000 սյունեցի ընտանիքների գլուխ անցած, բազում դժվարություններ կրելով, տեղափոխվեց Լոռի, որը 1431 թ. անցել էր Վրաստանին: Գաղթի ժամանակ Շահռուխի զորքերը հետապնդում են գաղթականներին եւ, շրջապատելով Աղստեփի հովտում, թալանում բոլորին: Այս մասին վկայում է Թովմա Մեծոփեցին: Դեպի Վրաստան կատարած գաղթը հանգամանորեն նկարագրված է Տաթևի վանահայր Շմավոն վարդապետի՝ 1437 թ. Շարակնոցի հիշատակարանում:

Սյունեցիներն այնքան են բազմանում Լոռիում, որ սկսում են բամբասել վրաց թագավորին, իբրեւ թե հայերը կարող են վտանգ

սպառնալ Վրաստանին: Ոմն Ամադինի միջոցով Ալեքսանդր թագավորը (վրաց Ալեքսանդր Բարեպաշտ թագավորը, սպանվեց Կարա-Յուսուֆի ձեռքով) թունավորել է տալիս իր աներոջը: Բեշքեն Օրբելյանի դիակը տեղափոխում են Տաթև եւ հողին հանձնում իր տոհմակիցների մոտ:

Բեշքենի մահվամբ 1438 թ. փաստորեն վերջ տրվեց Սյունյաց Օրբելյանների իշխանությանը: Մնում էր մի կարկառուն դեմք՝ կարա-կոյունլուների երբեմնի մեծ վեզիր Ռուստամը, որի երազանքների իրականացումը մեծապես կախված էր Կարա-Իսկանդարի ռազմաքաղաքական հաջողություններից:

1431 թ. Իսկանդարը սպանեց իր եղբայր Աբու-Սայիդին եւ տիրացավ Թավրիզին: Հավատարիմ ծառայության համար նա Ռուստամ Օրբելյանին դարձրեց իր մերձավորագույն զինակիցն ու արքունի խորհրդականը՝ շնորհելով նրան ընդարձակ «սոյուրդալներ»՝ Սյունիքում, Այրարատի Նիգ (այժմ Ապարանի շրջան), Կոտայք եւ այլ գավառներում: Այս իրողությունը վկայված է 1431 թ. դեկտեմբերի 21-ին Երեւանի Զամանեղդին Կազիի ձեռքով կազմված կալվածագրերից մեկում: Ռուստամի այս եւ մյուս կալվածագրերն ուսումնասիրվել եւ բնագրի լրսապատկերով գիտական շրջանառության մեջ են դրվել պարսկագետ-պատմաբան Հակոբ Փափազյանի ջանքերով:

1431 թ. կալվածագրում Ռուստամ Օրբելյանը ներկայացված է արեւելյան ժողովուրդներին հատուկ շոյող ածականներով. «Վեհանձնյա ամիր եւ տեր, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն ծառայության արժանացած մեծահարգ վեզիր, նորին կայսերական մեծության՝ սուլթանի մերձավոր, ամենագոր արքայական պետության սիրելի, մեծագույն սուլթանի խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելի, քաջահաղթ» եւ այլն<sup>96</sup>:

Ռուստամ Օրբելյանը, լինելով հեռատես գործիչ, իր նվիրատվությունները ձեռակերպում է իբրեւ վաճաք՝ պահպանելով Շարիաթի կանոնները:

Նկատի ունեալով իր սյուզերեն Կարա-Իսկանդարի քաղաքական հեղիեղուկ վիճակը, օգտվելով հարմար պահից՝ Ռուստամը ամեն կերպ ձգտում էր վերականգնել Այրարատ-Սյունիքի միացյալ իշխանությունը Օրբելյանների գլխավորությամբ, սակայն քաղաքական հանգամանքներն ուրվագծեցին բոլորովին այլ պատկեր: 1437 թ. Սոֆյանի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ թուրքմեն ցեղակիցները լքեցին Կարա-Իսկանդարին, որը ճողոպրեց եւ ապաստանեց Երնջակի բերդում, որտեղ եւ դավադրաբար սպանվեց իր որդի

Շահկութադի ծեռքով<sup>97</sup>: Շահռուխը շարունակում էր հետապնել վեզիր Ռուստամ Օրբեյանին, որն առժամանակ հեռացավ քաղաքական ասպարեզից, փակվելով հոր մոտ՝ Լոռիում:

Ռուստամը կրկին Սյունիքում հայտնվեց 1450 թվականին: Այս անգամ նույնպես, վաճառքի անվան տակ, նա կալվածներ է նվիրում Տաթևի վանահայր Շմավոն Անգեղակոթցուն: Այս կալվածագրում այլևս բացակայում են նրա բարձրահունչ տիտղոսները, կոչվելով միայն «հայոց ամիրզադա» (իշխանազուն): Հետաքրքիրն այն է, որ 1450 թ. կալվածագրում մանրամասն նշված են «վաճառված» գյուղերի աշխարհագրական սահմանները, որոնցից մի քանիսի անունները պահպանվել են տաթևացիների հիշողության մեջ մինչև մեր օրերը:

Կարա-Իսկանդարի սպանությունից հետո իշխանության գլուխ անցավ նրա եղբայր Ջահան Շահը (1437-1467), որի առաջին գործը եղավ ներխուժել Վրաստան (1440 թ.): Նրա 20000-անոց բանակը հրկիզեց Տփղիսը, սակայն Սամշվիլդե բերդաքաղաքի բնակիչները միայն համառ դիմադրություն ցույց տվեցին: Նորից առաջ է քաշվում բռնի կրոնափոխության խնդիրը:

Մեծապես տուժում է նաև Սյունյաց լեռնաշխարհի ժողովուրդը, սակայն երբեք չի լքում հայրենի բնօրրանը:

1441 թ. Արեւելյան Հայաստանի հոգեւոր առաջնորդների եւ Սյունյաց թեմի եռանդագին ջանքերի շնորհիվ, Կիլիկիայից էջմիածին է տեղափոխվում Գրիգոր Լուսավորչի Աջը՝ Հայրապետական իշխանության խորհրդանիշը...

Ռուստամ Օրբեյանով ավարտվում է Օրբեյանների քաղաքական գործունեությունը Սյունյաց լեռնաշխարհում: Սկսվում է պատուհասներով լեցուն մեկ այլ շրջափուլ...

## ԺԴ. Սյունիքի կրթամշակութային օջախները եւ նրանց ականավոր գործիչները

### 1. ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Իշխանաց-իշխան Տարսայիճ Օրբեյանի օրոք Տարոնից (Տուրուբերան աշխարհ) Արեւելյան Հայաստան գաղթած Ներսես Մշեցի գիտնական վարդապետի ջանքերով, Պռոշյան եւ Օրբեյան ազնվական ընտանիքների նյութական եւ բարոյական աջակցությամբ, Վայոց ձորում 1282 թ. հիմնադրվեց բարձրագույն տիպի մի դպրոց, որը առավել հայտնի է Գլաձորի համալսարան անունով: Դա խոշոր երեսույթ էր հայ մշակույթի, դպրության եւ գիտության պատմության մեջ: Սակայն մինչեւ «Երկրորդ Աթենքին»՝ Գլաձորին անդրադառնալը, քննենք մի հարց. որտե՞ղ է գտնվել այդ ուսումնագիտական կենտրոնը, ստույգ է արդյոք տեղադրությունը, թե՞ ոչ:

Ուսումնասիրողներից Ե. Լալայանը, Ս. Ավետիսյանը, Ի. Ղարիբյանը գտնում են, որ Գլաձորի համալսարանը տեղորոշվում է Եղեգնաձորի շրջանի Թանահատի վանքի շրջակայքում, քանզի Ս. Ստեփանոս եկեղեցին հաճախ սկզբնաղբյուրներում հիշատակվում է Գլաձոր անվան հետ: Սկսվեցին ԵՊՀ արշավախմբի պեղումները վանքի շուրջ, նախ՝ պրոֆ. Ա. Աբրահամյանի, ապա՝ Ի. Ղարիբյանի ղեկավարությամբ<sup>98</sup>: Պեղումների ընթացքում դարավոր փլատակներից ազատվեցին տասնյակ սենյակներ, հայտնաբերվեցին նոր փմագրեր, հնագիտական արժեք ներկայացնող նոր նյութեր, արձանագրված եւ անարձանագիր տապանաքարեր:

Այնուամենայնիվ, նորահայտ արժեքները բավարար հիմքեր չեն տալիս կարծելու, որ Գլաձորը եղել է Թանահատի շուրջը:

Ուսումնասիրողների մեկ այլ խումբ (Ս. Բարխուդարյան, Լ. Խաչերյան եւ այլք), հետեւելով Գ. Հովսեփյանին, Գլաձորի համալսարանը տեղադրում են Պռոշաբերդի կամ Բուրաբերդի լանջերին, ուր պահպանվել են մի շարք շինությունների մնացորդներ:

Մատենագրական աղբյուրներում Գլաձորը հիշատակվում է նաև Աղբերց վանք անունով: Կարծում ենք Աղբերց նշանակում է ոչ թե եղբայրների, այլ Աղբյուրների վանք (աղբիւր-աղբիւրք-աղբերք-աղբերց կամ աղբերաց): Այդպիսի պատմական հնավայր կա Եղեգիս գյուղի մերձակայքում՝ նրանից շուրջ 4 կմ դեպի հարավ-արեւելք, որ այժմ հեռացած աղբբեջանցի բնակիչների լեզվով կոչվում էր «Գյուլու բուլաղ» կամ «Գյուլում բուլաղ», այսինքն՝ «Գալլի աղբյուր» կամ «Վարդաղ-

բյուր»։ Եկեղեցին, որը ըստ արձանագրությունների՝ կոչվում է Ս. Աստվածածին, կառուցված է հորդաբուխ աղբյուրների մոտ՝ լեռներով շրջապատված բարձր հարթության վրա։ Թերեւս այստեղ է գտնվել Աղբերից վանք-Գլաձորը, որի աշխարհագրական դիրքը համապատասխանում է պատմական անվան իմաստին։ Այս վայրը կարիք ունի հնագիտական լուրջ ուսումնասիրության։

Շարունակենք։ 1286 թ. փետրվարի 6-ին վախճանվում է մեծանուն թաթուխապետ Ներսես Մշեցին եւ թաղվում Աղբերց վանքի կամարների տակ։ Գլաձորի համալսարանի ղեկավարությունը ստանձնում է նրա տաղանդավոր սան Եսայի Նչեցին, որի օրոք Գլաձորը իրոք դառնում է համահայկական ընդգրկումով ուսումնագիտական կենտրոն։ Եսայի Նչեցին օժտված է եղել կազմակերպչական արտակարգ ունակությամբ։ Նրա սաները իրենց թաթուխապետին ըստ արժանվույն կոչել են «Լուսաւորիչ Հայկազեան սեռի», «Տիեզերալոյս վարդապետ» եւ այլ շոյող պատվանուններով։ Գրավոր աղբյուրներում Եսայի Նչեցու անունը հիշատակել են խոշոր իշխաններից առաջ. «...ի դպրապետութեան մեծ վարժապետին... Եսայեա, յիշխանութեան ... Բուրթելին»<sup>99</sup>։

Եսային Գլաձորի համալսարանը ղեկավարեց մինչեւ իր կյանքի մայրամուտը՝ 1338 թվականը։

Գլաձորի համալսարանի խնամակալ հոգաբարձուները «հանդիսացել են Պռոշյանները, Օրբելյանները եւ Սյունիքի եպիսկոպոսական աթոռը, որոնք պաշտոնապես ճանաչել են Գլաձորի համալսարանը եւ տնտեսական ու բարոյական հովանավորություն ապահովել նրա համար», - իրավացիորեն գրում է Լ. Խաչերյանը<sup>100</sup>։

Սակայն, զարմանալի իրողություն է, որ Սյունյաց տոհմական պատմիչ Ստ. Օրբելյանն իր «Պատմութեան» էջերում եւ ոչ մի տեղ չի հիշատակում Գլաձորի համալսարանի մասին, թեեւ ինքը եղել է նրա առաջին սաներից մեկը. «Վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից... առի՛ հրաման յաստուած ազգեաց եւ յաշխարհալոյս թաթուխապետ Ներսիսէ»<sup>101</sup>։ Գլաձոր անունը չկա։ Ինչու՞։ Պատճառը, թերեւս, պետք է որոնել այդ ժամանակ Օրբելյան-Պռոշյան իշխանական տների միջավատական հարաբերությունների լարվածության մեջ՝ գերագահության համար մղվող պայքարում։ Հիշենք, որ Պռոշ մեծ իշխանը մի պահ նույնիսկ չճանաչեց Օրբելյան կողմնորոշում ունեցող Սյունյաց եպիսկոպոսական աթոռը եւ նրանից զատ երևցավ հիմնադրեց առանձին եպիսկոպոսություն, որը բանադրվեց հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Գլաձորի համալսարանը հիմնադրվեց Պռոշյանների տիրույթների սահմաններում եւ սրանց նախաձեռնությամբ։ Օրբելյան

պատմիչը չի ցանկացել ընդգծել Պռոշյան տոհմի մեծագործությունը։

Պատմական աղբյուրները վկայում են, որ Գլաձորի համալսարանը նյութապես օժանդակություն է ստացել Օրբելյանների եւ Պռոշյանների կողմից, իսկ Բուրթել Մեծ Օրբելյանի իշխանության տարիներին Գլաձորի համալսարանը պահպանվում էր հիմնականում Օրբելյանների միջոցներով։

Եսայի Նչեցին գովեստի ցեղմ խոսքեր է հղում Բուրթել Մեծի հասցեին, կոչելով նրան «ամենաբարեպաշտ, քաջ, եւ միշտ յաղթող»<sup>102</sup>։ Օրբելյան տոհմի ներկայացուցիչներից, գրում է Եսայի Նչեցին, «...Մեք մեր աշակերտաւք բազում եւ անթիվ գութս բարեաց գտաք»<sup>103</sup>։ Զերմ բառերով է մեծ ուսուցչապետը արտահայտվում Օրբելյան սերունդների՝ Հովհաննես Օրբելի եւ Ստեփանոս-Տարսայիճի նկատմամբ։

Գլաձորի համալսարանում ուսուցանել են աստվածաբանություն, փիլիսոփայություն, դասական լեզուներ (հունարեն, լատիներեն), քերականագիտություն, բնական գիտություններ, նկարչություն, քանդակագործություն, համարողական արվեստ, մանրանկարչություն եւ այլն։

Իր գոյության 60 տարիների ընթացքում Գլաձորի համալսարանը տվել է 360-365<sup>104</sup>, իսկ այլ ուսումնասիրողների կարծիքով<sup>105</sup>՝ 723 շրջանավարտ։ Նրա սաներից համահայկական հռչակ ձեռք բերեցին Ստեփանոս Օրբելյանը, Խաչատուր Կեչառեցին, Տիրատուր Կիլիկեցին, Կիրակոս Երզնկացին, Մխիթար Սասնեցին, Սոմիկը եւ շատ ուրիշներ։ Գլաձորի սաներից էր միջնադարյան Հայաստանի խոշոր փիլիսոփա-գիտնական Հովհան Որոտնեցին։

Գլաձորի համալսարանն իր մայրամուտն ապրեց 1339 թ., քաղաքական անկայուն մի ժամանակ, երբ իլխանության արքունիքը Բուրթել Մեծին նշանակեց մայրաքաղաքներ Սուլթանիայի եւ Թավրիզի շտաբապետի եւ նրան կտրեց հայրենի միջավայրից, որից ոգետրված՝ լեռնաշխարհում աշխուժացրին իրենց քարոզչական աշխատանքները հռոմեադավան եկեղեցու միսիոներները, որոնք բնկալել էին հարեւան Բռնա գյուղում։

Անկախ այն բանից, թե որտեղ է գտնվել Գլաձորի համալսարանը, այդ ուսումնագիտական կենտրոնը, հիրավի, նոր երեւոյթ էր հայոց դպրության պատմության մեջ, ինչ փուլթ, թե հարեւան հանրապետության վայ-պատմաբաններից ոմանք, «աղբրեջանական ժանյակի» եւ «կիսալուսնի» հետքեր են փնտրում նույնիսկ մոմիկյան չքնադակերտ խաչքարերի վրա՝ Վայոց ձորը եւ ամբողջ Սյունիքը համարելով այսպես կոչված «Կովկասյան Աղվանք»-ի ծայրամաս։ Գլաձորի համալսարան անունն իսկ հօդս է ցնդեցնում նման բարբաջանքները։



## ԺԵ. Սյունիքի մետրոպոլիտությունը

Հայ եկեղեցու պաշտոնական համակարգում մետրոպոլիտական աստիճանի հաստատման եւ նրա իրավասության սահմանների որոշման համար հիմք ծառայեցին Նիկիայի 1-ին (325 թ.) եւ Աստիճի (341 թ.) տիեզերական ժողովների դրույթները: Ներսես Մեծը մետրոպոլիտություն առաջինը շնորհեց Մարդաբերական եպիսկոպոսին, ապա՝ Նաե՛լ Սյունյաց թեմի առաջնորդին: Առաջնայնության այս փաստը պայմանավորված էր հիշյալ ավատական տների եւ հոգեւոր դասի կատարած ակնառու դերով ինչպես քաղաքական ասպարեզում, այնպես էլ երկրի հոգեւոր-մշակութային կյանքում:

Հովսեփ Վայոցձորեցու (Հոդոցիմցու) նախագահությամբ Արտաշատում տեղի ունեցած ժողովում (451 թ.) Անանիա Սյունյաց եպիսկոպոսը ներկայացված էր մետրոպոլիտ տիտղոսով՝ Այրարատի եպիսկոպոսից հետո զբաղեցնելով 2-րդ տեղը: Իսկ Դվինի 1-ին (505 թ.) եւ 2-րդ (555 թ.) ժողովներում, ընդհակառակն՝ Սյունյաց աթոռակալներին հատկացված էին համապատասխանաբար 21-րդ եւ 9-րդ աթոռները: Ստեփանոս Իմաստասեր մետրոպոլիտի օրոք Սյունյաց եպիսկոպոսության դիրքը 7-րդից բարձրացավ մինչեւ 3-րդը: Աստիճանակարգային այս փոփոխությունները կախված էին Սյունյաց նախարարության եւ հոգեւոր նվիրապետության կենտրոնամետ կամ կենտրոնախույս վարքագծից: Սյունիքի մետրոպոլիտների՝ Աղվանից աթոռի հետ մերձենալու փորձերը գլխավորապես ավատական հարաբերությունների սրման եւ Ներքաղաքական անկայունության հետեւանք էին, ուստի հայոց հայրապետները, ձգտելով պահպանել աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների միասնությունը, Սյունյաց անհնազանդ եպիսկոպոսներին երբեմն զրկում էին մետրոպոլիտության պատվից, նրանցից վերցնելով այդ աստիճանը խորհրդանշող խաչը, գավազանը եւ բազմակնը:

Սյունյաց Հակոբ Ա (Ապստամբ) եպիսկոպոսն իր անջատական արարքի համար արժանացավ Անանիա Մոկացի կաթողիկոսի հանդիմանությանն ու բանադրանքին եւ զրկվեց մետրոպոլիտական շնորհից, որը տարիներ հետո վերականգնվեց Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի օրոք՝ Սյունյաց Վասակ թագավորի եւ նրա դստեր՝ հայոց թագուհի Կատրանիդեի խնդրանքով: Սյունյաց թագավորը, գրում է պատ-

միջը, «հայցե ի նմանե (Սարգիս Ա կաթողիկոսից) շնորհել վերստին զաստիճան մետրոպոլիտութեան...»: 1006 թ. «Նամակ շրջագայական»-ում հիշատակված է, որ Անի մայրաքաղաք եկած Հովհաննես կրոնավորին վեհափառը համաձայնում է ձեռնադրել «ըստ առաջին աթոռակալացն մետրոպոլիտ Սիւնեաց»:

Սյունիքի մետրոպոլիտության գահանիստը սկզբնապես եղել է Ծաղատ գյուղաքաղաքը, ապա՝ Տաթևը, իսկ 13-րդ դ. 2-րդ կեսին՝ Նաե՛լ Վայոց ձորի Նորավանքը: Տեղեկություններ չկան, թե երբեւէ Նահանգի հոգեւոր կենտրոն է եղել Սոգ ավանը, որն ուներ ավելի քան 10000 բնակիչ եւ երկրաշարժից կործանվեց 735 թ. հուլիսի 21-ին՝ Ստեփանոս Իմաստասերի եղերական մահվան օրը:

Իբրեւ կանոն, մետրոպոլիտը դասվում էր ընդհանրական եւ տեղական կաթողիկոսներից հետո: Ստ. Օրբելյանի նշած եկեղեցական 9 դասերի մեջ, Աղվանից արքեպիսկոպոսից հետո, 2-րդը, զբաղեցնում էր Սյունյաց մետրոպոլիտը: Նրա իրավունքն էր Նահանգի 12 գավառների սահմաններում ձեռնադրել եպիսկոպոսներ (Նաե՛լ քորեպիսկոպոսներ), վարդապետներ, քահանաներ եւ եկեղեցու այլ սպասավորներ, ընդհանրական կաթողիկոսից ստացված մեռնող բաժանել իր իրավասության տակ գտնվող պաշտամունքային օջախներին, գումարել տեղական նշանակության եկեղեցական ժողովներ, կարգավորել եւ լուծարել ծագած վեճերն ու վարչատարածքային խնդիրները, հետեւել դպրության եւ լուսավորության գործին:

Սյունյաց աթոռակալ եպիսկոպոսներից շատերը (Անանիա Ա., Մուշե, Երիցակ, Պետրոս Բերթոթ, Վրթանես, Դավիթ Մաթուսաղա Բերթոթ, Հովհաննես Գ., Հակոբ Ա., Վահան, Հովհաննես Դ., Հովհաննես Ե., Սողոմոն Ա., Սողոմոն Բ. եւ ուրիշներ) ունեցել են մետրոպոլիտական աստիճան:

Սյունիքի մեծահամբավ մետրոպոլիտներից էր Ստեփանոս Օրբելյանը, որը Նաե՛լ կոչված էր Մեծ Հայքի պրոտոֆրոնտես, նախաթոռ արքեպիսկոպոս: Նրա գահակալության տարիներին (1287-1303) տնտեսապես հզոր Սյունյաց աթոռը դարձավ Արեւելյան Հայաստանի մեծանուն հայրերի ճանաչված կենտրոնատեղին:

Սյունիքի առավել հայտնի մետրոպոլիտներից էին Օրբելյան իշխանազուններ Հովհաննես-Օրբելյան (1303-1324) ու Ստեփանոս-Տարսայի-ճը (1324-1331), որոնք նեցուկ եւ խնամակալ կանգնելով Գլաձորի համալսարանին՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին նրա գոյատևման համար: Հիշյալ մետրոպոլիտները Նաե՛լ պայքարեցին ունիթոռական շարժման դեմ՝ հայ առաքելական եկեղեցու անկախությունն ու սուրբ

հայրերի ավանդները անադարտ պահպանելու համար:

Սյունիքի մետրոպոլիտությունը վերացվեց 1837 թ.: Տասնյակ տարիներ հանրապետության մալուց հետո, վերջին շրջանում Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի օրհնությամբ եւ կարգադրությամբ, վերահաստատվեց Սյունյաց եպիսկոպոսական աթոռը, որին այսօր բազմել են սրբազան հայրերը:

**ՎԱՀԱՆ Ա ՎԱԹՈՂԻԿՈՍ ՄՅՈՒՆԵՑԻ** - ծննդյան թիվն անհայտ, մահացել է 972 թ. եւ թաղվել Վասպուրականի Տոսպ գավառի Չորովանքում: Նա Սյունյաց նահանգի Բաղք գավառի գահակալ իշխան Ջեանշերի որդին էր, Չագիկի թոռը: Սկզբնական կրթությունն ստացել է Վահանավանքի դպրոցում հորեղբոր՝ Վահանի հովանավորությամբ: Ապա, ընդունելով հոգեւոր կոչում, օծվել է եպիսկոպոս, դարձել վանահայր (Վահանավանքում), իսկ Հակոբ Ա-ից հետո՝ 6 տարի շարունակ գլխավորել է Սյունյաց աթոռը, ընդարձակել նրա կալվածներն ու տնտեսությունը: 965 թ. Անանիա Մոկացի կաթողիկոսից հետո (941-965) Արգիշայում Անի մայրաքաղաքի մոտ, ընտրվեց հայոց հայրապետ: Պատմիչներ Սամուել Անեցու, Վարդան Վարդապետի եւ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Վահան Սյունեցին գահակալեց ընդամենը մեկ կամ երկու տարի, սակայն Ասողիկը, Մատթեոս Ուռնայեցին եւ Ստեփանոս Օրբելյանը նշում են 5 տարի, որը մերժում է Մաղաքիա արք. Օրմանյանը:

Վահան Սյունեցուն ջերմորեն են ներկայացնում Ներսես Լամբրոնյանը («Ստեփանոս Օրբելյանը» եւ Ստեփանոս Օրբելյանը («Պատմութիւն»), իսկ Սամուել Ուռնայեցին պարզապես գրում է՝ «Լաւն ի բնաւից գերանելին Վահան», «սուրբ հայրապետն Հայոց Վահան»: Ժամանակագրի կարծիքով՝ Վահան Սյունեցին հայրապետական գահին բազմել է «հրամանաւ Անանիայի (կաթողիկոսի), Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն» ՆԻԵ (976) թվականին, իսկ վախճանվել է 983 թ., որը թյուրիմացության արդյունք է: Այսպես են նշում Նաեւ Գրիգոր Նարեկացու «Վարքի» հեղինակները:

Վահան Սյունեցու գործունեությանը տրվել են հակասական գնահատականներ: Ավանդապահ հայրերը նրան մեղադրել են քաղկեդոնականությանը հարելու մեջ: Նրանց կարծիքով՝ հայոց հայրապետը հովանավորել է պատկերապաշտությունը եւ «ըստ Հռոմից սահմանին»՝ կարգադրել օգտագործել սրբապատկերներ (իկոնաներ)՝ «եւ առանց կոնի ոչ մատուցանել պատարագ»: Սկզբնաղբյուրների վկայությամբ՝ Վահան կաթողիկոսը ձգտել է հայ եկեղեցին միավորել հունա-

կան եւ վրաց եկեղեցիների հետ, միաբանության բովանդակությամբ նամակներ է հղել Մելիտինե քաղաքի Թեոդորոս մետրոպոլիտին եւ բյուզանդական կայսր Հովհաննես Չմշկիկին:

970 թ. Անիում Աշոտ Գ Ողորմած թագավորի մասնակցությամբ, տեղի ունեցավ եկեղեցական ժողով, որը քննարկեց Վահան կաթողիկոսին հասցեագրված մեղադրանքները: Վահանը չմասնակցեց այդ ժողովին եւ մեկնեց Վասպուրական՝ հանգրվան գտնելով Գագիկ Արծրունու որդի Համազասպ-Ապուսահլ թագավորի տանը: Եկեղեցական ժողովը գահընկեց արեց Վահան կաթողիկոսին եւ նոր հայրապետ ընտրեց Սեւանի միաբանության վանահայր Ստեփանոսին (Ստեփանոս Գ), որը Մաշտոց եւ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսների ազգականն էր: Երկփեղկված հայրապետական աթոռի գահակալներն սկսեցին միմյանց հղել նզովագրեր: Անորոշ վիճակին վերջ տալու նպատակով՝ Վասպուրական մեկնեց պատվիրակություն՝ Ստեփանոս Գ կաթողիկոսի գլխավորությամբ, սակայն տեղ հասնելուն պես Համազասպ-Ապուսահլը կարգադրեց ձերբակալել պատվիրակության բոլոր անդամներին եւ, բացառությամբ Սովսես ու Բաբկեն Սյունյաց վարդապետների, արգելափակեց Աղթամար կղզում: 972 թ. վախճանվում են երկու կաթողիկոսներն էլ. Ստեփանոս Սեւանցին՝ Կոտորոց բերդում, իսկ Վահան Սյունեցին՝ Վասպուրականի Տոսպ գավառի Չորովանքում: Հայրապետական գահին է բազմում խաչիկ Արշարունյաց եպիսկոպոսը՝ Անանիա Մոկացու քեռորդին: Ի դեպ, Կղեմես Գալանոսը Վահան Սյունեցուն համարում է Վասպուրականի, թերեւս նկատի ունենալով Արծրունյաց տերերի հետ նրա սերտ հարաբերությունը եւ այնտեղ թաղվելու պարագան:

Հայ պատմաբաններից մեծագույնը՝ հայր Միքայել Չամչյանը, քննարկելով Վահան Սյունեցու գործունեությունը, հասկանալի պատճառներով, բարձր է գնահատում նրան: Հիմնականում, սրբապատկերների պաշտամունքը, որին տարբեր առիթներով անդրադարձել են Հովհաննես Իմաստասերը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Մազիստրոսը եւ այլք, Հայաստանում նոր երեւոյթ չէր, որի համար կշտամբում են Վահան Սյունեցուն: Չէ՞ որ Հազարամիկից կամ Ամենափրկիչ խաչերի ու պաշտամունքային կառույցների վրա (Աղթամարի Ս. Խաչ, Բղենո Նորավանք, Ամաղուի Նորավանք, Սպիտակավոր Աստվածածին եւ այլն) կան բազմաքանակ սրբաքանդակներ, որոնք հավասարապես պաշտվել են սուրբ խաչով հանդերձ: Ինչ վերաբերում է հույն եւ վրաց եկեղեցիների հետ միավորվելու պարագային, ապա կարելի է կարծել, որ Վահան Սյունեցին հետապնդել է նաեւ քա-

ղաքական նպատակներ, որոնց իրագործումը շատ ավելի բարդ խնդիր էր:

Վահան Ա կաթողիկոս Սյունեցին շինարարական լայն գործունեություն է ծավալել հատկապես իր հայրենիքում Սյունյաց աշխարհում, հիմնովին վերակառուցել է Վահանավանքի գլխավոր՝ Ս. Գրիգոր եկեղեցին, կառուցել գավիթն ու սյունասրահը, սեղանատունը, Տիգրանաւարի ակունքներից կավե փողորակներով խմելու ջուր բերել մինչեւ վանք, ընդլայնել Տաթևի ու մյուս վանքերի կալվածային տնտեսությունները՝ հատկապես իշխանական նվիրատվությունների միջոցով:

## ԺԶ. Սյունյաց եպիսկոպոսների շինարարական գործունեությունը (IX-XIV դարեր)

Գրավոր աղբյուրները վկայում են, որ Հայաստանում շինարարական աշխատանքները լայն ծավալ են ստացել հատկապես պետական անկախության եւ քաղաքական կայունության պայմաններում, իսկ դրանց բացակայության ժամանակ՝ երկրի բնիկ տերերի նուրբ եւ հեռատես դիվանագիտության շնորհիվ:

Բագրատունյաց թագավորության նախընթաց եւ հետընթաց տարիներին հայոց երկիրը դարձյալ թեւակոխեց վերելքի եւ զարգացման ճանապարհը. հիմնադրվեցին բազմաթիվ վանքեր եւ եկեղեցիներ, վերանորոգվեցին խոնարհված գմբեթները, կառուցվեցին ամրոց-դղյակներ, ճանապարհներ ու կամուրջներ, հյուրատներ եւ իջեւանատներ, անցկացվեցին նորանոր ջրանցքներ եւ առուներ: Վանքերին կից գոյացան մարդասիրական հաստատություններ՝ անկեւանոցներ, բորոտանոցներ, ուրկանոցներ, որոնց կարիքները հոգում էին վանական վիպաբանությունները՝ իրենց հասութաբեր հաստատություններից ստացված եկամուտներով եւ նվիրատվություններով: Այս ամենի մասին ստույգ վկայություններ են պահպանվել արքայական եւ իշխանական հրամանագրերում, կալվածագրերում, «պայման-վճիռներում» եւ հատկապես՝ վիմական արձանագրություններում:

Մինչեւ բուն խնդրին անցնելը, նշենք, որ այն տարածքներում, որտեղ կային կործանված սրբավայրեր, նորերը չէին կառուցվում, այլ վերականգնվում էին հները: Այս կապակցությամբ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց հակառակ եկեղեցի շինողաց» ՄԻԸ (228) հոդվածում<sup>106</sup> նշում է. «...որք զհարանցն մերոց զեղեալ կարգն խափանէ եւ հակառակ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ եւ ի կեանս եւ յամենայն քահանայական կարգէն լուծցին. եւ այլք, որք նոցին կամակից եղեն զնոյն պատիժս կրեսցեն»<sup>107</sup>:

Պաշտամունքային օջախներ կառուցելիս՝ հաշվի էին առնվում տեղանքի հարմարավետությունը, պաշտպանվածությունը, բնության եւ սրբավայրի զեղագիտական ներդաշնակությունը:

IX-XIV դդ. Հայաստանը, ընդ որում՝ նաեւ Սյունյաց լեռնաշխարհը,

վերածվեց շինարարական լայն հրապարակի: Իբրեւ կազմակերպիչներ եւ նպաստավորողներ՝ հանդես եկան նահանգների եւ գավառների աշխարհիկ եւ հոգեւոր տերերը<sup>108</sup>: Ինչպես Նշել ենք, Սյունիքի հոգեւոր կենտրոնը մինչեւ 839 թ. Շղուկ գավառի (այժմյան Սիսիանի ենթամարզ) Շաղատ գյուղաքաղաքն էր, որտեղից տեղափոխվեց Տաթև: Նոր եպիսկոպոսարանում սկսվում են լայն շինարարական աշխատանքները. Դավիթ Բ եպիսկոպոսը (854-861), Վասակ Սյունյաց իշխանի որդի Փիլիպեին վճարելով 10000 դրամ, սեփականում է Տաթև գյուղն ու նրա մերձակա տարածքները<sup>109</sup>: Այսպես իշխանի աջակցությամբ կառուցում է եկեղեցի<sup>110</sup>: Տեր Դավթին հաջորդած տեր Սողոմոնը՝ 1200 դրամով, Հրահատ իշխանից գնում է Դարատափ (Տանձատափ) գյուղը եւ 881 թ. նվիրում Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցուն<sup>111</sup>:

Շինարարական մեծ գործունեություն է ծավալում Սյունյաց Հովհաննես Ե մետրոպոլիտը (888-918): Նա տեր Սողոմոնի օրոք Տաթևի Ս. Գրիգոր եկեղեցու փակակալն էր, որին եպիսկոպոս էր օծել կաթողիկոս Գետրոգ Բ Գառնեցին (877-897): Այդ շինարար հոգեւորականը որոշում է գահերեց իշխան Աշոտի (Փիլիպեի որդու, Վասակի եղբոր) աջակցությամբ կառուցել կաթողիկե եկեղեցի: Այս գործում տեր Հովհաննեսին նեցուկ են կանգնում Գեղարքունիքի իշխան Գրիգոր Սուփանի ժառանգները եւ Բաղք գավառի (այժմյան Կապանի ենթամարզ) գահակալ իշխան Չափկը՝ ապագա կաթողիկոս Վահան Սյունեցու պապը:

895 թ. սկսվում է Տաթևի մայր տաճարի՝ Պողոս-Պետրոսի կառուցումը: Այս առթիվ Հովհաննես մետրոպոլիտը եկեղեցու արեւմտյան պատին փորագրել է տալիս հետեւյալ հիշատակագրությունը.

*«Յամի յորում բուսկանն Հայոց: ՅևԴ: (895) Էր եւ զապիկն նաւասարդի Ի.Դ: (4) Եւ քէր յովհաննէս, որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս սիննաց զկնի տեառն սաղամունի, արարի սկիզբն շինումոյ եկեղեցոյս»*<sup>112</sup>:

Շինարարությունը տեւում է 11 տարի եւ ավարտվում 906 թ.: Հովհաննես եպիսկոպոսը գլխավոր տաճարի շինարարությանը զուգահեռ կառուցել է տալիս գրատներ, սրբատներ, գետնափոր գաղտնարաններ, սեղանատուն, արհեստանոց-գործատներ, մթերանոց-պահեստներ<sup>113</sup>: Կանգնեցնել է տալիս խորհրդավոր գավազան-սյունը: Այդ ժամանակ Տաթևի վանքն ուներ 500 միաբան, ընդ որում խորաքնին փիլիսոփաներ, երաժիշտ-երգիչներ, նկարիչներ եւ մատենագիրներ: Սպասելի էր, որ Տաթևի եպիսկոպոսական կենտրոնը նավակատիքի

ժամանակ տեր էր դառնալու բազմաթիվ կալվածների, գյուղերի ու ագարակների, հասոթաբեր հաստատությունների, որոնցից ստացված եկամուտները ապահովելու էին նաեւ վարդապետական կրթօջախի գոյությունը:

Տաթևի նավակատիքին առատ ընծաներով մասնակցում են Հայոց աշխարհի բոլոր մեծերը՝ աշխարհիկ եւ հոգեւոր տերերը՝ Սմբատ I Բագրատունի թագավորի եւ Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ-կաթողիկոսի գլխավորությամբ: Դա, հիրավի, հայ ժողովրդի սերտ միաբանության վառ քառասունդէսն էր, որը պետք է օրինակ ծառայեր հետագա սերունդների ազգանպաստ գործունեության համար:

910 թ. Հովհաննես մետրոպոլիտը գահերեց իշխան Աշոտի տիկնոջ՝ Շուշանի հետ միասին, կառուցում է Վայոց ձորի Խաչիկ (հնում՝ Խաչերի խոռ) գյուղի մոտ եղած Խոտակերաց վանքը՝ Զարկուփի եկեղեցին<sup>114</sup>: Այս շինարար հոգեւորականի գահակալության ժամանակ՝ 911 թ. կառուցվում է Վահանավանքի Ս. Գրիգոր եկեղեցին, հիմնադրվում վանական միաբանություն, որի եղբայրների թիվը անցնում է 100-ից: Վահանավանքը աստիճանաբար դառնում է «իբրեւ քաղաք բազմաժողով»<sup>115</sup>:

918 թ. վախճանվում է Հովհաննես մետրոպոլիտը: Սյունյաց հոգեւոր գահին բազմում է Հակոբ Ա Դվինեցին (918-958)՝ Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչի եղբորորդին, որը մեծ անհանգստություն էր պատճառելու Անանիա Մոկացի մեծ կաթողիկոսին (946-968): Հակոբ Ա-ի քառասունամյա առաջնորդության տարիներին Սյունյաց լեռնաշխարհը, մասնավորապես Վայոց ձորը, պատվում է կրոնամշակութային կենտրոնների լայն ցանցով: Դեռեւ 929 թ. Սմբատ գահերեց իշխանի, տիկին Սոփիայի եւ իշխան Սահակի հետ միասին շրջագայելով Վայոց ձորում՝ Հակոբ եպիսկոպոսը առաջարկում է Ոստին գյուղից վեր հիմնադրել կրոնական օջախ: 932 թ. Փիլիպե իշխանից 12000 դրամով եւ մեկ պատվական գոհարով գնելով Չափեձորի (այժմյան Գորիսի ենթամարզ) Վարարակն գետի աղբյուրները (Ակները), 29 կմ երկարությամբ անցկացնում է ջրատար՝ Տաթևի վանքի մերձակայքում գտնվող Ցաքուտ հանդամասը ջրարբի դարձնելու եւ վարդուտի վերածելու ակնկալիքով<sup>116</sup>: Դա, հիրավի, ծանր եւ միթխարի աշխատանք պահանջող ձեռնարկում էր, որ կատարեց Հակոբ եպիսկոպոսը աներեր կամքով եւ համառությամբ: XIII դարում, մոնղոլական արքունիքում տիրող խժժոթությունների ժամանակ, ջրանցքի գործունեությունը խափանվեց եւ նորոգվեց միայն 1294 թ. Հայրապետ եպիսկոպոսի ու տեր Յովհաննեսի ջանքերով: Ակների մոտ՝ լեռնալանջին, պահպան-



Բղենո Նորավանքի 1062 թ.  
շինարարական արձանագրությունը

Նի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության էջերում, մասամբ Նաեւ Գևորգյանի վիճակագրություններում: Տաճարի շինարարական արձանագրությունն ավարտվում է պատկերավոր մի Նախադասությամբ. «**Մատանի էր անակն Վայոց Չոր. շինեցի զսա եւ եղի ակն ի վերայ**»<sup>118</sup>: Շատ ավելի ուշ 999 թ. Զրիստափոր վանահայրը կառուցում է Գևորգյանի սրահը, իսկ հայր Սարգիս Բ-ն 1008 թ. Ծղուկ գավառի Ձկնարած (Բազարչայ) գետից 24 կմ երկարությամբ ջրատար է անցկացնում Գևորգյանի եւ վանքապատկան գյուղերի կարիքները հոգալու նպատակով<sup>119</sup>:

Հակոբ Ա եպիսկոպոսը, դարձյալ Սմբատ գահերեց իշխանի հաճությամբ եւ նյութական աջակցությամբ, 936 թ. հիմնադրում է Հերմոնի վանքը՝ կառուցելով տեղի ս. Գրիգոր եկեղեցին: Նշենք, որ այս վանքի ստույգ տեղադրությունը մինչեւ 1950-ական թթ. որոշակի չէր եւ բացահայտվեց վիճագրագետ-պատմաբան Ս.Գ. Բարխուդարյանի վերծանությունների շնորհիվ: Հերմոնի վանականները զգալի դեր կատարեցին հայոց հայրապետական աթոռը 1441 թ. մայր հայրենիքում վերահաստատելու ժամանակ:

Ստեփանոս Օրբելյանի կարծիքը Հակոբ Ա եպիսկոպոսի վերաբե-

վել է ջրանցքի վերանորոգման մասին հետեւյալ արձանագրությունը.

«**Յամի յորում էր ԹՎ ՉԽԳ (1294) եւ Կր Յոհանէս կաման ալ եւ աղախը հոգեւոյ հախը իմո Կր Հայրապետա Կարա զջորս Վարարկան ի Վարդուրն, զորս ածապարիւ եւ հոգեւոր Կր Յակոբ գնեալ էր եւ Կարեալ բազում աշխատութիւն եւ արդեամբք. զհափանեալն ի բազում ամանակաց կրկին նորոգեցաք յիշատակ մեզ եւ նախնեաց մերոց...**»<sup>117</sup>:

931-936 թթ. Սմբատ գահերեցի եւ նրա իշխանուհի տիկնոջ՝ Սոփիայի աջակցությամբ կառուցվեց Գևորգյանի սրահի եկեղեցին: Այս մասին ստույգ վկայություն է պահպանվել Ստեփանոս Օրբելյանի



Բղենո Նորավանք (X դ.)

ոյալ երկակի է. կոչելով նրան «Սիւնեաց մետրոպոլիտ եւ գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց»<sup>120</sup>, Նա չի վարանում Հակոբ Ա-ին ներկայացնել շռայլ գովեստներով. «Անհամեմատելի, աստվածավայելուչ, արքայաշուք, երջանիկ եւ բարի», «հանճարեղ եւ իմաստուն»<sup>121</sup>: Սակայն չի մոռանում հիշատակել Հակոբի Նաեւ «վայրենաբարո գործերի մասին»<sup>122</sup>, այսինքն՝ թե ինչպես այս եպիսկոպոսը ապստամբեց հայոց կաթողիկոսի դեմ եւ հրաժարվեց մեռնել ստանալ հայրապետական աթոռից՝ միանալով Աղվանքի արքեպիսկոպոսին: Սա է գլխավոր պատճառը, որ Հակոբ Ա-ն, միաբանելով հանճարեղ Գրիգոր Նարեկացու հոր՝ Խոսրով Անձեաջյաց եպիսկոպոսի հետ, ցանկանում էր բարեկրթություններ կատարել հայոց եկեղեցու հիերարխիկ կառուցվածքում: Սակայն, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է ասում. «Գողցուք զայս քննել Արդարադատին Աստուծոյ»<sup>123</sup>, չէ՛ որ «գոյ քուն եւ իմաստնոյ»<sup>124</sup>: Անանիա Մոկացի կաթողիկոսը, ժամանելով Սյունիք, խստորեն դատապարտում է Հակոբ Ա-ին՝ գրկելով Սյունյաց աթոռը մետրոպոլիտա-

կան աստիճանից:

Հակոբ Ապստամբից (նաեւ՝ Հերծվածողից) հետո նահանգի թեմակալ եպիսկոպոս ընտրվեց Բաղք գավառի գահակալ իշխան Զեւանշերի որդի Վահանը, որն այդ ժամանակ Վահանավանքի առաջնորդն էր («որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից»)՝<sup>125</sup>:

Նույն Վահանավանքում նրան եպիսկոպոս է ձեռնադրում Անանիա Մոկացի կաթողիկոսը՝<sup>126</sup>: Վահան Զեւանշերյանի նստավայրերը Տաթեւի ու Վահանավանքն էին: Այս վերջինում նա կատարեց մեծ բարեփոխումներ. կառուցեց Ս. Գրիգորի կամարակապ գավիթը, սրահ-դամբարանատունը, սեղանատունը, փողոակներով խմելու ջուր բերեց Տիգրանասարի լանջերից՝<sup>127</sup>: 967 թ. Վահան եպիսկոպոսը շինարարական աշխատանքներ է կատարում Արատեսի վանքում, որի կենտրոնական զույգ մատուռների արեւմտյան պատին պահպանվել է հիշատակագրություն.


Շինարարական աշխատանքները Սյունիքում լայն ծավալով շարունակվեցին նաեւ Հովհաննես Ե եպիսկոպոսի առաջնորդության տարիներին (1006-1058): Սարգիս Ա Սեւանցի կաթողիկոսի կոնդակի համաձայն՝ նա ընդարձակում է Սյունյաց թեմի սահմանները (հիշենք Սարգիս Ա կաթողիկոսի շրջաբերական նամակը)՝<sup>128</sup>, վերստանում մետրոպոլիտական շնորհը, վերադարձնում հափշտակված գյուղերն ու կալվածները, ապա նվիրվում շինարարական աշխատանքների:

1027 թ. Հովհաննես եպիսկոպոսը դարձյալ վերականգնում է Տաթեւի Ս. Գրիգոր եկեղեցին: Նրա բարենորոգումներին նեցուկ են կանգնում Սյունյաց Վասակ թագավորը (998-1040) եւ նրա քեռորդիներ Սմբատն ու Գրիգորը, որոնք հաջորդաբար բազմելու էին Սյունիքի արքունական գահին:

1043 թ. Սմբատ Բ թագավորի (1040-1051) աջակցությամբ, կառուցվում են Տաթեւի մայր տաճարի սրահը, գավիթն ու այլ շինություններ: Այս առիթով տեղի Հովհաննեսը Տաթեւի հյուսիս-արեւմտյան մույթի վրա արձանագրում է.

*«Յամի յորում էր քվականնի: ՆՂԲ: (1043), Ի թագաւորութեան Ամպարա, որդո Աշոտ, եւ՝ քո յովհաննէս շինեցի զսրահքս աւգնականութեամբ Ամպարա...»*<sup>129</sup>:

Հովհաննես Է-ն վախճանվեց 1058 թ., Սյունյաց առաջնորդ ընտրվեց Գրիգոր եպիսկոպոսը (1058-1116), որը վայելում էր Գրիգոր I Սյունյաց թագավորի (1051-1072) բարոյական եւ նյութական աջակցությունը: *«Ի թագաւորութեան քրիստոսապաւկեալ արքային Գրիգոր»* 1062 թ. վերականգնվում է Բղենո Նորավանքը՝<sup>130</sup>, ինչպես նաեւ խոտակերաց



*Սյունիանու Օրբելյանի 1295 թ. շինարարական արձանագրությունը Տաթեւի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու քարավորին*

վանքի (Քարկոփի) եկեղեցին: Գրիգոր եպիսկոպոսը 1087 թ. կառուցում է Տաթեւի վանքի Ս. Աստվածածին կրկնահարկ եկեղեցին: Այդ ժամանակ Սյունիքի թագավորն էր բարեպաշտ հայկազուն Սենեքերիմը, որը նենգաբար սպանվեց սելջուկ-թուրքերի հետ բանակցելու ժամանակ Բաղաբերդի պարիսպների տակ՝ 1094 (96) թ.:

Սյունիքի շինարար եպիսկոպոսների ցանկում ուրույն տեղ է գրավում Սարգիս Ա արքեպիսկոպոսը, որը Լիպարիտ Օրբելյանի աջակցությամբ 1216-1221 (23) թթ. ընթացքում կառուցում է Ամաղուի Նորավանքի Ս. Նախավկա եկեղեցին: Ս. Նախավկայի արեւմտյան մուտքի ճակատակալ քարին պահպանվել է հիշատակագրություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

*«Եւ քո Սարգիս, քեռորդի քո Սյունիանուի Միւնեաց արհիեպիսկոպոսի, շինեցի զեկեղեցիս Ի բարեխաւսութի ինչ եւ Լիպարիին եւ նախնեաց մերոց եւ երկու հայրազապ հղբայրցն, որ սպանան Ի քուրբաց պապերազանց...»*<sup>131</sup>:

Սարգիս Ա-ն Վայոց ձորի արձանագրություններում կոչված է «Նորավանքի առաջնորդ» եւ «Սինեաց վերադիտող»<sup>132</sup>:

Ս. Նախավկայի մի շարք արձանագրություններ վկայում են, որ առանձին հավատացյալներ կարող էին հոգալ կառույցի այս կամ այն

հատվածի ծախսերը: Օրինակ՝ Սարգիս Ա-ն նշում է, որ Ս. Նախավկայի հարավ-արեւելյան խորանը կառուցվել է Հասան Ամադուեցու միջոցներով<sup>133</sup>, իսկ հարավ-արեւելյանը՝ այս եպիսկոպոսի «ձեռնայսուն աշակերտ», եկեղեցու փակակալ խիկարի՝ «զի Նորայ արդեամբք շինեցաւ», կարողում ենք վկայագրում<sup>134</sup>: «**Ի հայրապետութեան փր Սարգիս**» 1220 թ. Արատեսի վանքում փորագրվել է անվանի գորապետ Վասակ Խաղբակյանի հաղթական բովանդակությամբ արձանագրությունը, որում պատմվում է Վայոց ձորի ամրոցները սելջուկ-թուրքերից ազատագրելու մասին<sup>135</sup>:

Սյունյաց Նահանգը, մասնավորապես Վայոց ձոր գավառը, Նաեւ աշխարհիկ կառույցներով շենացնելու ասպարեզում՝ զգալի դեր կատարեց Սարգիս Բ եպիսկոպոսը (1263-1298), որը գրավոր աղբյուրներում ներկայացված է «անյաղթ հռետոր»<sup>136</sup>, «քահանայապետ գաւառիս»<sup>137</sup> եւ այլ շոյող մակդիրներով:

Հավատացյալներից ստացած առատ ընծաները՝ շարժական եւ անշարժ գույքը<sup>138</sup>, Նա ամբողջապես տրամադրում է կրոնական եւ աշխարհիկ շինությունների բարեկարգմանը, կառուցել է տալիս Ամադուի Նորավանքի եւ Ռոտնավանքի (Վաղարշի վանքի) հյուրատները, կամուրջները, որոնցից առավել նշելին Արփա (Արենի) գյուղի կամուրջն է, որի խելերը պահպանվել են առ այսօր:

Սյունյաց Նահանգի թեմակալ առաջնորդների ցանկում առանձնակի տեղ է զբաղեցնում մեծանուն պատմագիր, բանաստեղծ, կրոնական եւ քաղաքական գործիչ, Գլաձորի համալսարանի սան Ստեփանոս Օրբելյանը: Կիլիկիայում հայոց կաթողիկոսից ձեռնադրվելով եպիսկոպոս եւ արժանանալով մետրոպոլիտական աստիճանի՝ այս իշխանագունը վերականգնում է Սյունյաց երկփեղկված աթոռը (Տաթեւի եւ Նորավանքի հակադիր թեմերը)՝ մեկ գավազան, մեկ հոգետոր հովիվ նշանաբանով՝ առանց խտրություն դնելու նրանց միջեւ: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Նահանգի հոգետոր-կրթական օջախների գործունեությանը՝ նրանց համար հայթայթելով նյութական միջոցներ<sup>139</sup> եւ ապահովելով բարեխնամ հոգատարություն:

Ստեփանոս Օրբելյանի անունը քանիցս հիշատակվում է Սյունյաց Նահանգի, մասնավորապես Վայոց ձորի բազմաթիվ վիմագրերում Արատեսի վանքում<sup>140</sup>, Հերմոնի վանքում, Զարազկյանում («Հին Սալլի» գյուղում), Հերիեր գյուղում (Շաշ Միակեցի արձանագրության մեջ)<sup>141</sup> եւ այլուր: Ստեփանոս Օրբելյանի շինարարական գործունեության գլուխգործոցը հանդիսանում է Տաթեւի՝ այժմ վերականգնված Ս. Գրիգոր եկեղեցին: Իր «Պատմութիւն տանն Սիսական» աշխատության



Եղեգնաշորի «Չորաց փամարը» (1321 թ., Վայոց ձոր)

մեջ պատմիչը ներկայացնում է այս եկեղեցու վերականգնման երեք փուլերը. առաջին անգամ Ս. Գրիգորը վերանորոգվել է կառուցողներ Փիլիպե իշխանի եւ Դավիթ Բ եպիսկոպոսի, ապա եւ՝ Սյունյաց Սմբատ Բ թագավորի միջոցներով: Իսկ երրորդ անգամ հիմնովին վերականգնում է ինքը՝ մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը<sup>142</sup>:

1295 թ. ավարտելով Ս. Գրիգոր եկեղեցու նորոգումը՝ Ստեփանոս Օրբելյանը ցանկություն է հայտնում տաճարի արեւմտյան մուտքի ճակատակալ քարին արձանագրել.

**«Ի ԹՎ.: ՉԽԴ. (1295). Չփեր Ստեփաննոս մկրտապիկար Միւնեաց, որ պրաւիաֆրանսէս հալյոց մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսայիմին, շինող սր եկեղացոյս յիշեցէր ի քս»**<sup>143</sup>:

Տաճարի վերին կամարադեղին, ներքուստ, փորագրել է տալիս վանքի տեղադրությանը համապատասխան սքանչելի մի նախադասություն:

*«Պնացք զեկոց ուրախ առնեն զքաղաքս ասպուծոյ եւ սուրբ արար զյարկս իւր բարչրեալն»*<sup>144</sup>:

Ստեփանոս Օրբելյանը վախճանվեց 1303 թ. եւ ամփոփվեց Վմադուի Նորավանքի՝ Օրբելյան իշխանագույնների տոհմական դամբարանատանը: Կյանքի մայրամուտից առաջ նույնպես նա չգաղարեցրեց անհաշտ պայքարը հռոմեական եկեղեցու հետետորոնների դեմ եւ Գրիգոր Մնավարզեցի կաթողիկոսի շրջաբերական թղթին տվեց մերժողական պատասխան՝ արեւելյան եպիսկոպոսների եւ մի շարք իշխանների անունից ավելացնելով. «Հաւան ենք մեր ընդ մեր հարսն ի դժոխս իջանել եւ ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել»<sup>145</sup>:

Թերեւս ունիթոմ-միարարների դեմ Ստեփանոս Օրբելյանի մղած անհաշտ պայքարն էր հիմնական պատճառը, որ խոշորագույն պատմաբան Մ. Չամչյանը նրան կոչում է «այր խրոխտ», «ինքնահաճ», «մեծամիտ», «կոչէ զինքն մետրոպոլիտ պրոտոֆրոնդէս», «պղտորէ զմիտս բազմաց ի վերայ քաղկեդոնականաց», «զի ճարպիկ ունի էր եւ ճարտար ի խօսս»<sup>146</sup>: Գրիգոր Մնավարզեցի կաթողիկոսին 1302 թ. հղած պատասխան-նամակը Մ. Չամչյանը համարում է «աղճատանք ստայոյ բանից եւ սնոտի զրոյցք տգիտական ճաշից»<sup>147</sup>:

Կարծում ենք, չափազանց խիստ է ասված Մեծն Ստեփանոսի<sup>148</sup> հասցեին: Գոնե մեզ համար նման որակումները բացարձակապես ընդունելի չեն:

Ստ. Օրբելյանին հաջորդեց Զովհաննես Օրբելը, որին նույնպես վերագրում ենք շինարար պատվանունը: Նա եւս շարունակեց անհանդուրժողական կեցվածք ընդունել հռոմեական եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ՝ պաշտպանելով հայ առաքելական եկեղեցու դարավոր ավանդույթներն ու անկախ կարգավիճակը:

Զովհաննես Օրբելը ժամանակակիցների կողմից կոչվել է «արհիական քաւչապետ»<sup>149</sup>, «Հռչակավոր մետրոպոլիտ», «տուն իմաստից եւ հանճարոյ»<sup>150</sup>: Նա առավել սերտացրեց եւ ամրապնդեց Պռոշյան եւ Օրբելյան իշխանական ընտանիքների միասնությունը, ուստի պատահական չէ, որ էաջի Պռոշյանը՝ «թոռն Պռոշոյ», Զովհաննես Օրբելին կոչում է «մեր եղբայր»<sup>151</sup>:

Զովհաննես Օրբելու շինարարական գործունեության մեջ նշելի է հատկապես Արփայի (Արենիի) Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը 1321 թ.: ձեռամբ հանճարեղ Մովսիկի: Ներքուստ պատկերաքանդակ-

ներով հարուստ այս գողտրիկ տաճարը կառուցված է հիշյալ գյուղում, տիրապետող դիրք ունեցող մի բլրակի վրա՝ ի տես ամենի:

Ս. Աստվածածնի արեւմտյան մուտքի վերին կամարի շուրջ Մովսիկի ձեռքով փորագրված է.

*«Եւ քր Յովհաննէ Միւնեւայց արհէպիսկոպոս շինող սուրբ եկեղեցոյս յիշել աղաչեմ, եւս ինչ զբարեպաշտ իշխանաց իշխան Զարեան մերչաւորն իմ զքաջ մենամարտիկին զբիրթլն եւ զդժխտափառ քսակր զոյգի իւր զվախախն նորարողաբոջ զաւակիքն իւրեանց Բէշթնիի եւ իւանէիւն. ԹՎ. ՉՀ. (1321):*

*Շարժ եղեւ Մովսիկ վարդապետը»*<sup>152</sup>:

Հայաստանի երկրաշարժերի պատմությունից գիտենք, որ 1319 թ. Սյունյաց լեռնաշխարհում տեղի է ունեցել տարերային ավերիչ աղետ: Կարծում ենք, 1321-ը եկեղեցու վերականգնման տարին է: Նույն 1321 թ., ամենայն հավանականությամբ, դարձյալ Մովսիկի մտահղացմամբ, կառուցվել է Վայոց ձորի Սպիտակավոր Աստվածածնի վանքը, որի նրբաշիյուն մանրաքանդակներն ու դիմաքանդակները մատնում են հանճարեղ ճարտարապետի ներկայությունը: Ի դեպ, Սպիտակավոր Աստվածածինը, որ սկզբնաղբյուրներում կոչվել է Նաեւ Սրկղունյաց կամ Բոլորաբերդի անապատ, հարատեւեց մինչեւ XV դարը Ներամյալ, մինչեւ «պարուն-տեր» Եղիշե արքեպիսկոպոս Օրբելյան-Բուրթելյանի գահակալությունը:

Սյունյաց եպիսկոպոսական աթոռը Զովհաննես Օրբելից հետո ժառանգեց Ստեփանոս-Տարսայիճը (1324-1331): Նա Սյունիքի իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի թոռն էր, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի անհամամար եղբայր Զաւալի եւ Գոնցա իշխանուհու որդին, ուսանել էր Գլաձորի համալսարանում՝ աշակերտելով Եսայի Նչեցուն եւ Սարգիս վարդապետին: Երիտասարդ հասակից ընտրվել է «արհեպիսկոպոս տանն Սիսակա»<sup>153</sup> եւ «պետ երկոտասան գաւառաց Սիւնեաց»<sup>154</sup>:

Ստեփանոս-Տարսայիճի շինարարական գործունեության մեջ առանձին տեղ է զբաղեցնում հայ միջնադարյան ճարտարապետության ինքնատիպ նմուշներից մեկը՝ Եղեգիս իշխանանիստ գյուղաքաղաքի «Զորաց տաճարը», որի ընդարձակ հրապարակում տեղի էին ունենում զորահանդեսներ եւ հայոց զորքի երդմնակալության արարողություններ: Ծարտարապետական մտահղացմամբ «Զորաց տաճարը» հիշեցնում է Բդեւո Նորավանքը:

«Զորաց տաճարի» արեւելյան պատի հյուսիսային խորշին առ այ-



սօր պահպանվել է 1322-ով թվագրվող հետեւյալ արձանագրությունը.

*«Ես քր Սյունիանու, որդի Ջալալին, բոռն մեծի Տաթաւայիճին, հիմնարկե(ա)լ շինեցի եկեղեցիս յանուն սրբոյ Աստուածածնայ...»<sup>155</sup>:*

Ուղիղ 10 տարի հետո՝ 1332 թ. Լիպարիտ իշխանի որդի Չեսար Օրբելյանի հովանավորությամբ կառուցվեց Սելիմի (Սուլեյմա) Նշանավոր կարավանատունը, ուր դադար էին առնում Գեղարքունիք-Վայոց ձոր ճանապարհահատվածն անցնող երթեւեկները: Ուշագրավն այն է, որ այս քաղաքացիական կառույցը հիմնադրվել է ավարտին է հասցվել Գլաձորի համալսարանի ռաբունապետ Եսայի Նչեցու օրհնությամբ եւ «աղաթիւք», ինչպես վկայում են կառույցի հայերեն եւ արաբատառ պարսկերեն արձանագրությունները<sup>156</sup>:


Քննարկվող ժամանակաշրջանում հանդես եկան հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցի այնպիսի Նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Սիրանեսը, Մոմիկը, Գրիգորիկը, Ծնորհավոր Աղբարը, Բուսը, Սմբատ Պատանին եւ այլ շինարար վարպետներ<sup>157</sup>, որոնց անունների ցանկը շարունակաբար համալրվում է նորանոր հայտնագործումներով:

Պատմությունը նորից ու նորից ուսուցանում է, որ Հայոց աշխարհը ծաղկել, վերելք է ապրել միմիայն այն ժամանակ, երբ առկա են եղել հոգեւոր եւ աշխարհիկ տերերի միասնությունն ու համագործակցությունը եւ ամենակարեւորը՝ ժողովրդին ծառայելու աներեր կամքն ու ազնիվ ցանկությունը<sup>158</sup>:

Սյունիքում շինարարական գործընթացներն ընդհատվեցին XV-XVI դարերում քաղաքական ծանր պայմանների պատճառով (լենկթեմուրյան ավերածությունները, Կարա-կոյունլու եւ Ակ-կոյունլու թուրք-մենական ցեղախմբերի արյունահեղ բախումները Հայաստանի տարածքում եւ այլն), վերելք նկատվեց XVII դարում:

Եզրափակելով նշենք, որ Սյունիքի իշխաններն ու հոգեւորականները քաջ գիտակցում էին, որ «...ամենայն փառք եւ մեծութիւն սպառելոց են եւ վաղիւ կորնչելոց»<sup>159</sup>, ուստի ընկալելով «զունայնութիւն վայրկենի կենացս»<sup>160</sup>, գտնում էին, որ երկիրը կարելի է շենացնել միմիայն այն դեպքում, «յորժամ բանքն սպառին եւ գործքն թագաւորեն»<sup>161</sup>: Որքան արդիական են հնչում խորիմաստ այս բառերը:

## ԺԷ Տաթեւի վանքը իբրեւ հոգեւոր-մշակութային կենտրոն



Տաթեւի վանք. գավազան-սյունը (IX դ.)

Մատենագրական աղբյուրներում Տաթեւը հիշատակված է Եւստաթէ, Եւստաթես, Ստաթեւ անվանումներով: Եկեղեցական պատմության համաձայն՝ Եւստաթեսը Թադեսու առաքյալի աշակերտներից էր (յոթանասուհից մեկը), որը քրիստոնեությունը տարածելու ժամանակ նահատակվեց Սյունյաց աշխարհում: Ժողովրդական ստուգաբանությամբ՝ Տաթեւ (տա-թեւ) անունն առաջացել է մոտակայքում գտնվող Հարսնաքարի (Հարսնաձորի) մասին եղած ավանդապատումից, որին անդրադարձել է նաեւ Ստեփանոս Օրբելյանը:

Տաթեւի վանքը վարչատարածքային բաժանմամբ մտել է Մեծ Հայքի Սյունիքի նահանգի Ծղուկ (հետագայում՝ Հաբանդ) գավառի մեջ: Գտնվում է այժմյան Գորիսի շրջկենտրոնից հարավ-

արեւմուտք՝ շուրջ 18 կմ հեռավորությամբ: Վանքի հիմնադրումը վերագրվում է 4-րդ դարին: 5-8-րդ դդ., թեեւ Սյունիքի հոգեւոր կենտրոնը Շաղատ գյուղաքաղաքում էր (այժմյան Սիսիանի ենթամարզի համալսումնալսող), սակայն Տաթեւը միջնադարում համարվել է «զուլփն ամենեցունց վանորէից»: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ-Պարթեւը Սյունյաց վարդապետարանին են առաջինը վստահել Աստվածաշնչի հա-



*Տարթի վանք. Ս. Ասրվաճաճին եկեղեցին (1087 թ.)*



*Տարթի վանք. Պողոս-Պետրոս տաճարի զանգերից մեկը (1304 թ.)*


յերեն թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանության»:

839 թ. Դավիթ Սյունյաց եպիսկոպոսը՝ գահակալ իշխանների համաձայնությամբ, Նահանգի հոգեւոր կենտրոնը Շաղատից տեղափոխեց Տաթեւ: 844 թ. Փիլիպե գահերեց իշխանը Նորահաստատ եպիսկոպոսարանին նվիրեց համանուն գյուղը, իսկ 4 տարի հետո՝ 848 թ. ավարտին հասցրեց Ս. Գրիգոր եկեղեցու կառուցումը, որը հետագայում երկրաշարժից փլուզվեց:

Տաթեւի հոգեւոր եւ ուսումնական կենտրոնի դերը բարձրացավ 9-րդ դարի վերջին քառորդին եւ 10-րդ դարի սկզբին, երբ Հովհաննես մետրոպոլիտի ջանքերով եւ Աշոտ շինարար

իշխանի աջակցությամբ կառուցվեց Պողոս-Պետրոս մայր տաճարը (895-906): Տաթեւի վանքը Նորից փայլեց. «ինչպես արեգակն աստղերի մեջ»: Երամ-երամ այստեղ հավաքվեցին երկրի գիտնական այրերը՝ «անյաղթ փիլիսոփաները, աննման երաժիշտները, բանիբուն վարդապետները», որոնք սկսեցին դասավանդել Նորաբաց դպրոցում: Այս շրջանում, ինչպես նշել ենք, Տաթեւի միաբանությունն ուներ 500 անդամ:

932 թ. Հակոբ Ա (Հակոբ Ապստամբ) եպիսկոպոսը Սյունյաց Փիլիպե Բ իշխանից (Վասակի որդուց) 12000 դրամով եւ մի «պատուական գոհար»-ով գնեց Վարարակնի ջուրը (ակունքը) եւ կապե փողրակներով տեղափոխեց Տաթեւ ոչ միայն խմելու, այլեւ Ցաքուտ կոչված հանդամաւի (120 հա) անջրդի հողերը ոռոգելի դարձնելու նպատակով: 958 թ. Սյունյաց եպիսկոպոս ընտրվեց Վահան Ջեանշերյանը՝ Բաղքի տիրակալ Ջազիկի թոռը, որին հետագայում վիճակվելու էր բազմել կաթողիկոսական գահին: Վահանն առավել ընդլայնեց Սյունյաց աթոռի կալվածները:



Տաթևի վանքի՝ Յարոյր քերված քրատարի արձանագրությունը (1294 թ., Գորիս)

Տաթևը նոր վերելք ապրեց Սյունիքի թագավորության շրջանում: Գահակալներ Սմբատ Ա-ն (970-998), Վասակը (998-1040), Սմբատ Բ-ն (1040-1051), Գրիգոր Ա-ն (1051-1072) եւ Սենեքերիմը (1072-1094) իրենց առատաբուխ նվիրատվություններով Տաթևի վանքը դարձրին Հայաստանի ամենախոշոր կալվածատերը, որն իր ունեցվածքով համարձակորեն կարող էր մրցել հայրապետական աթոռի հետ: Նրա միաբանների թիվն անցավ 1000-ից: Եպիսկոպոսարանին տասանորդ տուրք էին տալիս 680 գյուղեր, իսկ սեփական ջեների քանակն անցնում էր 40-ից: Նրա հարուստ գրապահոցներում մատենադարանում հավաքվել էին բազմահազար մագաղաթյա մատյաններ, որոնցից միայն 10000-ը այրվեց Բաղաբերդ ամրոցում 1170 թ. սեզոնկ-թուրքերի ներխուժման ժամանակ:

13-րդ դարում Սյունյաց աթոռը տրոհվեց երկու մասի. առաջացան Տաթևի եւ Նորավանքի առանձին եպիսկոպոսությունները, իսկ ապա Պռոշ հաղթակյան իշխանի առաջարկությամբ ստեղծվեց Երնջակի աթոռը: Այս պառակտումը խիստ անհանգստացրեց հատկապես Օրբելյան իշխաններին եւ նորընծա Ստեփանոս մետրոպոլիտին, որոնք բողոքեցին կաթողիկոսին: Հայոց հայրապետը մեղադրական թուղթ հղեց Պռոշ իշխանին՝ առաջարկելով հետ կանգնել նման արարքից:



Գրիգոր Տաթևացին համալսարանի ունկնդիրների հետ: Մաքենադարանի N1203 ձեռագիր (1449 թ.)

վար Սարգիսը, ապա նաեւ՝ Գրիգոր Խլաթեցին (Ծերենց), Հակոբը, Մարգարեն, Հովհաննեսը, Մկրտիչը, Կարապետը, Մելիքսեթը, Թումասը եւ ուրիշներ:

Տաթևի համալսարանում ուսանելու էին գալիս ոչ միայն Հայաստանի գավառներից, այլեւ հեռավոր գաղթօջախներից: Այստեղ կարող էին սովորել անխտիր բոլոր դասերի ու խավերի ներկայացուցիչները:

Հովհ. Որոտնեցու մահվանից հետո (1386 թ.) Տաթևի ուսումնագիտական կենտրոնն սկսեց ղեկավարել Գրիգոր Տաթևացին, որը 28 տարի շարունակ աշակերտել էլ համագործակցել էր իր մեծ ուսուցչապետի հետ:

Լենկթեմուրյան ասպատակությունների շրջանում Տաթևի մտավորական այրերն իրենց սաների հետ միասին ստիպված էին վարել աստանդական կյանք. նրանց տեսնում ենք երբեմն Շահապոնքում, Երնջակում, մերթ Որոտնավանքում կամ Օծոփա վանքում: Ամենուր վիստում էին արեւելյան մեծ բռնակալի, ինչպես նաեւ Կարա-Կոյունլու եւ Ակ-կոյունլու թուրքմենական արյունալի ցեղախմբերի ելուզակները, որոնց ռազմական բախումների թատերաբեմը՝ ճակատագրի բե-



*Տաթևի վանք. խաչքար ծաղկավոր արշալույսաբերողով՝  
կանգնեցված ի պատիվ Հայրապետ Կալիստոսի (1269 թ.)*

րումով, դարձյալ հայոց լեռնաշխարհն էր: Համալսարանի հոգաբարձուներ Օրբելյան (Բուրթելյան) իշխանները, թեև գրկված էին բազում տիրույթներից եւ ապարանքներից, այնուամենայնիվ, ջանքեր էին գործադրում՝ սատար կանգնելու նվիրյալ տաթևացիներին: Գրիգոր Տաթևացին դիմեց իշխան Սմբատ Օրբելյանին, որն այս անգամ կրկին չմերժեց մեծ ուսուցչապետին եւ մասնհանում կատարեց իր ունեցած սուղ միջոցներից:

Գրիգոր Տաթևացու մահվանից հետո (1410 թ.) համալսարանի գլուխ կանգնեց Մխիթար Տաթևացին (մինչեւ 1425 թ.), ապա՝ Եգեկիել վարդապետը: Թովմա Կաֆայեցու վկայությամբ՝ 1421 թ. Տաթևի առաջնորդ էր Բեշքեն Օրբելյան իշխանի եղբայր Տեր-Ստեփանոսը, որին վիճակվելու էր միաբանությունը ղեկավարել կարճ մի ժամանակամիջոց:

1434 թ. Լենկթեմուրի որդի Շահռուխի զորքերը ասպատակեցին նաեւ Սյունյաց լեռնաշխարհը, կողոպտեցին եւ հրկիզեցին Տաթևի վանքը, սրատեցին կրոնավորներին: 1435 թ. Տաթևի համալսարանը փակվեց: 1436-1437 թթ. Բեշքեն Օրբելյանի գլխավորությամբ Լոռի գաղթեցին Սյունյաց 6000 ընտանիքներ: Նրանց հետ հեռացան նաեւ Տաթևի միաբանության անդամները՝ Շմավոն Սևգեղակոթցու առաջ-

նորդությամբ: Նրանց վիճակը բարվոքելու համար մեծ ջանքեր գործադրեց Բեշքեն իշխանի որդի Ռուստամը, որը, ինչպես նշվեց, Կարա-Իսկանդարի արքունիքում վարում էր մեծ վեզիրի պաշտոնը: Նա՝ Տաթևի միաբանությանը, ինչպես նաեւ հայրապետական աթոռին, նվիրաբերեց մի շարք գյուղեր՝ կասկած չհարուցելու համար դրանց առումախը ձեռակերպելով շարիաթի պահանջներին համապատասխան: Սակայն երկրում տիրող քաղաքական իրավիճակը թույլ չէր տալու Տաթևի համալսարանի վերաբացումը...

Հետագայում հայացք գցելով Տաթևի ընտիր մտավորականության անցած ճանապարհին՝ հստակորեն տեսնում ենք, թե ինչպիսի դեր կատարեցին նրա պայծառ սաները՝ Մխիթար Տաթևացին, Հովհաննես Հերմոնեցին, Գալուստ եւ Հակոբ Վաղատնեցիները, Միսեոն Սյունեցին, Հակոբ Բստացին, Գրիգոր Արարատցին, Մատթեոս Ջուղայեցին, Ավետիս Աստապատցին, Եղիա Օծուխեցին, Հունան Շամախեցին, Հովհաննես Կարմիրը, ինչպես նաեւ Սովսես Տիգիսեցին, Մկրտիչ Փայտակարանցին, Ստեփանոս Դավիթեցին եւ ուրիշներ:

Տաթևի համալսարանի փայլուն դեմքերից էր արքեպիսկոպոսական աստիճանի արժանացած բանաստեղծ, փիլիսոփա, քերական եւ երաժշտության տեսաբան Առաքել Սյունեցին՝ ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու քեռորդին:

Ի դեպ, 1787 թ. այժմյան Միսիանի ենթամարզի Բռնակոթ գյուղի բնակիչները՝ Հովակիմ եպիսկոպոս Սյունեցու նախաձեռնությամբ, Տաթևի վանքում կառուցեցին Գրիգոր Տաթևացու դամբարան-մատուռը, որի վրա անուն առ անուն հիշատակված են շինարարությանը մասնակցած բոլոր անձինք:


Տաթևի համալսարանի երեք լսարաններում (ներքին եւ արտաքին գրոց, գրչության արվեստի, երաժշտության) ուսումնասիրության առարկա են եղել գերազանցապես հասարակական գիտությունները՝ փիլիսոփայությունը, ճարտասանությունը, քերականությունը, պոետիկան, մանկավարժությունը, մայրենի լեզուն, գրականության պատմությունը, գրչության արվեստը, գեղագիտությունը, գրքերի գեղարվեստական ձեավորումը, մանրանկարչությունն ու գեղանկարչությունը, ինչպես նաեւ երաժշտության տեսությունը: Համալսարանն ունեցել է իր կանոնադրությունն ու ծրագիրը: Կանոնադրության համաձայն՝ համալսարանը պատրաստել է վարդապետներ, քարոզիչներ, քահանաներ, մանկավարժներ, գրչության արվեստի մասնագետներ, երաժիշտներ: Ուսման տևողությունը եղել է 7-8 տարի: Առանձին տարիներին ունեցել է 150-300 ունկնդիրներ: Իբրեւ դասագրքեր՝ համալսարա-



Վահանաղանք: Արմատարտի-դամբարանարանը (X-XI դդ.)

Նում կիրառվել են Աստվածաշունչը, Արիստոտելի, Փիլոնի, Պորփյուրի եւ այլոց մեկնությունները, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը», «Ոսկեփորիկը», այլեայլ աշխատություններ:


Տաթևի ուսումնական հաստատությունը, ընդհատումներով, տեւեց մինչեւ 1911-1912 թթ.: Նրա երբեմնի հարուստ գրադահոցներից 140 ձեռագիր տեղափոխվեց Նախ' Էջմիածին, ապա՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան: Դրանք վերաբերում են գիտության եւ մշակույթի ամենատարբեր բնագավառներին:



Վահանաղանք: Սեւ փամարի գավիթը եւ Էջմիածին տրոսիան ընդունարան

## ԺԸ. Վահանաղանք

Սյունյաց Նահանգի Նշանավոր վանական միաբանություն եւ դպրության կենտրոններից է Վահանաղանքը: Գտնվում է այժմյան Կապան քաղաքից հարավ-արեւմուտք 5 կմ հեռավորությամբ՝ Տիգրանասարի լանջերին: Հիմնադրել է Սյունյաց Նահանգի Բաղը գավառի գահակալ իշխան Չազկի որդի Վահանը, որի անունով էլ կոչվում է Վահանաղանք: Վանքի գլխավոր եկեղեցուն՝ ս. Գրիգորի շինության ավարտը տեղի է ունեցել 911 թ.: Այն արտաքուստ քառանկյուն, ներքուստ՝ խաչաձեւ հորինվածքով կենտրոնագմբեթ կառույց է, որի արեւմուտքից մեծամեծ ժայռաբեկորներով կերտված գավիթն է (108 քմ)՝ կառուցված 950-ական թթ այս «մեծ ուխտի» վանահայր եւ Սյունյաց մետրոպոլիտ Վահան Ջեւանշերյանի (ապագա կաթողիկոս) ջանքե-



Վահանավանք. Ս. Աստվածածին կրկնահարկ դամբարան-եկեղեցին (1086 թ.)

րով: Հարավից ընդարձակ սյունասրահն է (140 քմ), որը միաժամանակ ծառայել է իբրեւ դամբարան ազնվազարմ իշխանների եւ թագավորական ընտանիքների համար: Կառուցված է նույնպես մեծամեծ սրբատաշ ժայռաքեկորներով: Ճարտարապետական հորինվածքով՝ մեծ տաճարի գավիթն ու սյունասրահը ուրույն տեղ են զբաղեցնում հայ միջնադարյան շինարվեստի պատմության մեջ:

1046 թ. Սմբատ Բ Սյունյաց թագավորի գահակալության տարիներին (1040-1051) նրա եղբայր, իշխանաց իշխան Գրիգորը (ապագա թագավոր Գրիգոր Ա՝ 1051-1072) ծավալում է վերականգնման աշխատանքներ: Այս մասին վկայում է պեղումների քննաքննում հայտնաբերված հետեւյալ հիշատակագրությունը.

*«ԹՎԱԿԱՆԻՆՆԸ՝ ՆՂԵ՝ (1046). Ողորմեա քրիստոս ախորում Սմպարա թագաւորի եւ իւր եղբայրի Գրիգորո՛ շինող սր՝ եկեղեցոյս, սրահիս եւ ժամատանն: Որք մգանէր յարկիս սրբութեան զոցոս յաղարս յիշեցէք»<sup>162</sup>:*

Վանական համալիրի մյուս՝ այժմ վերականգնված եկեղեցին Ս. Աստվածածինն է՝ թաղածածկ, կրկնահարկ մի կառույց, որի շինու-

թյունն ավարտի է հասցվել 1086 թ.՝ Սյունյաց թագուհի Ճահանդուխտ Բ-ի եւ նրա քույր «սրբասնունդ օրիորդ» Կատայի ջանքերով: Հյուսիսից եւ արեւելքից ունեցել է սյունազարդ պատշգամբ, որի ճարտարապետական մանրամասները պահպանվել են: Եկեղեցու արեւմտյան գավթում թաղված է Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը, որը Արցախից Կապան էր ժամանել՝ «նեղեալ ի Տաճկաց»:

Վահանավանքի միաբանությունն ունեցել է ավելի քան 100 անդամ, կից գործել է վանական դպրոցը, ուր ուսանել են ոչ միայն Բաղք, այլեւ մյուս գավառների պատանիները: Նպաստավորողները եղել են Ձագիկյան իշխաններն ու Սյունյաց եպիսկոպոսական աթոռը: Այս դպրոցի սաներից էր կաթողիկոս Վահան Սյունեցին, որը հայրապետական գահին բազմեց Անանիա Մոկացուց հետո: Վահանավանքն աստիճանաբար դառնում է «իբրեւ քաղաք բազմաժողով»: Ըստ նորահայտ վիճագրերի՝ Վահանավանքի տարածքում եղել են եւս երկու եկեղեցիներ՝ Ս. Հարություն եւ Ս. Սիոն, որոնց ստույգ տեղադրությունը դեռեւս պարզված չէ: Միաբանությունն ունեցել է խոշոր կալվածային տնտեսություն, մի քանի սեփական գյուղեր, բազմաթիվ հանդեր ու արտավայրեր:

Դեռեւս 10-րդ դարի 50-ական թթ. կավե փողրակներով քաղցրահամ ջուր է բերվել Տիգրանասարի ակունքներից՝ վանքի կարիքների համար: Այդ աղբյուրը մինչեւ օրս բխում է նույն ժամանակաշրջանում պատրաստված քարե տաշտակի մեջ:

Վահանավանքը հայտնի է նաեւ իբրեւ դամբարանատուն: Պեղումների քննաքննում հայտնաբերվել են Վահան Նախաշինողի, Սահակ Սեւադա Բ-ի, Սոփի թագուհու, իշխանաց իշխան Աշոտի (Աշոտիկի), նրա թագակիր որդիներ Սմբատ Բ-ի եւ Գրիգոր Ա-ի, Վաչագան իշխանի մայր Խուշուշի, մի շարք վանահայրերի՝ Ստեփանոս, Գեորգ, Հովհաննես, Սողոմոն Մարեջրեցի եւ այլոց տապանաքարերը: 1966 թ. այստեղ կատարվում են պեղումներ, 1978-ից թ.՝ վերականգնման աշխատանքներ:

## ԺԹ. ՅԵՐՄՈՆԻ ՎԱՆԵ


Միջնադարյան Հայաստանի հայտնի վանական միաբանությունն էլ գրչության կենտրոն է եղել Յերմոնի դպրեվանքը: Մատենադարանական աղբյուրների համաձայն՝ Յերմոնի վանք կոչվել է այստեղ հաստատված եղբայրության ավագագույն անդամի՝ Յերմոնի կամ Երամոնի անունով: Հորջորջվել է Նաեւ Զարեվան: Հիշատակվում է 936 թ.: Գտնվում է Եղեգիս գետի հովտում՝ Արառես տանող ճանապարհի ձախակողմյան լեռնալանջին: Ստույգ տեղադրությունը որոշել է 1950-ական թթ. վիմագրագետ-պատմաբան Ս. Բարխուդարյանը:

Վանական համալիրի գլխավոր եկեղեցին կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով: Այն կառուցված է Սյունյաց գահերեց իշխան Սմբատի եւ նրա տիկնոջ՝ Սոփիայի ջանքերով՝ թափառական ճգնավորների համար: Ընկության նախաձեռնողը եղել է Հակոբ Ա Սյունյաց եպիսկոպոսը: Նորահաստատ վանական եղբայրությունն աստիճանաբար ձեռք է բերում եկամտի աղբյուրներ՝ տեր դառնալով ընդարձակ կալվածների: Յերմոնի վանական շինություններից մեզ են հասել կիսավեր Ս. Գրիգոր տաճարը, ուսումնական եւ տնտեսական կառույցների մնացորդները:

Հայ մշակույթի պատմության մեջ առանձնակի տեղ են գրավում Յերմոնի գրչության օջախն ու դպրեվանքը, որոնք մեծ հռչակ նվաճեցին առավելապես 14-րդ դարի 2-րդ կեսին՝ Գլաճորի համալսարանի շրջանավարտ, վարդապետ Տիրատուր Կիլիկեցու (մահ. 1372 թ.) առաջնորդության տարիներին: Ձեռագիր մատյաններում եւ բանավոր գրույցներում նորավեպեր են պահպանվել այս նվիրյալ անձի մասին:

Յերմոնի դպրեվանքը գործել սկսեց դեռեւս Գլաճորի համալսարանի մայրամուտին՝ 1338 թ.: Գրիչ Մովսեսը հիշատակում է, որ 1349 թ. սովորել է Յերմոնի վանական դպրոցում, ուսուցչապետ Տիրատուրի մոտ: Յերմոնի վանքը համահայաստանյան ճանաչում ստացավ 15-րդ դարի 40-ական թթ., երբ եղբայրությունը գլխավորեց Հովհաննես Յերմոնեցի մեծանուն վարդապետը, որը խոշոր դեր կատարեց հայրապետական աթոռը Կիլիկիայից Էջմիածին տեղափոխելու գործում (1441 թ.):

Յերմոնի գրչության օջախում սովորել եւ աշխատել են բազմաթիվ գրիչներ, ծաղկողներ՝ Գրիգոր Ախալցխացի, Սիմեոն րաբունապետ Տաթեւացի, Հովհաննես Երզնկացի եւ ուրիշներ: 15-րդ դարի 70-ական թթ.՝ Սարգիս րաբունապետի վանահայրության տարիներին, փայլեցին



Նորավանք (Վայոց ձոր), խաչքար-  
քանդակագործ Մովսիս

հիշատակվում են տեր-Ղամիթը եւ տեր-Եսային:

գրիչներ Զաքարիան, Անանիան, Հովհաննեսը: Մեզ են հասել Յերմոնի վանքում օրինակված շուրջ 30 ձեռագիր մատյաններ: Մատենադարանական եւ վիմագրական աղբյուրների համաձայն՝ այս վանական միաբանությունը նյութական մեծ աջակցություն է ստացել Նաեւ Օրբելյան իշխաններից, որոնք հովանավորել են նրա գործունեությունը:

1423 թ. ձեռագիր հիշատակարաններից մեկում նշված է, որ Յերմոնի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու կամարների տակ հանգչում են ականավոր վարդապետներ Տիրատուրը, Բարսեղը, Սուլթանշահը եւ ուրիշներ, որոնց շիրիմները ծածկված են փլատակներով:


Յերմոնի վանքը եւ նրա գրչության օջախը գոյատևեցին ավելի քան 2 դար: Պատմության ասպարեզից նրանք հեռացան 16-րդ դարի ավարտին՝ քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով: Վերջին առաջնորդներից

## Ի. ՆՈՐԱՎԱՆԵ ԱՄԱՂՈՒԻ

Պատմական սկզբնաղբյուրների վկայությամբ՝ Սյունիքում եղել է երեք Նորավանք, որից երկուսի ստույգ տեղադրությունը որոշակի հայտնի է, իսկ երրորդինը՝ դեռեւս բացահայտված չէ:

Կառուցման վաղեմության առումով առաջինը՝ Բղենո Նորավանքն է, որը գտնվում է Կապան-Գորիս մայրուղու ձախակողմյան՝ դեպի Բարձրավան (Նախկին Երիցաթումբ) գյուղ գնացող ճանապարհի անտառախիտ վայրում, որը տեղացիները կոչում են ՂԺժիսաձոր: Եղել է





Նորավանք (Վայոց ձոր)

գրչության օջախ: Այստեղ է 982 թ. օրինակվել Էջմիածնի փղոսկրյա կազմով ավետարանը, որը պահպանվում է մաշտոցյան Մատենադարանում: Հուշարձանը հարուստ է պատկերաքանդակներով և վիմական արձանագրություններով, որոնց մեջ աչքի է ընկնում Գրիգոր Ա Սյունյաց թագավորի 1062թ. շինարարական վիմագիրը:

Եպիսկոպոսանիստ Նորավանքը գտնվում է Եղեգնաձորի ենթամարզի Ամաղու գյուղի ձորահովտում՝ բարձր ժայռերի ստորոտում: Այստեղ վաղնջական ժամանակներից եղել է Փոկաս Հայրապետի անվամբ փոքրիկ մի եկեղեցի, որի բեմի տակից ջրի հետ միասին բխել է «ձեթ բժշկարար» (կարծում ենք՝ նավթ):

Սյունյաց մայրաքաղաք Կապանի կործանումից հետո իշխանագուն Հովհաննես Եպիսկոպոսը՝ Հասան իշխանի որդին, Մեծ Համոռնի թոռը, որը Վահանավանքի առաջնորդն էր, տեղափոխվում է Վայոց ձոր և բնակություն հաստատում Հրաշկաբերդի (Հրասեկա բերդ) մերձակայքում՝ Նորավանքում հիմնադրելով Նոր վանական միաբանություն: Եկամտի աղբյուրներ հայթայթելու նպատակով՝ նա սեփականում է Գանձակ և Տխարբ գյուղերը, որոնք հարևատու էին վերոհիշյալ ամրոցի թուրք ամիրային:

Հովհաննես Եպիսկոպոս Կապանեցին, ընդհարումից խուսափելու նպատակով, մեկնում է Սպահան՝ սուլթան Մուհամմեդ-Ջահան Փախլավանի մոտ (1174-1186), խնդրում է աջակցել՝ հեռացնելու այդ վայրերից աշխարհական մարդկանց, սակայն բերդատեր թուրքը ձերբակալում է Հովհաննեսին և նույնիսկ ստիպում ուրանալու քրիստոնեությունը: Մի կերպ փախչելով թուրքերի ձեռքից՝ նա վերստին ներկայանում է սուլթանին, որի որդուն բուժելուց հետո, զինաջոկատի ուղեկցությամբ վերադառնում է Վայոց ձոր, հրամայում ձերբակալել բերդի տիրոջը և անմիջապես գլխատել:

Նորավանքի կալվածներն աստիճանաբար ընդարձակվում են:

1211 թ. հայ-վրացական միացյալ զորքերը՝ Ջաջարյան եղբայրների գլխավորությամբ, ազատագրում են Սյունյաց լեռնաշխարհը: Վայոց ձորը թուրք-սելջուկներից մաքրում են Վասակ Խաղբակյանն ու Ախթամար Արվիսեցին: Նորավանքն ապրում է Նոր կյանք: 1214 թ. վախճանվում է Հովհաննես Եպիսկոպոսը:

Նորավանքը մտնում է Օրբելյան իշխանների տիրույթների կազմի մեջ: 1216-1221 (1223) թթ. Լիպարիտ Օրբելյանը Սարգիս Ա Եպիսկոպոսի ցանքերով կառուցում է Ս. Կարապետ գլխավոր եկեղեցին: Նավակատիցի ժամանակ Նորավանքի վանական միաբանությունը ազնվական իշխաններից ստանում է Նորանոր տիրույթներ, ընդարձակ կալվածներ: Մինչ այդ՝ ամիրսպասալար Ջաջարե Ջաջարյանը Նորավանքին էր շնորհել Ագարակաձոր գյուղը (նույնանուն գյուղ Եղեգնաձորի ենթամարզում): Լիպարիտ իշխանի աներ Բուպան (Բուպաք) վանքին է ընծայում Աղբերիս բնակավայրը:

1261 թ. իշխանաց իշխան Սմբատ Օրբելյանի միջոցներով կառուցվում է Ս. Կարապետի արեամտյան գավիթը, որը հայկական ճարտարապետության լավագույն նմուշներից մեկն է հանդիսանում:

Նորավանքը շարունակում է ընդարձակ կալվածների տեր դառնալ Սարգիս Բ Եպիսկոպոսի առաջնորդության տարիներին: Այս շինարար հոգեւորականը կառուցում է վանքի հյուրատունը և Արվա (Արենի)



գյուղի կամուրջը: Սարգիս Բ-ն այլոց հետ միասին ստորագրեց Գրիգոր կաթողիկոս Անավարզեցուն հղված պատասխան-թուղթը, որով մերժվեց ճանաչել Հռոմի պապի գերիշխանությունը հայ առաքելական անկախ եկեղեցու վրա: Այս շինարար եպիսկոպոսը թաղված է Օրբելյան իշխանների տոհմական դամբարանատանը: Տապանաքարին գրված է. «Այս շիրիմ շնորհավոր Մարգարիտ Միսնեաց եպիսկոպոսի և»



Մարգարավոր Մարմաճաճնի վանք. (1321 թ.), ճարտարապետը Մոմիկ: Այսօր էլ են աճիտիված ուղարակներ Գարեգին Նոյեմի մատուցները:



Մարգարավոր Մարմաճաճնի վանք. եկեղեցու արևմտյան շրանուրրը, ճարտարապետ-քանդակագործ Մոմիկ

անյաղը հոնպորի. ԹՎ. ՉԽԷ (1298)»<sup>163</sup>:

13-րդ դարի երկրորդ կեսին շարունակվում էր անհաշտ պայքարը որավանքի եւ Տաթեւի եպիսկոպոսութիւնների միջեւ: Այդ վեճին էրջ է տալիս Այունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը (1287-

1303), որը միավորում է երկփեղկված թեմը՝ մեկ գավազան, մեկ հոգեւոր հովիվ նշանաբանով:

Նորավանքի առավել հայտնի կառույցներից է «Բուրթելաշեն եկեղեցին», որը, հավանաբար Մովսիս ճարտարապետի նախագծով, կառուցվեց 1339 թ. Բուրթել Մեծ իշխանի նպաստավորությամբ: Այն կրկնահարկ է եւ կոչվում է Ս. Աստվածածին: Առանձնապես աչքի են ընկնում դեկորատիվ զարդանախշերը, բարձրաքանդակները եւ գիւնանշային քանդակները:

Վանական համակառույցի մեջ է 3-րդ եկեղեցին՝ Ս. Գրիգորը, որն առավել հայտնի է «Սմբատ արքայի դամբարան» անունով: Այն կառուցվել է 1275 թ. Սիրանես ճարտարապետի նախագծով եւ Տարսայի Օրբելյանի պատվերով:

Նորավանքն իբրեւ եպիսկոպոսանիստ կենտրոն՝ գոյատևեց ընդհուպ մինչեւ 15-րդ դարը, ապա աստիճանաբար խոնարհվեց եւ ամալացավ:

Ամաղու գյուղին տիրացան (այժմ հեռացել են) սելջուկ-թուրքական ազերական ցեղերը:

Նորավանքի հուշարձանախմբի երեք եկեղեցիներն էլ վերակառուցվել են կանադահայ Յաճեթյան ընտանիքի միջոցներով՝ ճանաչված ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի կազմած նախագծի համաձայն:

Վանական համալիրում աչքի են ընկնում մոմիկյան խաչքարերը եւ բազմաթիվ վիմագրություններ, որոնք հավաստի պատմական սկզբնաղբյուրներ են:

Նորավանքի դամբարանատանն են ամփոփված Լիպարիտ, Սմբատ, Տարսայի, Էլիկում Օրբելյան իշխանների, Ստեփանոս Օրբելյան պատմիչի, Հովհաննես Օրբելի եւ բազմաթիվ այլ բարձրաստիճան հոգեւորականների մարմինները:

## ԻԱ. ՍՊԻՏԱԿԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Սպիտակավոր Աստվածածինը պատմական Սյունիքի Վայոց ձոր գավառի գրչության հայտնի կենտրոններից եւ վանական միաբանություններից է: Գրավոր աղբյուրներում հիշատակված է նաեւ Սրկղոսից Ս. Կարապետ, Անապատ, Բոլորածորի կամ Բոլորաբերդի անապատ: Գտնվում է այժմյան Եղեգնաձորի երթամարզի Վերնաշեն (նախկին Սրկղոսք) գյուղից 7 կմ հեռավորությամբ հյուսիս՝ մի Նեղ կիրճի լանջի վրա: Սպիտակավոր պատմա-ճարտարապետական համալիրի պաշ-

տամունքային եւ տնտեսական կառույցներից առավել կարեւորներն են:

1. Ս. Աստվածածին եկեղեցին, որն արտաքուստ քառակուսի, ներքուստ՝ խաչաձեւ հատակագծով գմբեթակիր շինություն է: Կառուցված է 1321 թ. սպիտակավուն քարով (այստեղից էլ՝ Սպիտակավոր անունը)՝ Էաջի Պռոշյան իշխանի ընտանիքի ծախսով եւ հովանավորությամբ: Վիմական արձանագրություններում (1322 թ.) տաճարը կոչված է «Նորակունք Ս. Աստվածածին»: Ճարտարապետը Մովսիս է:

Էաջի Պռոշյանի գոհվելուց հետո (1318 թ.) վանքի շինարարությունը շարունակում է նրա որդի Ամիր-Հասան Բ-ն, որն իր տիկնոջ՝ Բոբայի հետ միասին, հանձին վանահայր տեր-Մկրտչի (1340-1343), տեղի եղբայրությանն ընծայաբերում է ընդարձակ կալվածներ: Տեր-Մկրտչի զվաճողի համալսարանի ուսուցչապետ Դավթի սաներից էր: Սպիտակավորին նյութապես օժանդակելու գործում անմասն չեն մնացել նաեւ Օրբելյան իշխանները:

2. Գավիթ. կառուցված է եկեղեցու արեւմուտքից, 1320-1321 թթ.: Պատերի մեջ կան որմնանկարներով ձեւավորված ոչ խոր, բայց ընդարձակ խորշեր, որոնք Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ հատուկ էին միջնադարյան մատենադարաններին:

3. Զանգակատուն. գմբեթակիր շինություն է՝ կառուցված 1330 թ. սրբատաշ սպիտակ քարով՝ հավատացյալ ամուսիններ Հովհաննեսի եւ Թաճի միջոցներով: Կանգուն է:

Եկեղեցին եւ գավիթը հարուստ են հոգեւոր եւ աշխարհիկ պատկերաքանդակներով. «Հիսուսը եւ չորս ավետարանիչները», «Իշխան Էաջին եւ նրա որդի Ամիր-Հասանը որսի ժամանակ» (գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում, կրկնօրինակը՝ Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժում): Պատկերաքանդակներից առավել կատարյալը եկեղեցու արեւմտյան շքամուտքի բարավորին քանդակված Աստվածամայրն է՝ մանուկ Հիսուսը գրկին:

Սպիտակավոր Աստվածածնի վանքը բուռն ծաղկում ապրեց հատկապես 15-րդ դարի 2-րդ կեսին մատենագիր Ավագտերի վանահայրության տարիներին: Մեզ են հասել այս գործունյա հոգեւորականի օրինակած ձեռագրերից մի քանիսը: Նա ուսանել է «երիցս երանեալ եւ քաջ հռետոր», «անյաղթ փիլիսոփա» Սարգիս րաբունապետի մոտ՝ Հակոբի եւ «նորաբոյս» Եսայու հետ միասին:

Ավագտերը ստեղծել է հայ գրչության իր դպրոցը: 1482 թ. օրինակած Ավետարանի հիշատակարանում գրիչ Աբրահամը նշում է, որ ինքը գրչության արվեստը, մասնավորապես՝ կազմարարությունը,

ձեռագրերը ոսկով զարդարելու մասնագիտությունը սովորել է Ավագտերից: Իր հերթին Աբրահամը պատրաստել է շնորհաշատ սասներ՝ Նահապետին, Գրիգորին, Վանականին (վերջինս հմտացել էր նաեւ թուղթ կոկելու մեջ) եւ ուրիշներին:

1493 թ., Ավագտերի մահվանից հետո, վանահայր է ընտրվում Զաքարիա արեղան: Ապա իբրեւ վանահայր է հիշատակվում Ավագտերի եղբորորդի Տեր-Ղավիթը, որը մինչեւ առաջնորդ ընտրվելը եղել է Սրկղոնքի Ս. Զակոբ եւ Ս. Գեւորգ եկեղեցիների սպասավոր:

Սպիտակավոր վանքում է հանգչում սպարապետ Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը (մյուս մասը ամփոփված է Կապանում խուստուկի լեռան լանջին):

## ԻԲ. Գրչության այլ օջախներ Սյունիքում

Գլաձորի համալսարանի քայքայումից հետո, մասնավորապես XIV դարի երկրորդ կեսին, գրչության օջախներ են առկայծում Ցաղաց քարում՝ Ներսես եպիսկոպոսի վանահայրության ժամանակ (1367թ.)<sup>164</sup>, Բարգուշատի Տանձափարախ կոչվող անապատում (1393թ.) եւ այլուր<sup>165</sup>: Նույն առկայծումները, սակայն բավականին դժգունած եւ խամրած արտահայտությամբ, երեւում են Զայկական լեռնաշխարհի այլեւայլ հատվածներում: XV դարի սկզբից կրկին աշխուժանում են դպրության կենտրոնները, հանդես են գալիս խոշոր մտածողներ, Նորանոր գրիչներ<sup>166</sup>, ծաղկող-նկարիչներ եւ այլք, բայց համահայաստանյան մասշտաբով, ինչպես XIII դարի վերջին քառորդին եւ XIV դարի առաջին տասնամյակներին՝ մշակույթի ու գրչության ընդհանուր վերելք այլեւս չի կրկնվում: Դա գլխավորապես բացատրվում է երկրի սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմանների առկայությամբ: Այնուամենայնիվ, փոքրիշատե քաղաքական անկախություն ունեցող հայ ավատական տներն իրենց տիրույթների սահմաններում աշխատում էին պահպանել ժողովրդի նյութական արժեքները, հոգետր մշակույթը, հայրենի դպրությունն ու ազգային ոգին:

Բնութագրելով Զայաստանի քաղաքական վիճակը XV դարում ակադ. Լ. Խաչիկյանը միանգամայն իրավացիորեն գրում է. «Սխալ կլիներ կարծել, թե պատմական Զայաստանն իր բոլոր նահանգներով լիովին զրկվել էր սոցիալ-տնտեսական իր ինքնությունից եւ դարձել քոչվորական կենցաղով ապրող տիրապետողների տնտեսական-վարչական սիստեմի դիմագուրկ կցորդը»<sup>167</sup>: Այս դրույթը հավաստելու համար՝ կարելի է օրինակ բերել Սյունիքում ավատական տների ջանքերով նվաճված քաղաքական այն կիսանկախ վիճակը, որ վճռական դեր խաղաց նաեւ գիտության ու մշակույթի պահպանման եւ զարգացման գործում:

Արդյո՞ք այս չէր հիմնական նախապայմանը, որ նույնիսկ XV դարի երկրորդ կեսին՝ այլալեզու եւ այլադավան ցեղերի ասպատակությունների պայմաններում, Զայկական լեռնաշխարհում չէին դադարում գործել դպրության ու մշակույթի լուսատու օջախները<sup>168</sup>: Այդ օջախներից մեկն էր Վերին Նորավանքը, որն իր գոյությունը պահպանեց ընդհուպ մինչեւ XV դարի վերջը: Տոնացույցներից մեկի



Թանախարի վանք. Ս. Սրբիմանուս եկեղեցին (XII դ., Վալդից շոր)



Յաղաց բար, իսաչրար (Վալդից շոր)

գրիչ Մատթեոսը վկայում է, որ իր աշխատությունը «գրեցաւ ի Վերին Նորավանս, թվին ԶԵ (1456)»<sup>169</sup>: Վերին Նորավանքում ապրել ու գործել է գրիչ Ռահանեսը, որը 1470թ. օրինակած Մաշտոցի հիշատակարանում հանգամանորեն նշում է Ուզուն Զասանի ասպատակությունների մասին<sup>170</sup>: Մի շարք վկայություններ են պահպանվել մասնավորապես Սարգիս անվան հիշատակմամբ<sup>171</sup>, երբ նա դեռեւս ղեկավարում էր Վայոց ձորի Բոլորաբերդի միաբանությունը: Այստեղ օրինակված ձեռագրերից մեկի հիշատակարանում ասված է, որ Սարգիս վարդապետը «որպէս արեգակն փայլէ յազգս Զայոց»<sup>172</sup>:

Այս ժամանակաշրջանում գրչության արվեստը վերընթողվեց նաեւ Եղեգիս գյուղաքաղաքում, ուր արտագրվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Մատթեոս Շրվանեցի գրիչը հիշատակագրում է, թե ավետարանի արտագրությունն ավարտել է «յերկիրս Եղեգեց, ի գեղս Եղուձոր, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, ի թվականութիւնս Զայոց ԶԹ (1460), ի հյուպատոսութեան տէր Գրիգորի, ի խանութին Զհանշին»<sup>173</sup>: Այստեղ հիշատակվում է նաեւ Յակոբ ծաղկողը<sup>174</sup>: 1472 թ. Եսայի Նաղաշը նկարազարդում է գրիչ Մատթեոսի օրինակած «Գանձարանը»<sup>175</sup>: Եղեգիսում մատյաններ են գրվել եւ օրինակվել նաեւ 1495թ.<sup>176</sup>: Սյունյաց Շողակ գավառի Արեւիս գյուղի ս. Գրիգոր եկեղեցում 1471թ. Գալուստ քահանան արտագրում է մի ավետարան<sup>177</sup>: 1487թ. Արեւիսում է աշխատել նաեւ գրիչ Զովնաթանը<sup>178</sup>: «Ի յաթոռակալութեան Սիւնեաց Որդանան վարդապետի» Զաշաթաղ գավառի Խոզանավար (հիմա՝ Խոզնավար) գյուղում 1488 թ. մատյաններ է օրինակել Եղիա գրիչը<sup>179</sup>: Շարունակում է գոյատևել Թանատի վանքի գրչագրական արվեստը<sup>180</sup>: Գրիչ Ստեփանը վկայում է, որ ինքն աշխատել է «վշտահար ժամանակիս, զոր նեղիմք յանիրաւ պահանջողաց»<sup>181</sup>: Ձեռագրեր են արտագրվել «ի երկիրն Գեղամայ, ի գեաղաքաղաքիս Նորատունս»<sup>182</sup>: Մելիքսեթ արքեպիսկոպոսի աթոռակալության տարիներին այս գավառում է գործել Մանվել գրիչը<sup>183</sup>: Գեղարքունիքի Մաքենյաց վանքում 1496 թ. հիշատակվում է Ալեքսանոս գրիչը<sup>184</sup>: Վերջինս 1498-1499 թթ. հիշատակարաններից մեկում նշում է, թե ինչպես իշխողներն այս գավառի բնակիչներին ստիպում են տալ երեք տարվա հարկը երեք ամսվա ընթացքում<sup>185</sup>: Գրչության վայրերից էր Գեղարքունիքի Կածիք (այժմ Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջան, գյուղ Աստղածոր) գյուղը, որտեղ մատյաններ է արտագրել Վանական գրիչը: Իր հիշատակագրություններից մեկում նա ակնածանքով է խոսում «րաբոյնապետ» Աբրահամի, ինչպես նաեւ երկու Զովհաննեսների մասին, որոնք կազմել ու նկարել են իր օրինա-

կած ավետարանը<sup>186</sup>: Ի դեպ, Աբրահամ նկարիչը հիշատակվում է նաեւ Սեւանա վանքի 1498 թ. օրինակված մատյաններից մեկում<sup>187</sup>: Վերոհիշյալ գրիչ Վանականը, խոսելով Ակ-Կոյունլու Յաղութ Բեկի (1478-1490) որդի Մուրադ խանի արշավանքների եւ ավարառությունների մասին, նշում է այն գավառները, որոնք առանձնապես տուժել են այդ բռնակալի հրոսակների կողմից՝ Շամախուց մինչեւ Վայոց ձոր, ուր բնակիչներն իրենց կյանքը փրկելու համար՝ «փախեան ամենայն երկիրս ի լերինս եւ ի ծերպս վիմաց»<sup>188</sup>: «Զաւուրս Լ(30) փաղցելով գրծագրեցաք»- գրում է նա Փանծաթաղում եւ Շակքարում կազմած իր հիշատակարանում<sup>189</sup>:

Մատյաններ են օրինակվում Սյունիքի Զարատնիս գյուղում (1280թ.)<sup>190</sup>, Թանատի վանքում (1301թ.)<sup>191</sup>, Գնդեվանքում, ուր գործել է Գրիգոր գրիչը<sup>192</sup>: XIV դարի սկզբներին ձեռագրեր են արտագրվում նաեւ «յերկիրս Կապանուց»: Զակոբ գրիչը 1322 թ. օրինակած ավետարաններից մեկի հիշատակարանում նշում է, որ հայրենի խլաթ քաղաքից Գողթան գավառ այցելելիս՝ հանդիպել է ոմն Տիրանուն քահանայի, որն իրեն հրավիրել է «յերկիրս իւր, յերկիրս Կապանուց» եւ խնդրել իր համար արտագրել ավետարան:

Հիշատակագրի վկայությամբ՝ աշխատանքն ավարտին է հասցվել «ի վայելուչ եւ ի գեղեցիկ ձորս ի գեաղս երկայնածիղ, որ կոչի Վահրաւայ, ընդ հովանեաւ սրբոյ Գրիգոր Լուսաւորչի, ի յարիական պետութեան տէր Որպելին, ի դանութեան երիտասարդին, որ կոչի Բուսախտ (իմա՝ Աբու Սաիդ), ի թիվս ՉՅԱ (1324)»<sup>193</sup>:

Հիշատակարանում նշված «տէր Որպելը» Սյունիքի արքեպիսկոպոս-մետրոպոլիտ Զովհաննես Օրբելն է<sup>194</sup>:

Գրչության օջախներ կային նաեւ Սյունյաց Երնցակ գավառում: Տեղի Բերդիկ (Զարատակ) գյուղում է գործել Սարգիս գրիչը, որն իր օրինակած ավետարանի հիշատակարանում գանգատվում է «շփոթ եւ դառն ժամանակ»-ի կյանքից, որովհետեւ «նեղեն եւ հարկապահանջեն զքրիստոնեայքս յամենայն կողմանց»<sup>195</sup>: Այդ ժամանակ (1495թ.) տեղի եպիսկոպոս է վկայված Տեր-Զովհաննեսը, որը, ամենայն հավանականությամբ, մեզ այլ աղբյուրներից ծանոթ Պռոշյան տոհմի պարոն-տերն է<sup>196</sup>:

XV դարի վարջին տասնամյակում Ստեփանոս (մահ. 1493 թ.) եւ Զովհաննես եպիսկոպոսների աթոռակալության տարիներին մատյաններ են ծաղկել նաեւ Այրիվանքում, որն ինչպես հայտնի է, մտնում էր Պռոշյան տիրույթների մեջ<sup>197</sup>:

Այնուամենայնիվ, հայ գրչության Սյունիքի դպրոցի անենանշանա-

վոր վայրերը մնում էին Վայոց ձոր գավառում: Ցաղաց քարում տքնում էր Խաչատուր գրիչը<sup>198</sup>, Եղեգյաց անապատում՝ Աստվածատուրը<sup>199</sup>, Վերին Նորավանքում՝ Գրիգորը<sup>200</sup>, Կարապետը<sup>201</sup>, «Ձորայ վանքում»՝ Առստակետը<sup>202</sup>, Շմավոն Աբեղան<sup>203</sup> եւ շատ ուրիշներ:

### ԻԳ. ՄՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանը միջնադարի ականավոր քաղաքական եւ կրոնական գործիչներից է: Որպես ստեղծագործող՝ նա իրավամբ դասվում է հայ ամենանշանավոր պատմիչների շարքը:

Ստ. Օրբելյանի ծննդյան ստույգ թվականը դեռեւս պարզված չէ: Ուսումնասիրողներից Ս. Արախամյանը գտնում է, որ նա «ծնվել է 1250-60-ական թվերին»<sup>204</sup>: Թ. Հակոբյանն ու Ս. Մելիք-Բախշյանը, հիմք ունենալով այն իրողությունը, որ նա 1287 թ. ձեռնադրվում է քահանա, ենթադրում են, թե «այդ ժամանակ Ստեփանոսը առնվազն պետք է եղած լիներ 25-30 տարեկան, ուրեմն, նրա ծննդյան թվականը մոտավորապես ընկնում է 1250-ական թվականներին»<sup>205</sup>:

Հակված չլինելով առարկելու վերոհիշյալ մասնագետների ենթադրությանը՝ ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում մի կարեւոր վկայության վրա, որը, մեր կարծիքով, մասնակիորեն նպաստելու է Ստ. Օրբելյանի ծննդյան մոտավոր ժամանակամիջոցը որոշելուն:

«Պատմութիւն տանն Սիսական» աշխատության հիշատակարանում (գլ. 3Բ) հոգեւոր դասի ներկայացուցիչներին պատմիչն իր ավանդներն է պատմում արդեն «մայրամած» եւ «շառագունեալ դիմօք»<sup>206</sup>: Եթե «մայրամած դեմք» կապակցությունն ընդունենք որպես ծերացած մարդուն եւ ոչ հիվանդին բնորոշող արտահայտություն, ապա նրա ծննդյան թվականը թերեւս կարելի է ետ տանել մոտավորապես տասը տարով, այսինքն՝ նա ծնված պետք է լինի XIII դարի 40-ական թթ. եւ ապրած ոչ պակաս 60 տարի: 45-50 տարեկան առողջ մարդուն երբեք էլ հատուկ չէ «մայրամած դեմք» բնորոշումը: Բացի դրանից, ինչո՞ւ ընդունենք, որ 1287 թ. քահանա (տվյալ դեպքում՝ կուսակրոն) օծվելու ժամանակ՝ «Ստեփանոսը առնվազն պետք է լիներ 25-30 տարեկան», մանավանդ երբ ինքն անձամբ վկայում է, թե «քահանայացայ եւ մանկական տիօք կարգեալ կղերիկոս» եւ «տիաս խակութեամբ նստայ աթոռ վարդապետական»: Ստեփանոսը որքան էլ իրեն

նվաստացնի, այնուամենայնիվ, նրա այս արտահայտություններն ինչ-որ իրական հիմք ունեն: Անշուշտ, եկեղեցական կանոնադրությամբ՝ քահանա կամ վարդապետ ձեռնադրում էին հասուն տարիքի մարդկանց, սակայն պատմության մեջ քիչ չեն նաեւ բացառությունները:

16 տարի անընդմեջ ղեկավարելով Սյունյաց մետրոպոլիտական աթոռը՝ Ստ. Օրբելյանը վախճանվում է եւ հանդիսավոր արարողությամբ թաղվում Ամաղուի Նորավանքի՝ Օրբելյան իշխանների տոհմական դամբարանում: Կ. Կոստանյանցը<sup>207</sup>, Մաղաքիա արք. Օրմանյանը<sup>208</sup> եւ ուրիշներ, հիմք ունենալով Տաթևի վանքի ծովածո գանգերի վրա եղած արձանագրությունները, գտնում են, որ նա վախճանվել է 1304 թ.<sup>209</sup>:

Ալիշանի կարծիքով՝ Տաթևի գանգերի արձանագրությունները չպետք է ունենային ՉԾԳ (1304) թվականը, որովհետև «յետնոյ ուրուք» գործ են<sup>210</sup>: Նույն կերպ է մեկնաբանված «Ազգագրական հանդեսում»<sup>211</sup>: Ալիշանը առաջարկում է հիշյալ գանգերի թվականը ընթերցել ՉԾԸ (1309), քանի որ, ըստ նրա, Ստ. Օրբելյանը Սյունյաց եպիսկոպոսական գահին բազմել է 1286-1309 թթ.<sup>212</sup>: Տաշյանը<sup>213</sup> եւ, նրան հետեւելով Հր. Աճառյանը՝ Ստ. Օրբելյանին են համարում Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսին (1307-1322) հղած թղթի հեղինակներից մեկը<sup>214</sup>, որն ընդունելի չէ, որովհետեւ, ինչպես հայտնի է, Կոստանդին Գ-ն հայրապետական գահին բազմել է 1307 թ., երբ Ստ. Օրբելյանն արդեն մահացած էր: Նորագույն ուսումնասիրողներից Թ. Հակոբյանն ու Ս. Մելիք-Բախշյանը գրում են, որ Ստ. Օրբելյանը վախճանվել է 1305 թ.<sup>215</sup>:

Օրբելյանի մահվան միակ ստույգ թվականը փորագրված է Ամաղուի Նորավանքի՝ Օրբելյան իշխանների տոհմական դամբարանում գտնվող նրա տապանաքարին, ուր որոշակիորեն ընթերցվում է. «**ԹՎԻՍ ՉԾԲ (1303). Այս է շիրիմ հանգլվալեթլան մեծի մկարոպապիկոսին Սիւնիկաց Ստեփանոսի**»<sup>216</sup>: Այս վկայությունը անառարկելիորեն հավաստում է, որ պատմիչը վախճանվել է 1303 թ.: Հավանաբար, նկատի ունենալով Ստ. Օրբելյանի տապանաքարի այս արձանագրությունը, Լ. Խաչիկյանը առարկում է Ղ. Ալիշանին եւ մյուս ուսումնասիրողներին, հավաստելով, որ Ստեփանոս Օրբելյանը մահացել է 1303 թ.<sup>217</sup>:

Ստ. Օրբելյանի մասին Սյունյաց նահանգի այլեւայլ վայրերի վիմական արձանագրություններում<sup>218</sup> եւ մատենագրական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ, որտեղ գրիչները երբեմն շռայլ մակդիրներով եւ փառաբանում իրենց մեծա-

համբավ պատմաբան-մետրոպոլիտին եւ Օրբելյան տիրապետող տոհմի ականավոր ներկայացուցչին:

Ստ. Օրբելյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որից պահպանվել ու մեզ են հասել հետեւյալ աշխատությունները.

1. «Պատմութիւն տանն Սիսական» (1297)
2. «Ողբ ի կաթողիկէ...» (1299)<sup>219</sup>
3. «Ժամանակագրութիւն» (ընդգրկում է 968-1290 թթ.)
4. Գրիգոր Անավարճեցուն հղած «Թուղթը» եւ «Միաբանութեան ձեռնարկը» (1302)
5. «Հակաճառութիւն ընդդէմ երկաթնակաց» (1302)
6. «Տեսիլ սրբոյն Մեթողի՝ եպիսկոպոսի Պատարայ եւ վկայի յաղագս անցելոյն, ներկայիս եւ ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց, զոր թարգմանեալ է տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի»
7. «Պատճառ ժողովոյն Բաղկեդոնի» (1302):

Ստ. Օրբելյանն օրինակել է տվել նաեւ մի շարք ձեռագիր մատյաններ, որոնցից հիշատակելի են. Ավետարան՝ իր հարազատ Հովհաննես-Օրբել վարդապետի (հետագայում Սյունյաց արքեպիսկոպոս եւ մետրոպոլիտ) համար (1302)<sup>220</sup>, «Մեկնութիւն ժողովողի» (1303), Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» (1303):

Օրբելյանի ստեղծագործական կյանքում առանձնահատուկ տեղ է գրավում «Պատմութիւն տանն Սիսական» կամ «Պատմութիւն նահանգին Սիսական» ծավալուն երկը, որը Սյունիքի միջնադարյան ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի վերաբերյալ կոթողային հուշարձան է: Այս աշխատությունը վաղուց ի վեր եղել է հայագետների ուշադրության կենտրոնում եւ ունեցել մի շարք հրատարակություններ: Առաջին անգամ հրատարակվել է Կարապետ Շահնազարյանի ջանքերով Փարիզում 1859 թ.: Դրանից երկու տարի հետո՝ 1861 թ., հրատարակեց Սկրտիչ Էմիլը Մոսկվայում երկու գրչագիր օրինակների եւ փարիզյան տպագրության բաղդատությամբ: Մոսկովյան հրատարակությունը, չնայած թերություններին, աչքի է ընկնում գրքի վերջում գետեղված «Հարկացուցակի» լրիվությամբ: 1910 թ. Թիֆլիսում Ղուկասյան մատենաշարով լույս տեսավ երրորդ հրատարակությունը, որը, ի տարբերություն նախորդների, ուներ անվանացանկեր եւ օժտված էր գիտական ապարատով: «Պատմութիւնը» լույս ընծայվեց Պետերբուրգում նաեւ ֆրանսերեն լեզվով՝ Բրոսեի թարգմանությամբ<sup>221</sup>: Առանձին գլուխները (հատկապես մոնղոլների վերաբերյալ հատվածները) ռուսերեն

թարգմանել եւ հրատարակել է Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Զերովբե Պատկանյանը<sup>222</sup>, իսկ 65-րդ գլուխը առանձին լույս է տեսել Մադրասում, Մոսկվայում, ինչպես նաեւ Փարիզում Սեն-Մարտենի աշխատասիրությամբ<sup>223</sup>:

Ստ. Օրբելյանի վաղեմի երազանքն է եղել շարադրել Սյունյաց նահանգի պատմությունը՝ սկսած հնագույն դարերից, ընդհուպ մինչեւ իր ապրած ժամանակաշրջանը: Այս բարդ եւ դժվարին գործը նա ավարտում է 1297 թ.: Գլածորի, Յերմոնի եւ այլ կրթօջախների գրիչները չեն հապաղում ընդօրինակել եւ տարածել այս մեծարժեք երկը, որի առաջին իսկ էջերից ընթերցողը նկատում է հեղինակի բացահայտ միտումը՝ չպետք է «անփոյթ առնել եւ ընդ անգիտութեան խաւարաւ թողուլ» Սյունյաց նախարարների հիշատակը, նրանց տիրական իրավունքները, վանքերի, եկեղեցիների ու նրանց սպասավորների արտոնյալ վիճակը, ի վերջո, պատմական բոլոր այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում եւ, մասնավորապես, Սյունյաց լեռնաշխարհում:

Աշխատությունը շարադրելիս՝ Օրբելյանն օգտագործել է հետեւյալ սկզբնաղբյուրները.

1. Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Ուխտանեսի, Սամուել Անեցու, Սամուել Կամրջաձորեցու եւ այլոց երկերը:
2. Հայոց թագավորների եւ Սյունյաց իշխանների հրամանագրերն ու նամակները:
3. Կաթողիկոսական կոնդակներն ու Սյունյաց եպիսկոպոսների գրագրությունները, ճառերն ու վկայաբանությունները:
4. Տաթևի վանքի գրապահոցներում եղած մատենագրական եւ կալվածագրային փաստաթղթերը:
5. Վիմական արձանագրությունները.
6. «Վրաց ժամանակագրությունը» («Քարթլիս ցխովրեբա»).
7. Մոնղոլ իլխաններից ստացած հրովարտակներն ու հրամանագրերը:
8. Ձեռագիր մատյանների հիշատակարանները եւ այլն:

Օգտվելով Մովսես Խորենացուց՝ Օրբելյանը Սյունյաց պատմությունն սկսում է ավանդական Սիսակ նահապետից, այնուհետեւ հաջորդաբար ներկայացնում նահանգի առավել աչքի ընկած պատմական դեմքերը եւ նրանց հետ կապված կարեւոր իրադարձություններն՝ ընդհուպ մինչեւ Օրբելյան տոհմի հանդես գալը: «Պատմութեան» II գլխում նա թվարկում է Սյունյաց նահանգի 12 գավառները<sup>224</sup>, աշխատե-



լով ավանդական գրույցների իման վրա ստուգաբանել դրանց անունների առաջացման վարկածները:

Պատմիչն ապա նշում է Բաղաբերդը, Երևանի, Շիրոտի, Բարկուշատի, Անդոկա, Հաբանդա (Ձագեձորի), Բղենո, Գեղարքունո, Վանանդա, Բորոտան, Զաշաթաղի, Որոտան (Որոտնա), Սյունյաց, Շահապոնից բերդերը, ինչպես նաև Կքեբերդն ու Խոժոռաբերդը: Վայոց ձորի տարածքում նա հիշատակում է Կապույտ, Հրապետ (Հրաշկաբերդ), Սուլիմա եւ այլ բերդեր ու ամրոցներ, որոնք եղել են Սյունյաց ռազմական հզորության հենարանները: Հեղինակը գովեստի շնայլ մակդիրներով է ներկայացնում Սյունիքի առավել նշանավոր անձանց հայրենասնվեր գործունեությունը: Սյունյաց նախարարն էր, գրում է պատմիչը, որ իրեն ենթակա 21 իշխանների զորագնդերով պահպանում էր Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմաններն օտար ներխուժումներից: Նա առանձնահատուկ տեղ է հատկացնում պարսից մայրաքաղաք Տիզբոնն ավերող Անդոկ Սյունեցուն եւ նրա հայրենասեր որդի Բաբիկին, որը վերականգնեց փլուզված Սյունիքի նախարարությունը (գլ. ԺԴ): Մատենագիրը չի մոռանում նշանակել Վասակ Սյունեցուն՝ մի առանձին գլուխ նվիրելով վերջինիս կատարած արարքների համառոտ նկարագրությանը («Գործք անարի եւ վատ իշխանին Սիւնեաց Վասակայ եւ պատճառ նորա կորստեանն»): Ստ. Օրբելյանն անդրադառնում է Վարդանանց գոյամարտին եւ այն ընդհարումներին, որոնք տեղի են ունեցել Ավարայրի ճակատամարտից հետո «ի մէջ Եղեգեաց եւ Մոզան»՝ Մարտիրոս զորականի հրամանատարությամբ:

Որպես հոգեւորական եւ Սյունյաց մետրոպոլիտ՝ Ստ. Օրբելյանը չէր կարող անտեսել նահանգի առավել աչքի ընկած կրոնական գործիչների (Գրիգորիս, Երիցակ, Գրուտ, Ստեփանոս Իմաստասեր, Սողոմոն, Հովհաննես եւ այլն) վարքագրությունը: Զերմությամբ եւ ակնածանքով է նա ներկայացնում հայ երաժշտության մեծ երախտավոր Ստեփանոս Իմաստասերին՝ բնութագրելով նրան որպես «Արեգակն ջահաւորեալ՝ ի տաւս Թորգոմեան՝ երանելի եւ մեծ նահատակն<sup>25</sup>, պարծանաց զաւակն... մարդն երկնային եւ հրեշտակն երկրային, հանապազ մեռեալն եւ միշտ կենդանին...»: Ապա հակիրճ խոսում է նրա քույր Սահակադուխտի մասին, որը ճգնելիս է եղել Գառնիի կիրճերից մեկում հորինելով եւ ժողովրդին ուսուցանելով իր երգերը:

Ստ. Օրբելյանը գրում է արաբական արշավանքների եւ խալիֆայության տիրապետության օրոք երկրի քաղաքական եւ

տնտեսական ծանր կացության մասին, չի մոռանում հիշատակել Խուռամյանների առաջնորդ Բաբեկին եւ նրա արշավանքը դեպի Գեղարքունիք: Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում «Պատմութեան» այն հատվածները, որտեղ հանգամանորեն լուսաբանվում են Սյունյաց նախարարական տոհմի քայքայման եւ գահերեցության ինստիտուտի հաստատման սոցիալ-քաղաքական պայմանները, միջավատական հարաբերությունների սրման դրդապատճառները, տիրույթների համար ծագած խռովություններն ու ռազմական ընդհարումները: Նկարագրված է Սյունյաց Մարիամ տիկնոջ (Բագրատունի Սմբատ I թագավորի քույր) շինարարական լայն գործունեությունը: Պատմիչը հակակրանքով է ներկայացնում ցուրաբերդցիներին կամ տամալեկցիներին, որոնք, իրենցից բռնությամբ խլված պապենական հողակտորները ետ վերադարձնելու ակնկալիքով, մեկ անգամ չէ, որ ապստամբել էին Սյունյաց հոգեւոր կենտրոնի դեմ:

Հայ միջնադարյան ճարտարապետության պատմության համար մեծ կարեւորություն են ներկայացնում աշխատության այն էջերը, որոնք նվիրված են Տաթևի վանքին, Թանատի վանքին, Բղենո Նորավանքին, Վահանավանքին, Ամաղուի Նորավանքին եւ այլ կառուցումներին:

Որպես տիրապետող դասի ներկայացուցիչ եւ Սյունյաց իշխանագուն՝ Օրբելյանը ջանում է արդարացնել Սյունիքի (Կապանի) թագավորության հռչակումը, որը, նրա կարծիքով, ասպարեզ է եկել պատմական անհրաժեշտությամբ՝ ժամանակի թելադրանքով:

Ստ. Օրբելյանի «Պատմութեան» շնորհիվ որոշակի տեղեկություններ ենք ստանում Սյունյաց յոթ գահակալների մասին, որոնք հաջորդաբար իշխել են Հայաստանի այս հատվածում 200 տարի շարունակ:

Ստ. Օրբելյանի նկարագրությանից կարելի է որոշակի գաղափար կազմել Սյունյաց թագավորության մայրաքաղաք Կապանի մասին: Այն ունեցել է առանձին փողոցներ ու թաղամասեր, որոնցից հիշատակվում են Խնձորի գլուխն ու Զիտաթաղը: Պատմիչը ցավով է ընթերցողին ներկայացնում Կապանի կործանումը 1103 թ. Չորթմանի հրոսակների կողմից: Սյունյաց թագավորությունն այդ ժամանակ «ընդ ձեռամբ ունէր բերդս 43, եւ անուանիքն ի նոցանէ 12. եւ վանորայս 48, եւ գիւղս 1400, եւ մայրաքաղաք զԿապանն»: Նա արձանագրում է երկրի կործանումից հետո Սյունյաց իշխանական տոհմերի արտագաղթը ինչպես Հայաստանի մյուս գավառներ, այնպես էլ դեպի օտար երկրներ: Պատմիչը նշում է նաեւ իր կրած տառապանքները՝ նահանգի հո-



գետի օջախները մոնղոլական ասպատակություններից գերծ պահելու եւ հոգեւորականության ապահարկ վիճակը պահպանելու գործում:

Շարադրելով իր տոհմի պատմությունը՝ Ստ. Օրբելյանը մեծ չափով օգտվում է ինչպես հայկական, այնպես էլ վրացական աղբյուրներից:

Նրա «Պատմութիւնը» առավել հավաստի եւ իրական է դառնում այն ժամանակ, երբ ականատեսի աչքերով նկարագրում է հասարակական-քաղաքական հարաբերություններում տեղի ունեցած իրադարձությունները, իր եւ յուրայինների հանդիպումները մոնղոլ խաների հետ, օտար իշխանավորների՝ ենթակա ժողովուրդների նկատմամբ վարած կեղեքիչ քաղաքականությունը, աշխարհիկ եւ հոգեւոր տերերի իրավատնտեսական հարաբերությունները, տարերային աղետները, սովն ու համաճարակները:

Կիրակոս Գանձակեցու նման, Ստ. Օրբելյանը տիպական գույներով ներկայացնում է մոնղոլների նիստուկացը, կենցաղը, սովորությունները:

Նա չի մոռացել հիշատակել կիլիկյան հայ թագավորներին, որոնցից դրվատանքով նշում է Լեւոն III-ին, Յեթումիս եւ այլոց: Գրքի վերջում նա գետնդել է կաթողիկոսների եւ Սյունյաց եպիսկոպոսների ցանկերը՝ նրանց գահակալության տարիների քանակով հանդերձ: Պատմական մեծ արժեք է ներկայացնում այս աշխատությանը կցված «Հարկացուցակը»:

Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունն աչքի է ընկնում հարուստ փաստական նյութերի ընդգրկմամբ: Առանց վարանելու կարելի է ասել, որ նրա օգտագործած սկզբնաղբյուրները, առավելապես նրանք, որոնք վերաբերում են զարգացած ավատատիրության դարաշրջանին, իրենց հիմքով իրական են, ստույգ եւ հավաստի: Մեծ արժեք են ներկայացնում գրքում մեջբերած վիմական արձանագրությունները, որոնք հմտորեն վերծանվել եւ ընդօրինակվել են հեղինակի կողմից: Ստ. Օրբելյանի վերծանությունների շնորհիվ հնարավոր է դառնում վերականգնել այժմ եղված եւ քայքայված բազմաթիվ վիմագրություններ: Անշուշտ, այս հանգամանքը նկատի ունենալով. Յ. Օրբելին, երբ Սյունյաց պատմիչին էր վերագրում հայոց առաջին վիմագրագետի մեծ պատիվը<sup>226</sup>: Վիմական արձանագրությունների օրբելյանական ընթերցումների շնորհիվ հնարավոր է դարձել ամբողջապես վերականգնել Ամաղուի Նորավանքի, Տաթեւի, Գնդեվանքի, Վահանավանքի, Վանեվանի եւ այլ տաճարների պատերին փորագրված բազմաթիվ արձանագրություններ, առանց որոնց միջնադարով զբաղվող պատմաբան-

ներին չափազանց դժվար էր լինելու՝ որոշակի պատկերացում ունենալ ժողովրդի սոցիալ-իրավական վիճակի, կալվածատիրական գործարքների եղանակների ու ձեւերի, հարկերի ու տուրքերի, առետրական հարաբերությունների, միջնադարյան վանքերի ապահարկության եւ վարչատնտեսական գործունեության վերաբերյալ:

Ստ. Օրբելյանին վերագրվող աշխատությունների մեջ աչքի է ընկնում «Ժամանակագրութիւն» խորագրի տակ մեզ հասած մեկ այլ ստեղծագործություն, որի գրչագիր օրինակը գտնվելիս է եղել Կարնո Սանասարյան վարժարանում եւ հրատարակվել Աշ. Աբրահամյանի ջանքերով: «Ժամանակագրութիւնը» սկսվում է 968 թ. եւ ընդգրկում է 322 տարվա ժամանակահատված, այսինքն՝ մինչեւ Տարսայի իշխանի մահը (1290 թ.): Աշ. Աբրահամյանի կարծիքով, Օրբելյանը «նպատակ չի ունեցել կազմել ինքնուրույն ժամանակագրություն, այլ ցանկացել է լրացնել ու շարունակել Սամուել Անեցու «Ժամանակագրութիւնը»<sup>227</sup>: Որ այս երկն իրոք պատկանում է Ստ. Օրբելյանի գրչին, Աշ. Աբրահամյանն իր ենթադրության համար որպես կռվան ներկայացնում է այն իրողությունը, որ պատմիչի «Ժամանակագրութեան» եւ «Պատմութեան» որոշ փաստերի տարեգրությունը համընկնում է՝ թեւեւ նկատելի անճշտություններով<sup>228</sup>:

Աշ. Աբրահամյանը կարծում է, որ Ստ. Օրբելյանն իր «Ժամանակագրութեան» հիմնական մասը գրել է 1277 թ., ապա՝ շարունակել ու հասցրել մինչեւ 1290 թ.: «Ձեռագրի գրչությունն ըստ պալեոգրաֆիկ տվյալների, - գրում է քննարկի հրատարակիչը, - կարելի է համարել XIV-XV դդ. ընդօրինակություն»<sup>229</sup>:

«Ժամանակագրութեան» քննությանը անդրադարձել են նաեւ Լ. Խաչիկյանն ու Վ. Հակոբյանը, որոնք, առարկելով Աշ. Աբրահամյանին, պնդում են, որ հիշյալ տարեգրությունը չի պատկանում Ստ. Օրբելյանին»<sup>230</sup>:

Ստ. Օրբելյանի գրական ժառանգության մեջ ուշագրավ տեղ է զբաղեցնում «Ողբ ի դիմաց Կաթողիկէին» քնարական-էպիկական պոեմը, որն առաջին անգամ հրատարակվել է 1790 թ. Նոր-Նախիջևանում<sup>231</sup>, ապա՝ 1846 թ. Կալկաթայում, իսկ այնուհետեւ Թիֆլիսում՝ 1885 թ. Կ. Կոստանյանցի աշխատասիրությամբ: Կ. Կոստանյանցի կարծիքով, Ստ. Օրբելյանը «Ողբը» գրել է 1299 թ.: Մ. Աբեղյանը հավանական է գտնում, որ «այս քնարական բերթվածքը» պատմիչ բանաստեղծը «հորինել է 1300 թվականին»<sup>232</sup>: Մեծանուն գրականագետը հանգամանորեն վերլուծում է պոեմի գաղափարական բովանդակությունը, նշում նրա գեղարվեստական արժանիքները

եւ կատարած դերը հայ միջնադարյան բանաստեղծական արվեստի զարգացման ասպարեզում<sup>233</sup>: Թեեւ մոնղոլների տիրապետության ժամանակ՝ Օրբելյան իշխանների ճկուն դիվանագիտության շնորհիվ, Սյունիքը գտնվում էր համեմատաբար տանելի պայմաններում, այսուհանդերձ, Ստ. Օրբելյանը հասարակական-քաղաքական երեւոյթները «Ողբի» մեջ չի դիտում միայն իր նեղ տոհմային շահերի տեսանկյունից, այլ, ընդհակառակն, որպէս հայրենասեր մտածող՝ դրանք մեկնաբանում է ժողովրդի ազատագրության ջերմ պաշտպանի եւ երկրի քաղաքական անկախության գաղափարախոսի դիրքերից:

Թեմատիկ առումով եւ բանաստեղծական հնարանքով՝ Ստ. Օրբելյանի «Ողբը» հարազատ է Ներսէս Շնորհալու «Ողբ եղեսիոյ» քերթվածին: Ավելի, քան հավանական է, որ եւ՛ Ստ. Օրբելյանը, եւ՛ Ն. Կեչառեցին իրենց նույնատիպ չափական ստեղծագործությունները հորինել են Ներսէս Շնորհալու «Ողբի» անմիջական ազդեցությամբ եւ ժամանակի պահանջով: Իրենց հերթին՝ նրանք էլ դրական ազդեցություն ունեցան հայ ժողովրդի ընդհանուր ազատագրական պայքարի գաղափարական հասունացման վրա, ինչպէս իրենց կենդանության օրոք, այնպէս էլ՝ հաջորդ դարերում:

Ստ. Օրբելյանի «Ողբը», նպատակային ուղղվածությամբ, լուրջ ազդեցություն ունեցավ ունիթոռների ռտնձգությունների դեմ հայ եկեղեցու՝ անկախության համար մղվող պայքարի գործում: Այդ երեւոյթը, հատկապէս դավանաբանական վեճերի տեսքով, դրսեւորվեց Գրիգոր VII Անավարզեցու կաթողիկոսության տարիներին (1293-1307) եւ իր արտացոլումը գտավ Սյունյաց պատմիչի՝ 1302 թ. գրած մեկ այլ ստեղծագործության մեջ, որը կոչվում է «Թուղթ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ յարեւելյան աշխարհէս առ կաթողիկոսն Յայոց տէր Գրիգոր՝ գրեալ ձեռամբ տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընդ նմին եւ դաւանութիւն ուղղափառ հաւատոյ սրբոյն Գրիգորի Սքանչելագործի եւ Աթանասի Աղեքսանդրացւոյ»:

Ստ. Օրբելյանն իր մետրոպոլիտության տարիներին մեծապէս նպաստել է հայ մատենագրության բուռն զարգացմանը, սեփական միջոցներով օրինակել է տվել աստվածաբանական, կրոնա-դավանաբանական եւ պատմագիտական բնույթի մի շարք աշխատություններ, որոնցից մի քանիսը հասել են մինչեւ մեր օրերը: Այսպէս. 1303 թ. Եսայի Նչեցին գրում է, թէ ձեռագիր մատյաններից մեկը ինքը գրել է «ըստ հայցման հաճոյութեան բարեւեր կամաց երջանիկ եւ գերիմաստ նախասացեալ արհիականին (Ստեփաննոսի Օրբելեան)»... ի դառն եւ անբարի ժամանակիս, որ տատանեալ ծփեմք ամենաներհակ արկածիւք

եւ ներքուստ եւ արտաքուստ. հարկեցուցիչ հրամանաւ գրեցի զսա աղքատ եւ չքաւոր սեղանով զծառայակիցսն կերակրելով»<sup>234</sup>: Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատության՝ Աղթամարում 1303 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում Դանիել գրիչը նշում է, որ այս մատյանը շարադրել է «ի խնդրոյ աստուածաբեալ գիտնական եւ արդիւնական վարդապետի, միանգամայն եւ արհիական աստիճանի արժանացելոյ տեառն Ստեփաննոսի, որ է ակն արեւելեան եւ աթոռակալ մեծի Սիւնեաց տանն»<sup>235</sup>: Մատենագիրը փառաբանում է Օրբելյան տոհմը եւ նրա ականավոր ներկայացուցիչն. «Եւ եթէ նախնականօքն քննեսցուք զնա, գրում է Դանիելը, ոչ ոք է յիշխանացն եւ յիշխեցելոց արեւելից կողմանցն բարձրագոյն քան զնա, զի ամենեցուն քաջայայտ է ազգն եւ նախնիքն նորա եւ նա այնպէս է ի մէջ նոցա փառաւորագոյն եւ պայծառ, որպէս զարեգակն ի մէջ աստեղաց»<sup>236</sup>:

Ստ. Օրբելյանի հանձնարարությամբ ավետարաններ է ծաղկել Գլաձորի համալսարանի շրջանավարտ, բազմարդյուն արվեստագետ Մովսիկը: 1302 թ. օրինակած ավետարաններից մեկի հիշատակարանում նա գրում է. «Զգերաբուն բանի սպասատրն եւ զարեգակնափայլ լուսատուն հոգոց՝ զմետրապօլիտն Սիւնեաց գտեր Ստեփաննոս ստացող, յիշեցէք ի տէր, ծաղկող Մովսիկ»<sup>237</sup>:

Սյունյաց պատմիչը գրել է նաեւ մի շարք նամակներ, որոնցից պատմական արժեք են ներկայացնում հատկապէս Եսայի Նչեցուն հղածները: Այդ նամակներից մեկում Ստ. Օրբելյանը գրում է, որ հայ ժողովուրդը տառապում է «ոչ միայն յարտաքին նեղչացն, այլեւ ի ներքուստ»<sup>238</sup>:

Ստ. Օրբելյանի առաջնորդության տարիներին ծաղկում են Սյունյաց նահանգի ուսումնական հաստատությունները. առանձնապէս մեծ հռչակ է ձեռք բերում Գլաձորի համալսարանը, որի ռաբունապետ Եսայի Նչեցու նկատմամբ նա ջերմ համակրանք ուներ:

Ժամանակի գրիչների եւ մատենագիրների կողմից Ստ. Օրբելյանին վերագրված բազմաթիվ պատվանունները («աստուածաբեալ գիտնական եւ արդիւնական վարդապետ», «հզաւր եւ իմաստուն գիտնական», «գերաբուն բանի սպասատր» եւ այլն) կարող են կռվան հանդիսանալ այն ենթադրության, որ Ստ. Օրբելյանը դասավանդել է Գլաձորի համալսարանում:

## ԻՂ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՐԲԵԼ (1303-1324)

Ստ. Օրբելյանի վախճանից հետո Սյունյաց հոգեւոր աթոռին բազմում է նրա հորեղբայր Իվանեի թոռ Հովհաննես Օրբելը<sup>239</sup>, որը ծնված էր Լիպարիտից եւ Նանայից: Հովհաննես Օրբելը Նախնական կրթությունն ստացել է Նորավանքում՝ Ստ. Օրբելյանի մոտ, իսկ այնուհետեւ ուսումնառությունը շարունակել է Գլաձորի համալսարանում, ուր ունկնդրել է ուսուցչապետ Եսայի Նչեցուն<sup>240</sup>: Համալսարանական կրթությունն ստանալուց հետո, ծնողների ու ազգակիցների հաճությամբ, ձեռնադրվում է վարդապետ, իսկ որոշ ժամանակ անց, մետրոպոլիտ Ստ. Օրբելյանի հանձնարարականով ընտրվում է Սյունյաց եպիսկոպոս:

Աղբյուրների ընթերցած տվյալներից կարելի է կռահել, որ Հովհ. Օրբելը՝ դեռեւս Ստեփանոս մետրոպոլիտի կենդանության օրոք, եղել է նրա աթոռակիցը եւ նույնիսկ հռչակվել Սյունյաց հոգեւոր վիճակի առաջնորդ եւ մետրոպոլիտ-պրոտոֆրոնտես: Այդպես է նշված «Պատմութիւն Միքայելի Ասորոյն» երկի հիշատակարանում 1302 թ., այսինքն՝ Ստ. Օրբելյանի մահվանից մեկ տարի առաջ: Իր ձեռքով Հովհ. Օրբելը հիշատակագրել է. «Յանուն ամենակալին Աստուծոյ, ես տէր Հովհաննէս, յազգէ Աւրպելեանց, պռաւաթրանտէս (իմա՝ պրաւաւիրանտէս) Հայոց մեծաց եւ մետրապալիտ Սիսակ(ան) Նահանգի, եկայք ի Վերին Նորավանս, առ վարդապետն Ղաւիթ եւ Արքայ. խնդրեցին ի մենջ ժողովուրդ ինքեանց ի սատար սուրբ ուխտիս, եւ մեք տուաք սոցա ժողովուրդ զԱնկեղի, զԵղիան, զԵղիկանց ձոր, զՎաղցան ի սեփական ժողովուրդ եւ թեմ, որ զամենայն հասս եւ զիրաւունք սոքա սոցա տային... (հետեւում է անեծքի մասը) ... գրեցաւ ի թուականիս Հայոց ՉԾԱ (1302) առաջի սուրբ Սիոնիս եւ վարթայպետիս Ղաւթի»<sup>241</sup>:

Այս հետաքրքիր վկայությունն ապացուցում է, որ Հովհաննես Օրբելը դեռեւս 1302 թ., Ստեփանոս պատմիչի կենդանության օրոք, ստանձնել է Սյունյաց մետրոպոլիտի բարձր պաշտոնը, այլապես նա իրավասու չէր լինելու սահմանել եկեղեցական հարկեր եւ տուրքեր, հաստատել առանձին թեմեր ու աթոռներ եւ հանդես գալ Սյունյաց Նահանգի «մետրոպոլիտի» կամ Մեծ Հայքի «պրոտոֆրոնտեսի» տիտղոսներով: Կարելի է նաեւ կարծել, որ մեզ անհայտ

պատճառներով (թերեւս հիվանդության) մահվանից մեկ տարի առաջ, Ստ. Օրբելյանը հրաժարական է տվել եւ, ինչպես Նախկինում շատ ականավոր կրոնական եւ աշխարհիկ գործիչներ (Գրիգոր Լուսավորիչ եւ ուրիշներ), վարել ներփակ ճգնազգյաց կյանք: Այս ամենը, անշուշտ, իր տրամաբանական լուծումը կստանար, եթե ենթադրենք, որ հիշյալ ձեռագրի հիշատակարանի տարեթվի տասնավորը՝ Ծ-ն (50) կարող էր լինել Հ (70): Այս հնարավոր դեպքում մենք կստանայինք 1322 թվական, եւ Հովհաննես Օրբելի աթոռակից լինելու հանգամանքը հեշտությամբ կանտեսվեր:

Հովհաննես Օրբելը եղել է Գլաձորի համալսարանի ընդունակ եւ շնորհալի սաներից մեկը: Պատանեկան հասակից հագնելով կրոնավորի սքեմ՝ երիտասարդ հոգեւորականը շուտով իր վրա է հրավիրում Սյունիքի բարձրաստիճան աշխարհիկ եւ հոգեւոր տերերի ուշադրությունը: Ստեփանոս մետրոպոլիտն անձամբ հետաքրքրվում էր նրա ճակատագրով եւ հանձին Հովհաննես Օրբելի՝ տեսնում էր իրեն փոխարինողին: Այդ էին պահանջում նաեւ Օրբելյան տոհմի շահերը:

Սկսած 1302 թ., Ստ. Օրբելյանի մահվանից մեկ տարի առաջ, մատենագրական աղբյուրներում եւ վիմական արձանագրություններում Հովհաննեսն ամենուր հանդես է գալիս Սյունյաց արքեպիսկոպոսի եւ մետրոպոլիտի տիտղոսներով: Որպես գիր ու գրչություն սիրող մեծահարուստ իշխանագուն՝ նա հնարավորություն է ունեցել նպաստելու Վայոց ձորի կրթագիտական օջախների, մասնավորապես Գլաձորի համալսարանի նյութական ապահովմանը եւ գրչության արվեստի զարգացմանը: Նորընտիր մետրոպոլիտն իր նվաճած հեղինակությամբ, այնուամենայնիվ, պարտական էր Մեծն Ստեփանոսին, որի նկատմամբ ամենախորին երախտագիտությամբ է արտահայտվում մեծատաղանդ Մովսիկի նկարագրողած<sup>235</sup> ավետարաններից մեկի հիշատակարանում:

*«Աստուածային գլխ(աւոր) Կերդ Ստեփաննոս, որդի փառաւոր իշխանաց իշխանին Տարայիճին,- գրում է նա,- զի հարկեալ ի հրամանադարութեան չերոյ բարչրութենէ եւ ի սիրոյ եւ ոչ յանչին կարողութիւն վարահանաւով, չեռնարկեցի այս գործունեութեան եւ փառակերպեցի նշանախեցիւք: Բայց դու ընկալ զչերոյ հրամանադարութեանդ կադարումն քեպէր եւ ոչ ըստ կամաց եւ պարագայից ամաւք վայելելով զուարճօրէն բարչրութեամբ, գլեպինս ի ծանօթից չերոյ՝ զՀովանէս որդի եղբօր չերոյ՝ եւ խրապու եւ բանին ծննդեամբ՝ ծառայ եւ որդի չերումդ արքութեան...»<sup>242</sup>:*

Վերոբերյալ հատվածից երեւում է, որ Հովհաննես Օրբելը

գրչության արվեստը սովորել է Ստ. Օրբելյանի ցանկությամբ եւ հորդորանքով, միաժամանակ ընդգծում է Սյունյաց պատմիչի գերիշխանությունը իր նկատմամբ, թեեւ այդ ժամանակ արդեն ինքն էր վարում Սյունյաց եպիսկոպոսարանի վարչատնտեսական գործերը: Հովհաննես Օրբելը համեստաբար իրեն կոչում է «ծառայ եւ որդի», իսկ Ստեփանոս Օրբելյանին՝ «գլխաւոր տէր»:

Հետեւելով իր նախորդին՝ Ստ. Օրբելյանին, Հովհաննես Օրբելը շարունակում է հատուկ ուշադրություն դարձնել մատենագրական աշխատանքներին: Նրա անմիջական ղեկավարությամբ կամ հորդորանքով ու նպաստով ընդօրինակվել են բազմաթիվ մատյաններ, որոնցից շատերը պահպանվել ու հանգրվան են գտել ինչպես Մաշտոցի անվան Մատենադարանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների գրապահոցներում:

Արատեսում օրինակված ավետարանի հիշատակարանում ակաւավոր գրիչ Պավղոս վարդապետը գրում է, որ իր աշխատանքն ավարտել է «վերադիտողութեան Սինեաց Նահանգիս տեառն Յովանիսի մականուն Արպելի՝ արհիական եպիսկոպոսի եւ ճշմարիտ եւ սուրբ իմաստասիրի...»<sup>243</sup>: Հովհաննես Օրբելը մատենագրական աղբյուրներում հանդես է գալիս որպես պատմիրատու եւ ստացող: 1303թ. հիշատակարաններից մեկում խնդրվում է հիշել.

*«Մտացող զգրոյս զերջանիկն ի վարդապետս զերիցս երանեալն զՅովաննէս մականուամբ Արքիլ»*, ինչպես նաեւ՝ *«զմեծափառ իշխանն զԼիպարիդն եւ զՆանայն ծնողսն...»*: Նույն ձեռագրի 3-րդ հիշատակագրում Հովհաննես Օրբելը ներկայացված է «րաբունի»-«ուսուցիչ» տիտղոսով, հայրը՝ Լիպարիտը, կոչված է «մեծափառ իշխանաց իշխան», իսկ մայրը՝ Նանան, «ամենալինեալ սուրբ դժխո...»<sup>244</sup>: Այս «առաքելաշնորհ արքեպիսկոպոսին»<sup>245</sup> Սարգիս գրիչը 1306 թ. բնութագրել է իբրեւ «սուրբ եւ ընտրեալ քաջ հռետոր», «անյաղթ սոփեստ» եւ այլ շռայլ մակդիրներով ու տիտղոսներով<sup>246</sup>: Հիշյալ որակավորումները հիմք են տալիս ենթադրելու, որ Հովհաննես Օրբելը հավանաբար դասավանդել է Գլաձորի համալսարանում:

Հովհաննես Օրբելի անունը հիշատակված ենք գտնում բազմաթիվ ձեռագիր մատյաններում եւ վիմական արձանագրություններում՝ 1315<sup>247</sup>, 1319<sup>248</sup>, 1321<sup>249</sup>, 1322<sup>250</sup> եւ այլ թվականներին: Հովհաննես Օրբելը աչքի է ընկել նաեւ շինարարական գործունեությամբ: Ճարտարապետ Մովսիկի նախագծով նա է կառուցել Արենիի (Եղեգնաձորի ենթամարզ) Ս. Աստվածածին եկեղեցին, որի արեւմտյան մուտքի վերին կամարի շուրջը փորագրել է տվել հիշատակագրություն<sup>251</sup>:

Հովհաննես Օրբելը «արհիական քաջապետ» տիտղոսով է հանդես գալիս Հերիերի Ս.Սիոն տաճարի վիմական արձանագրություններում (1310 թ.)<sup>252</sup>:

Հովհաննես Օրբելը վախճանվել է 1324 թ. եւ թաղված է Ամաղուի Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գավթում: Նրա տապանաքարին փորագրված է *«Թվիս 249. (1324). Տուն իմաստից եւ հանճարոյ Արպել զմկանէս հոչակաւոր մեղրոպաւիկ Սինեաց»*<sup>253</sup>: Մետրոպոլիտի տիտղոսով արդեն հանդես է գալիս Օրբելյան տոհմի մեկ այլ շառավիղ՝ Ստեփանոս-Տարսայիճ, որը, դեռեւս Հովհաննես Օրբելի գահակալություն օրոք, հասել է արքեպիսկոպոսական աստիճանի եւ սկզբնաղբյուրներում հաճախ հիշատակվում է նրա անվան հետ միաժամանակ:

## ԻՆ. ՍՏԵՓԱՆՈՍ - ՏԱՐՍԱՅԻՃ (1324-1331)

Ստեփանոս-Տարսայիճը Սյունիքի իշխանաց իշխան Տարսայիճ Օրբելյանի եւ Սինա խաթունի թոռն է, Ստեփանոս պատմիչի անհամամայր եղբայր Զալալի եւ Գոնցա իշխանուհու որդին: Նրա ծննդյան ստույգ թվականը մեզ հայտնի չէ, սակայն գիտենք, որ մկրտության անունը եղել է Տարսայիճ, իսկ հոգեւոր կոչում ստանալուց հետո՝ վերանվանվել է Ստեփանոս: Մատենագրական աղբյուրներում նա առավելապես հանդես է գալիս այդ երկու անձնանունների հարադիր կապակցությամբ՝ Ստեփանոս-Տարսայիճ: Հիշատակարանների կցկտուր տեղեկություններից երեւում է, որ նա ուսանել է Գլաձորի համալսարանում, ունկնդրել Եսայի Նչեցուն, Սարգիս վարդապետին եւ մյուս րաբունապետներին<sup>254</sup>: 1314-1331 թթ. շարադրված ձեռագիր մատյաններում նշվում է, որ Ստեփանոս-Տարսայիճը եղել է արտակարգ ընդունակ անձնավորություն, երիտասարդ հասակում արժանացել հոգեւոր բարձր կոչման՝ ընտրվելով Սյունյաց արքեպիսկոպոս եւ «պետ երկոտասան գաւառաց»<sup>255</sup>: Ուշադրության արժանի է այն իրողությունը, որ միեւնույն ժամանակահատվածում հոգեւոր իշխանության գլուխ են անցնում Օրբելյան գերդաստանի երկու ներկայացուցիչներ՝ Հովհաննես Օրբել եւ Ստեփանոս-Տարսայիճ: Այս հանգամանքը, թերեւս, բացատրելի է դառնում նրանով, որ Տարսայիճի մահվանից հետո՝ 1290 թվականին, նրա որդիների միջեւ գծտույություն էին սկսվել ժառանգական տիրույթների բաժանման համար:

Տարսայիճի երկրորդ կինը՝ իշխանուհի Մինան, ձգտում էր Սյունյաց իշխանապետ հռչակել իր միակ արու զավակ Ջալալին, սակայն մոռնալով իշխանավորները երբեք իշխանաց իշխան չէին հաստատի իլխանության դեմ ապստամբական դրոշ պարզած Հասան Ջալալի դստեր ժառանգին: Այնուամենայնիվ, Մինա խաթունին հաջողվեց իր թոռանը հազցնել կրոնավորի սքեմ եւ նախապատրաստել՝ բազմելու Սյունյաց 12 գավառների արքեպիսկոպոսի գահավորակին: Սակայն շարունակենք հետեւել Ստեփանոս-Տարսայիճի կյանքի ընթացքին:

Մեզ հասած առաջին գրավոր վկայությամբ՝ 1314 թ., Ստեփանոս-Տարսայիճը կոչված է Սյունյաց աթոռակալ եւ Գլաձորի համալսարանի նպաստավորող: Մխիթար Երզնկացին Գլաձորում կազմած իր հիշատակարանում ռաբունապետ Եսայի Նչեցուց հետո ներկայացնում է.

*«Նաև կարեկից մեծազարմին*

*Արոռակալ Տարսայիճին,*

*Որ է մեզ կարեկից յամեն բարիս*

*եւ օժանդակ յիր գաւառիս.*

*Յիշման առնել զսա արժանիս*

*Ծնողիս, եղբարք օրհնեալ յաստիս»<sup>256</sup>:*

Ստեփանոս-Տարսայիճի մասին ջերմ խոսքերով է արտահայտվում Պողոս Կիլիկեցին: 1314 թ. նրա գրած հիշատակարանից իմացվում է, որ այս հոգեւորականը նախնական կրթությունն ստացել է Սարգիս ռաբունապետի մոտ, այնուհետ Եսայի Նչեցու ղեկավարած համալսարանում ուսանել «Իմաստասիրական արհեստ», արժանացել «աստիճանի սարկաւագութեան եւ քահանայութեան»<sup>257</sup>, այնուհետեւ ծեռնադրվել վարդապետ եւ Սյունյաց եպիսկոպոս:

Պողոս Կիլիկեցին Ստեփանոս-Տարսայիճին համարում է «մեծազարմ եւ իշխանաշուք մանուկ», ապա ընթերցողին տեղեկացնում է, որ իր նպաստավորողը «ըստ հայրենի նախնեաց յազգէ եւ շառաւիղէ Ռրպիլեանց» է, «իսկ ըստ մայրենեաց՝ սերեալ յազգէ մեծ ամիրսպասալարին Զաքարէի»: Այնուհետեւ գրիչը շարունակում է փառաբանել իր պատվիրատուին եւ նրա տոհմակիցներին՝ «ամիր Պուրթեյին եւ Պաւտային», եղբայրներ «Շահիշահին, Ելիկումին եւ Աղբաւղին» (Աղբուղային), «գերամեծար ծնաւղին իւրոյ՝ պարոն Գոնցային, որք են իշխանք եւ տէր նահանգիս Սիսական...»<sup>258</sup>: Նա չի մոռանում հիշատակել «գհայր սորին՝ զմեծ իշխանաց իշխանն զհանգուցեալն առ Քրիստոս զպարոն Զալալն, եւ զհաւրաքոյրք սորա... զպարոն Ասփայն եւ զՄամբանն, եւ զմայր սոցին զպարոն Մինա խաթունն»<sup>259</sup>: «Այլեւ

զնորին արեանառու մերձաւոր եւ սնունդ ամենամաքուր տէր Ստեփաննոս մականուն Տարսայիճ, որ է եւ նա մեր որդի, ի բանէ ծնեալ, մանուկ տիաւք առնեալ զաշտիճան արհեպիսկոպոսութեան, զոր տէր աստուած կացուսցէ զսոսա երկար ամանակս ի գլուխ եկեղեցւոյ իւրոյ եւ մեք բազում գութս եւ խնամս տեսաք եւ վայելեցաք ի սոցանէ»<sup>260</sup>:

Մեջբերված հատվածից որոշակիորեն երևում է, որ

1. Հովհաննես Օրբելի ու Ստեփանոս-Տարսայիճը եղել են Եսայի Նչեցու սաները:
2. 1323 թ. Սյունիքի մետրոպոլիտը դեռեւս Հովհաննես Օրբելի էր, իսկ Ստեփանոս-Տարսայիճը, թեեւ «մանուկ տիաւք», բայց արդեն ուներ արքեպիսկոպոսության աստիճան:
3. Գլաձորի համալսարանը հովանավորություն, աջակցություն եւ տնտեսական օգնություն է ստացել Օրբելյան տոհմի այս մեծահարուստ հոգեւոր պետերից:

Հովհաննես Օրբելի եւ Ստեփանոս-Տարսայիճի անունները միասին վկայված ենք տեսնում նաեւ Կյուրիոնի օրինակած ավետարանի հիշատակարանում 1321 թ.<sup>261</sup>:

1331 թ. Ստեփանոս-Տարսայիճն արդեն միայնակ հիշվում է որպէս Սյունյաց մետրոպոլիտ: Թորոս Փիլիսոփա գրիչը նշում է, որ «տիեզերագարդ լուսաւորիչ» Եսայի Նչեցու վարժարանի սանն ընտրվել էր իբրեւ «գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց Տաթւոյ եւ Նորավանից եւ Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց...»<sup>262</sup>: Գրիչը նրան կոչում է «հզար եւ իմաստուն գիտնական»<sup>263</sup>:

1333 թ. Վայոց ձորի Վերին Նորավանքում աշխատող գրիչ Կյուրիոնը այլեւս չի նշում Օրբելյան տոհմից սերած եպիսկոպոսների անունները: Ուրեմն, մինչ այդ թվականը Ստեփանոս-Տարսայիճն արդեն մահացած էր, քանի որ Սյունյաց աթոռակալի պաշտոնում հանդես է գալիս Վերին Նորավանքի վանահայր տեր-Սարգիսը<sup>264</sup>:

Դեռ կենդանության օրոք Ստեփանոս-Տարսայիճը մտերմական հարաբերությունների մեջ է եղել տեր-Սարգսի հետ, որն ունեցել է եպիսկոպոսական աստիճան եւ հոգեւորականության ոլորտում բավականին ազդեցիկ դիրք: Ստեփանոս-Տարսայիճը նրան է ընծայել իր ծախքով օրինակված ավետարաններից մեկը, որի հիշատակարանում կարդում ենք.

*«Գրել եղրու եւ անարժան*

*Տարսայիճ նուսալ եւ անպիտան,*

*Սիրով հոգւոյս անհապական*

*Ընծայեցի անգրասական*

*Իմ փր Սարգսիդ սր ճոխական*

*Մաքուր հոգւոյդ սրբազնական...»<sup>265</sup>:*

Անառարկելին այն է, որ Ստեփանոս-Տարսայիճին հաջորդում է Սարգիս եպիսկոպոսը, որի մասին Գլաձորի ականավոր նկարիչներից մեկը՝ Ավագը, «Մանրումունք» կոչվող երաժշտական բնույթի աշխատության (դասագրքի) հիշատակարանի մեջ նշում է՝ «Մեծ եւ երջանիկ մետրապոլիտն եւ արհիական գլուխն այսմ (իմա՝ Սիւնեաց) նահանգիս տէր Սարգիս»<sup>266</sup>:

Ավարտելով մեր խոսքը Ստեփանոս-Տարսայիճի մասին՝ պետք է նշենք, որ այս հոգեւորականը ըստ կարի զբաղվել է նաեւ շինարարական գործերով: Նա է կառուցել, ինչպէս նշվեց, Եղեգիսի նշանավոր ճարտարապետական կոթողներից մեկը՝ «Ջորաց տաճարը», որի պատի հյուսիսային խորշի կիսաշրջանաձեւ պսակի վրա մինչեւ օրս կիսեղծ վիճակում պահպանվել է արձանագրություն:

Ստեփանոս-Տարսայիճը նպաստել է Սյունյաց վանքերի նյութական բարեկեցությանը: Այս առթիվ որոշակի տեղեկություններ են պահպանվել Վաղարշու վանքի (Որոտնավանքի) 1326 թ. վիմական արձանագրություններից մեկում: Դա այնպիսի մի ժամանակ էր, երբ Ստեփանոս-Տարսայիճն արդեն բազմել էր Սյունյաց մետրոպոլիտական գահին եւ իրավասու էր անձամբ լուծելու նահանգի վանական կալվածատիրությանն առնչվող վարչատնտեսական բոլոր հարցերը:

Մենք այլ առիթով նկատել ենք, որ խոշոր վանական միաբանություններն ունեին իրենց սեփական հյուրատները, որոնց պահպանության համար եկամտի կայուն աղբյուրներից բացի, հարկավոր էին նաեւ սպասավորներ եւ այլ ծառայողներ, որոնք հոգում էին հյուրերի կարիքները, կազմակերպում նրանց սննդի գործն ու հանգիստը: Վանքն, անշուշտ, իր հյուրատնից ուներ զգալի եկամուտ, որը տնօրինում էր անմիջաբար վանահայրն իր նշանակած տեսուչների միջոցով («տեսուչք հիւրոց»):

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է հանգել հետեւյալ եզրակացության.

1. Մոնղոլական պետությանը մատուցած մեծ ծառայությունների համար իլխանությունը Օրբելյան եւ Պռոշյան իշխաններին շնորհեց մի շարք արտոնություններ, որոնք, անտարակույս նպաստեցին նրանց տիրույթների սահմաններում քաղաքական կայուն վիճակի ապահովմանը, ուստի եւ՝ տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացմանը: Պատահական չէ, որ հենց այդ ժամանակաշրջանում Հայաստանի ավերված ու լքված գավառներից Սյունյաց լեռնաշխարհի եկան հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք ապահարկված վանական միաբանությունների հովանու ներքո աստիճանաբար կազմակերպեցին դպրության նորանոր օջախներ:
2. Վայոց ձորում հաստատված Ներսես Մշեցու ջանքերով 1282 թ. հիմնադրվեց Գլաձորի (Աղբերց վանքի) դպրոցը, որը Եսայի Նչեցու ռաբունապետության տարիներին բարգավաճեց եւ դարձավ յուրատիպ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ մշտապես հովանավորվելով ու նյութապես նպաստավորվելով Պռոշյանների եւ Օրբելյանների կողմից:
3. Եսայի Նչեցու մահվանից հետո (1338 թ.) Գլաձորի համալսարանը փաստորեն դադարեց գոյություն ունենալ՝ իր տեղը զիջելով նոր ծլարձակված ուսումնական հաստատություններին: Դրանցից էր Հերմոնի (Ահերմոնի) վանական դպրոցը, որի հիմնադիրը դարձավ Գլաձորի համալսարանի շրջանավարտ Տիրատուր վարդապետ Կիլիկեցին: Այն նպաստավորվում էր Օրբելյան իշխանների կողմից, քանի որ գտնվում էր նրանց տիրույթների սահմաններում, Եղեգիսի ձորում, որն ամբողջապես այս տոհմի սեփականությունն էր կազմում: Հերմոնավանքի առաջնորդները խոշոր դեր կատարեցին հայոց կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից մայր հայրենիք (Էջմիածին) տեղափոխելու գործում (1441 թ.):
4. Որպես գրչության օջախ՝ XIV-XV դարերում նշանակալից դեր է խաղում Սպիտակավոր Աստվածածնի վանքը, որի հոգաբարձուները եղել են Պռոշյանները, իսկ ապա՝ նաեւ Օրբելյանները: Սպիտակավորի գրչության օջախը մեծ համբավ է ձեռք բերում

- Ավագների վանահայրության տարիներին, երբ այստեղ գործում էին ծաղկող Աբրահամը, Գրիգոր գրիչը, Զաքարիա Աբեղան, Դավիթ գրագիրը եւ ուրիշներ:
5. XIV դարի վերջին քառորդին՝ Զովհաննես Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու եռանդագին ջանքերի շնորհիվ, հիմնադրվում է Տաթեւի համալսարանը, որը շարունակում է Գլաձորի ուսումնագիտական կենտրոնի լավագույն ավանդույթները: Այս ուսումնական հաստատությունը համազգային լայն ճանաչում է ստանում Գրիգոր Տաթեւացու թարգմանչության տարիներին, երբ համալսարանի հոգաբարձուներ են դառնում Ծղուկ գավառում գոյատեւող Օրբելյանների ժառանգները:
6. XIII դարի առաջին տասնամյակներին բարգավաճում է Վայոց ձորի Ամաղուի Նորավանքը, որը Ստ. Օրբելյանի մետրոպոլիտության տարիներին դառնում է Սյունյաց եպիսկոպոսական կենտրոն: Նույն ժամանակահատվածում գերիշխանության համար ուժգին մրցապայքար է սկսվում Նորավանքի ու Տաթեւի աթոռների միջեւ: Պայքարը ավարտվում է Ստ. Օրբելյանի գահակալության օրոք, երբ երկու առաջնորդարանները միավորվում են մետրոպոլիտական մեկ գավազանի տակ՝ պահպանելով իրենց սեփականատիրական իրավունքները եւ ընդարձակ կալվածները, ինչպես նախկինում:
7. XIII դարի ութսունական թվականներին ասպարեզ է իջնում հայ ականավոր պատմիչ Ստ. Օրբելյանը, որը ծնունդով Ծղուկ գավառից էր եւ ուսանել էր նախ՝ Տաթեւի վանահայր Զայրապետի, ապա՝ Ներսես Մշեցու մոտ՝ Գլաձորի համալսարանում, ուր պատանեկան տարիքում իր հոր՝ Սյունյաց իշխանապետ Տարսայիճ Օրբելյանի հաճությամբ հազնում է կրոնավորի սքեմ եւ Կիլիկիայում ձեռնադրվելով նախաթոռ՝ արքեպիսկոպոս եւ մետրոպոլիտ՝ 16 տարի շարունակ ղեկավարում է Սյունյաց հոգեւոր վիճակը:
8. Զայոց միջնադարյան պատմագիտական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ստ. Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունը, որը արժանաւիճաբար սկզբնաղբյուր է ավատատիրական դարաշրջանի սոցիալ-իրավական եւ քաղաքական հարաբերություններն ուսումնասիրելու բնագավառում: Ստ. Օրբելյանի գրչի արգասիքն է համարվում «Ողբ ...» ընդարձակ պոեմը, ուր ցայտուն կերպով դրսևորվում են նրա բանաստեղծական տաղանդը եւ ջերմ հայրենասիրու-

թյունը:

9. Ստ. Օրբելյանի օգտագործած սկզբնաղբյուրները (հայ եւ օտար պատմիչներ, վիմական արձանագրություններ, հրովարտականք ու հրամանագրեր, շուրջ չորս տասնյակ կալվածագրեր եւ այլն) կասկած չեն հարուցում իրենց ճշմարտապատում լինելու մեջ եւ ունեն բնագրային արժեք:
10. Զայոց դարության եւ լուսավորության ասպարեզում զգալի դեր են կատարել Օրբելյան իշխանագույններ, արքեպիսկոպոսներ Զովհաննես Օրբելի ու Ստեփանոս-Տարսայիճը, որոնք աչքի են ընկել նաեւ շինարարական գործունեությամբ:

## ԻԶ. Սյունիքը XV-XVIII դարերում

15-րդ դարում Սյունիքը գտնվում էր թուրքմենական Կարա-կոյունլու ցեղերի ստեղծած պետության գերիշխանության տակ: Այդ պետության մայրաքաղաքը Թավրիզն էր: Սյունիքի նախկին հզոր տերերը՝ Օրբելյանները, իշխելով ավելի քան 300 տարի, 14-րդ դարի երկրորդ կեսից քաղաքական կյանքից աստիճանաբար հեռանում են: Նրանց վերջին երեւելի ներկայացուցիչը, ինչպես նշեցինք, եղել է Ռուստամ Օրբելյանը: Օրբելյան իշխանական տան Սյունիքում մնացած շառավիղները վերածվել էին մանր ավատատերերի կամ տանուտերերի:

Այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի եւ եկեղեցու կյանքում կատարված ամենանշանակալից իրադարձությունը կաթողիկոսական աթոռի վերահաստատումն էր Էջմիածնում: Այդ քայլը հայ ժողովրդի հետագա պատմական ճակատագրի համար ուներ կարեւոր քաղաքական նշանակություն: Էջմիածնի հոգեւոր կենտրոնի վերածննդի գործում էական դեր խաղացին Սյունիքի հոգեւորականները, որոնց մոտ այդ հարցը վաղուց հրատապ էր համարվում: Կաթողիկոսարանը Կիլիկիայից բուն Հայաստան տեղափոխելու գաղափարը արծարծել է դեռեա Ստ. Օրբելյանն իր «Ողբում» եւ Գրիգոր Մնավարզեցի կաթողիկոսին գրած նամակում: Հայ եկեղեցու անկախ գոյության ճակատագիրը մտահոգել է նաեւ Հովհան Ռոտունեցուն: Նա գտնում էր, որ հայոց կաթողիկոսարանը պետք է տեղափոխել Գանձասար, որտեղից ավելի հեշտ կլինէր պայքարել ընդդէմ կաթոլիկության: Իր ուսուցչի երազանքը փորձեց իրականություն դարձնել Գրիգոր Տաթեւացին: Սակայն անկայուն եւ խառը քաղաքական իրավիճակը ի չիք դարձրեց կաթողիկոսարանը Հայաստան տեղափոխելու նրա ծրագրերը:

15-րդ դարի կեսերին հայ եկեղեցու պառակտման եւ ուժացման վտանգը ստիպեց վճռական քայլեր կատարել եւ կաթողիկոսական աթոռը վերստին հաստատել Էջմիածնում:

1439թ. Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում կայացած եկեղեցական ժողովում դրվեց կաթոլիկ եկեղեցու հետ հայ լուսավորչական եկեղեցու ունիայի (միության) հարցը: Կիլիկիայի հայ հոգեւոր կենտրոնը մինչ այդ փաստորեն ընդունել էր կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը: Այդ քայլին դեմ էին հայ եկեղեցու արեւելյան թեմերը: Եվ ահա, օգտա-

գործելով այն առիթը, որ Միսում առանց իրենց համաձայնության ընտրվել է նոր կաթողիկոս, արեւելյան թեմերն ընդվզեցին եւ վճռական քայլ կատարեցին՝ վերահաստատելու Էջմիածնի կաթողիկոսությունը: Արեւելահայ հոգեւորականության մեջ իր ակտիվ գործունեությամբ առանձնանում էր Վայոց ձորի Հերմոնի վանքի վարդապետ Հովհաննեսը՝ Էջմիածնի աշխարհաժողովում Սյունյաց հոգեւոր թեմի պատվիրականության ղեկավարը: Էջմիածնի աշխարհաժողովը տեղի է ունեցել 1441 թ.: Ժողովին հրավիրվել է մասնակցում էին 300 հոգեւորական եւ աշխարհիկ անձինք: Օրակարգում դրված էր երկու հարց՝ նախ Էջմիածնի հռչակումը բոլոր հայերի հոգեւոր կենտրոն եւ ապա՝ նոր կաթողիկոսի ընտրություններ: Առաջին հարցի առթիվ զեկուցեց Գլաճորի համալսարանի շրջանավարտ, պատմագիր Թովմա Մեծփեցին: Եթե Էջմիածնում կաթողիկոսարանի վերահաստատման հարցում ժողովականները միակամ էին, ապա նոր կաթողիկոսի ընտրության ժամանակ կարծիքները բաժանվեցին: Սյունիք-Այրարատը ներկայացնող հոգեւորականները եւ աշխարհիկ պատգամավորները հակադրվեցին Վասպուրականի խմբին: Սկզբում հաղթանակ տոնեցին վասպուրականացիները. կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցին, բայց հետագայում Սյունիքի հոգեւորականների ջանքերի շնորհիվ, կաթողիկոս է ընտրվում Գրիգոր Մակվեցին: Նոր կաթողիկոսի ընտրության հարցում վճռական դեր խաղացին Հերմոնի վանքի վարդապետ Հովհաննեսը եւ Տաթեւի վանքի վարդապետ Շմավոն Անգեղակոթցին:

Կարա-կոյունլուների գահակալ Զհանշահը (1436-1467 թթ.), ելնելով իր պետության ռազմավարական խնդիրներից, գերիշխանության տակ գտնվող հայկական տարածքներում, մասնավորապես Սյունիքում եւ Արցախում, ձեռնամուխ եղավ կազմակերպելու տեղական ինքնավար իշխանություններ, որոնք հայտնի են դառնում մելիքություններ անունով: «Այդ մելիքություններում նա կառավարիչ մելիքներ նշանակեց, - գրում է Թ. Հակոբյանը, - նախորդ շրջանի հայկական իշխանական տան մնացորդներից, որոնք մինչ այդ դարձել էին սոսկ տանուտերեր»: Ժամանակի ընթացքում Սյունիքում ձեւավորված մելիքություններից հայտնի են դառնում չորսը՝ Անգեղակոթի, Քաջաթաղի կամ Խանաձախի, Տաթեւի եւ Բեխի: Մելիքները շահական արքունիքի կողմից հատուկ հրովարտակով հաստատված հայ իշխաններ էին, որոնց լիիրավ իշխանությունը տարածվում էր փոքր գավառների կամ նույնիսկ գավառամասերի վրա: Մելիքությունը եղել է ժառանգական: Հոր մահից հետո իշխանությունն անցնում էր ավագ որդուն՝ «մելիք-գաղա»-ին, որը, սակայն, առանց շահի հրամանի չէր կարող փոխարի-



նել հորը: Մելիքի մնացած զավակները կրում էին բեկ տիտղոսը: Մելիքն իր իշխանության սահմաններում լիիրավ տեր էր հպատակների նկատմամբ: Նա էր ժողովում արքունական-պետական հարկը. կար նաեւ հատուկ մելիքի համար հավաքվող հարկ: Մելիքն իր ենթակա տարածքում ներկայացնում էր նաեւ դատական իշխանությունը՝ ծանր դեպքերում դատում էր հանցագործներին, նշանակում պատիժներ: Պատժի տեսակներն էին՝ ծեծ, տուգանք, բանտարկություն, մելիքադրոշմ դնել, ինչպես նաեւ մահվան պատիժ: Մելիքներն ունեին 300-400 հոգուց բաղկացած մշտական զորք, որոնց վրա նշանակվում էին հարյուրապետեր: Բայց այդ զորքը կարող էր բազմապատկվել, քանի որ պատերազմի ժամանակ բոլոր տղամարդիկ պարտավոր էին զինվորագրվել:

Սյունիքում մելիքական տների ձեւավորումը երկրամասի եւ՝ քաղաքական, եւ՝ տնտեսական կյանքի համար ունեցել է բարերար ազդեցություն: Մելիքները դարձան հայ հոգեւոր եւ մշակութային կյանքի զարգացման հովանավորներ, ձեռնարկեցին բազմապիսի շինարարական աշխատանքներ. վերանորոգվեցին վանքերն ու եկեղեցիները, կառուցվեցին կամուրջներ ու քրանքներ: Նրանք դառնում են նաեւ հայ ազատագրական պայքարի գաղափարների ակտիվ կրողներ եւ այդ շարժման մասնակիցներ:

Լեռնաշխարհում ձեւավորված չորս խոշոր մելիքություններից ամենից հայտնին եւ հզորը եղել է Քաջաթաղի կամ Խանաձախի Մելիք-Յայկազյանների մելիքությունը: Մելիքությունը այդպես է կոչվել ի պատիվ Մելիք-Յայկազ 1-ինի (1450-1515 թթ.): Մելիք-Յայկազյանները ծագում են Վայոց ձորի Պռոշյան իշխանական տնից: Մելիքությունը զբաղեցնում էր Քաջաթաղ գավառը, որը կազմում էր Նախկին Աղահեճք եւ Յաթանդ գավառների մի մասը: Ի դեպ, Սյունիքի որոշ գավառանուններ գործածությունից դուրս են մնում իրենց տեղը զիջելով նոր տեղանունների: Այդ նոր տեղանունները բացառապես կապված են որեւէ բնակավայրի անվան հետ: Այդ կերպ Աղահեճքը դառնում է Քաջաթաղ, Յաթանդը՝ Ձագեձոր, Ծղուկը՝ Սիսիան, Արեւիքը՝ Մեղրի, Ձորքը՝ Կապան եւ այլն: Քաջաթաղի մելիքության կենտրոնը Նախապես եղել է Ծիծեռնավանքի հարեւանությամբ գտնվող Քաջաթաղ ավանը, իսկ հետագայում, հավանաբար պաշտպանական նկատառումներով, այն տեղափոխվել է բարձրադիր Խանաձախ գյուղը: Այս մելիքության ամենանշանավոր ներկայացուցիչը եղել է Մելիք-Յայկազ 2-րդը (1551-1623 թթ.): Նա պարսից Ճահ-Աբասի արքունիքում ստացել էր «Սադրիսիշին»՝ «առջեւում նստող» տիտղոսը: Մելիք-Յայկազ 2-րդը համառ

պայքար է մղել 16-րդ դարի 2-րդ կեսին հայրենի երկրամաս ներխուժած օսմանյան թուրքերի դեմ, գերվել ու տարվել է Գանձակ, ապա գերությունից փրկագնով ազատվել եւ անցել Պարսկաստան: Այդ ժամանակ է, որ օսմանյան թուրքերը, Սյունիքը Արցախից կտրելու հեռահար նպատակներով, մահմեդական քրդերով բնակեցրին Աղավնո եւ Բարգուշատ գետերի հովիտները: Մ.Յասրաթյանն այդ առթիվ գրում է. «Քաջաթաղ-Մաղավուզի գավառում 1590-ական թվականներին հարավից բռնի գաղթեցված ըմբոստ քրդական ցեղեր բերեցին եւ բնակեցրին Քաջաթաղում (Բարկուշատում) լայն արտոնություններ տալով նրանց՝ ընդդեմ հայ բնակչության»: Ահա թե երբևէնից են դարաջօռլու քրդական ցեղերը բնակություն հաստատել Արդեշանական ԽՍՀ Նախկին Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլիի շրջաններում: Մելիք-Յայկազը եռանդուն մասնակցություն է ունեցել պարսից Ճահ-Աբաս 1-ինի (1587-1628 թթ.) դեպի Արեւելյան Ղաջարստան կատարած հայտնի արշավանքին: Արեւելյան Ղաջարստանը պարսկական գերիշխանության տակ անցնելուց հետո նա կրկին իշխել է հայրենի կավածքում, աչքի ընկել հայրենաշեն գործերով: Մելիք-Յայկազ 2-րդը վերանորոգել է Ծիծեռնավանքը եւ այդ մասին թողել արձանագրություն<sup>267</sup>: Նա օգնել է կառուցելու Յալիձորի Յարանց Մեծ անապատը: Գորիսի Խանաձախ գյուղում մնում են մելիքական ապարանք-տունը, ինչպես նաեւ Մելիք-Յայկազյանների տոհմական դամբարանը:

Սյունիքի մյուս նշանավոր մելիքությունը եղել է Անգեղակոթում: Այն ընդգրկում էր Սիսիանի (Նախկին Ծղուկ գավառը) Անգեղակոթ եւ շրջակա մի քանի գյուղեր: Մելիքանիստ կենտրոնը սկզբում եղել է Անգեղակոթ գյուղականը, իսկ հետագայում տեղափոխվել Բռնակոթ: Անգեղակոթը միջնադարում հայտնի բնակավայր էր, ուր գործել է անապատ եւ գրվել են շատ ձեռագրեր: Դեռեւս 18-րդ դարում այս մելիքության տերերը՝ մելիք-Թանգյանները, ավելի հաճախ նստում էին Բռնակոթում, իսկ Անգեղակոթը աստիճանաբար դատարկվում էր: Անգեղակոթը առանձնահատուկ տեղ է գրավում հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: 1699 թ. այստեղ Իսրայել Օրու եւ մելիք Սաֆրազի Նախաձեռնությամբ, հրավիրվում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին Սյունիքի 11 մելիքներ: 1828 թ. Անգեղակոթում վերաբնակություն են հաստատել Պարսկաստանից գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ: Մելիք-Թանգյանները նույնպես աչքի են ընկել հայրենաշեն գործերով: Մելիք-Թանգի 2-րդը 1855 թ. Որոտան գետի վրա շինել է ճարտարապետական եզակի կառուցվածքով մի կամուրջ եւ թողել հետաքրքիր արձանագրություն.

«Եթե ժայռը չփլվի, կամուրջը չի քանդվի»: Ներկայումս կան այդ մեղիքական տան սերունդներ հանդիսացող Թանգյաններն ու Սաֆրազբեկյանները:

Տաթևի մեղիքական տունը ներկայացնում էին նշանավոր Օրբելյանները: Ինչպես եւ հնում, Օրբելյան մեղիքները 15-16-րդ դարերում իրենց ձեռքը վերցրեցին Նաեւ Տաթևի հոգեւոր առաջնորդությունը, եւ այդ պատճառով ձեռագրերը նրանց կոչում են Նաեւ «պարոն-տեր» անունով: 15-րդ դարավերջին եւ 16-րդ դարասկզբին Տաթևի պարոն-տերն էր Եղիշե Օրբելյանը: Նա ծավալել է ակտիվ քաղաքական գործունեություն: 1513 թ. պարոն-տեր Եղիշեն Տաթևում 12 մեղիքների մասնակցությամբ անց է կացրել մի ժողով, ուր նրանք երդվել են հավատարիմ մնալ տեղի հոգեւոր թեմին: Այդ ժամանակաշրջանի պատմական աղբյուրները վկայում են, որ Տաթևի պարոն-տեր մեղիքն իր իշխանության սահմաններում ուներ «բազում ճորտս այլազգիս»: Ըստ Թ. Հակոբյանի՝ Տաթևում մեղիքություն է արել Նաեւ Մեղիք-Փարսադանյանների մի ճյուղը:

Բեխի մեղիքության կենտրոնը եղել է Կապանի նույնանուն գյուղը: Բնակավայրը հիշատակվում է 9-րդ դարից: Բեխ գյուղն այժմ գտնվում է Կապան քաղաքի շրջագծի մեջ՝ Խուստուպի լեռան լանջին, անտառապատ վայրում: Այստեղ ձեռավորվել է Մեղիք-Փարսադանյանների մեղիքությունը, որը Տաթևի նույն տոհմի ճյուղերից մեկն է: Կարծիք է հայտնվել, որ այստեղ է ծնվել եւ այս տոհմից է սերում Դավիթ Բեկը: Բեխի մեղիքության նշանավոր ամրոցն էր Հալիձորը, որը դարձել է Նաեւ Դավիթ-Բեկի անառիկ նստավայրը:

17-րդ դարի առաջին քառորդում, պատմական դեպքերի թոհուրթոհի մեջ, հայոց հոգեւոր կյանքի վերազարթոնքի գործում անգնահատելի դեր է խաղացել անապատական շարժումը, որը հոգեւոր-մշակութային երեւոյթ լինելով հանդերձ, Նաեւ եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի մի ինքնատիպ դրսեւորում: Այն սկիզբ է առել Սյունիքի Նախկին Հաբանդ գավառի Հալիձոր գյուղի Հարանց անապատից: Շահ-Աբասի Մեծ բռնազաղթի սարսափները ճաշակած ժողովուրդն իր մեջ ուժ գտավ՝ անապատական շարժման շնորհիվ վերածնվելու: 17-րդ դարասկզբին մեր ժողովրդի հոգեւոր կյանքում տեղի ունեցածը Լեոն համեմատում է հրաշքի հետ՝ համարելով այն հայոց պատմության գաղտնիքներից մեկը:

Ամենեւին պատահական չէ, որ անապատական շարժումը սկսվել է Տաթևի կիրճում գտնվող Հալիձոր գյուղում:

Այդ բնակավայրի մոտ անապատների (Նաեւ՝ կուսանաց) հիմնումը

հին պատմություն ունի՝ սկսած 9-րդ դարից եւ, գուցե, ավելի վաղ ժամանակներից: Մարդկային ոգու վերակենդանացման համար Հարանց (այդ մարդկանց կամ հայրերի) Մեծ անապատում վառած խարույկի ջերմությունից եռաց հայ ազգային, մտավոր եւ մշակութային կյանքը թե՛ Հայաստանում, թե՛ օտար ափերում: Մ. Աբեղյանը նշանավոր անապատի գործունեության մասին գրում է. «Հնի մեռելության մեջ վերածնությունն առաջ են բերում ոչ թե Մխիթար Աբբան եւ Մխիթարյանները, այլ Ամբերդցի Սարգիս Եպիսկոպոսը... եւ Տրապիզոնցի Տեր-Կիրակոսը, ... որոնք բուն երկրի մեջ հիմնում են Սյունյաց Անապատը Տաթևի մոտ... Դրանք եւ դրանց աշակերտներն են, որ մտածում եւ գործում են մեր խոպանացած կյանքը նորոգելու համար»<sup>268</sup>: Ի դեպ, խոսքն այստեղ Հալիձորի Հարանց անապատի մասին է, քանի որ այն, այստեղ գործելով կես դար, երկրաշարժի պատճառով տեղափոխվում է Տաթևին մոտ մի այլ վայր եւ ընդհանրապես հայտնի դառնում Տաթևի Հարանց անապատ անունով: Մինչդեռ շարժումն իրապես սկիզբ է առել Հալիձորից:

Այդ տարիներին Հայաստանում հայ քրիստոնյա մարդու կյանքը շատ ավելի ապահով էր մեղիքների հովանու ներքո գտնվող Սյունիքում: Այդ է վկայում անապատի հիմնադրման պատմությունը, որը հավուր պատշաճի գրի է առել Առաքել Դավիթյանի պատմիչն իր «Պատմություն»-ում: Սարգիս եւ Կիրակոս անուններով երկու հոգեւորականներ Երուսաղեմում որոշում են հրաժարվել աշխարհիկ կյանքից եւ եղբայրություն հիմնել բուն Հայաստանում: Նրանց խորհուրդ են տալիս գնալ Սյունիք: Հարմար տեղի փնտրումներից հետո՝ նրանք որոշում են հիմնավորվել Հալիձոր գյուղի դիմաց՝ Որոտան գետի աջ ափին՝ անտառի գեղատեսիլ բացատում: Պատմիչը անապատի հիմնադիրներ է համարում եւս երկու մարդու՝ Պողոսին եւ Բարսեղին, որոնք, ամենայն հավանականությամբ, եղել են տեղացիներ: Անապատում ճգնած, ուսանած եւ դաստիարակություն ստացած անձինք հետագայում նման անապատներ են հիմնում Վանա լճի Լիմ եւ Կտուց կղզիներում, Սեւանա կղզում, Շամբորի Չարեքագետում, Քաջաթաղի Հոջանց գյուղում, Բարկուշատի Տանձափարախում եւ շատ այլ վայրերում:

«...Այս անապատը եղավ բոլոր անապատների մայր եւ ծնող եւ ազգիս լուսավորության առիթ», - հավաստում է պատմիչը:

Հալիձորի Հարանց անապատը կառուցվել է 1608-1610 թթ.: Գորիսեցի գրիչ Բարսեղ երեցի վկայությամբ՝ 1624 թ. անապատում կային 8 (100) եւ ավելի անապատականներ, որն անշուշտ, պատկառելի թիվ է: Անապատում սահմանվել էին կենցաղի, ապրուստի եւ հագուստի

խիստ կանոններ: Անապատ ընդունվողը պետք է անցներ մեկ տարվա փորձաշրջան եւ նոր միայն հաղորդվեր: Անապատականներին արգելված էր գինի եւ միս օգտագործելը<sup>269</sup>: Տնտեսական գործերից զատ, անապատականի հիմնական զբաղմունքը եղել է մտավոր աշխատանքը եւ քարոզչությունը: Ուսումնառության տարիներին անապատականները խորանում էին տարբեր գիտությունների մեջ, ուսումնասիրում փիլիսոփայություն եւ աստվածաբանություն, մեկնում սուրբ գրքերը, ընդօրինակում եւ նկարագրում ձեռագրեր: Այս անապատում 1617-1621 թթ. փիլիսոփայություն է դասավանդել Բեդլու մականունով Ներսես վարդապետ Սոկացին: Նա իր հուշերը անապատի մասին հետագայում ամփոփել է մի բանաստեղծական ներբողի մեջ, որը կրում է «Ներբողեան գովեստի չորեցունց արանցն» վերնագիրը: Հինգ տարի (1615-1620 թթ.) Հարանց անապատում է անցկացրել ապագա հայոց կաթողիկոս Մովսես Խոտանանցին (Տաթևացին) (1629-1632 թթ.), ինչպես նաեւ Նրա աջակերտ, Լույսպես կաթողիկոսական գահին արժանացած Փիլիպոս Աղբակեցին (1633-1655 թթ.):

Անապատը Հալիձորում գործել է շուրջ հինգ տասնամյակ: 1658 թ. ապրիլին այդ տեղանքում եղավ ուժեղ երկրաշարժ: Անապատի շինությունները եղել են աղետի էպիկենտրոնում: Անապատականներից տուժեց միայն մի միաբան, որն ինքը չցանկացավ դուրս գալ խուղից եւ մնաց փլվածքի տակ<sup>270</sup>: Անապատի շինությունները հողի սողքի հետ տեղաշարժվեցին, բայց քիչ վնասվեցին: Ահաբեկված միաբանները տեղափոխվեցին Նոր վայր եւ անապատ հիմնեցին հնից մի քանի կիլոմետր հեռու՝ Տաթև եւ Որոտան գետերի միախառնման վայրում: Հարանց հին անապատի շինությունները մնում են կուսական անտառի գրկում եւ չեն կորցրել իրենց վեհությունը: 1736 թ. Հալիձորի Հարանց Մեծ անապատ, եւ մասնավորապես, Նրա հիմնադիր չորս սրբերի գերեզմանին այցի է գնացել Աբրահամ Կրետացի կաթողիկոսը:



Անգեղակոթի 1699 թ. ժողովը

## ԻՃ. Սյունիքը հայ ազատագրական պայքարի կենտրոն

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ հայ ազատագրական խնդիրներին նվիրված էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողովին մասնակից աշխարհականներից մեկը եղել է Սյունիքի մելիքներից Իսրայելը: Նա ընտրվեց օգնություն խնդրելու նպատակով Եվրոպա մեկնող պատվիրակության անդամ: Այդ պատվիրակության առաքելությունը ձախողվում է, եւ այն 1680 թ. ցրվում է: Սակայն Հայաստանի ազատագրության գաղափարը չի մահանում, եւ այդ վեհ նպատակի կրողն է դառնում Մելիք Իսրայելի որդի Իսրայել Օրին: 20-ամյա Օրին անցնում է Եվրոպա, սկզբում ապրում Վենետիկում, հետո բնակություն է հաստատում Ֆրանսիայում: Այստեղ Նա մտնում է գինվորական ծառայության մեջ, դառնում կապիտան, գերի ընկնում անգլո-ֆրանսիական պատերազմում: Գերությունից ազատվելով<sup>1</sup>,

գալիս է Գերմանիա, այստեղ էլ գործնական քայլեր ձեռնարկում իր հայրենասիրական ծրագրերի իրականացման համար: Օրին Նոր ժամանակների հայ առաջին խոշորագույն քաղաքական ու դիվանագիտական գործիչն է: Նա հայ իրականության մեջ առաջինն իր հայացքն ուղղեց Ռուսաստանին՝ համարելով նրան Հայաստանի միակ իրական դաշնակիցը ազգային իղձերի իրականացման գործում: Օրին իր ողջ կյանքն անմնացորդ նվիրեց Հայաստանի ազատության սուրբ գործին:

Ըստ պատմական փաստաթղթերի /գեկուցագրեր, դիմումներ/՝ Խորայել Օրին (1659-1711 թթ.) սերում է Սյունիքի Պռոշյան իշխանական տնից: Պատմաբանների մի մասն այն կարծիքին է, որ Օրին դիտմամբ է իրեն երեւելի տոհմի ներկայացուցիչ ցույց տվել: Բայց այն, որ նա ազնվական ծագում ունեցող մելիքի որդի էր, կասկած չի հարուցում: Օրին ազգանվան ծագման շուրջ եւս հայտնվել են տարբեր կարծիքներ: Ղրանցից մեկը ենթադրում է, որ Օրոն անունը եղել է Յավրի, եւ այն ֆրանսերեն հնչողությամբ դարձել է Օրին: Միանգամայն «Հայրենապատումի» մեջ այն կարծիքն է հայտնում, որ Օրին Օրբեյան ազգանվան կրճատ ձեւն է:


Օրին ամուսնացած էր, ուներ երկու որդի եւ իր ծառայողական գործերում հասել էր որոշակի հաջողությունների՝ դառնալով գերմանական մի քանի իշխանությունների մատակարարման կոմիսար: Սակայն, գերադասելով ազգին ծառայելու շահերը, նա թողնում է ապահով ու խաղաղ ընտանեկան կյանքը եւ անցնում գործնական քայլերի: Օրին սերտ հարաբերություններ է հաստատում գերմանական իշխաններից մեկի՝ Պֆալցի կյուրֆուրստ (գահերեց իշխան) Յովհան-Վիլհելմի հետ: Վերջինս ոգեւորվում է Հայաստանի ազատագրության՝ Օրոն ներկայացրած ծրագրով, մանավանդ, որ իրեն խոստանում են դարձնել հայոց թագավոր: Յովհան-Վիլհելմից վերցնելով երաշխավորական թղթեր՝ Օրին 1699 թ. արկածներով լի ճանապարհորդություն է կատարում դեպի Հայաստան:

Էջմիածնում նա արժանանում է սառը եւ զգուշավոր ընդունելության: Օրին չհուսահատվելով՝ անցնում է Սյունիք եւ Անգեղակոթի մելիք Սաֆրազի օժանդակությամբ հրավիրում Սյունիքի մելիքների ժողով՝ քննարկելու Հայաստանի ազատագրության եւ պետությունների հետ բանակցություններ վարելու խնդիրները: Օրին իր զեկուցագրում նշում է, որ տեսել է քյոջը եւ եղբայրներին, բայց գաղտնապահությունից ելնելով՝ չի հայտնել իր ով լինելը: Նախքան ժողովը, Օրին հաշտեցնում է երկու թշամացած մելիքների՝ Անգեղակոթի մելիք Սաֆ-

րազին եւ Խշտադի (Քաշաթադ) մելիք Էմիրբեկին՝ այդ հաշտությունն ամրապնդելով նրանց 10 եւ 14-ամյա զավակների նշանադրությամբ: Անգեղակոթի ժողովը տեսել է 20 օր: Ժողովին մասնակից 11 մելիքներն էին՝ Յակիզի /Եղիաս/ որդի Փիլիպոս, Ասատուրի որդի Սարուխան, Մելքոնի որդի Սաֆրազ, Մարտիրոսի որդի Էմիրբեկ, Նարինբեկի որդի Շահնազար, Փահումի որդի Մելքոն, Պաղտասարի որդի Մելքոն, Շահինի որդի Սուքիաս, Պաղտասարի որդի Թադեոս, Յավրի որդի Աղաջան, Նավի որդի Յովհաննես: 20 օր լեռնցի պարզամիտ հայ իշխանները Հայաստանի ապագա թագավոր Յովհան-Վիլհելմի եւ նրա տիկնոջ պատկերների առջեւ (ի դեպ, վերջում վեճ ընկավ, թե ում մոտ պետք է մնան նկարները) քննարկում էին Հայաստանի ազատագրության ծրագրերը: Անգեղակոթի ժողովի կարեւոր քաղաքական քայլերից էր ռուսական Պետրոս Մեծ թագավորին ուղղված խնդրագիրը: Հետաքրքիր է, որ այդ խնդրագրի տակ չկա Քաշաթադի մելիք Էմիրբեկի ստորագրությունը: Ժողովը որպես Օրինի օգնական, ուղեկցող ու խոստովանահայր, նշանակեց Ս. Յակոբա վանքի միաբան Մինաս Վարդապետ Տիգրանյանին:

Հայաստանի ազատագրման՝ Անգեղակոթում մշակված ծրագրերում, արտաքին օգնությունը դիտվում էր որպես ազդակ: Ըստ զեկուցագիր-ծրագրի, Հայաստանը կարող էր հանել 200000 զորք, որից 50000-ը կարող էր տրամադրել Սյունիքը, իսկ 60000-ը՝ Մեծ Ղափանը /Արցախը/: Սյունիքի զինական ուժերի մասին Օրին բերում է հետևյալ թվերը. Զեթադի (Քաշաթադ) նահանգը կարող է տալ 10000 զինվոր, Միսիանը՝ 6000, Շամբը՝ 5000, Գետաթադը՝ 5000, Մեղրին՝ 3000, Ղարալագյազը (Վայոց ձոր)՝ 1000, Երնջակը՝ 1000:

Օրոն Եվրոպայում սպասվում էր հիասթափություն: Եվրոպան չէր կարող օգնել Հայաստանին: Պֆալցի կյուրֆուրստից վերցնելով երաշխավորագրեր՝ Օրին 1701 թ. Մինաս վարդապետի եւ լեհահայ թարգմանիչ Նազար Օրեխովիցի հետ մեկնում է Ռուսաստան: Օրին մշակում է Հայաստանի ազատագրության նոր՝ ռուսական ծրագիր, որով նախատեսվում էր Հայաստանը ազատագրել 25000-ոց ռուսական բանակի օգնությամբ: Ծրագիրը ռուսական արքունիք է ներկայացվում 1701 թ. հուլիսին, իսկ հոկտեմբերին Օրոն ընդունում է Պետրոս Մեծը: Արեւելքը հետաքրքրում էր ռուսներին: Ռուսաց թագավորը խոստանում է դեպի Հայաստան արշավանք ձեռնարկել հյուսիսային պատերազմի ավարտից հետո: Օրին ռուսական արքունիքին ներկայացնում է նաեւ Հայաստանի քարտեզը: Օրին գործի մարդ էր: Քանի դեռ շարունակվում էր ռուս-շվեդական



իշխանաց-իշխանը) գնալու իր հայրենի աշխարհը՝ Կապան, զորք հավաքելու այնտեղ՝ հայոց հողը պաշտպանելու»։ Ամենայն հավանականությամբ՝ Ստ. Շահումյանը տեղյակ էր Ռավիթ-Բեկի մասին։ Ջորավարի ծննդավայրը լինելու պատիվը վիճարկում են Սյունիքի մի քանի բնակավայրեր։ Գործում Շինուհայրը եւ Տաթևը, իսկ Կապանում՝ Բեխը։ Ստույգ հայտնի չէ նաեւ Ջորավարի մահվան պատճառն ու թվականը։ Ենթադրվում է, որ նա մահացել է 1727 կամ 1728 թթ.՝ 54 տարեկան հասակում։ Ռավիթ-Բեկի աներորդի Թադա Կուզանեցին 1746 թ. գրած հիշատակարանում նշվում է, որ Ջորավարն ընկել է մարտի դաշտում։ Հայտնի է, որ նրա հոր անունը եղել է Ալիխան, իսկ կնոջ անունը՝ Հուսնիսիմ կամ Ալամսուլթան։

Ռավիթ-Բեկը Սյունիք է գալիս 1722 թ. եւ նախ իր զորակայանն է դարձնում Գորիսի Շինուհայր գյուղը։ Նա ամրացնում է գյուղի բերդը, ձեռնարկում զորքի կազմակերպումը։ Նրա զորքի միջուկը դառնում են շինուհայրցի 550 մարտիկներ՝ Պալիսդուր, Պակի, Մինաս եւ Ստեփան զորապետների գլխավորությամբ։ Ջորավարն իր առաջին ճակատամարտը տալիս է Շինուհայրից ոչ հեռու՝ Եռաբլուրի սարահարթում, եւ հաղթում դարաջուռու ավազակաբարո ցեղերին։ Ջորավարի երկրորդ ճակատամարտը եւս տեղի է ունենում Եռաբլուրի սարահարթում այս անգամ Ջիվանշիրի երեսուներկու համախմբված ցեղերի դեմ։ Եռօրյա կռիվներից հետո հայերը կատարյալ հաղթանակ են տանում։ Սեբաստացին գրում է, որ թշնամու զորքի թիվը 60000 էր, բայց դա չափազանցություն է։ Հայերի հաղթանակները ոգեշնչող էին, եւ ողջ լեռնաշխարհում ամկայծում է ազատագրական պայքարի բոցը։ Դրանից հետո Ռավիթ-Բեկն իր անողորմ սուրն ուղղում է ներքին թշնամու՝ հայ դավաճանների դեմ։ Դրանցից ամենաուժեղը եւ վտանգավորը Տաթևի մելիք Ռավիթն էր (որոշ տվյալներով՝ նաեւ Ռավիթ-Բեկի անձնական տոհմական թշնամին), որը, ուրանալով քրիստոնեական հավատը, դարձել էր Մելիք-Բադր։ Դավաճանը գերվում եւ գլխատվում է Շինուհայրում։

Գորիսյան հաղթանակներից հետո Ռավիթ-Բեկը տեղափոխվում է Կապան։ Նա ապահովել էր ամուր թիկունք։ Ջորավարը կառուցում եւ ամրացնում է Հալիձորի բերդը, այն դարձնում զորակայան եւ իր ստեղծած իշխանության կենտրոն։ Հալիձորը գտնվում է Ողջի գետի աջ ափին։ Մինչ այդ այստեղ գործել է Կուսանաց անապատ։ Մ. Չամչյանը եւ Ղ. Ալիշանը շփոթվել են, համարելով, որ Ռավիթ-Բեկի Հալիձոր բերդը գտնվում է Հաբանդում։ Սակայն Գորիսի (Հաբանդի) Հալիձորը չպետք է նույնացնել Ռավիթ-Բեկի բերդի հետ, որը գտնվում

է Սյունիքի նախկին Ջորք գավառի տարածքում Գորիսի Հալիձոր գյուղից տասնյակ կիլոմետրեր հեռու։ Հարցը նրանում է, որ պատմական հին աղբյուրները Սյունիքի Ջորք գավառում Հալիձոր տեղանուն չեն հիշատակում։ Հնարավոր է, որ տեղանունը կապ ունի Գորիսի Հալիձորի հետ, քանի որ նրա բնակիչներն այդտեղ ունեին ամառային արոտավայրեր։

Ռավիթ-Բեկի դրոշի տակ հավաքվեցին Սյունիքի ողջ զինական ուժերը՝ իրենց հայտնի զորավարներով՝ Չավնդուրի տեր Թորոսը, Կալե-րից՝ Պապը, մելիք Փարսադանը, նրա լիեսա տեր-Ավետիսը եւ շատ ուրիշներ։ Սկսվեց մահմեդական իշխաններից երկրամասի ազատագրման շրջանը։ Ռավիթ-Բեկը լավ էր ըմբռնել սյունեցու հոգեբանությունը, որ նրանից վանելով վախն ու ստրկամտությունը՝ կարելի է կազմել անխորտակելի ջոկատներ։ Նա հանկարծակի հարձակումներով մաքրեց հայրենի հողը թշնամիներից, բռնագրավեց հայ դավաճան եւ այլ լազգի իշխողների հողերը ու բաժանեց յուրայիններին։ Ջորավարը կազմակերպեց ընդհանուր հրամանատարություն ունեցող, կարգապահ եւ մարտունակ բանակ, ձեւավորեց ռազմական խորհուրդ՝ սպայակոյտ։ Նա իր հետ Վրաստանից եկած Մխիթարին նշանակեց բանակի հրամանատար սպարապետ, զորքերը դասավորեց ըստ առանձին զավառների ու շրջանների։ Ջորագլուխներ կարգվեցին հմուտ, քաջակորով, հայրենասեր մարդիկ։ Բանակի զորաջոկատները 14-ն էին, իսկ մշտական զորքի ընդհանուր թիվը՝ 5000 զինվոր։ Դրանք շարժունակ, մշտապես փոխօգնության պատրաստ զորքեր էին։ Սյունիքի հայկական իշխանության մեջ հաստատվեց ռազմական խիստ կարգապահություն։ Պատժվում էր ամեն մի զանցանք եւ մանավանդ՝ վախկոտությունն ու դավաճանությունը։ Ռավիթ-Բեկը մահապատժի ենթարկեց Պապ զորապետին, որը մի ճակատամարտում անհարկի նահաջել էր։ Հաշվի չառնվեց, որ մինչ այդ զորապետը իրեն փառքով էր պսակել։ Ռավիթ-Բեկի ահեղ պատժից մի կերպ է խուսափել Մխիթար Սպարապետը՝ ենթարկվելով միայն ծեծի։ Ջորավարի կողմից պատժվել են նաեւ մելիք Փարսադանն ու տեր-Ավետիսը։ Երկաթյա կարգապահությունը դարձավ հաղթանակների գրավական։ Մեկը մյուսի ետեւից գրավվեցին Սյունիքի բոլոր կարեւոր բերդերը, որոնց թվում՝ Զեյվան ու Որոտնաբերդը։ Եղան եւ ցավալի պարտություններ, ինչպես Եղվարդում եւ Նախիջեւանում, բայց դրանք երբեք չհուսահատեցրին Ռավիթ-Բեկին։ Պարտությունը իսկույն փոխհատուցվում էր տպավորիչ հաղթանակներով։ Եղվարդում հայկական զորքի պարտության մեղքն ընկնում է Արծվանիկի դավաճան մելիք Ֆռանգյուլի խղճի վրա։

ճակատամարտում զոհվեց հերոս իշխան Թորոսը: Կապանի եղբայր գյուղի եկեղեցու մոտ՝ գերեզմանատանը, Թորոս իշխանի տապանաքարի վրա քանդակված է առյուծի գլուխն իր բերանի մեջ առած աղվես, որը խորհրդանշում է հերոսի՝ դավաճանության զոհ դառնալը: Իսկ մելիք Ֆռանգյուլի միայնակ գերեզմանը Ժողովորդի կողմից մինչեւ օրս անարգվում է՝ «շոն Փռանգուլ» հորջորջմամբ:

Դավիթ-Բեկի հաջողություններն ավելի ծանրակշիռ են դառնում այն բանից հետո, երբ նա հաղթական կռիվներ է մղում օսմանյան Թուրքիայի կանոնավոր բանակների դեմ: Թուրքական զորքերը, հեղեղի պես լցվելով Անդրկովկաս, անկարող եղան նվաճելու ազատության կղզիներ Սյունիքն ու Արցախը: Թուրքերը Սյունիք մտան 1726 թ.: Ապստամբների շարքերում նկատվեց որոշ վիատություն, եղան լքման դեպքեր, թշնամուն հաջողվեց գրավել Կապանի մեծ մասը: Դավիթ-Բեկը սակավաթիվ զորքով ստիպված ամրացավ Հալիձորում: 1727 թվականի սկիզբն էր: Թվում էր, թե պարտությունն անխուսափելի է. բերդի պարիսպներին թշնամին մոտեցրել էր հսկա սանդուղքների նմանվող 26 մեքենաներ: Թուրքական զորքերի թիվը լրացված լինելով տեղական մահմեդական ուժերով՝ հասնում էր 60-70 հազարի: Պաշարումը տևեց յոթ օր: Յոթերորդ օրը տեղի ունեցավ հրաշքը: Որոշվեց ձեռնարկել խիզախ հակահարձակում: Բերդի Ս. Մինաս եկեղեցում կատարվեց եկեղեցական արարողություն՝ բոլոր հոգեւորականները, միանձնուհի կույսերը ծնկաչոք օգնություն էին հայցում Աստծուց: Հնչում էին եկեղեցական զանգերը: Եվ 300 կամավոր քաջեր օրվա յոթերորդ ժամին՝ Մխիթար Սպարապետի եւ տեր-Ավետիսի հրամանատարությամբ, հանկարծակի դուրս եկան բերդից ու աղմուկ-աղաղակով հարձակվեցին թշնամու վրա: Վերջիններիս մոտ խուճապ սկսվեց, որը վերածվեց անկանոն փախուստի, թշնամու բանակի պաշարողական երեք գծերը խառնվեցին միմյանց: Այդ օրը օսմանցիները սվեցին 13000 զոհ եւ մարտի դաշտում թողեցին 148 դրոշ: Դա անսպասելի, փառավոր հաղթանակ էր: Սյունիքի լեռներում կրկին փողփողաց ազատության դրոշը: Շուտով ազատագրվեցին ողջ Կապանը եւ Մեղրին:

Այս հաղթանակը մեծ տպավորություն թողեց պարսիկների վրա եւ նրանք ընդամաք գնացին Դավիթ-Բեկի դիվանագիտական քայլերին: Կնքվեց հայ-պարսկական պայմանագիր: Պարսից շահ Թահմասբ զորավարին հղեց հրովարտակ, ուր նաեւ գրված էր. «Եվ ահա կարգեցի քեզ այսօր իշխան եւ գլուխ մեր բոլոր իշխանների, որ այդ կողմերում են եւ Կապան երկիրը, որ վերցրիր քաջությամբ՝ քեզ լինի»: Պարսից

շահը Դավիթ-Բեկին ուղարկեց խաչվառ, մի պատվական նժույգ, իսկ զորապետներին՝ մեկական պատմունքան: Դավիթ-Բեկին տրվեց նաեւ դրամ կտրելու իրավունք: Սյունիքի հողում կայացավ հայ-պարսկական զինակցությունն ընդդեմ օսմանյան թուրքերի:

1728 թ. սկսած՝ Կապանի հայկական իշխանության դրությունը ծանրացավ: Հայ-պարսկական զինակցությունն անհրաժեշտ ծավալներ չընդունեց: Անհույս էր դարձել նաեւ ռուսական օգնությունը: Ազուլիսի կռիվներում տակտիկական սխալներ թույլ տվեց նաեւ Դավիթ-Բեկը՝ արժանվույնս չպատժելով տեղի դավաճան հայերին: Ազատագրական պայքարի համար ճակատագրական նշանակություն ունեցավ նաեւ քաղաքական գործչի մահը: Դ. Սեբաստացու հաղորդման համաձայն, այն տեղի է ունեցել 1728 թ.՝ հիվանդության պատճառով:

Դավիթ-Բեկին արժանիորեն փոխարինում է Մխիթար Սպարապետը (սպարապետ նրան կոչեց Սեբաստացին, գերեզմանաքարի արձանագրության մեջ Մխիթարին տրված է Մեծ մականունը): Նա սյունեցի չէր, ծնվել էր Գանձակում: Լինելով տաղանդավոր եւ քաջ զինվորական՝ նա, սակայն, չունեց Դավիթ-Բեկի հեղինակությունն ու ուժը: Շուտով սկիզբ առան ընտանի գծություններ: Մխիթարին հակառակվեց մեկ ուրիշ հերոս՝ տեր-Ավետիսը: Նա Մխիթարի Բռնակոթ գյուղից էր՝ Հալիձորի բերդի տեր մելիք Փարսադանի փեսան: Երկու հեղինակությունների անմիաբանությունն ի վերջո հանգեցրեց Հալիձորի կորստին: Մխիթար Սպարապետը Հալիձորում իշխեց մեկ տարի: Օսմանյան թուրքերը կրկին պաշարեցին արծվաբույնը: Հակառակ սպարապետի՝ տեր-Ավետիսը որոշեց բանակցությունների մեջ մտնել թուրքերի հետ: Մխիթար Սպարապետը դա համարեց դավաճանություն եւ գիշերով հեռացավ ամրոցից: Թուրքերը սիրով ընդունեցին տեր-Ավետիսին, բայց հակառակ խոստման, կամովի հանձնված Հալիձորում սարքեցին կոտորած, ավեր եւ գերեզմանություն: Գերվեց նաեւ Մխիթար Սպարապետի ընտանիքը՝ կինը եւ երեխաները: Տեր-Ավետիսը զոքաց արարքի համար, բայց արդեն ուշ էր: Հալիձորի հերոսն իր ձեռքով, առանց կռվի, անառիկ բերդը հանձնեց թշնամուն եւ անօգնական վկա եղավ նրա կործանմանը: Տեր-Ավետիսը թողեց ամեն ինչ եւ մեղքերը քավելու համար մեկնեց Երուսաղեմ: Մխիթար Սպարապետը, ահ ու սարսափ տարածելով եւս մեկ տարի, հերոսական պայքար մղեց թշնամիների դեմ: Նա իր զորակայանը տեղափոխեց Գորիսի խնձորենկ գյուղը: Օրդուբադի վրա կատարած մի պատժիչ արշավանքից հետո նա 160 ուղտաբեռ ավար բերեց խնձորենկ: Այստեղ էլ նա դավադրաբար, հրացանի կրակոցով սպանվում է յուրայինների կողմից:

Լեոն խնժորեսկցիների այդ քայլը համարում է հայ ամբոխի պատմական ոճրագործություն: Հերոսի գլուխը կտրում, ոսկի ստանալու ակնկալիքով տանում են Թավրիզ, բայց վարձի փոխարեն դավաճանները տալիս են իրենց գլուխները: Թշնամին ըստ արժանվույն գնահատեց պժգալի արարքը:

Մխիթար Սպարապետի աճյ ունն ամփոփված է Հին խնժորեսկի անապատի բակում: Տապանաքարի վրա գրված է, որ նա նահատակվել է ՌԾՀԶ, այսինքն՝ 1727 թ.: Լեոն նկատել է գերեզմանաքարի թվականի սխալը: Այնտեղ Զ-ի փոխարեն պետք է լինի Թ. Մխիթարին սպանել են 1730 թ.: Մխիթար Սպարապետի մահով ավարտվում է Սյունիքի ազատագրական պայքարի հերոսական պատմությունը: Օսմանյան թուրքերը, առանց դժվարության, շուտով տիրեցին ողջ Սյունիքին:

## ԻԸ. Սյունիքը ռուսական տիրապետության տակ

Սյունիքում դավիթբեկյան ազատագրական պայքարի անկումից հետո հայ գորականներից շատերը ցրվեցին տարբեր վայրեր: Նրանց մի մասը զինվորական ծառայության անցավ Պարսկաստանում, մի մասն էլ գնաց Արցախ: Էապես թուլացավ երկրամասի դիմադրողական ուժը, թշնամու կողոպտիչ արշավանքներն այս կամ այն բնական վայրի վրա մնում էին անպատիժ: Շուրջ հինգ տարի Սյունիքում իշխեցին օսմանյան թուրքերը: Սկսվեց արտագաղթ, առաջին հերթին հեռանում էին կարող եւ ձեռներեց մարդիկ: Սյունեցիները հայտնվում են նաեւ Եվրոպայում: Եվրոպան նրանց ձգում էր որպես առեւտրաարդյունաբերական կենտրոն եւ բարձրացող քաղաքակրթության օրրան:

Իտալիայի Վենետիկ քաղաքում դեռեւս 17-րդ դարի կեսերից մեծ անուն էր հանել Շահումյան առեւտրական տունը: Առեւտրական տունը հիմնել էր Մեղրու Վանք գյուղից Ոսկան Շահումյանը: Այլշանի հավաստմամբ՝ այդ տունը վաճառահանում էր միլիոնավոր ֆրանկ արժողությամբ արեւելյան ապրանքներ՝ Դամասկոսի կերպաս, հայելիներ, ապակյա ճրագարաններ եւ այլն: Դավիթ-Բեկի մեզ քաջ հայտնի զինակից Ստեփանոս Շահումյանը Ոսկանի եղբոր որդին էր: Ապստամբության անկումից հետո նա, հարյուրավոր սյունեցիների նման, հեռանում է ծննդավայրից եւ հայտնվում Վենետիկում: Այստեղ ամուսնանում է եւ սկսում զբաղվել վաճառականությամբ: Չմոռանալով իր մարտական ընկերներին՝ նա Մխիթարյան միաբաններից Ղուկաս Սեբաստացուն գրել տվեց ազատագրական պայքարի պատմությունը:

Շահումյան առեւտրական տան ներկայացուցիչները, ինչպես նաեւ առանձին անհատ սյունեցիներ, խոր հետք են թողել Մխիթարյան միաբանության կենտրոնատեղի Ս. Ղազար կղզում: Կղզու վանքի 1736 թ. «Ժամանակագրության» մեջ նշվում է Հովհաննես անունով մի պատանու մասին, որը Հայաստանի Հաբանդ գավառից վաճառականություն անելու համար եկել էր Վենետիկ, սակայն թողել էր նախնական մտադրությունը, դարձել միաբանության անդամ: Հովհաննեսը 1737 թ. վաղաժամ մահանում է եւ իր կտակի համաձայն, թաղվում այնտեղ: Վանքի 1767 թ. «Ժամանակագրությունից» հայտնի է դառնում, որ 30 տարի Ս. Ղազար կղզու եկեղեցում պատանու պատգամին համապատասխան, «անվթար» մատուցվում է նրա



հիշատակի պատարագը: Հովհաննես պատանին միակ սյունեցին չէ, որ թաղված է Ս. Ղազար կղզում: Մխիթար Աբբահոր վարքը շարադրող Հ. Թորոսյանը գրում է. «Հաբանդ գավառեն երկու վաճառական ազգականք, Ստեփան եւ Նահապետ, որոնք Վենետիկ կը բնակեին, ուզեցին յիշատակ մը թողուլ Մխիթարայ դաստակերտին մեջ: Մտածեցին խորան մը շինել Ս. Գրիգոր Լուսավորչին՝ մարմար քարերով»: Կառույցի նախագիծը կազմում է ինքը՝ Մխիթար Աբբահայր Սեբաստացին եւ շինարարության ավարտից հետո օրհնում այն: Կարմիր մարմարից կառուցված խորանի առջեւ կա մի դամբարան, ուր տապանաքարի վրա արձանագրված է.

*Ղափանեցիք Շահումեանց տան  
Պարոն Ջաքարն որ է Դավթեան,  
Պարոն Սյունեան Վարդանէսեան,  
Պարոն Նահապետ Պողոսեան  
Երուն շինել զայս սուրբ սեղան  
Եւ ընդ նմին զայս դամբարան  
Ի յիշարակ եւ ի կայան,  
Բնակից որք են ճիւղք նոյնոյ տան,  
Յամի տնառն 1737 յուլիսի 30:*

Տապանաքարը 1975 թ. կղզում ծագած հրդեհից հետո, զետեղվել է եկեղեցու գավթի որմերից մեկում:

Վենետիկի Շահումեան առետրական տունը 1757 թ. սնանկացել է:

Օսմանյան գերիշխանությունը Սյունիքում, բարեբախտաբար, կարճ է տևում: Պարսից Նադիր Շահին հաջողվում է վերանվաճել ինչպես Արեւելյան Հայաստանը, այնպես էլ Սյունիքը: Սակայն, եթե նրա օրոք վերակենդանացան Արցախի հայկական մելիքությունները (Խամսայի), ապա նույնը չի կարելի ասել Սյունիքի մասին: Վերջինս ապրել է մեծ արտագաղթ, հայտնվել խորը տնտեսական ճգնաժամի մեջ: Այդ պատճառով այստեղ չվերստեղծվեցին նախկին հզոր հայկական իշխանությունները՝ մելիքությունները: Եղած մելիքները թույլ էին եւ անզոր՝ պաշտպանելու լեռնաշխարհը օտար ասպատակություններից:

1736 թ. Մուղանի դաշտավայրում մեծ տոնախմբությամբ եւ հանդեսներով Իրանի թագավոր է հռչակվում Նադիր Շահը (1736-1747 թթ.): Նրա թագադրության պատիվը տրված էր հայոց Աբրահամ Կրետացի կաթողիկոսին (1734-1737 թթ.): Թագադրությունից հետո կաթողիկոսը Էջմիածին է վերադառնում Սյունիքի վրայով՝ ցանկություն հայտնելով այցելել հռչակավոր Տաթև սրբավայրը: Բարեբախտաբար, նա նաեւ գրչի մարդ էր եւ սերունդներին է թողել մի ուղեգրություն, ուր

հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Սյունիքում իր այցելած մի շարք բնակավայրերի մասին:

Սյունիքի առաջին բնակավայրը, ուր ոտք է դրել Աբ. Կրետացին, եղել է ինձորենյ գյուղը: Այն իր տեսքով խիստ զարմացրել էր աշխարհի տեսած ծերունուն: Թշնամու հանկարծակի հարձակման ահից խնձորենյացիները, գյուղամիջի բնակատեղը թողած, ապրում էին ժայռերի վիմափոր քարանձավներում, ուր կարելի էր բարձրանալ միայն փոկերից սարքած աստիճանների միջոցով: Ուրեմն, Մխիթար Սպարապետի մահից հետո գյուղը մշտապես ենթարկվել է հարձակումների: Սակայն խնձորենյացիները արիաբար կռվել ու չեն հանձվել: Կրետացին այնուհետեւ անցնում է կիսավեր եւ Տաթևի կողմից բանադրված Զարահունջ գյուղի միջով, չորս օր մնում Հարանց Մեծ անապատում: Նա այցելում է Շինուհայրի Կուսանաց անապատ, ուր ընդամենը կային երկու տասնյակ միանձնուհիներ, հոգում մենաստանի որոշ պետքեր: Տաթևի վանքում կաթողիկոսը մնում է յոթ օր, քանի որ ձյան պատճառով ճանապարհները փակ էին: Հետո նա Կապանի Տանձավեր ամայի գյուղի միջով ուղեւորվում է դեպի Իրիցվանիկ (Արծվանիկ) գյուղը: Կրետացու սյունիքյան ուղեգրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Դավիթ-Բեկի հզոր ապստամբությունից ընդամենը վեց տարի անց Սյունիքը հայտնվել էր խորը ճգնաժամի մեջ: Ուղեգրության տողերում մենք ամենուր տեսնում ենք կիսավեր բնակավայրեր, ահաբեկված բնակիչներ, կիսակործան եւ անխնամ վանքեր ու անապատներ: Երկրամասը համարյա մնացել էր անպաշտպան: Շրջակա մահմեդական խանությունները մշտապես կողոպտիչ արշավանքներ էին ձեռնարկում Սյունիքի վրա: Հատկապես մեծ ակտիվություն էր ցույց տալիս Նախիջեւանի Հեյդար դուլի խանը: 1748 թ. նա իր զորքերով, արեւմուտքից-արեւելք կտրելով Սյունիքի տարածքը, հասնում է մինչեւ Տեղ գյուղը: Նրա դեմ պայքարի է դուրս գալիս մելիք Բարխուդարը, սակայն նա պարտություն է կրում եւ զոհվում: Սյունիքն այնուհետեւ ամբողջությամբ ընկնում է Ղարաբաղի նորաստեղծ խանության գերիշխանության տակ: 1762 թ. Սյունիքը դառնում է միջխանական կռիվների թատերաբեմ: Շուշին գրավելու անհաջող փորձից հետո Ուրմիայի Ֆաթալի խանը հարձակվում է Տաթևի վանքի վրա, գերեվարում այնտեղ պատսպարված մարդկանց, թալանում եկեղեցու հարստությունները:

Սյունիքի համար ծանր ժամանակներ էին: Լեռնաշխարհով մեկ սկսում են ազատ տեղաշարժվել քրդական եւ թուրքական քոչվոր

ցեղախմբեր, որոնք վայելում էին Ղարաբաղի իրենց կրոնակից խանի աջակցությունը: Հաճախակի են դառնում հայերի կրոնափոխության դեպքերը: Այդ ճանապարհով պատահական մարդիկ տեղ են դառնում առանձին գյուղերի ու կալվածների: Լեռնաշխարհի գետերի եւ լեռների, լճերի ու աղբյուրների, դաշտերի եւ ձորերի հայերեն անվանումները փոխարինվում կամ թարգմանվում ու տարածում են գտնում թուրքերենով: Թուրքերենով հնչյունափոխված այդպիսի մի տեղանուն է «Ջանգեզուր» երկրանունը: Այն, փոխադրվելով Սյունիք կամ Կապան երկրանուններին, գործածության մեջ մնաց շուրջ 200 տարի՝ ընդհուպ մինչեւ ՀՀ վարչատարածքային՝ 1995 թ. դեկտեմբերի 4-ի նոր բաժանումը: «Ջանգեզուր» բառի ժողովրդական ստուգաբանությունների համաձայն՝ այն առաջացել է «Ջանգն է գուր» կամ «Ջանգ է գուր» արտահայտություններից: Այս բացատրություններն անհիմն են եւ ոչ գիտական: «Ջանգեզուր» տեղանվան հանգամանակից եւ գիտական ստուգաբանությունը տվել է պրոֆ. Ալ. Մարգարյանը: Այն կապ չունի «զանգ» բառի հետ եւ առաջացել է «Ջագեձոր-Ջագաձոր» բառի թուրքերեն հնչյունափոխված ձեւից, քանի որ թուրքերենը զուրկ է «ձ» հնչյունից եւ փոխարենը օգտագործում է «զ»-ն: Ջագեձոր կոչվել է Վարարակն գետի հովիտը, ուր այժմ փռված է Գորիս քաղաքը: «Ջանգեզուր» տեղանունը չի գործածվել ոչ Խորայել Օրու փաստաթղթերում, ոչ «Ղավիթ-Բեկի պատմության» մեջ: Այն անծանոթ էր նաեւ Աբ. Կրետացուն: Նշանակում է՝ «Ջանգեզուր» տեղանունը գործածության մեջ է մտնում Ղարաբաղի խանության գերիշխանության օրոք եւ պաշտոնական ճանաչում ստանում ռուսական տիրապետության ժամանակ:

18-րդ դարավերջը սյունեցիների համար սպասումների ու ակնկալիքների ժամանակաշրջան էր: Սյունիքը մտնում էր Ղարաբաղի խանության մեջ, իսկ վերջինս մաս էր կազմում պարսկական պետության: Սյունիքի պատմական տարածքի մեծ մասին տիրում էին Ղարաբաղի խաները, որոնք երկրամասը բաժանել էին երկու մեծ՝ Տաթևի եւ Ղափանի մահալների եւ դրանք կառավարում հայ մելիքների՝ միրբուլուքների միջոցով: Տաթևի միրբուլուքներն էին Օրբելյանները: Բացի միրբուլուքներից՝ Սյունիքի տարածքում կային սահմանափակ իշխանություն ունեցող ուրիշ մելիքներ եւս:

Հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոնը դարձել էր Արցախը: 1783 թ. ռուսական ցարին Գանձասարից ուղղված դիմումի տակ մենք տեսնում ենք նաեւ Ջանգեզուրի մելիքներից մեկի ստորագրությունը: Ռուսների մոտքը Անդրկովկաս օրակարգի հարց էր: 1783

թ. Վրաստանն ընդունում է ռուսական հպատակություն: 1784 թ. պետք է կայանար ռուսական զորքերի արշավանքը դեպի Անդրկովկաս: Արցախի եւ Սյունիքի մելիքները սպասումների մեջ էին: Սակայն ռուսների փոխարեն 1795 – 1797 թթ. Հայաստան ու Վրաստան արշավեց պարսից ներքինի շահ Աղա Մահմեդ խանը: Պարսից շահի երկրորդ արշավանքից հետո սկսվեց սով եւ համաճարակ: Ժանտախտը տարածվեց նաեւ Սյունիքում: Լեռն գրում է. «Հիվանդությունը սաստիկ էր մանավանդ Սյունիքում, խնձորենկ ավանի շրջականերում: Այդ կողմերից մեծ գաղթականություն դուրս գնաց եւ ցրվեց զանազան կողմեր»։ Րաֆֆին այդ գաղթը համարել է Սյունյաց աշխարհի մեծ գաղթականություն:

19-րդ դարը Անդրկովկասի համար նշանավորվում է նրանով, որ Ռուսաստանը վեջնականապես ուտը է դնում այստեղ: 1801 թ. Ռուսաստանին է միացվում Վրաստանը: Հարց բարձրացվեց՝ կայսրության սահմանը հասցնել մինչեւ Արաքս գետը: Այդ ծրագիրը մասամբ իրականացվեց ռուս-պարսկական առաջին (1804-1813 թթ.) պատերազմի ժամանակ: Պատերազմը սկսվելուց մեկ տարի անց Ղարաբաղի խորամանկ խան Իբրահիմը, կանխելով իր հպատակ բնակչության գերակշիռ տարրի՝ հայերի ակնկալիքները, ընդառաջ է գնում ռուսների պահանջներին: Նա քաջ գիտակցում էր, որ խանության սահմաններում ինքը չի կարող դիմադրել ռուսներին, հայերին չի կարող ստիպել՝ կռվելու նրանց դեմ: 1805 թ. մայիսի 14-ին՝ Քյուրակչայ գետի ափին խիստ վրանում, ռուս զենեռալ Ցիցիանովը եւ Ղարաբաղի Իբրահիմ խանը պայմանագիր ստորագրեցին, որով խանությունն ընդունում էր ռուսական հպատակություն: Ղրանով իսկ ռուսական կայսրության մեջ մտան Գորիսի, Կապանի եւ Սիսիանի շրջանները: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով ռուս-պարսկական սահմանը ճանաչվեց Ողջի գետը, որի աջ ափից մինչեւ Արաքս հասնող տարածքը (Չավուդուր, Մեղրի) մնաց Պարսկաստանին: Մեղրին ռուսական տիրապետության տակ է անցնում 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով:

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Սյունիքի հայ բնակչությունը զորավիգ եղավ ռուսական զորքերին՝ նրանց օգնելով նաեւ աշխարհագրային ուժերով: Գեներալ Տորմասովը 1811 թ. մարտի 3-ի գեկուցագրում հաղորդում է, որ Մեղրու մոտ աշխարհագրայինները կռվում էին ռուսական ջոկատի շարքերում եւ տվեցին 8 զոհ: Գեներալ Ռտիշչենը 1812 թ. հուլիսի 27-ին իշխան Գորչակովին ուղարկած գեկուցագրում հաղորդում է, որ հուլիսի 12-ին 65 զինված հայեր, միանալով 17- րդ զնդի ջոկատին, խնձորենկի մոտ մարտ

մղեցին գյուղը կողոպտելու փորձ կատարող սարքազների (պարսիկ զինվոր) դեմ եւ հարկադրեցին նրանց՝ դիմել փախուստի: Բազում փաստեր կան, որ Սյունիքի բնակչությունը ժողովրդական բանակին օգնել է ինչպես ռուս-պարսկական առաջին, այնպես էլ երկրորդ պատերազմի ժամանակ: Հայերը Ռուսաստանի համար վստահելի հպատակներ էին, մինչդեռ նույնը չի կարելի պսել մահմեդական բնակչության մասին: Սակայն դա հայերի համար որեւէ լավ բան չէր խոստանում: Ղարաբաղի խանության մեջ պահպանվեց խանական կառավարչաձեւը: Խորտակվեցին Արցախի եւ Սյունիքի հայ մելիքների այն հույսերը, որ իբր ռուսական իշխանությունները կվերականգնեն իրենց իրավունքները, իրենք տեր կկանգնեն հայրենական վաղեմի տիրույթներին: Ղարաբաղի մահմեդական խաները պահպանեցին իրենց ժառանգական իրավունքները եւ գործում էին առանց էական իրավական սահմանափակումների: 1806 թ. դավաճանության մեջ կասկածվում եւ Շուշիում հրացանազարկ է արվում Իբրահիմ խանը: Նրան փոխարինում է Մեհտի անունով որդին՝ ոգելից խմիչքների նկատմամբ հակում ունեցող եւ Ղարաբաղի վերջին խանը: Նրա օրոք սկիզբ առան շատ անօրինականություններ: Սկսվում է հողատիրական իրավունքների ձեռք բերման մի աննախադեպ մրցություն, որի ժամանակ երեւան են գալիս նորաթուխ հողատերեր, որոնք իրենց իրավունքները ստանում էին մուլթ եւ հանցավոր ճանապարհներով: Եվ ցավալի է, որ դա կատարվում էր ռուսական տիրապետության օրոք, իսկ նորաթուխ հողատերերը հիմնականում մահմեդականներ էին, որոնք հեշտությամբ կաշառում էին ռուսներին: Այդ ճանապարհով Գորիսի գյուղերի մի մասին տեր են դառնում Ռուստամբեկովները: Սրանք հավատափոխ հայեր էին, որոնց դեմ Տեղ գյուղում գյուղացիական ապստամբություն է սկսվում:

1822 թ. վերանում է Ղարաբաղի խանությունը: Վերջին խան Մեհտին փախչում է Պարսկաստան, եւ խանության փոխարեն ստեղծվում է Ղարաբաղի պրովինցիա, որը կառավարվում էր ռուս պարետի կողմից:

Սյունիքի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու առաջին դրական հետեւանքը կարելի է համարել այն, որ Թուրքմենչայի պայմանագրով նախատեսված պարսկահայերի ներգաղթից հետո երկրամասում կտրուկ, հոգուտ հայերի, փոխվում է ժողովրդագրական իրավիճակը: Այսպես, օրինակ՝ Սիսիանի շրջանում ներգաղթողները հաստատվեցին Սալվարդ, Անգեղակոթ, Ուզ, Լծեն, Շաղատ, Աշտարակ, Բարձրավան, Բալաք, Թասիկ, Շաքի գյուղերում եւ դրանց տվեցին հայա-

շունչ վերակենդանություն:

1840 թ. վարչական ռեֆորմով Զանգեզուրը կազմում էր Շուշիի գավառի մասը: 1849-1868 թթ. Զանգեզուրը մտնում էր Երեւանի նահանգի մեջ:

1868 թ. Անդրկովկասում իրականացվեց վարչական նոր վերափոխում: Կովկասի փոխարքայության կազմում ստեղծվում է Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի Զանգեզուր գավառը: Այդ գավառը ամենաընդարձակն էր նահանգի մեջ: Նրա մեջ մտնում էին Գորիսի, Սիսիանի, Կապանի, Մեղրու՝ գլխավորապես հայկական բնակչություն ունեցող, ինչպես նաեւ նախկին Զանգեզուրի, Կուբաթլիի, Լաչինի՝ հիմնականում մահմեդական (քրդեր եւ թուրքեր) բնակչություն ունեցող շրջանները: Գավառը բաժանված էր ոստիկանական տեղամասերի կամ գավառակների: Վերջիններս իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների՝ գյուղական համայնքների: Գավառում մշտական բնակչություն հաստատեցին ռուս ջինովսիկությունը եւ զինվորականությունը: Գավառում բարձր պաշտոնները, մասնավորապես գավառապետի պաշտոնը, մշտապես զբաղեցրել են ռուսները (եղել է նաեւ վրացի):

Զանգեզուր նորաստեղծ գավառի կենտրոնը դարձավ Գորիսը: Տեղանունը ծագել է Ստ. Օրբելյանի՝ Հաբանդ գավառի հարկացուցակում հիշատակվող Գորայք գյուղանվան Գորայս հայցական ձեւից: Գորիս մերօրյա գրեթեմեղ առաջին անգամ հիշատակվում է 1624 թ. տեղում գրված մի ձեռագրում: Գորայքը կամ ինչպես տեղացիներն են կոչում՝ Կյորեսը, գտնվում է Ներկա Գորիս քաղաքի արեւելյան դիմահայաց ժայռանտառի մեջ: Գավառակենտրոն քաղաքը հիմնվեց Վարարակն գետահովտի տափարակում, ուր սովորաբար կազմակերպվում էին տոնավաճառներ: Քաղաքի կառուցման հիմնական շինարարական աշխատանքներն սկսվեցին 1870 թ.: Կարճ ժամանակամիջոցում այն դարձավ Զանգեզուր գավառի հոգետր-մշակութային, առևտրաֆինանսական կենտրոնը: Այստեղ բնակչություն հաստատեցին նաեւ այլ շրջաններից եկած ազնվականներ, մեծահարուստ առևտրականներ ու մտավորականներ, ինչպես Սաֆրազբեկյանները՝ Սիսիանի Բռնակոթ գյուղից, Մելիք-Նուբարյանները՝ Կապանի Շիկահողից եւ շատ ուրիշներ: Ռուս ջինովսիկության հետ քաղաքում բնակվում էին նաեւ մահմեդական բեկեր: Նորաստեղծ քաղաքում նախ գործել է ռուսական դպրոցը եւ եկեղեցին: Վերջինս 1926 թ. քանդվել է:

Գորիս քաղաքը կառուցվել է ըստ հատակագծի, որի հիմքում երկու ամենալայն փողոցների հատմամբ՝ ընկած է եղել քրիստոնեական խա-

չի գաղափարը: Անհիմն է ժողովրդի մեջ տարածված այն տեսակետը, որ իբր քաղաքի հատակագիծը կազմել են գերմանացիները: Գորիսը ցարական հրամանով քաղաքի կոչում է ստացել 19-րդ դարավերջին: Ռուսական տիրապետության օրոք Սյունյաց հինավուրց լեռներում ձեւավորվեց արդիական մի քաղաք, որը համարվել է ժամանակի հայ քաղաքաշինության գոհար: Գորիս քաղաքի ծնունդ էր եւ նրա գեղարվեստական տարեգիրը դարձավ հայ մեծանուն գրող Ակսել Բակունցը:

## ԻԹ. Սյունիքը մինչեւ 1920 թվականը

1. Սոցիալ-տնտեսական զարգացումը: 2. Բաթումի պայմանագրի արձագանքները հրկրամատում: 3. Չորավար Անդրանիկը Ջանգեզուրում: 4. Ջանգեզուրյան հերոսամարտերի սկիզբը:

Անցնելով ռուսական տիրապետության տակ՝ Սյունիքը, բնականաբար, կապվեց Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքին, թեպետ ավանդական առեւտրական կապերը Պարսկաստանի հետ շարունակվում էին դեռ երկար ժամանակ: Խոսելով առեւտրականների հին սերնդի մասին՝ Ակ. Բակունցը նշում է, որ նրանք Գորիսում տակավին օգտագործում էին պարսկական չափն ու կշիռը: Ջանգեզուրի տնտեսության հիմնական ճյուղերն էին անասնապահությունն ու հողագործությունը: Ջանգեզուրի բնակչության զբաղմունքի բնույթի մեջ որակական փոփոխություն է կատարվում 1840-ական թվականներից, երբ երկար ընդմիջումից հետո Կապանում սկսվում է պղնձի հանույթը: Կապանի պղնձահանքերի մասին տեղյակ էր գեներալ Վ. Մադաթովը: Այդ մասին նա գրում է Երմոլովին 1823 թ. հղած իր նամակում: 1824 թ. սկսած՝ Կապանի պղնձահանքերի ուսումնասիրմամբ զբաղվել է ռուս չինովնիկ Յակով Ռոզովը: 1848 թ. Ռոզովը Ագարակ գյուղի մոտ կառուցում է առաջին պղնձաձուլական գործարանը: Բայց նա 1850 թ. մահանում է, եւ սկսած գործը շարունակում են հույները՝ Ալավերդի Խարլամպի Կոնդարովի գլխավորությամբ: Հետագայում ֆրանսիացիների կողմից պղնձաձուլական գործարաններ են կառուցվում Ղաթարում, Կավարտում, Բեխում եւ Նորաշենիկում: Կապանի հանքերում աշխատելու համար գալիս էին Պարսկաստանից, իսկ 19-րդ դարի երկրորդ կեսին այստեղ բնակություն հաստատեցին հույն հմուտ պղնձագործներ: Հույն հանքագործները հիմնեցին Բաշքենդ գյուղը, ուր 1861 թ. կառուցեցին ուղղափառ եկեղեցի: 1845-67 թթ. Ջանգեզուրում գործել են պղնձի ձուլման յոթ փոքր գործարաններ: 1886 թ. ձուլվել է 8000 փութ պղինձ, 1887 թ.՝ 16000, 1888 թ.՝ 24000: Մինչեւ 1917 թ. այստեղ ձուլվել է 33000 տ մաքուր պղինձ: Չնայած պղնձարդյունաբերության զարգացմանը՝ քաղաքային բնակավայր դեռեւս չէր ձեւավորվում: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Կավարտ եւ Բարաբաթում բնակավայրերում ապրում էր 465-ական մարդ, իսկ պղնձարդյունահանման հետ կապված 21 բնակակետերում՝ 43-ական մարդ: Կապանի հանքերի հայ արդյունաբերողներից հայտնի էին Հ. Խոջամիրյանը, Մ.

Ազարյանը: Պղնձի արդյունահանման եւ մշակման տեխնիկան դժվարությամբ էր զարգանում: Հանքանյութը տեղափոխվում էր ուղտերով: Այդ հարցում կարելի էր նշանակություն ունեցավ 1909 թ. Ողջի գետի վրա Զրախորի՝ 600 կվտ հզորությամբ հիդրոէլեկտրակայանի կառուցումը: 1912 թ. Կապանի պղնձահանքերը կապալով վերցրին ֆրանսիացիները եւ կառուցեցին հզոր պղնձաձուլական գործարան: Տակավին 19-րդ դարում աշխատանքներ էին տարվում Զաջարանի ընդերքի ուսումնասիրման ուղղությամբ: Այն առաջինն ուսումնասիրել է գերմանացի երկրաբան Է. Յ. Աբիխը՝ 1835 թ.: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ Զաջարանի տարածքում եղած մի քանի բնակավայրերում ապրող բնակչության թիվը եղել է 2000 մարդ, որոնց թվում նաեւ հույներ:

Զանգեզուրի տնտեսության համար կարելի էր նշանակություն է ունեցել Նախիջեւան-Շուշի խճուղու կառուցումը 1869-77 թթ.: Այս խճուղով Կապանի պղինձը հասցվում էր Եվլախ երկաթուղային կայարանը: Զարգանում էին նաեւ արհեստներն ու ամենատարբեր: Ս. Զելինսկին, որ հատուկ ուսումնասիրել է Զանգեզուր գավառի տնտեսական կացությունը, նշում է, որ գավառի 42 հայկական բնակավայրերում 1884-85 թթ. կար 1104 արհեստավոր՝ 231 ատաղձագործ, 134 քարտաշ, 131 ջուլհակ, 95 գզրար եւ թաղիք պատրաստող, 48 դերձակ, 37 բրուտագործ, 28 ներկարար եւ այլք: Արհեստավորների թիվը որոշ բնակավայրերում բարձր էր, օրինակ. Գորիսում կար 77, իսկ Մեղրիում՝ 134 արհեստավոր: Բարձրորակ գորգերի ու կարպետների արտադրությամբ աչքի էր ընկնում Սիսիանը: Սիսիան-Ղարաքիլիսայի բնակչության թիվը 1897 թ. կազմում էր 1266 մարդ: Խիստ ցածր էր գավառի բնակչության գրագիտության մակարդակը: Օստ Զելինսկու՝ 1884 թ. գավառում կար 4 դպրոց, ուր սովորում էր 199 հոգի, որից 3-ը՝ աղջիկ: 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն՝ գավառում գրագետ էր մարդկանց 2%-ը, այն բարձր էր Գորիս քաղաքում 15,8%: Զելինսկին հատուկ նշում է Մեղրու բնակիչների բարձր կենցաղը. նրանք ունեին եվրոպական կահավորմամբ երկհարկանի տներ, սալահատակ փողոցներ, դպրոց, շուկա: Այնտեղ գործում էր գրական խմբակ, որը կազմակերպում էր ստեղծագործական երեկոներ, լուծում բաղնիք կառուցելու կամ խողովակներով խմելու ջուր բերելու եւ այլ հարցեր: Մեղրիում դպրոցը հիմնվել է 1881 թ.՝ Ռաֆֆու անմիջական օգնությամբ:

Զանգեզուրի հոգեւոր-մշակութային կենտրոնը դարձավ նոր հիմնադրված Գորիս քաղաքը: 1897 թ. քաղաքն ուներ 4000 բնակիչ: 1898 թ. Վարարակն գետի վրա գործարկվել է հիդրոէլեկտրակայան,

որը լուսավորում էր նաեւ քաղաքային զբոսայգին: Գորիսում 1903 թ. հիմնվել է «Սասուն» տպարանը, ուր հրատարակվել են գրքեր, իսկ 1909 թ.՝ նաեւ «Գավառ» թերթը: Գորիս քաղաքում ռուսական դպրոցը բացվել է 1874 թ., իսկ հայկականը՝ 1884 թ.: Մեծ համարում ունեին Գորիսի ամենտրականները, որոնք կապված էին ռուսական եւ եվրոպական շուկաների հետ: Նրանք քաղաքի կենտրոնում՝ հրապարակի վրա, կառուցել էին ամենտրի արդիական կենտրոն (պասսաժ), ինչպես նաեւ ծածկած շուկա: Գորիսի ամենտրական տները ներկայացնում էին ոչ միայն գործիչները, այլեւ սիսիանցիներ, կապանցիներ, որոնք բնակություն էին հաստատել գավառակենտրոն քաղաքում: Գորիսում գործել է նաեւ լիմոնադի գործարան, ինչպես նաեւ ցեմենտե սալարկման, գունավոր սալիկների արտադրամաս: Զանգեզուր գավառի տարածքը 6743 կմ² էր, իսկ բնակչության թիվը 1916 թ. եղել է 226.398 մարդ, որի մոտ կեսը՝ հայեր:

1917 թ. օգոստոսի 15-ին հրավիրվել է համագանգեզուրյան գործադիր կոմիտեի նիստ, որին մասնակցել է 31 հայ եւ նույնքան մահմեդական պատվիրակ: Ուստիվել է 4 հոգուց կազմված դիվան, գավառապետ է նշանակվել Մեսրոպ բեկ Սարատիկյանը: 1917 թ. նոյեմբերից գավառը բաժանված էր հայկական եւ թուրքական ինքնուրույն կառավարվող շրջանների: Զանգեզուրի համար հայեցի գոյության ամենածանր ժամանակները սկսվում են այն պահից, երբ 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակվում է անկախ եւ մի քանի օր անց՝ հունիսի 4-ին, Թուրքիայի հետ կնքում Բաթումի պայմանագիրը: Ինչպես հայտնի է, այդ պայմանագրով Հայաստանը պարփակվում էր մի փոքր տարածքի մեջ, եւ հիմնավորց հայկական հողերի՝ Սյունիքի եւ Արցախի հարցը թողնվում անկախ: Դրան հետեւել էր այն տրամաբանությունը, որ եթե Սյունիքը Հայաստանի կազմում չէ, ապա այն պետք է մտնի պատմության մեջ առաջին անգամ ստեղծված երկրորդ թուրքական՝ Ադրբեջան պետության մեջ:

«Ադրբեջան» կամ «ադրբեջանցի» հասկացություն մինչ այդ ընդհանրապես չի եղել: Ռուսական տիրապետության օրոք այդ տարածքներում ապրող մահմեդականները (ոչ քրդերը) պաշտոնապես անվանվել են թաթարներ, իսկ սյունեցիները մինչեւ օրս նրանց պարզապես կոչում էին՝ «թօրք-թուրք»: Զանգեզուրի հայերի ազգային բարձր ինքնագիտակցությունը թույլ չէր տալիս մտածելու անգամ, որ իրենք կենթադրվեն Ադրբեջանին: Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայությունը «Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայրենակցական միության» 1918 թ. հունիսի 17-ի հուշագրով գերմանական բլոկի բոլոր երկրներին հայտնում

է, որ հանուն արդարության եւ հայ ժողովրդի իրավունքների՝ այդ տարածքները պետք է միացվեն Հայաստանին, ու իրենք երբեք չեն ընդունի օտար տիրապետությունը:

Եվ սկսվում է տարիներ տեւած, համառ ու հերոսական գոյապայքար, որից Զանգեզուրը դուրս է գալիս հաղթանակած ու չի կիսում Արցախի ճակատագիրը:

Ադրբեջանի կառավարության կողմից նշանակված Զանգեզուրի պարետ Իզգաբեյը Դոնդաշու գյուղից կոչ է հղում գավառի հայ բնակչությանը՝ «առանց ազգի եւ դավանանքի խտրության» համախմբվել եւ ենթարկվել Ադրբեջանի «անաչառ» եւ «արդարացի» իշխանությունների: Սակայն Զանգեզուրի հայ բնակչությունը՝ ի դեմս ստեղծված կենտրոնական ազգային խորհրդի, վերջնականապես կայացրել էր Ադրբեջանին չենթարկվելու իր որոշումը: Ստեղծվում է Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ, որի նախագահ է ընտրվում բժիշկ Միքայել բեկ Պարոնյանը: Խորհրդի անդամներն էին Ն. Հովսեփյանը, Տ. Սազանդարյանը (Գորիս), Մ. Զաքարյանը, Հ. Տերունին, Գ. Տեր-Մկրտչյանը (Սիսիան), Ս. Զարամյանը, Ա. Շիրինյանը, Ս. Ստեփանյանը (Կապան, Մեղրի): Գավառապետ դարձավ բժ. Մ. Պարոնյանը, որին երկու ամիս անց փոխարինեց Ն. Հովսեփյան-Օսիպովը: Ազգային խորհուրդներ ստեղծվեցին նաեւ այլ վայրերում: Բարեբախտաբար, կենտրոնական ազգային խորհրդի մեջ չկային կուսակցական տարաձայնություններ, եւ ազգանվեր աշխատանքներին մասնակցում էին նաեւ բոլշեւիկներ: Ազգային խորհրդի առաջնահերթ խնդիրը դարձավ ինքնապաշտպանական ուժերի կազմակերպումը: Ակնհայտ էր, որ Ադրբեջանը, խաղաղ միջոցները սպառելով, զենքի ուժով պիտի փորձեր տիրանալ Զանգեզուրին:

Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը, երկրամասը Հայաստանին միավորելու խնդրով, բազմիցս դիմել է Երեւան, բայց այնտեղից հասկացնել են տվել, որ դա առաջմ հնարավոր չէ: Ըմբոստ Զանգեզուրի վիճակը օրեցօր ծանրանում էր: Այն ենթարկվեց շրջափակման ու կտրվեց արտաքին աշխարհից, իսկ Ադրբեջանը շարունակում էր վերջնագրեր ուղարկել: Կենտրոնական ազգային խորհուրդը որոշում է Զանգեզուր հրավիրել զորավար Անդրանիկին, որն այդ պահին արեւմտահայ գաղթականության հետ գտնվում էր Նախիջեւանում: Այսպես, Սյունյաց հպարտ լեռներում հայտնվում է հայոց արծիվ Անդրանիկ Օգանյանը:

Անդրանիկի՝ Զանգեզուր մտնելու որոշումը կարելի է համարել պատմական: Զորավարը գաղթականների հետ (նաեւ Նախիջեւանցի)

1918 թ. հուլիսի 21-ին լեռնային դժվարանց երթ է կատարում եւ Քաջարանի միջով մտնում Կապանի շրջան: Կապանը հացառատ չէր: Այստեղ նա մնում է յոթ օր: Անդրանիկն այնուհետեւ Քաջունի եւ Տաթեւ գյուղերով շարժվում է դեպի Զանգեզուրի կենտրոն Գորիս: Անդրանիկը 3000-անոց ջոկատի եւ 16000 գաղթականների հետ Գորիս է գալիս 1918 թ. օգոստոսի 3-ին: Եվ Գորիսում, եւ Սիսիանում տարին բերքառատ էր: Նա նախ լուծում է գաղթականների տեղավորման հարցը, ապա ձեռնամուխ լինում երկրամասի ինքնապաշտպանության կազմակերպման խնդրին: Նախիջեւանից Սյունիքի վրա կախված վտանգը կանխելու նպատակով նա մեկնում է Սիսիան եւ կազմակերպում լեռնանցքների պաշտպանությունը, հատկապես Կժաճոր-Գյումրի հատվածում: Սիսիանում հրավիրած ժողովներում նա համոզվում է, որ ժողովուրդը պատրաստ է մարտնչելու: Կապանում տիրող իրավիճակից նա եւս կարող էր հանգիստ լինել. երկրամասի պաշտպանության խնդրին իր կտրուկ քայլերով ձեռնամուխ էր եղել տեղի ազգային խորհուրդը՝ Սմբատ բեկ Մելիք-Ստեփանյանի գլխավորությամբ:

Անդրանիկի ներկայությունը Զանգեզուրում զսպում էր թշնամուն, եւ Ադրբեջանն այդ ընթացքում որեւէ լուրջ ռազմական գործողություն չի ծավալում: Հակառակ դրան, դրությունը ծանրանում էր Արցախում, եւ Անդրանիկը որոշում է օգնության ձեռք մեկնել արցախահայությանը: Միայն կամավորներից կազմված 2000-անոց ջոկատով նա 1918 թ. նոյեմբերին ձեռնարկում է իր հայտնի արշավանքը դեպի Արցախ: Ամեն ինչ ընթանում էր բարեհաջող: Երկու օր անց Անդրանիկի հաղթական ջոկատները գրավում են Զաքուդի ձորը եւ մոտենում Արցախի սահմաններին: Սակայն այստեղ Անտանտի ռազմական միսիայի պահանջով արշավանքը դադարեցվում է: Անդրանիկը ստիպված էր համաձայնել, քանի որ չենթարկվելու դեպքում չէր երաշխավորվում հայկական հարցի քննարկումը Փարիզի խաղաղության կոնֆերանսում:

Անդրանիկը Զանգեզուրում եղած ժամանակ եւ իր անունից, եւ կենտրոնական ազգային խորհրդի միջոցով, բազմիցս դիմել է Երեւան, որպեսզի Հայաստանի կառավարությունը վերջապես լուծի Զանգեզուրի հարցը: Այդ հարցը անընդհատ ձգձգվում էր, իսկ Ադրբեջանը քայլերի էր դիմում երկրամասը խաղաղ ճանապարհով բռնակցելու համար: 1918 թ. դեկտեմբերի 8-ին Գորիս է գալիս անգլիական մի պատվիրակություն՝ Գիբոնի գլխավորությամբ: Անգլիացիների խնդրին էր՝ «խաղաղ» ճանապարհով լուծել Ադրբեջանի գերիշխանության հարցը: Գիբոնը 100 հնդիկ սիպահի-

գինվորների ուղեկցությամբ ժամանում է՝ ավտոմեքենայի մեջ բազմած, սակայն Անդրանիկը նույնիսկ փողոց դուրս չի գալիս՝ նրան դիմավորելու: Գիրքը վերադառնում է ձեռնունայն:

Անդրանիկը ուշի-ուշով հետետում էր Ադրբեջանի ռազմական գործողություններին՝ մշտապես պատրաստ լինելով հակահարված տալու: Հայտնի է նրա՝ Ադրբեջանում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար Թոմսոնին 1918 թ. դեկտեմբերին ուղղված բողոքագիրը՝ ադրբեջանական զորքերի տեղաշարժի առթիվ: Այնտեղ կրկին շեշտվում էր, որ Զանգեզուրի հայությունը ոչ մի կերպ չի կարող ճանաչել Ադրբեջանի որեւէ իրավունք իր տարածքի վրա: 1919 թ. հունվարին հայտարարվում է զորահավաք, եւ 20-22 տարեկան զանգեզուրցի երիտասարդներից կազմվում մնայուն զորք: Պետական կարիքների համար սահմանվում է հարկ:

Ադրբեջանի կառավարությունը Թոմսոնի հավանությամբ՝ 1919 թ. հունվարի 15-ին Ղարաբաղի եւ Զանգեզուրի նահանգապետ է նշանակում ջարդարար խոսքով բեկ Սուլթանովին: Ասես, սպասելով դրան, Հայաստանի կառավարությունը 1919 թ. հունվարի 21-ին կայացնում է Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության կազմում ճանաչելու պատմական որոշումը: Որոշումը Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհրդին է ուղարկվում հունվարի 30-ին: Գորիս ուղարկված գրության մեջ նշվում է. «Համաձայն Կառավարության ամուլյս 21-ի որոշման՝ Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայկական մասերում ժամանակավոր վարչություն հաստատելու վերաբերմամբ՝ նշանակվում է պետական կոմիսար Զանգեզուր-Ղարաբաղի հայկական շրջանի համար, շտաբի կապիտան Արսեն Շահմազյանը»: Նույն որոշման մեջ սահմանվում էր տարածաշրջանի ծախսերի համարը եւ պետական գանձարանից փետրվար ամսվա համար հատկացվող գումարի չափը՝ 400000 ռուբլի: Սա սյունեցիների գոյապայքարի առաջին կարեւոր, թեկուզ միայն իրավական հաղթանակն էր: Դրան պետք է հաջորդեին հաղթանակները նաեւ մարտի դաշտերում:

ՀՀ կառավարության կոմիսար Ա. Շահմազյանը գործակիցների հետ Գորիս է ժամանում 1919 թ. մարտի 12-ին: Նա Անդրանիկից ընդունում է Զանգեզուրի հայկական զորքերի ընդհանուր հրամանատարությունը: Մեծ զորավարը հոգով հանգիստ լինելով, որ լեռնաշխարհի խնդիրը վերջնական լուծված է, տեղի գինական ուժերը կարող են պաշտպանել երկրամասը ու նաեւ կատարելով բոլոր կողմերից եկող զինաթափման պահանջը՝ պատրաստվում է հեռանալ Զանգեզուրից:

1919 թ. մարտի 18-21-ը Գորիսում հրավիրվում է Զանգեզուրի գյու-

ղացիության համագումար, որտեղ մի երախտագիտական դիմում է ընդունվում ուղղված զորավարին: Դիմումում նշված էր. «Զանգեզուրի հայ ժողովուրդը, որ երբեք չափսի մոռանա մեծ գործը, այսօր ցավում է Սիսիանի եւ բուն Զանգեզուրի համագումարի միջոցով, որ հանգամանքների դասավորմամբ թողնում ու հեռանում էք»: Անդրանիկը միայն կամավորների հետ, 1919 թ. մարտի 25-ին մեկնում է Էջմիածին:

Գորիսում Անդրանիկի ապրած տան առջեւ կանգնեցված է հայ ժողովրդի մեծ զավակի կիսանդրին:

Անդրանիկի հեռանալուց հետո՝ Զանգեզուրի համար սկսվում է հերոսական գոյապայքարի Նոր շրջան: Սյունիքում Անդրանիկի հիմնած գործը պատվով շարունակեց ՀՀ կառավարության կոմիսար, հետագայում գնդապետի կոչման արժանացած Ա. Շահմազյանը: Նրա անունը արժանի տեղ պետք է գրավի Զանգեզուրի տարեգրության մեջ՝ Անդրանիկի եւ Գ. Նժդեհի անունների կողքին: Զանգեզուրյան գոյապայքարի այս հերոս սպան բոլշեիկների կողմից աքսորվեց Սիբիր ու մեռավ հայրենիքից հեռու:

1919 թ. մարտի 31-ին կենտրոնական ազգային խորհուրդը լուծարվեց, եւ փոխարենը ստեղծվեց շրջանային խորհուրդ, որի կազմի մեջ մտան Ա. Շիրինյանը, Մ. Զաքարյանը, Հ. Տերունին, Խ. Դանիելյանը, (դաշնակներ), Եր. Բակունցը, Ս. Տեր-Հայրապետյանը (կոմունիստներ), Ս. Ստեփանյանը (անկուս.): Ստեղծվեց ռազմական խորհուրդ (գլխավոր սպայակույտ), նշանակվեցին հրամանատարներ՝ Սիսիանում Պ. Տեր-Ղափյանը, Տաթևում Խ. Մալինյանը, Մեղրիում՝ Շահբազյանը: Անդրանիկի հեռանալուց մեկ ամիս անց Ադրբեջանը՝ անգլիացիների օգնությամբ, կրկին փորձեց «խաղաղ» ճանապարհով հնազանդեցնել ըմբոստ սյունեցիներին: Այս անգամ Գորիս ժամանեց գնդապետ Շատելվորտի միսիան: Սակայն նրան եւս չհաջողվեց սասանել սյունեցիների կամքը: Դրանից հետո Ադրբեջանը ձեռնարկեց բացահայտ ռազմական արշավանք:

Խորհրդահայ պատմագրությունը լռել է զանգեզուրյան հերոսամարտերի մասին: Այդ մասին քիչ է գրվել եւ խոսվել:

Մինչ Ադրբեջանը պատրաստվում էր Սյունիքի դեմ պատերազմի՝ երկրամասն ապրում էր խաղաղ կյանքով: Սյունիքի շրջափակումը մեղմելու նպատակով՝ ՀՀ կառավարությունը 1919 թ. մարտի 28-ին որոշում ընդունեց՝ կառուցելու Քեշիշքենդ (Եղեգնաձոր)-Անգեղակոթ խճուղին (միջեւ նման չէ այն բանին, որ այսօր կառուցվել է Գորիս-Ստեփանակերտ խճուղին): Խճուղուն զուգահեռ պետք է անցկացվեր հեռագրային գիծ: Մինչ այդ՝ Զանգեզուրը Երեւանի հետ կապված էր

Նախիջեանի վրայով: Աշխատում էին Կապանի պղնձահանքերը: 1919-20 ուստարում գործում էին Զանգեզուրի համարյա բոլոր հայկական դպրոցները, Նույնիսկ հրավիրվեց ուսուցիչների համագումար: Ճապոնացիների հետ նախագիծ էր մշակվում կառուցելու Ելենովկա (Սեւան) - Նոր-Բայազետ (Գավառ)-Գորիս երկաթգիծը: 1919 թ. Գորիսում Վարարակն գետի վրա, սկսվեց 48 կմ տեղադրված երկրորդ հիդրոէլեկտրակայանի կառուցումը:

Ադրբեջանի կողմից Զանգեզուրի վրա հարձակմանը նախորդեցին նախապատրաստական լուրջ աշխատանքներ: 1919 թ. հոկտեմբերի 29-ին Նա Թուրքիայի հետ կնքեց զինակցային պայմանագիր: Բանակ զորակոչվեցին Զանգեզուրի շրջակա բոլոր մահմեդական բնակավայրերի մինչև 35 տարեկան տղամարդիկ, որոնք 1-2 ամիս, նաե՛լ՝ ռուս եւ թուրք սպաների հսկողությամբ, անցան ռազմական պատրաստության: Ադրբեջանցիները ձեռք բերեցին նաեւ արդիական զենք եւ լեռնային թնդանոթներ: Ադրբեջանական զինուժին մեծ օգնություն էին ցույց տալիս ռուս սպաներ, մասնավորապես՝ Ադրբեջանի բանակի շտաբի պետ Սուլեյմանյանը:

Զանգեզուրի վրա հարձակվող բանակի հրամանատար Նշանակվեց գեներալ Ալի Աղա Շիխլինսկին: Ղեռնա հունիսի 28-ին Մեղրիում եւ սեպտեմբերի 20-ին Կապանում ադրբեջանցիները փորձեցին առաջ շարժվել: Կապանում թշնամուն թեւեւ հաջողվեց գրավել Ագարակ, Ուժանիս եւ Մոդես (Կաղնուտ) գյուղերը, սակայն հարձակումը կասեցվեց, թշնամուն մեծ կորուստներ պատճառվեցին: Ծանր էր հատկապես Գողթնի վիճակը, ուր կռիվներ էին սկսվել դեռեւս հուլիսի 5-ից: Սակայն արդեն Կապանում էր գտնվում Գ. Նժդեհը եւ այս ճակատից կարելի էր չանհանգստանալ:

Ադրբեջանական 15000-ոց կանոնավոր բանակի հարձակման գլխավոր ուղղությունը Գորիսի վրա էր: Բանակին հետետում էին հազարավոր բաշխրոզուկներ՝ պատրաստ թալանելու հայկական բնակավայրերը: Հարձակումը Գորիսի վրա պետք է կատարվեր երեք ուղղություններով: Հարվածի մի ուղղությունը, շրջանցելով Գորիսը, Եռաբլրի սարահարթով իջնում էր Սիսիանի վրա:

Զանգեզուրի վրա Շիխլինսկու վճռական հարձակումը սկսվեց 1919 թ. նոյեմբերի 1-ին: Հայկական զորքերի ընդհանուր հրամանատարն էր Արսեն Շահմազյանը, իսկ շտաբի պետը՝ Ռուբեն Նարինյանը: Մարտերի սկզբում հայկական զորքերը, մասնավորապես հյուսիսային խոզնավար-Բայանդուր ճակատում, նեղվելով հրետակոծությունից, ետ ըսկրկեցին: Վիճակն օրհասական էր. թշնամին հեռվից տեսնում էր

թաղաքը: Վճռորոշ մարտերը տեղի ունեցան Գորիսին նայող Վերիշենի բարձունքներում եւ Տեղ գյուղի ճակատում: Այս վերջինում թշնամին քայլ անգամ առաջ չէր շարժվել: Գորիսի բարձունքներում հայկական զորքերի անկասելի հարձակմանը նպաստեց Սիսիանից օգնության եկած 250-հոգիանոց հեծյալ ջոկատը՝ Զաքար (Զաքո) Դավթյանի հրամանատարությամբ: Հակառակորդին խուճապի մատնելու համար՝ հրամանատարությունը ջոկատի հեծյալներին երեք անգամ պտտեցրեց թշնամու համար տեսանելի բլրի շուրջը: Այս ճակատամարտում աչքի ընկավ թնդանոթաձիգ (թուփչի) Սիմոնը: Ցարական բանակի կապիտան Սիմոն Մելիք-Հարությունյանը Վայքի Մերս գյուղից էր եւ մեծ ժողովրդականություն էր վաստակել: Փայլուն հաղթանակ տարան նաեւ Տեղ գյուղի ճակատի հայկական զորքերը՝ ցարական սպա, գորիսցի Մալինցով հաջատուրի հրամանատարությամբ: Ադրբեջանական բանակի նահանգը եղել է խուճապահար: Շիխլինսկու բանակի մնացորդները շուրջ առան միայն Շուշիում: Թշնամին մարտադաշտում թողեց հարյուրավոր դիակներ, թնդանոթներ, գնդացիներ, դեռեւս չկրակած հրացաններ: Գորիսյան մարտերը ժողովուրդը կոչեց՝ Մեծ կռիվ: Հազիվ մազապուրծ եղած գեներալ Շիխլինսկին հետո Ադրբեջանի պառլամենտում արդարանում էր, որ ինքը բախվել էր Հայաստանի Հանրապետության կանոնավոր բանակին, մինչդեռ իրողությունն այն էր, որ նա կռվել էր դեռեւս Անդրանիկի օրոք լավ կազմակերպված տեղական զինական ուժերի դեմ եւ խայտառակ պարտություն կրել:

Գորիսի ճակատամարտից քիչ անց, Կապանում, հայկական զորքերը՝ Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ, հաջողությամբ ավարտում են Գեղվաձորի օպերացիան: Սյունյաց լեռներում եկել էր հայոց մեկ այլ արծվի՝ Գարեգին Նժդեհի հպարտ սավառնելու ժամանակը:



## Լ. Անկախ Լեռնահայաստան

1. *Գարեգին Նժդեհը Մյունիքում:*

2. *Մյունիքը եւ Հայաստանը՝ միասնական:*

1919 թ. աշնանից սկսած՝ Զանգեզուրյան գոյապայքարի գլխավոր դեմքը դառնում է ժողովրդի պանծալի գավակ Գարեգին Տեր-Հարությունյան - Նժդեհը: Թուրքերը նրան կոչել էին «Աժդահա փաշա»: «Նժդեհը» մականունն է, բառը պարսկական ծագում ունի եւ նշանակում է «պանդուխտ», «օտարական»: Ղեկնա 1918 թ. մայիսին Ղարաբլիխայի ճակատամարտում աչքի ընկած կապիտան Նժդեհը Գորիս է եկել 1919 թ. օգոստոսի սկզբին եւ նշանակվել Կապարգողթի (Կապան, Արեւիք, Գողթն) հրամանատար: Նա իր առաջին հրամանը արձակել է օգոստոսի 10-ին Կապանի հանքերից, ուր տեղավորված էր նրա շտաբը: Գորիսյան հաղթական ճակատամարտերից հետո գոյապայքարի հիմնական կռիվները տեղի են ունենում Կապանում: Թուրքերը տիրություն էին անում Ողջի եւ Գեղվա ձորերում Մյունիքը կտրելով Գողթնից: Կապարգողթի զինված ուժերին հանձնարարվում է մաքրել այդ ձորերը: Ակամա հիշում են Ղազար-Բեկին, որը նախ ոչնչացրեց հինգերորդ շարասյունը՝ ներքին թշնամուն: Ողջի ձորը գրավելու համար մարտական գործողություններն սկսվում են նոյեմբերի 15-ին: Նժդեհի ցուցումով այստեղ առաջին անգամ օգտագործվում են հանքաքարից պատրաստված պայթուցիկ տակառներ, որոնք խուճապի են մատնում թշնամուն: Այս հաջողությունից հետո՝ դեկտեմբերի 1-ին, սկսվում է Գեղվաձորի օպերացիան, որը տեւում է յոթ օր եւ կրկին ավարտվում փայլուն հաղթանակով: Անառիկ համարվող Գեղվաձորը, ուր 1918 թ. թուրքերը սրախողխող էին արել 2000 նախիջեւանցի հայ գաղթականների ու մնացել անպատիժ, ազատագրված էր: Առանց հապաղելու՝ Գարեգին Նժդեհը Կապանի վաշտերն ուղղում է Բարկուշատի գծում գործող թշնամու դեմ եւ գրավում 30-ից ավելի գյուղեր: Սրանք ծանրակշիռ եւ շշմեցուցիչ հաղթանակներ էին, որ փառք են բերում 33-ամյա հրամանատարին:

1919 թ. դեկտեմբերին Գորիսում, կոմիսար Արսեն Շահմազյանին փոխարինած գեներալ Ն. Ղազարյանը հրավիրում է ռազմական խորհրդակցություն, որին մասնակցում էր նաեւ Դրոն (Դրաստամատ Կախյան): Զննարկվում էր «Շուռնուխ օպերացիայի» հարցը: Պետք էր

ապահովել Գորիս -Կապան խճուղու անվտանգությունը: Նժդեհը դեմ էր դրան եւ պահանջում էր անհապաղ սկսել Ագուլիսը փրկելու գործողությունը: Նժդեհի առաջարկը չի անցնում, եւ նա ստիպված է լինում համաձայնել: «Շուռնուխ օպերացիան» եւս ավարտվում է փայլուն հաղթանակով: Կռվին մասնակցում էր նաեւ ընդհանուր հրամանատար Նշանակված Դրոն՝ 600-հոգիանոց ջոկատով, իսկ Նժդեհը պարզապես անձնական քաջության օրինակներ ցույց տվեց իր զինվորներին: Այդ օպերացիան սկսվեց 1920 թ. հունվարի 19-ին եւ վեց գյուղերի փոխարեն, ինչպես նախապես ծրագրված էր, գրավվեցին երեք տասնյակից ավելի բնակավայրեր եւ բոլոր ռազմավարական բարձունքները:

Կարճ ժամանակամիջոցում Նժդեհը դարձավ կենդանի լեգենդ Զանգեզուրի լեռներում: Նրան գիտեին եւ ճանաչում էին բոլորը: Նա հերոսության եւ ոգեշնչման աղբյուր էր: Դրան հակառակ՝ նա ահ ու սարսափ էր դարձել թշնամու համար: Ադրբեջանի կառավարությունը նրա գլուխը գնահատել էր 3 միլիոն ռուբլի: Նժդեհը գործով ապացուցեց, որ անհնարինը կարելի է հնարավոր դարձնել, եթե ժողովուրդը տրամադրված է հաղթանակի: Նա դարձավ ժողովրդական առաջնորդ: Կապանի հայ զինվորությունը նրան նվիրում է անվանական սուր՝ հետելյալ մակագրությամբ. «Գարեգին Նժդեհին, որին Ղափանն անվանեց 2-րդ Ղազիթ-Բեկ, իսկ թշնամին՝ «Աժդահա փաշա»: Թող այդ սուրը միշտ հիշեցնի հերոսին, որ Նժդեհը եւ Ղափանը անբաժան են հոգով»: Զանգեզուրի զինվորական մասի կոմիսար Ղազարյանի միջնորդությամբ Նժդեհին միանգամից շնորհվում է գնդապետի աստիճան, որը նա կրում է 1920 թ. գարնանից: Այդ ընթացքում Զանգեզուրում տեղի էին ունեցել վարչական փոփոխություններ: Զանգեզուրի քաղաքացիական մասի կոմիսար էր նշանակվել Ս. Մելիք-Յուլյանը: Ստեղծվել էր երկու գավառ՝ Զանգեզուր (Սիսիան, Գորիս) եւ Կապարգողթ (Կապան, Մեղրի), կազմվել երեք զինվորական շրջան՝ իրենց հրամանատարներով:

1920 թ. գարնանը հայկական զորքերը՝ Նժդեհի հրամանատարությամբ, հաղթական արշավանք են ձեռնարկում հարթավայրային Զանգեզուրի ուղղությամբ: Թշնամուց մաքրվում է Արցախի եւ Մյունիքի միջեւ տեղ գտած սեպը: Հիմնավորապես ի չիք են դառնում Զանգեզուրն իր կազմում տեսնելու Ադրբեջանի երազանքները: Սակայն Ադրբեջանը Նժդեհի հաղթանակների մեջ ավելի մեծ վտանգ էր տեսնում, այն, որ ազատագրվող Զանգեզուրին կարող է հետեւել Ղարաբաղը:

1920 թ. ապրիլի 22-ին Գորիսում տեղի է ունենում հաղթահանդես: Զանգեզուրի՝ գեներալ-կոմիսար Ս. Մելիք-Յուլյանն իր անձնական «Գեորգեյան խաչը» հանում է ամրացնում է Գ. Նժդեհի կրծքին: Նա ցանկություն է հայտնում նաեւ հերոսի կրծքին տեսնել ՀՀ «Մեծն Վարդանի» գինվորական շքանշանը: Որոշում է, որ Զանգեզուրը Նժդեհի միջոցով օգնության ձեռք մեկնի Ղարաբաղին: Նժդեհի համար այլեւս անհնարին ոչինչ չկար: Բարկուշատ-Հագարիի վրայով Նժդեհը՝ զանգեզուրյան վաշտերի հետ, հաղթական մուտք է գործում Արցախի Ղիզակի (Հադրութ) շրջան եւ չեզոքացնում Դրոյի զորքերի աջակողմյան թեւին սպառնացող վտանգը: Թվում էր, թե մոտ է արցախահայության հաղթանակը: Դա այդպես էլ կլիներ, եթե չլիներ...

Բոլշեւիկյան կարմիր բանակը 1920 թ. ապրիլի 28-ին մտավ Բաքու եւ այնտեղ հռչակեց խորհրդային իշխանություն: Եվ այն, ինչ ծրագրել էին մուսաֆաթականները Զանգեզուրի եւ Ղարաբաղի հանդեպ ու ձախողել, փորձեց իրականացնել խորհրդային Ադրբեջանը: Ադրբեջանի հակահայկական ծրագրերն իրագործելու իրականավորի դերում Անգլիային փոխարինեց բոլշեւիկյան Ռուսաստան: Սա շատ ավելի վտանգավոր թշնամի էր, քանի որ բոլշեւիկյան գաղափարներ կրում էին նաեւ հայեր, որոնք, կամա թե ակամա, պետք է օգնեին Ադրբեջանին: Սպասվող վտանգը բոլորից առաջ կանխազգաց հեռատես քաղաքական գործիչ Նժդեհը: Հետախուզության շնորհիվ նրա ձեռքն ընկան մի քանի գաղտնի փաստաթղթեր, որոնք պարզում էին ռուս բոլշեւիկների մտադրությունները Զանգեզուրի հանդեպ: Ադրբեջանի կառավարությունը, Կարաեւի բերանով, Գորիսի իրենց ներկայացուցիչ-բոլշեւիկներից պահանջում էր ամեն ջանք գործադրել՝ ժողովրդական առաջնորդներին եւ մտավորականությանը գլխատելու կամ կաշառելու համար: Այլեւս պարզ էր, որ բոլշեւիկները առանց որեւէ ձեռնարկությունների՝ Զանգեզուրը պետք է հանձնեն Ադրբեջանին, եւ դա է Սյունիքի վրա արշավող կարմիր բանակի հիմնական խնդիրը:

1920 թ. մայիսի 17-ին Կապանի հանքերում հրավիրված Կապարգողթի հայության ներկայացուցչական ժողովը քննարկեց Զանգեզուրի շուրջ տիրող քաղաքական իրավիճակը: «Ադրբեջանի կարմրացումը համարել քաղաքական շանտաժ՝ ստեղծված տաճկա-ադրբեջանական միլիտարիստների ու պանիսլամիստների ձեռքով, հատկապես Հայաստանի անկախությունը եւ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգելու համար».-նշված էր այդ ժողովի որոշման կետերից մեկում:

Սկսվեց Զանգեզուրի հայության հերոսական պայքարի մի նոր

շրջան, երբ հարկ եղավ կռվել նաեւ ներքին թշնամու՝ հայ բոլշեւիկների դեմ: Այդ պայքարը բովանդակ ցարական Ռուսաստանում բոլշեւիկյան հաղթարշավի դիմադրության մի աննախադեպ երեւոյթ էր, որն ավարտվեց սյունեցիների փայլուն հաղթանակով, եւ Զանգեզուրը միացավ Հայաստանին:

11-րդ կարմիր բանակի 28-րդ հրաձգային դիվիզիայի գնդերը նախ մտան Տեղ, ապա՝ Կոռնիձոր եւ Քարաշեն գյուղերը, իսկ 1920 թ. հուլիսի 3-ին՝ Գորիս: Հուլիսի 7-ին Նժդեհը նախազգուշական հետեւյալ խոսքերն ուղղեց զանգեզուրցիներին. «Հայ ժողովուրդ, Կապարգողթի եւ Բաղաբերդի հերոս ժողովուրդ, բոլշեւիկի կեղծ-կարմիր փետուրներով զարդարված ադրբեջանյան վտանգն է կանգնած դռանդ: Ուրեմն, ինչպես եւ միշտ, եղիր արթուն, սպառնալեն ու միշտ պատրաստ դիրքերում, հանկարծակիի չգալու համար:

Աստված եւ իմ սուրը քեզ հետ»:

Օգոստոսի 3-ին Դրոն հակահարձակումով ետ գրավեց Գորիսը, բայց մի քանի օր անց ստիպված էր նահանջել: Նժդեհը միավորվեց: Դրոն ետ քաշվեց Վայոց ձոր, իսկ Նժդեհը մեկնեց Կապան: Նա չենթարկվեց ՀՀ ռազմական նախարարի հրամանին, որով պահանջվում էր զորքով ետ քաշվել Երեւան: Ենթարկվել այդ հրամանին՝ կնշանակեր Զանգեզուրը զիջել Ադրբեջանին: Եվ նա որոշեց ըմբոստանալ ու կռվել: 70 օր Կապանի վաշտերը Նժդեհի հրամանով կռվեցին 28-րդ կարմիր դիվիզիայի 248, 249, 250, 251 եւ 252-րդ գնդերի դեմ: Սարտերից մեկում խփվեց Նժդեհի ձին: Հատկապես խիստ դիմադրություն ցույց տվեց Զեյվա գյուղը: Սակայն բոլշեւիկյան գաղափարների ազդեցության տակ ժողովրդի միասնական կամքը երկփեղկված էր, եւ դա տխրեցնում էր զորավարին: Կարմիր զորքերը գրավեցին Կապանը, իսկ Նժդեհը բարձրացավ Խուստուփ սարը՝ իր արծվաբույնը: Նա համոզված էր, որ ժողովուրդը կհասկանա կատարվածը եւ կսթափվի: Նա Խուստուփի վրա հիմնեց «Դավիթ-Բեկյան ուխտ»՝ գինվորական գաղտնի կազմակերպությունը, որն անլեզալ պայմաններում պետք է գործեր բոլշեւիկների ձեռքն անցած բնակավայրերում: Զորավարը կանխազգուշ էր, որ ժողովուրդը շուտով ոտքի կկանգնի: Թուրք կարմիր զինվորները Գորիսի ու Սիսիանի գյուղերում զբաղված էին թալանով եւ բռնաբարություններով: Զգալով, որ լցվել է համբերության բաժակը՝ Նժդեհը Մեղրուց տեղափոխվեց Կապան եւ Խուստուփից 7-հոգով սկսեց Սյունիքի ազատագրումը բոլշեւիկներից: 1920 թ. հոկտեմբերի 9-ին նա 50 հոգուց բաղկացած ջոկատով գիշերը մի արծվային

հարձակում գործեց Կապանի վրա: Կարմիր զինվորները խուճապահար փախան՝ թողնելով 20 զնդացի, 200 ձի, հարյուրավոր գերիներ: Սիսիանում ապստամբությունը ղեկավարում էր Պողոս Տեր-Դավթյանը: Հոկտեմբերի 14-ին ողջ Սիսիանը մաքրված էր բոլշևիկներից: 28-րդ դիվիզիայի ծվեկներն էին մնացել միայն: Ուզ գյուղի մոտ, մառախուղի պայմաններում թուրքական զնդի վրա հանդուգն գրոհի ժամանակ, գլխից մահացու վիրավորվեց խոտանանցի հերոս սպա Պողոս Տեր-Դավթյանը:

Կարմիր զորքերին օգնության է հասնում անուն հանած Պ. Կուրոջկինը՝ 1800 հոգիանոց հեծելազորատով: Պետք է նշել, որ մի քանի տասնյակ կազակներ հրաժարվեցին կռվել հայերի դեմ, բայց նրանք տեղում զնդակահարվեցին: Կուրոջկինի հեծելազորի դեմ կռիվները ծավալվեցին Շուռնուխի շրջակայքում: Կուրոջկինն ընկավ Նժդեհի լարած որոգայթի մեջ եւ անփառունակ պարտություն կրեց: Նժդեհի ռազմավարի մեջ հաշվվում էր 500 գերի, 24 զնդացի, այլ զինամթերք: Հայերի տվեցին՝ 1 զոհ, 2 վիրավոր:

Գորիսում բոլշևիկների դեմ առաջինն ապստամբեց Հալիծորը: Հալիծորցիները 3 օր կռվեցին կարմիր զորքերի դեմ, իսկ հաղթանակն ապահովվեց Տաթևից եկած օգնության շնորհիվ: Հոկտեմբերի 27-ին ազատագրվեց Նաեւ. Գորիսը: Այստեղ հարմար դիրք գրավեցին Վերիշեն եւ Ակներ (Բռուն) գյուղերի երիտասարդները: Հինգամսյա տիրապետությունից հետո կարմիր բանակը ստիպված էր հեռանալ Զանգեզուրից: 9000 զինվոր ունեցող բանակը տվել էր 5000 զոհ, 1600 գերի, կորցրել 67 զնդացի, 400 ձի եւ այլն: Սյունիքը փառապանծ հաղթանակ էր տարել, մինչդեռ Հայաստանի երիտասարդ հանրապետությունը դարձել էր քեմալականների եւ բոլշևիկների համագործակցության զոհը: Դեկտեմբերի 2-ին կնքվել էր Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, իսկ Հայաստանը՝ խորհրդայնացվել: Այդ ամենի դեմ մի արիական մարտահրավեր էր Նժդեհի կողմից Զանգեզուրի անկախության հռչակումը: Մինչեւ անկախության հռչակումը. Գորիսում ընտրվեց 7 հոգուց բաղկացած գյուղացիական ժամանակավոր խորհուրդ՝ Ս. Մելիք-Հյուսեփյանի նախագահությամբ: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրվեց Զանգեզուրի աշխատավորության 1-ին համագումարը, որին մասնակցում էր 118 պատգամավոր: Համագումարը ղեկավարում էր Գ. Տեր-Մինասյանը: Օրակարգում դրված էր 11 հարց: Ընդունված որոշման 1-ին կետով՝ Զանգեզուրը հռչակվում էր անկախ, որպես Ինքնավար Սյունիք, մինչեւ քաղաքական հնարավորություն ստեղծվեր՝ միանալու մայր Հայաստանին: Համագում-



Գարեգին Նժդեհ

մարն ընտրեց Ինքնավար Սյունիքի կառավարություն՝ 9 հոգուց բաղկացած դիվան: Դիվանի կազմում էին Գ. Տեր-Մինասյանը, Ն. Դորունցը, Ի. Մելիք-Փարսադանյանը, Գ. Գրիգորյանը, Ե. Հարությունյանը, Մ. Տեր-Մկրտչյանը, Տ. Մելիք-Հյուսեփյանը, Ա. Մաշուրյանը: Նրանց անձնափոխանորդ ընտրվեց բժ. Միսա Մինասյանը: Սյունիքը բաժանվեց 6 շրջանների՝ 1. Բուն Զանգեզուր, 2. Տաթևի ձոր, 3. Կապան, 4. Դարաբասի ձոր, 5. Սիսիան, 6. Գենվազ: Կազմվեցին գործադիր շրջանային մարմիններ՝ 6 ամիս ժամկետով: Ինքնավար Սյունիքի մայրաքաղաք հռչակվեց Գորիսը: Որոշվեց մշտական ներկայացուցիչ ունենալ Պարսկաստանում: Ընդունվեցին ներքին

կյանքին վերաբերող կարեւոր որոշումներ, օրինակ՝ պետականացվեցին խոշոր մասնավոր սեփականությունը, բեզական ու եկեղեցական հողերը: Գ. Նժդեհը հռչակվեց Սյունյաց Սպարապետ:

Արդեն զգացվում էր, որ բոլշևիկները փոխել են իրենց մտադրությունները Զանգեզուրի հանդեպ: Հունվարի 21-ին Նժդեհն ընդունեց Գր. Վարդանյանի գլխավորած բոլշևիկյան պատվիրակությանը, որը բերել էր Դրոյի նամակը: Հետո ստացվեց 11-րդ Կարմիր բանակի ռազմափետրախաղի խորհրդի անդամ Հեկկերի նամակը, ուր խնդրվում էր վստահել եւ Զանգեզուրը հռչակել խորհրդային՝ Հայաստանի կազմի մեջ մտնելու պայմանով: Նժդեհի ծանրակշիռ հաղթանակներն իրենց գործն արել էին:

1921 թ. փետրվարի 16-ին՝ Նժդեհի հրամանով, Սյունիքի արեւմտյան ռազմաճակատի զորքերը Յապոնի գլխավորությամբ՝ սրընթաց գրոհով վերցրին Վայոց ձորը: Գերվեց 900 կարմիր զինվոր: Դա օգնություն էր փետրվարյան ապստամբությանը:

1921 թ. փետրվարի 21-ին Գորիսի Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ Նժդեհի՝ սպարապետ օծվելու հանդիսավոր արարողությունը: Նրա մեջքին կապեցին օծված գոտի, հանձնվեց Նաեւ եւ ռազուկն դրոշ, որի վրա գրված էր. «Ինքնավար Սյունիքի կառավարությունից անհաղթ Սպարապետ Նժդեհին»:

Հայաստանում բուլժեիկների դեմ ուղղված փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Սյունիքում հայտնվեցին հազարավոր գաղթականներ, մեծ մասամբ՝ մտավորականներ: Նժդեհը դիմեց պարսից շահին, Պարսկաստանում գտնվող օտարերկրյա դեսպաններին՝ Սյունիքում հայտնված գաղթականներին տեղ տալու խնդրանքով: Նրան անմիջապես պատասխանեց Մեհտի խանը՝ սահմանամերձ պարսկական տարածքների կառավարիչը. «Ես պատրաստ եմ մատուցելու Ձեզ ամեն մի ծառայություն, ինչ-որ վայել է Ձեր անվան մեծությանը»:

Նժդեհը ապահովեց 10000-ից ավելի գաղթականների անցումը Պարսկաստան:

1921 թ. ապրիլի 26-ին Տաթևում կայացավ Զանգեզուրի աշխատավորների 2-րդ համագումարը, ուր երկրամասը հայտարարվեց Լեռնահայաստան եւ ստեղծվեց նոր կառավարություն: Նժդեհը պարզեցնելով «խուսափողական արժիվ» շքանշանով: Նոր կառավարության նախարարապետ, արտաքին գործերի եւ գիւղգորական նախարար նշանակվեց Նժդեհը, ներքին գործերի նախարար՝ Ս. Մելիք-Յուլյանը, արդարադատության եւ լուսավորության՝ Յ. Տեւեճյանը, պարենավորման՝ Յ. Տեր-Հակոբյանը, խնամատարության՝ բժ. Մ. Մինասյանը, ֆինանսների՝ Ա. Եղիազարյանը, պետական վերահսկիչ՝ Գ. Տեր-Մինասյանը: Լեռնահայաստանի կազմի մեջ մտնում էր նաեւ Վայոց ձորը:

Անկախության հռչակումից հետո Սյունիքն ունեցել է իր պետականության խորհրդանշները՝ օրհներգ-քայլերգը, զինանշանը: Զինանշանի վրա պատկերված էր եռանկյունի վահան-գրահ, ուղղահայաց մեխված կարճ թուր՝ գլխին բազմաձև սլացքի պատրաստ արծիվ: Սյունիքի քայլերգի տեքստի հեղինակն էր Տիգրան Սազանդարյանը (Տաթևիկ Սազանդարյանի հայրը): Նրանում կային այսպիսի տողեր.

*Մեր սարեր անառիկ եւ հպարդ,*

*Մեր որդիք կորովի եւ անպարդ,*

*Խոր չորեր Սյունիքի ահավոր՝*

*Շիրիմ եւ բնամուն դարավոր:*

Հայաստանի Հանրապետության անկումից հետո, շուրջ յոթ ամիս, Սյունիքում գործածության մեջ են եղել հայկական թղթադրամները: Հայաստանի «Փրկության կոմիտեն», Երեւանից տեղափոխվելով Զանգեզուր, իր հետ բերել էր 5 մլրդ. 882 մլն. հայկական ռուբլու, 491,5 մլն. ռուսական ռուբլու թղթադրամներ, ինչպես նաեւ՝ 4 արկղ վալյուտային արժեքներ:

1921 թ. մայիսի 28-ին Լեռնահայաստանի մայրաքաղաք Գորիսում մեծ շուքով նշվեց անկախության տոնը:

1921 թ. հունիսի 1-ին Լեռնահայաստանը հռչակվեց Հայաստան, եւ կազմվեց նոր կառավարություն՝ Զանգեզուրում ապաստան գտած Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Գ. Նժդեհն ստանձնեց ռազմական նախարարի պաշտոնը: Փաստորեն ստեղծվեց երկրորդ հայկական պետությունը: Բայց արդյո՞ք այն կարող էր գոյատևել խորհրդային Հայաստանի հարեանությամբ, երբ վերջինիս թիկունքին կանգնած էին Ռուսաստանն ու Ադրբեջանը:

Բուլժեիկյան կարմիր բանակի հրամանատարությունը լուրջ նախապատրաստություններ էր տեսնում Զանգեզուրի վրա ռազմական նոր արշավանք ձեռնարկելու համար: Ձեռք բերվեցին նույնիսկ ռազմական ինքնաթիռներ: Հարձակումը պետք է լիներ եւ Հայաստանի, եւ Ադրբեջանի կողմից: Նժդեհը պատրաստ էր ճակատելու, բայց այս անգամ եղբայրական պատերազմ պիտի լիներ, իսկ օգտվողը գուցե միայն Ադրբեջանը՝ տեր դառնալով լեռնաշխարհին: Նկատի ունենալով այն, որ բուլժեիկները խոստացել էին Զանգեզուրը միացնել Հայաստանին, Նժդեհը որոշում է առանց կռվի հեռանալ Պարսկաստան: Բայց նա հեռացավ ոչ որպես պարտվող: Նախքան մեկնելը, նա հինգ կետից բաղկացած մի վերջնագիր ներկայացրեց բուլժեիկներին: Դա Գ. Նժդեհի վերջին պաշտոնագիրն էր, որ նա ստորագրել է 1921 թ. հունիսի 8-ին՝ Կապանի հանքերում: Նժդեհը պահանջում էր, որ Սյունիքը լինի ինքնավար: Նա նաեւ զգուշացրեց, որ ինքը կրկին կհայտնվի Սյունիքում, եթե այն տրվի Բաքվին. «Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը»:

Ջորավարն իր հետ վերցրեց երկու լեռնային թնդանոթ, հեծելազորի մի գումարտակ, Շվանիձորի մոտ անցավ Արաքսի մյուս ափը: Այստեղ նա սպասեց 10 օր, մինչեւ որ իր պահաջների կատարումը հավաստող լուրեր ստացավ:

Եռամյա հերոսական պայքարի շնորհիվ է, որ այսօր Սյունիքը գտնվում է Հայաստանի կազմում, այլապես նա պետք է կիսեր Արցախի ճակատագիրը եւ լավագույն դեպքում Կապրուրոյի կողմից տրվեր Ադրբեջանին: Իսկ եթե չլիներ Զանգեզուրը, վաղուց հայաթափ կլիներ նաեւ Արցախը: Զանգեզուրյան գոյապայքարի հերոսամարտերի ընթացքում Սյունիքի թշնամիները (մուսաֆաթականներ, օսմանյան թուրքեր եւ այլն) ընդհանուր առմամբ տվել են 15000 սպանված, 7000 գերի, թողել մոտ 200 գնդացի, 7 թնդանոթ, 10000 հրացան եւ այլն:

Խորհրդահայ պատմագրության կողմից Գ. Նժդեհի սյունիքյան գործունեությունը մշտապես խեղաթյուրվել է: Սակայն մտավորական Նժդեհը ժամանակից առաջ պատասխանել է նրանց: Ինքնավար Սյունիքի կառավարությունը հովանավորեց հրատարակելու Զանգեզուրում բոլշեվիկյան հինգամսյա տիրապետության ճշմարտությունը փաստող «Արևոտ Գիրքը»՝ Ասլան Շահնազարյանի խմբագրությամբ: Գիրքը տպագրվել է Գորիսում: Գրքում տեղ գտած, Նժդեհին ուղղված ուղերձի մեջ կարդում ենք. «Ներկայումս, քանի որ հայի քաղաքական եւ հասարակական կյանքը տեղափոխվել է ձեր ջանքերի շնորհիվ ստեղծված Լեռնահայաստան, որից ապագայում իր նյութը պիտի քաղի հայ գրագետը, պատմաբանը եւ բանաստեղծը, անհրաժեշտ է, քանի դեռ ուշ չէ, բոլոր աչքի ընկնող երեւոյթները գրի առնել եւ թողնել հիշատակ գալոց սերնդի...»: Գորիսում 1921 թ. լույս տեսավ նաեւ Գ. Նաիրյանի «Խուստուպիյան կանչեր» գիրքը՝ նվիրված Գ. Նժդեհի կատարած գործի նշանակությանը:

Գ. Նժդեհը հավերժ կապված է մնացել Սյունիքի հետ: 1920 թ. ձմռանը նա Գորիսում ամուսնացել է դեռատի օրիորդ Արուսյակ Ալեքսանի Մինասյանի հետ: Պսակը կատարվել է Ս. Լուսավորիչ եկեղեցում, իսկ հարսանիքի սեղանապետը եղել է թժ. Մ. Բեկ-Պարոնյանը, որի տան մոտ ապրում էր զորավարը: Հայրենիքից հեռանալու պատճառով չհարատեւած այդ ամուսնությունից ծնվել է մի աղջիկ: Նժդեհի ընտանիքը հետագայում տեղափոխվել է Երեւան, կինն ապրել է 80 տարի: Նրա թոռնուհին՝ Գոհար Տրդատյանը, աշխատում է Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում:

Գ. Նժդեհը մշտապես կապ է պահպանել սյունեցիների հետ: Վկայություններ կան, որ Երկրորդ համաշխարային պատերազմի տարիներին, երբ նա գերմանացիների մոտ հավաքագրում էր հայ ռազմագերիներին, առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում սյունեցիներին, զրուցում նրանց հետ, հարց ու փորձ անում Լեռնաշխարհի եւ նրանց մարդկանց մասին:

Պրոֆ. Վ. Առաքելյանի եւ մի խումբ նվիրյալների շնորհիվ Նժդեհի աճյունը հեռավոր Վլադիմիրից տեղափոխվեց Հայաստան: Մեծ զորավարի աճյունն էլ հանգչում է Սյունիքում: Նա այլեւս Նժդեհ-պանդուխտ չէ: 1983 թ. հոկտեմբերի 6-ին այդ հայրենասեր հայերը՝ զաղտնի կերպով, զորավարի աջը ամփոփեցին նվիրական Խուստուպի Լեռան լանջին՝ Կոզնի աղբյուրի մոտ: Բաղաբուրջի վարորդ Ստեփանը միայն տարիներ հետո իմացավ, թե ամեն անգամ, տարվա նույն օրը, ինչի համար է ինքը իր պատվելի հյուրերին տանում Կոզնի

աղբյուր: 1991 թ. փոքրածավալ խաչքար է դրվել Կոզնի աղբյուրի մոտ: Իսկ Գ. Նժդեհի աճյունը 1987 թ. մայիսի 9-ին հողին է հանձնվել Եղեգնաձորի Սպիտակավոր եկեղեցու բակում: Զորավարին չի մոռացել նաեւ Գորիսը: Նախ՝ նրա կիսանդրին 1990 թ. մայիսի 28-ին կանգնեցվեց Հերոսների Անցուղիում, իսկ արարատցի վարպետներ Ռուբիկ (Մստո) Գրիգորյանը եւ Սարգիս (Կամաս) Նազարեթյանը կերտեցին արեւի ճառագայթներով պարուրված նրա գեղեցիկ հուշարձանը, որը 1991 թ. մայիսի 28-ին տեղադրվեց քաղաքի թաղամասերից մեկում:

## ԼԱ. Զանգեզուրը խորհրդային իշխանության տարիներին

Զանգեզուրում խորհրդային իշխանությունը վերջնականապես հաստատվեց 1921 թ. հուլիսի 12-ին: Այն իրականացվեց 11-րդ կարմիր բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի եւ 18-րդ հեծյալ դիվիզիայի մարտական դրոշների ներքո: Երկրամասում 1918-1921 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի կարեւոր նվաճումը եղավ այն, որ Զանգեզուրը հայտնվեց խորհրդային Հայաստանի, այլ ոչ՝ Ադրբեջանի կազմում: 1921 թ. օգոստոսի 31-ին Հայաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի (Ժողկոմխորհ) որոշմամբ՝ Գորիսի, Սիսիանի, Տաթևի, Կապանի եւ Տեղի գավառակներից կազմակերպվեց Զանգեզուր գավառը՝ Գորիս կենտրոնով: Իսկ հայկական Զանգեզուրի հարավային մասում ստեղծվեց Մեղրու՝ փոքր գավառը: Նորաստեղծ Զանգեզուրի գավառի տարածքը կազմում էր 3754 կմ, իսկ բնակչությունը՝ 68918 մարդ: Հարթավայրային Զանգեզուրը տրվեց Ադրբեջանին, ուր ստեղծվեցին Լաչինի, Կուբաթլիի, Զանգեզուրի շրջանները: Դրանք շուրջ տասը տարի կազմում էին Կարմիր Զորստան վարչական միավորը: Այսպես խորհրդային իշխանության օրոք Նախկին ցարական Ելիզավետպոլի Նահանգի Զանգեզուր գավառը բաժանվեց երկու մասի: Բոլշևիկները դրանով իսկ, ինչ-որ չափով բավարարեցին Ադրբեջանի հավակնությունները Զանգեզուրի նկատմամբ: Զանգեզուրի ադրբեջանական մասում կային հայկական բնակավայրեր, որոնց բնակիչները, ժամանակի ընթացքում, տեղափոխվեցին հայկական մաս: Հայ «արմատական» բոլշևիկների եւ «իսկական» ինտերնացիոնալիստների թողտվությամբ՝ խորհրդային Ադրբեջանի եւ խորհրդային Հայաստանի՝ Զանգեզուրով անցնող սահմանագիծը ակնհայտորեն գծվեց ի շահ ադրբեջանցիների: Նրանց փաստարկներն այդ հարցում մշտապես ավելի հիմնավոր էին լինում: Նույնիսկ Գորիս-Կապան խճուղին տեղ-տեղ անցնում էր հարեւան հանրապետության տարածքով:

Որոշակի քաղաքական նկատառումներով՝ Զանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղարները Նշանակվում էին ոչ տեղացիներ: Գավկոմի առաջին քարտուղարը 1921 թ. եղել է Ա. Թավաքյանը: Սա-

կայն, ազգայնական մտածողությունը հեշտ չէր արմատախիլ անել: 1922 թ. դիմահար կրակոցով Գորիսում սպանվում է գավկոմի պատասխանատու աշխատող, ոչ անհայտ բոլշևիկ Օջախկուլի Մուսաեւը: Այդ գործի առթիվ ձերբակալվում է Նախկին ինչական Համբարձում Տեր-Հովհաննիսյանը, որին 1924 թ. գնդակահարում են Երեւանում: Մուսաեւի անունը խորհրդային իշխանությունը «հավերժացրեց» քաղաքի փողոցներից մեկի անվանակոչությամբ:

1930 թ. սեպտեմբերի 9-ին՝ ՀՍՍՀ Կենտգործկոմի Նախագահության որոշմամբ, իրականացվեց խորհրդային Հայաստանի Նոր վարչատարածքային բաժանում, որով վերացվեցին գավառները: Զանգեզուր գավառի փոխարեն ստեղծվեցին Գորիսի, Կապանի եւ Սիսիանի շրջանները: Առանձին շրջան դարձավ Մեղրին: Չնայած դրան, Զանգեզուր երկրանունը հետագա տասնամյակներում օգտագործվում էր ոչ միայն ժողովրդի կողմից, այլ նաեւ՝ պաշտոնական գրություններում:

Զանգեզուրը խորհրդային իշխանության տարիներին դարձավ Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության կենտրոն: 1924 թ. Ալ. Մյասնիկյանը ինքնաթիռով հատուկ հանձնաժողով է ուղարկում Կապան՝ ուսումնասիրելու հանքերի վերականգման խնդիրները: Նոր կարգերի հաստատման առաջին իսկ օրերից ազգայնացվում են պղնձաձուլական փոքրիկ գործարանները: Նախկին ձուլարանների փոխարեն կազմակերպվում է մեկ պղնձաձուլական գործարան, աստիճանաբար մեքենայացվում են հանքահորերի աշխատանքները, հանքաքարի փոխադրումը: 1936 թ. մայիսին Կապանում շահագործման է հանձնվում պղնձահանքային հարստացուցիչ ֆաբրիկան, իսկ մեկ տարի հետո դադարում է գործելուց (դեռեւս ցարական ժամանակներից ժառանգություն մնացած) պղնձաձուլական գործարանը: Գործարկվում է նաեւ տրանսպորտային ստորգետնյա հանքուղին: Նորակառույց հանքահանքատացուցիչ ֆաբրիկան օրական կարող էր մշակել 1000 տոննա հանքաքար: Ֆաբրիկան 1937 թ. տվել է 13966, իսկ 1938 թ.՝ 26493 տոննա պղնձի խտանյութ: Հանքավայրը ձեռք է բերում միութենական Նշանակություն: Երկրամասի լեռնահանքային (եւ ոչ միայն) արդյունաբերության զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Կապան-Մինջեւան երկաթուղու կառուցումը, որի շինարարությունը սկսվեց 1927 թ. եւ ավարտվեց 1932 թ.: Այդ երկաթուղով Կապանը, Նախ կապվեց Բաքվի, ապա նաեւ՝ Երեւանի հետ: Կապանի երկաթուղային կայարանը եւ երկաթգիծը սպասարկում էին ադրբեջանցիները, երկաթուղու՝ միայն Մեղրու շրջանով անցնող 44 կմ հատվածն էր պատկանում Հայաստանին: Կապանը արագորեն դառնում էր Զան-

գեզուրի արդյունաբերական կենտրոնը: 1938 թ. այն ստացավ քաղաքի կարգավիճակ: Հետագա տասնամյակներում այնտեղ զարգացում ապրեցին արդյունաբերական այլ ճյուղեր եւ՝ կառուցվեցին մսի խոշոր կոմբինատ, պահածոների գործարան, կահույքի եւ կոշիկի ֆաբրիկաներ եւ այլ արտադրական ձեռնարկություններ: Կապանը դարձավ Ջանգեզուրի ամենախոշոր, իսկ հանրապետության մեջ բնակչության թվով՝ 5-րդ քաղաքը:

Խորհրդային իշխանության տարիներին արդյունաբերությունը որոշակի զարգացում ապրեց նաեւ գավառային նախկին կենտրոն Գորիսում: Մինչխորհրդային ժամանակաշրջանում այստեղ գործում էր արդյունաբերական տիպի երկու փոքր ձեռնարկություն՝ լիմոնադի եւ բետոնե սալիկների արտադրություն: 1922 թ. դրանց տիրոջ՝ Ա. Միրումյանի խնդրանքով, արտադրամասերի սարքավորումները տարվում են Երեւան: 1926 թ. քաղաքում հիմնվում է կոճակի գործարան, որը մինչեւ 1940 թ. եղել է միակ արդյունաբերական ձեռնարկությունը՝ չհաշված կոմինդր, աղյուս, սայլեր արտադրող արհեստանոցները: 1940 թ. Գորիսում բացվում է զարեջրի գործարան, որի արտադրանքը տասնամյակներ շարունակ առաքվում էր Ջանգեզուրի շրջաններ եւ Արցախ: 1948 թ. շահագործման է հանձնվում տրիկոտաժի ֆաբրիկան: Քաղաքի զարգացմանը զուգընթաց, հետագա տասնամյակներում շարք են մտնում էլեկտրաշարժիչների (1960 թ.), ավտոնորոգման (1964 թ.) գործարանները, արդյունաբերության կոմբինատը (1967 թ.): 1970 թ. սկսում է գործել Շինուհայրի ռետինե կոշկեղենի գործարանը: 1971 թ. Գորիսն ուներ 14 արդյունաբերական ձեռնարկություն:

Խորհրդային իշխանության տարիներին, որպես շրջկենտրոն, որոշակի զարգացում ապրեց Սիսիան՝ նախկին Ղարաքիլիսա բնակավայրը: Սիսիանը 1974 թվականից շրջանային ենթակայության քաղաք է: 1935-1940 թթ. կոչվել է Սիսավան: 1960 թ. շրջկենտրոնն ուներ 3 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տարեկան տալիս էին 1 մլն. 860 հազար ռուբլու արտադրանք: Իրենց բարձրորակ արտադրանքով՝ ողջ հանրապետությունում հայտնի էին պանրագործարանները:

Հայրենական Մեծ պատերազմից հետո Հայաստանի կարեւոր հանքարդյունաբերական կենտրոն դարձավ Քաջարանը: 1947 թ. այն վերանոցեց քաղաքատիպ ավանի: Կառուցվեց 35 կմ երկարություն ունեցող Քաջարան-Կապան ավտոխճուղին: Արագ տեմպերով կառուցվեց եւ 1951 թ. շահագործման հանձնվեց Քաջարանի պղնձամոլիբդենային հարստացուցիչ խոշոր ֆաբրիկան: Այն հատուկ ուշադրության էր

արժանանում միութենական կառավարության կողմից, քանի որ նրա արտադրանքն ուներ ռազմավարական կարեւոր նշանակություն: Քաջարանում կառուցվեց երկու ճոպանուղի (1952 թ. եւ 1958 թ.), որոնցով հանքաքարը հասցվում էր ուղղակի ֆաբրիկա: 1958 թ. Քաջարանը դարձավ քաղաք եւ ուներ ավելի քան 11000 բնակիչ:

Խորհրդային իշխանության տարիներին Ջանգեզուրում գործած արդյունաբերական կենտրոններից էր Դաստակերտը՝ Սիսիանում: 1945 թ. երկրաբաններն այստեղ՝ ծովի մակերեսույթից 1740 մ բարձրության վրա, հայտնաբերում են պղնձի եւ մոլիբդենի հանքավայրեր: 1952 թ. Դաստակերտում հիմնվում է պղնձամոլիբդենային կոմբինատ: Բնակավայրը, ուր ապրում էր 2317 մարդ, 1951 թ. դառնում է քաղաքատիպ ավան: Հետագայում Դաստակերտի շահագործումը, անեկամտաբեր լինելու պատճառով, դադարեցվել է:

Խորհրդային իշխանության տարիներին արդյունաբերական կենտրոն է դառնում Մեղրու Ագարակը: Կիսանապատային այս գոտում 1963 թ. կառուցվել է պղնձամոլիբդենային կոմբինատ եւ ավան: Ագարակի կոմբինատը գործում է նաեւ հիմա:

1959 թ. Մեղրի շրջկենտրոնը դարձել է քաղաքատիպ ավան: Մեղրին հայտնի է իր քաղցրահամ մրգերով եւ պահածոների խոշոր գործարանով: 1984 թ. նրան շնորհվել է քաղաքի կարգավիճակ:

1975 թ. Ջանգեզուրում գործող 45 արդյունաբերական ձեռնարկությունների համախառն արտադրանքի մեծ մասը տվել են գունավոր մետալուրգիայի, 16,8%-ը՝ սննդի, 13,5%-ը՝ մեքենաշինական ձեռնարկությունները:

Վերջին տասնամյակներում Ջանգեզուրի արդյունաբերության գլխավոր ճյուղերից մեկը դարձել է էլեկտրաէներգիայի արտադրությունը: Երկրամասի հիդրոէլեկտրակայանների կարողությունը ներկայումս հասնում է 405 մեգավատի, որը հավասար է հայկական ատոմակայանի մեկ էներգաբլոկին: Ջանգեզուրում արտադրվող էլեկտրաէներգիան Հայաստանում ամենաէժեքն է եւ բնապահպանական տեսակետից որեւէ վտանգ չի ներկայացնում:

Ղեռնես 1931 թ. Գորիսում Վարարակն գետի վրա, կառուցվել է 175 կվտ/ժ հզորությամբ ՀԷԿ: Նույն գետի վրա 1950 թ. գործարկվում է Ակների առաջին, իսկ 1953 թ.՝ Ակների երկրորդ ՀԷԿ-երը, որոնց հզորությունը միասին վերցրած՝ կազմում է 800 կվտ/ժ: Սիսիանում 1936 թ. կառուցվում է Շաքիի ՀԷԿ-ը՝ 800 կվտ/ժ հզորությամբ:

Լեռնաշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության մեծ վերելքը պայմանավորված էր Որոտան գետի վրա հիդրոէլեկտրակայանների

կանկարի շինարարությամբ: Այն ինժեներատեխնիկական տեսակետից տալավորիչ կառույց է, որի շինարարությունն սկսվեց 1962 թ. եւ ավարտվեց 1970 թ.: Լեռների մեջ փորվեց 19 կմ երկարությամբ թունել: Մեկը մյուսի ետեւից շահագործման հանձնվեցին Տաթեւ ՅԷԿ-ը՝ 157000 կվտ/ժ, Շամբի ՅԷԿ-ը՝ 171000 կվտ/ժ եւ Սպանդարյան ՅԷԿ-ը՝ 76000 կվտ/ժ հզորություններով: Միաժամանակ կառուցվեցին երեք խոշոր՝ Շամբի, Տոլորսի, Սպանդարյանի ջրամբարները: Վերջին տարիներին՝ Հայաստանի շրջափակման ամենածանր շրջանում, այդ հիդրոէլեկտրակայանները աշխատել են գերլարված պայմաններում, երբեմն հրետակոծությունների տակ եւ եղել են երկրի համար էլեկտրական լույսի միակ հուսալի աղբյուրը: Զանգեզուրի տարբեր շրջաններում վերանորոգման եւ վերականգնման աշխատանքներ են տարվում վերստին գործարկելու ժամանակին կանգնեցված փոքրիկ ՅԷԿ-երը:

Չնայած արդյունաբերության ասպարեզում ունեցած որոշակի առաջընթացին՝ Զանգեզուրը շարունակում էր մնալ գյուղատնտեսական երկրամաս: Գյուղատնտեսական արտադրության հիմնական մթերքներից էր հացահատիկը (Սիսիան-Գորիս) եւ պտուղը (Մեղրի): Երկրամասի գյուղատնտեսությունը, նախ, ապրեց սոցիալիստական կոլեկտիվացում: Գավառում առաջին կոլտնտեսությունը 1928 թ. ստեղծվել է Գորիսի Տեղ գյուղում: Այն կազմված էր 9 ջրավոր եւ 1 միջակ տնտեսությունից: Նույն թվականին 17 ընտանիքներ հիմնեցին Սիսիանի Նորավանք եւ միաժամանակ՝ կոլեկտիվ տնտեսությունը: Գյուղատնտեսական ամենազարգացած շրջանը Սիսիանն էր, որը տարեկան արտադրում էր 180 հազար ցենտներ հացահատիկ, նույնքան կաթ, 40 հազար ց միս, 6000 ց բուրդ, 10 հազար ց պտուղ, 12 հազար ց բանջարեղեն, 7 մլն հատ ձու: Սիսիանում կառուցվել է սննդի կոմբինատ՝ 500 տ տարողությամբ սառնարան-պահեստով: Սիսիանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1980 թ. եղել է 34000, որից կովեր՝ 11000 գլուխ: Մանր եղջերավորները կազմել են 80000 գլուխ: Գյուղատնտեսական արտադրանքի մշակման համար պահածոների գործարաններ են կառուցվել Մեղրիում (1932 թ.), Կապանում, Գորիսում, իսկ մսի խոշոր կոմբինատ՝ Կապանում: Գյուղատնտեսական աշխատանքներին մեծապես օգնում է արհեստական ոռոգումը: Ղեռնա 1940-ական թվականներին Սիսիանում կառուցվեց Սպանդարյանի ջրանցքը, որի շնորհիվ ոռոգելի դարձավ 500 հա հողատարածք: Երկրամասի բնակչության թիվը մշտապես աճ է ապրել: 1926 թ. Զանգեզուրի բնակչությունը կազմում էր 77000 մարդ, իսկ 1939 թ.

95800 մարդ: 1976 թ. այդ թիվը հասավ 139433 մարդու: Հետաքրքիր է, որ երկրամասի բնակչության մեջ հայերի թիվը նվազման միտում ուներ, փոխարենն աճում էր ադրբեջանցիների թիվը: Այսպես, եթե 1939 թ. հայերը կազմում էին ողջ բնակչության 81%-ը, ապա 1976 թ. նրանք կազմում էին 77,2%-ը: Ադրբեջանական բնակչությունը մեխանիկական եւ բնական աճ էր ապրում Կապանում, Սիսիանում եւ Մեղրիում: 1926 թ. Զանգեզուրի բնակչության 93%-ը գյուղաբնակ էր: 1939 թ. գյուղատնտեսության բնագավառում աշխատում էր բնակչության 78%-ը: Իսկ 1976 թ. երկրամասի բնակչության 56,4%-ը արդեն քաղաքաբնակ էր:

Զանգեզուրցիներն ակտիվ մասնակցություն ունեցան Հայրենական Մեծ պատերազմին: Լեռնաշխարհի արիածին հողը տվել է տասնյակ գեներալներ եւ խՍՀՄ հերոսներ: Զանգեզուրցի գեներալներից կարելի է հիշատակել Հ. Յոլանին, Բ. Առուշանյանին, Ս. Կարապետյանին, Մ. Մինասյանին: Խորհրդային Միության հերոսների մեջ հայտնի անուններ են Հունան Ավետիսյանը (Կապան, Ծավ), Սուրեն Առաքելյանը (Գորիս, Տաթեւ), Սամսոն Մկրտումյանը (Սիսիան, Բռնակոթ): Լեռնաշխարհի բոլոր բնակավայրերում ի հիշատակ պատերազմում ընկածների, կանգնեցված են հուշարձաններ:

1931 թ. ապրիլի 27-ին լեռնաշխարհում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որից խիստ տուժել է Նաեւ Տաթեւի վանքը: Ուժեղ երկրաշարժ է եղել նաեւ 1968 թ.:

Խորհրդային իշխանության տարիներին Զանգեզուրն ապրել է հոգեւոր կյանքի վերելք, թեպետ մայրաքաղաքից հեռու լինելը՝ այդ ասպարեզում իրեն մշտապես զգացնել է տվել:

1921 թ. Զանգեզուրի գավառում գործում էր 64 դպրոց, որից Սիսիանի շրջանում 20, Կապանում 28, Գորիսում 16: 1921-22 ուս. տարում Գորիսում բացվեցին ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, ուր դասախոսություններ են կարդացել պրոֆ. Ստ. Լիսիցյանը, Եր. Բակունցը, գրող Ակ. Բակունցը: Ողջ Զանգեզուրի համար մանկավարժական կադրերի պատրաստման գործում կարեւոր դեր խաղաց Գորիսում 1927 թ. բացված մանկավարժական ուսումնարանը, որը գործում է մինչեւ այսօր: 1929 թվականին բացվեց գյուղատնտեսական տեխնիկումը: 1950-51 ուս. տարում Զանգեզուրում կար 160 դպրոց: Քաղաքի զարգացմանը զուգընթաց կրթական կենտրոն էր դառնում Կապանը: Վերջին տասնամյակներում այնտեղ գործում էին լեռնամետալուրգիական, շինարարական տեխնիկումները, բժշկական եւ երաժշտական ուսումնարանները: Զանգեզուրում առաջին



բարձրագույն ուսումնական հաստատությունը բացվել է 1967 թ. Գորիսում: Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի եւ մաթեմատիկայի ֆակուլտետներում ուսանել են ինչպես Զանգեզուրի, Արցախի, այնպես էլ հանրապետության այլ շրջանների հազարավոր երիտասարդներ: Հետագայում ճարտարագիտական ինստիտուտի մասնաճյուղ է հիմնվել Կապանում:

Հարկ է նշել, որ Կապանի բոլոր զարգացման ասպարեզում մեծ վաստակ ունի կուլշրջկոմի առաջին քարտուղար, երջանկահիշատակ Ռաֆայել Արմենակի Մինասյանը: Նա համարձակություն ունեցավ հակադրվել կրեմլյան գաղափարախոս Ս. Սուլդովին եւ պնդել, որ Հայաստանի պետական լեզուն պետք է լինի հայերենը: Ռ. Մինասյանի համառ ջանքերի շնորհիվ կառուցվեցին Կապանի օդանավակայանը, Կապան-Քաջարան մայրուղին, բացվեցին տնտեսական, կրթական եւ մշակութային նորանոր օջախներ: Նրան երբեք չի մոռանում Կապանի շրջանում աշխատած ուսանող-երիտասարդությունը:

Սյունյաց լեռնաշխարհի, ընդ որում Քաջարանի բարգավաճման գործում անուրանալի ավանդ ունեն Պղնձամուրիբղենային կոմբինատի բազմամյա տնօրեն Ֆրունզե Հմայակի Պետրոսյանը, «Քաջարանշին» տրեստի հմուտ կառավարիչ Սարգիս Սողոմոնի Վարդանյանը, լեռնագործների հայրենաշեն ղեկավար Սաքսիմ Անուշավանի Հակոբ-յանը՝ հայ մտավորականության բարեկամը եւ աջակիցը:

Ուսանողներն ու գիտաշխատողները երախտագիտությամբ են հիշում «Սյունյաց տիկին» Հրաչուհի Մեսրոպի Կարապետյանին եւ մշակույթի վաստակաշատ գործիչ Սուշեղ Աբրահամի Համբարձումյանին՝ շրջագործկոմի նախագահի ամենահաս տեղակալին:

Զանգեզուրի բուհերում աշխատում են գիտության տասնյակ դոկտորներ եւ թեկնածուներ: Գիտական կադրերի դարբնոց էր նաեւ Գորիսում 1971 թ. բացված ՀՍՍՀ ԳԱ ֆիզիկատեխնիկական կենտրոնը:

Գավառային կենտրոն Գորիսում տպարան հիմնադրվել է դեռեւս դարասկզբին: 1921-1930 թթ. այնտեղ տպագրվել է «Կարմիր ռանգ-պար» գավառային թերթը: Հետագայում Զանգեզուրում լույս էին տեսնում շրջանային թերթեր:

Լեռնաշխարհի գավակները լուրջ ներդրում ունեն խորհրդահայ մշակույթի զարգացման գործում: Բավական է հիշատակել գրողներ Ակ. Բակունցի, Ս. Խանգադյանի, Հ. Սահյանի, Ա. Այվազյանի անունները: Խորհրդահայ երաժշտության հայտնի ներկայացուցիչներ են Աշոտ Սաթյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Կոնստանդին Օրբելյանը,

գուսան Աշոտը:

Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան միջնորձանային թատրոնը հիմնվել է 1935 թ.: Այստեղ ժամանակին աշխատել են Երվանդ Ղազանջյանը, Գուժ Մանուկյանը, Գալստ Նովենցը եւ ուրիշներ: Գորիսի պետական դրամատիկական թատրոնում (1947 թ.) վերջին տարիներին աշխատել են Երվանդ Մանարյանը, Մովսես Գորգիսյանը, Երվանդ Ղազանջյանը (Կապան): Երկրագիտական թանգարաններ են գործում Գորիսում, Կապանում, Սիսիանում, Մերիում: Գորիսում 1971 թ. բացվել է Ակ. Բակունցի տուն-թանգարանը:

Գիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեն Կ. Սելիք-Օհանջանյանը (քնագիտություն), Է. Աղայանը (լեզվաբանություն), Լ. Խուրշուդյանը, Հր. Սիմոնյանը, Ա. Սիմոնյանը (պատմագիտություն) Թ. Հակոբյանը (աշխարհագրություն), Է. Գաբրիելյանը (բժշկագիտություն) եւ շատ ուրիշներ:

Սյունեցիներն աչքի են ընկել նաեւ պետական-քաղաքական գործունեությամբ, որոշակի ծառայություններ են մատուցել Լ. Կոստանդով (ԽՍՀՄ Միևստորների խորհրդի նախագահի տեղակալ եւ քիմիական արդյունաբերության նախարար), Շ. Առուշանյան (ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ), Ս. Թովմասյան (ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար), Հ. Ոսկանյան (ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ, ապա՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր) եւ այլք:

## ԼԲ. Սյունիքը արցախյան շարժման հենարան

Ցարական Ռուսաստանի տիրապետության օրոք եւ Սյունիքը, եւ Արցախը մտնում էին Ելիզավետպոլի նահանգի մեջ: Հայկական այդ երկրամասերում ապրող հայերը միմյանց հոգեհարազատ են իրենց պատմական արմատներով՝ սովորույթներով, ավանդույթներով, լեզվով: Նրանք խոսում են հայերենի միեւնոյն՝ Արցախի բարբառով: Արշակունիի հայ թագավորների օրոք Արցախը մտնում էր արեւելյան զորավարության մեջ, իսկ այդ նախարարությունը ղեկավարում էին սյունեցիները: Ժամանակին հեռահար նպատակներով՝ օսմանյան թուրքերը երկու հայկական լեռնաշխարհների միջեւ, ինչպես Նշել ենք, բնակեցրին մահմեդական քոչվոր ցեղերի, սակայն դա չխանգարեց նրանց հոգեւոր, անհրաժեշտության դեպքում նաեւ՝ ռազմական կապերին: Սյունիքի միջնադարյան Նշանավոր իշխանական տներից մեկը՝ Պռոշյանները, ծագում էին Արցախից: Դավիթ-Բեկի ազատագրական պատերազմի ժամանակ արցախյան զորքերը՝ Ավան Յուզբաշու գլխավորությամբ, օգնություն ցույց տվեցին զորավարին՝ գրավելու Որոտնաբերդը: Ուշ միջնադարում Արցախի հայտնի Զրաբերդի Մելիք-Իսրայելյանները այնտեղ են տեղափոխվել Սյունիքի Խանածախ գյուղից:

1918-1920 թթ. Սյունիքը եւ Արցախը միասնաբար են անկախության դրոշմ բարձրացրել ընդդեմ Ադրբեջանի նկրտումների: Այդ պայքարում Արցախը չկարողացավ կիսել Սյունիքի ճակատագիրը եւ հայտնվեց Ադրբեջանի կազմում: Զանգեզուրում եղած ժամանակ եւ Անդրանիկը, եւ Նժդեհը փորձել են օգնության ձեռք մեկնել ազատության համար ապստամբած Արցախին: Հարյուրավոր սյունեցիներ պատրաստ էին իրենց կյանքը տալ հանուն Արցախի, սակայն, ինչպես հայտնի է, մի դեպքում այդ օգնությանը խանգարեցին անգլիացիները, իսկ երկրորդ դեպքում այն պարզապես անօգուտ էր, քանի որ Արցախը դարձել էր խորհրդային:

Խորհրդային իշխանության տարիներին Ադրբեջանի կառավարությունը արհեստական արգելքներ էր ստեղծում Սյունիքի եւ Արցախի մերձեցումը կանխելու համար: Արցախի սահմաններին Հայաստանի ամենամոտ գտնվող շրջանը Գորիսն էր: Ուղիղ գծով նրանց սահման-

ները բաժանում էր մի քանի կիլոմետր տարածք: Այդ տարածքով էր անցնում դեռեւս ցարական իշխանությունների օրոք կառուցված ավտոխճուղին: Խճուղին գտնվում էր խիստ անբարեկարգ վիճակում, եւ Երեւան-Ստեփանակերտ ուղեգիծը սպասարկող ավտոբուսները ստիպված երթեւեկում էին շրջանցիկ՝ ադրբեջանական երկար տարածքներով անցնող ճանապարհներով: Չնայած արհեստական արգելքներին՝ Սյունիք-Արցախ հոգեւոր մշակութային կապերը հարատեւել են: Մշտապես եղել են մարզական, համերգային, թատերական խմբերի փոխայցելություններ: Գործել են Գորիս-Ստեփանակերտ, Կապան-ԼՂՀ, Սիսիան-Բաքու ավտոբուսային երթուղիներ: Ստեփանակերտի թաղամասերից մեկի բնակիչների մեծ մասը Գորիսի Տեղ գյուղից էին: Սյունիքի տարբեր բնակավայրերի հարյուրավոր ընտանիքներ ազգակցական կապեր ունեն արցախահայերի հետ:

Հայաստանի հետ կենդանի կապն ամրապնդելու գործում, անշուշտ, կարեւոր նշանակություն է ունեցել Գորիսում բուհական մասնաճյուղի բացումը: Այստեղ կրթություն են ստացել եւ հայրենասիրական բարձր զգացմունքներով դաստիարակվել Արցախի հարյուրավոր երիտասարդներ: Գորիսում է բարձրագույն կրթություն ստացել արցախյան շարժման անձնագիտ դեմքերից բերդաձորցի Առնո Սկրտչյանը՝ Բիծուկ մականունով, որն իր մահկանացուն կնքել է Ադրբեջանի բանտերում: Վերջին ժամանակաշրջանում սյունեցի երիտասարդները կրթություն էին ստանում Ստեփանակերտում բացված բուհում: Արցախյան շարժմանը նախորդած տարիներին «Անդրգագնավթճինի» ղեկավար Գ. Թաթարյանը՝ հայրենասեր մի մարդ, հեռահար նպատակներով, Արցախ-Սյունիք եւ Նախիջեւան գազատարի շինարարության կենտրոնը դարձրել էր Գորիսը, դրանով իսկ՝ օդով ու ցամաքով անարգել կապ ապահովել Սյունիքի ու Արցախի միջեւ:

Սյունիքը արցախյան շարժման կենդանի ու անմիջական արձագանքողը եղավ:

Հայ ազգային-ազատագրական շարժումը խորհրդային տիրապետության օրոք իր նախապատմությունն է ունեցել Սյունիքում, մասնավորապես՝ երկրամասի հոգեւոր-մշակութային կյանքի կենտրոն Գորիսում: Տակավին 1965 թվականի ապրիլի 24-ին՝ Հայոց Մեծ եղեռնի օրը, այստեղ Նշվել է սեւազգեստ դպրոցականների ցույցերով եւ թռուցիկների տարածմամբ: Գորիսում 1967 թ. բուհական մասնաճյուղ բացվելուց հետո, ամեն տարի, ինչ-որ կերպ Նշվել է եղեռնի զոհերի հիշատակի օրը:

Գորիսում հայ ազգային-ազատագրական պայքարի մի օջախ էր

վաղամեռիկ բանաստեղծ Ալբերտ Իսախանյանի բնակարանը: Սնկողնում գամված բանաստեղծի մոտ մշտապես հյուրեր կային: Բնակարանը եղել է ՊԱԿ-ի հսկողության տակ:

Հայրենասիրական բարձր գգացմունքների եւ գրական նրբաճաշակության դաստիարակության մի վերնատուն էր 1960-1970 թթ. գործած «Միրհավ» գրական խմբակը, որի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու Նինա Հովսեփյանը սերտ բարեկամական կապերի մեջ էր Պարույր Սեւակի հետ: Մեծ բանաստեղծը բազմիցս այցելել է Գորիս:

1976 թ. ապրիլի 25-ին հայոց անկախ պետականության խորհրդանիշ երեք եռագույն դրոշներ, որոնց վրա դաջված էր հավերժության նշանը, բարձրացվել են Գորիսի շրջխորհրդի, մանկավարժական ինստիտուտի նորակառույց մասնաշենքի եւ «Գորիս» ռեստորանի շենքերի վրա: Հանդուգն արարքի ձեռնարկողները մանկավարժական ինստիտուտի ուսանողներ էին (Տիգրան Գրիգորյանը, Սամվել Ղազարյանը, Առնո Մկրտչյանը եւ ուրիշներ): Այդ ժամանակ մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղում, գաղտնապահության բոլոր կանոններին համապատասխան, ձեւավորվել էր հայրենասիրական խմբակների լայն ցանց: Գորիսում հայոց եռագույնի կամ, ինչպես կոմունիստներն էին արհամարհանքով կոչում, դաշնակցական դրոշի բարձրացումն առաջացրեց մեծ իրարանցում: Մարդիկ առաջին անգամ տեսան, թե ինչ գույներից է բաղկացած իրենց ազգային դրոշը: Գորիսում հայտնվեցին ՊԱԿ-ի բարձրաստիճան, այդ թվում եւ ռուս սպաներ: Հարցաքննվեցին եւ հետապնդվեցին տասնյակ մարդիկ: Բարեբախտաբար, որեւէ քրեական գործ չհարուցվեց: Այդ դեպքից հետո Գորիսում բացվում է ՊԱԿ-ի բաժանմունք, որը մինչ այդ կար միայն Կապանում:

Գորիսում իր դերասանական կյանքի ապրած ժամանակաշրջանում, որոշակի հետք է թողել Մովսես Գորգիսյանը:

Արցախյան շարժմանը, Երեւանից հետո, հանրապետությունում առաջիններից մեկը արձագանքեց Գորիսը: Զաղաքում անդրանիկ երթույցը տեղի ունեցավ 1988 թ. փետրվարի 22-ին: Ցույցի կազմակերպիչներն էին Նկարիչ Ժ. Մարտիրոսյանը, բանաստեղծ Տ. Գրիգորյանը, ուսանող Մ. Բախշյանը: Ցույցի երթուղին նախապես ծրագրվել էր: Ցուցարարները քաղաքի կենտրոն հասան կեսօրից հետո: Զաղաքում ամենօրյա ցույցերը շարունակվեցին մինչեւ փետրվարի 29-ը: Հայրենասիրական կարգախոսներով դրանց մասնակցեցին նաեւ առանձին գյուղեր՝ Վերիշենը, Շինուհայրը, Խնձորեսկը: Կապ հաստատվեց Կա-

պանի հետ: Այդ օրերին Կապանից Գորիս եկավ Համլետ Զոչարյանը՝ մի ընկերոջ հետ: Մանկավարժական ինստիտուտի հանրակացարանում տեղի ունեցավ Գորիսի եւ Կապանի պատվիրակների հանդիպում, որտեղ քննարկվեցին սկսված շարժմանն առնչվող հարցեր:

Սումգայիթյան ջարդերից հետո Սյունիքի բնակավայրերում հայտնվեցին առաջին բռնազաղթվածները, որոնց ներկայությունն էլ ավելի սրեց իրադրությունը:

1988 թ. փետրվարի 27-ին եւ 28-ին հանրահավաքներում բռնկեցվող բազուկներով ժողովրդի կողմից ընտրվեց «Ղարաբաղ» կոմիտեի Գորիսի հանձնախումբ, որն իր ձեռքը վերցրեց համաժողովրդական շարժումը: Կոմիտեի աջքի ընկնող դեմքերից էին Ա. Մարտիրոսյանը, Խ. Հայրապետյանը, Զ. Միքայելյանը, Հ. Մկրտչյանը եւ ուրիշներ: Այդ օրերին Գորիս եկավ եւ բազմահազարանոց հանրահավաքում ելույթ ունեցավ Սերո Խանզադյանը, որը կոչ արեց չենթարկվել այն հրամաններին, որոնք չեն բխում մեր ազգի շահերից: Իշխանություններն ու ՊԱԿ-ը շարժման նկատմամբ «անտարբեր» չէին. զգուշացվեցին շատ ակտիվիստներ: ՀԿԿ Գորիսի շրջկոմը ՀԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Կոչետկովի ստորագրությամբ գաղտնի գրություն ստացավ՝ հատուկ հսկողություն սահմանելու, հատկապես «վտանգավոր» հայրենասեր, թվով 13 անձանց նկատմամբ: Սկզբում Գորիսի «Ղարաբաղ» կոմիտեն կիսալեգալ պայմաններում նիստեր էր գումարում մերթ մշակույթի պալատում, մերթ՝ թատրոնի շենքում... Սակայն արցախյան շարժումն աստիճանաբար վեր էր անվում համաժողովրդական անարյուն հեղափոխության. կոմունիստական տիրապետությունը կաթվածահար էր լինում, իսկ փաստացի իշխանությունն անցնում էր ժողովրդի կողմից ընտրված կոմիտեի ձեռքը: Նույն երեւույթը տեղի էր ունենում լեռնաշխարհի մյուս քաղաքներում եւս: Սիսիանում արցախյան շարժման կազմակերպիչներից էին Վ. Ոսկանյանը, Ս. Բաղդասարյանը, Վ. Ավետիսյանը:

1988 եւ 1989 թթ. ողջ Սյունիքում հաստատված հարյուրավոր հայ փախստականների առկայությունն ինքնին ստիպում էր, որ աղքեջանցիները հեռանալին երկրամասից: Սակայն նրանց մեկնումը տեղի ունեցավ շատ հանգիստ, խաղաղ եւ օրինավոր ճանապարհով. շատերը վաճառեցին իրենց տները, հեռացան առանց ծեծ ու ջարդ ուտելու: Եղան նաեւ ցավալի միջադեպեր (ինչպես Գորիսում), սակայն դրանց ձեռնարկողները առանձին տաքցլովա մարդիկ էին: Սյունիքից հեռացած աղքեջանցիները Բաքվում ստեղծեցին հայրենակցական միություն, մամուլում հանդես եկան ցնորամիտ, հավակնոտ հայտարարու-

թյուններով:

1989 թ. վերջից Սյունիքում արցախյան շարժումը մտնում է որակական նոր փուլ: Երկրամասի սահմանները պաշտպանելու նպատակով հարկավոր էր կազմակերպել ինքնապաշտպանական ուժեր: Ստեղծվեցին պաշտպանական խորհուրդներ, որոնք ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության հետ կապված բոլոր հարցերի, այդ թվում տեղում ինքնաշեն զենքերի արտադրության խնդիրների լուծմանը: Նշանակալից գործեր կատարեց Արցախի հետ անմիջական կապի մեջ գտնվող Գորիսի պաշտպանական խորհուրդը (նախագահ՝ Յ. Մկրտչյան):

Սյունիքի հոգեւոր կյանքում ամենանշանակալից իրադարձությունը 1989 թ. Սյունյաց հոգեւոր թեմի վերաբացումն էր: Թեմի առաջնորդ նշանակվեց հայ եկեղեցու ամենաերիտասարդ հոգեւորականներից մեկը՝ Ասողիկ Եպիսկոպոս Արիստակեսյանը: Թեմի առաջնորդարանը հաստատվեց Գորիսում: Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը զբաղեցնում էր երկրագիտական թանգարանը, արագորեն դատարկվեց: 1989 թ. դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ եկեղեցու վերաբացումը: Դա անմոռաց իրադարձություն էր. եկեղեցին փակվել էր դեռևս 1922 թ.: Հետագայում եկեղեցիներ սկսեցին գործել Սյունիքի բոլոր շրջաններում, վերաբացվեց նաև Տաթևի վանքը: Այնուհետև Սյունյաց հոգեւոր թեմը ղեկավարում է Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանը:

Սյունիքի քաղաքական կյանքում կարեւոր իրադարձություն էր 1990 թ. խորհրդարանական ընտրությունները: Քաղաքական կյանքն աստիճանաբար ներկայանում էր բազմերանգ: Երեսույթ դարձավ կոմկուսի տոմսի հրապարակավ հանձնումը (Գորիսում առաջինը 1989 թ. դեկտեմբերին կուստոմսից հրաժարվեց Սամվել Հարությունյանը): Որոշ ժամանակ ընդհատակում գործելուց հետո՝ 1991 թ. Սիսիանում եւ Գորիսում իր գործունեությունը բացահայտեց ՀՀԴ-ն: Նույն թվականին Գորիսում (հետագայում նաև Սիսիանում) բացվեց ՀՀԿ-ի ակումբը: Սյունիքի տարբեր բնակավայրերում իրենց կազմակերպություններն ստեղծեցին ուրիշ կուսակցություններ եւս:

1990 թ. տեղի ունեցան խորհրդարանական այլընտրանքային ընտրություններ: Ժողովրդական ուժերը տակավին անպատրաստ էին անսովոր ընտրաձեւին, եւ դա էր պատճառը, որ պատգամավորներ դարձան Նախկին ղեկավար աշխատողները, իսկ լավագույն դեպքում իշխանության գործադիր մարմինների ներկայացուցիչները կամ անկուսակցական մտավորականներ:

1990-1993 թթ. Սյունիքը գտնվում էր պատերազմական գոտում: Սկզբում լեռնաշխարհի տարբեր բնակավայրերում սադրիչ գործողություններ՝ շուրջկալներ, խուզարկություններ էին կատարում խորհրդային զորքերը: Խորհրդային ռազմական ինքնաթիռները մշտապես հոգեբանական «խուզող» թռիչքներ էին կատարում բնակավայրերի վրայով: Բարեբախտաբար, դա ընդհարման չհասցրեց, եթե չհաշվենք առանձին դեպքեր: Խորհրդային զինվորները, օրինակ, գրոհով վերցրեցին Կատարի հեռուստակայանը ու ավերեցին այն: Պատերազմն իրապես զգացնել տվեց 1992-1993 թթ.: Տասնյակ անգամներ հրետակոծվեցին Գորիս, Կապան քաղաքները, համարյա բոլոր սահմանամերձ գյուղերը: Աղբյուրներից հոսող օգտագործում էին նաև ռազմական ինքնաթիռներ, որոնք ռմբակոծեցին Կապանը: Պակաս վտանգավոր ինքնաթիռներ, որոնք ռմբակոծեցին «գրադը»: Սյունիքը դարձել էր Աղբյուր եւ ահագու չէր թշնամական «գրադը»: Սյունիքը դարձել էր Աղբյուր եւ հաղաղ բնակչության մեջ եղան տասնյակ զոհեր: Եղան նաև հուսահատման պահեր. որոշ ընտանիքներ լքեցին լեռնաշխարհը, սակայն դրանք հատ ու կենտ անարի մարդիկ էին: Պատերազմի ելքը վճռվեց մարտի դաշտերում, իսկ այնտեղ հաղթանակը հայերինն էր: Զանգեզուրի բոլոր շրջաններում կազմակերպվեցին կամավորական ջոկատներ, որոնց անձնագրի պայքարի շնորհիվ կոփվեց հաղթանակը: Ողջ Զանգեզուրում հանրահայտ դարձան Նախկինում զինվորական գործի հետ առնչություն չունեցած ժողովրդական հերոսների անուններ. Ս. Խաչատրյանը՝ Գորիսում, Հ. Ազոյանը՝ Սիսիանում, Դ. Հովհաննիսյանը՝ Մեղրիում եւ տասնյակ ուրիշներ: Պատերազմը խլեց հարյուրավոր երիտասարդ սյունեցիների կյանք:

Սյունիքի համար հաղթանակը եկավ 1993 թ. աշնանը: 1993 թ. օգոստոսի 30-ին գրավվեց թշնամու ուժեղ հենակետերից մեկը՝ Կուբաթլի շրջկենտրոնը, եւ այդ օրը նշվեց համաժողովրդական տոնախմբությամբ ու մատաղով: Շուտով ազատագրվեց ողջ հարթավայրային Զանգեզուրը, եւ չեզոքացվեց Սյունիքի բնակավայրերի հրետակոծման վտանգը:

Սյունիքն արիաբար տարավ պատերազմի արիավիրքը եւ կիսեց նորանկախ Հայաստանին հասած բոլոր դժվարությունները: Հրետակոծությունների տակ Սյունիքի ՀԷԿ-երը աշխատում էին անխափան եւ լույս ուղարկում հայոց մայրաքաղաքին:

Ազատագրական շարժման ողջ ընթացքում Սյունիքը դարձավ Հայաստանի եւ Արցախի ամենաբարձրաստիճան պետական ու զինվորական գործիչների հանդիպավայրը, երբ անհրաժեշտ էր լի-

նում հրատապ լուծում գտնել քաղաքական կամ ռազմական որեւէ հարցի առնչությամբ: Այդ հանդիպումները տեղի էին ունենում Գորիսից ոչ հեռու գտնվող Սադոյի լճի ափին կառուցված հանգստյան տանը: Լեռնաշխարհը նաեւ ելման կամ դադարի կետ էր Արցախ մեկնող բոլոր կամավորական զինված ջոկատների համար: Սյունիքն ընդունել ու Արցախ է ճանապարհել ռուս եւ օտարերկրացի տասնյակ քաղաքական ու հասարակական գործիչների:

Պատերազմական իրադրության պայմաններում Սյունիքի միասնական կառավարման խնդրում որոշակի դրական դեր խաղաց «Սյունիք-Զանգեզուր» պետական հատուկ ծրագրի աշխատակազմը՝ գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանի գլխավորությամբ: Գորիսում նստող աշխատակազմը գործել է 1993-1995 թթ.: Այդ գործում առանձնահատուկ է Վազգեն Սարգսյանի խաղացած դերը:

1995 թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանում իրականացվեց վարչատարածքային նոր բաժանում, եւ ստեղծվեց Սյունիքի մարզը՝ Կապան մարզկենտրոնով: Վերջնականապես վերականգնվեց «Սյունիք» պատմական երկրանունը: Նորաստեղծ մարզի մեջ մտան Սիսիանի, Գորիսի, Կապանի եւ Մեղրու շրջանները: Սյունիքի առաջին մարզպետ նշանակվեց գեներալ-մայոր Սուրեն Զեհանգիրի Աբրահամյանը: Նա Գորիսից 1995 թ. հուլիսի 5-ին ընտրվել էր ՀՀ ԱԺ պատգամավոր: Սյունիքի մարզկենտրոնի ընտրության հարցում լուրջ մրցակցություն ծավալվեց Կապան եւ Գորիս քաղաքների մեջ: Հաղթեց առաջին տարբերակը՝ շնորհիվ Կապանի շրջագործկոմի նախագահ Սլավիկ Հայրապետյանի մեծ ջանքերի: 1998 թ. հունիսին Սյունիքի մարզպետ նշանակվեց Ռոման Շմավոնի Նավասարդյանը: Այնուհետեւ Սյունիքի մարզպետն էր գեներալ-մայոր Էդուարդ Սամսոնի Բարսեղյանը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատության մեջ՝ բազմաթիվ սկզբնաղբյուրների եւ օժանդակ նյութերի քննական վերլուծության միջոցով, ներկայացված է Հայաստանի Սյունյաց նահանգի սոցիալ-քաղաքական հարաբերությունների եւ մշակութային կյանքի համապարփակ պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը:

Պատմական փաստագրված իրողությունը վկայում է, որ Սյունիքը մշտապես բնակեցված է եղել Հայկ-Սիսական զարմի շառավիղներով, որոնք առ այսօր պահպանել են իրենց ազգային դիմագիծն ու հոգեկան կերտվածքը: Հայկական լեռնաշխարհի այս տարածքը իբրեւ քաղաքակրթության օրրաններից մեկը, խոշոր դեր է կատարել: Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը Սյունյաց (Շաղատի) վարդապետարանին վստահեցին Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի թարգմանությունը, որն իր կատարելությամբ կոչվեց «Թագուհի թարգմանութեանը»:

Սյունիքը, աննշան բացառությամբ, միշտ գոյություն է ունեցել Հայկական միասնական պետության կազմում: Նրա երբեմնի անջատական ձգտումները պայմանավորված են եղել ոչ թե երկրամասի էթնիկական առանձնահատկությամբ, ինչպես անհիմն կերպով ջանում են մեկնաբանել ժամանակակից մի խումբ պատմաբաններ (Ջ. Բունիյաթով, Ռ. Ախունդով, Ֆ. Մամեդովա եւ այլք), այլ՝ ռազմաքաղաքական հզորությամբ: Որպես Մեծ Հայքի ընդարձակ նահանգներից մեկը, Սյունիքը երբեք չի եղել «Կովկասյան Ալբանիայի» կազմում եւ երբեք էլ չի կոչվել «ալբանական ծայրամաս»: Այդ մտացածին տեսությունները եւ անլուրջ վարկածները, ակներեաբար, ներմուծված են արտաքուստ՝ պանթուրքական արդի քաղաքականության տարածքային հավակնությունները տեսականորեն ամրապնդելու եւ կովկասագիտության մեջ գիտակցաբար խառնաշփոթ ստեղծելու նպատակով:

Անառարկելի իրողություն է, որ քաղաքակրթված բոլոր ժողովուրդների պատմություններում ավատատիրությունը բնութագրվում է հակադրությունների խորացման, կենտրոնախույս միտումների ցայտուն արտահայտմամբ: Նույն երեւոյթը տեսնում ենք նաեւ հայկական միջնադարում: Ժամանակակից ադրբեջանական պատմագրության մեջ ոմանց կողմից, բացարձակապես անհիմն կերպով, հայազգի մի շարք նշանավոր մտավորականներ՝ Մովսես Կադանկատվացի, Մխիթար Գոշ, Կիրակոս Գանձակեցի եւ այլք, հորջորջված են ոչ հայեր լոկ այն

պատճառով, որ նրանք ծնվել են Պատմական Հայաստանի Արցախ նահանգում կամ Գանձակում: Այդ հավակնոտ եւ շինծու «տեսությունները» զուրկ են պատմական որեւէ փաստից եւ գիտության հետ ոչ մի առնչություն չունեն: Սյունիքի պատմությունը նույն հայ ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է: Այդ եւ վկայում քաղաքական-տնտեսական, իրավական, մշակութային բազմաթիվ սկզբնաղբյուրները՝ մագաղաթյա մատյանները, հիշատակարանները, հազարավոր վիճագրությունները, որոնցով իրավունք ունի հպարտանալու յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ: Պատապարտելի երեւոյթ է, երբ այդպիսիք, որոշակի նկատառումներով, ցանկանում են յուրացնել ուրիշի պատմությունը՝ ժամանակակից բզկտված քարտեզի հիման վրա: Սյունիքի պատմությունը համահայաստանյան պատմության ցայտուն էջերից է, եւ ոչ ոք չի կարող բացահայտ կեղծիքի եւ շաղկապատանքի անփառնակ միջոցներով անդամահատել հայ ժողովրդի անցյալը:

Ներկա աշխատության էջերում քննության առարկա են դարձել Սյունիքի ավատական տների, թագավորության ժամանակաշրջանի պատմական անցքերի, հայ եւ վրաց ժողովուրդների համատեղ պայքարի, ապա նաեւ՝ Օրբելյանների իշխանապետության հաստատման եւ անկման հիմնախնդիրները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրամասի քաղաքական կազմավորումները պատմության ասպարեզից վերացել են սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների եւ արեւելյան ուրիշ ռազմատենչ ցեղերի ու ցեղախմբերի ասպատակությունների պատճառով:

Մատենագրական աղբյուրները եւ հատկապես՝ վիճակն արձանագրությունները, վկայում են, որ 12-13-րդ դարերում միջավայրական հարաբերություններն առավել խորացան այստեղ՝ Սյունիքում, ուր, քաղաքական հանգամանքների բերումով, կենտրոնացվել էին Պատմական Հայաստանի հին ու նոր ազնվական տների ներկայացուցիչներից շատերը՝ Ջաքարյանների ընդհանուր ղեկավարությամբ (Խաղբակյաններ, Օրբելյաններ, Ախթամարյաններ, Մեհեանյաններ եւ այլոք):

Ներավատական մրցակցությամբ ստեղծված իրավիճակը բարեբեր եղավ առաջին հերթին հոգեւոր նվիրապետության համար: Ընդարձակ կալվածների ու շահութաբեր հաստատությունների տեր դարձան նահանգի եպիսկոպոսական աթոռը, վանական միաբնություններն ու եկեղեցիները (Տաթեւ, Վահանավանք, Նորավանք, Յաղաց քար, Թանահատ եւ այլն), որոնց վստահված էր նաեւ գիտության ու դպրության կազմակերպման կարեւոր բնագավառը: Անկախ երկրի քաղաքական մասնատվածությունից, հայ եկեղեցին իր մենաշնորհա-

յին իշխանությունն էր իրականացնում ժողովրդից գանձվող հարկերի ու տուրքերի մի մասի նկատմամբ՝ ձգտելով կիրառել ռենտային երեք հայտնի ծեսերն ու եղանակները:

Սկզբնաղբյուրներում եղած մասնակի հիշատակությունների հիման վրա հնարավոր է ենթադրել, որ Սյունիքում նույնպես եղել է ճորտատիրություն, սակայն այն չի ունեցել դասական ճորտատիրության երկրներին հատուկ բնորոշ կողմերը՝ երկրի կայուն քաղաքական հիմքի բացակայության պատճառով: Այստեղ գերիշխում էին ազատ գյուղացիական համայնքները, որոնք աշխարհիկ տերերին եւ եկեղեցուն տալիս էին սահմանված հարկերն ու տուրքերը, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ կատարում նաեւ արտատնտեսական բնույթի աշխատանքներ:

Եպիսկոպոսանիստ Տաթեւի վանքի դեմ Սյունիքում ծայր առած գյուղացիական հուզումները տեղի են ունեցել սոցիալական հողի վրա, որոնք նպաստավոր պայմաններում կարող էին ունենալ նաեւ քաղաքական ուղղվածություն: Տուրաբերդցիների, տամալեկցիների եւ այլ «հին հայրենի տերք» ազատ գյուղացիական համայնքների ընդվզումներն, ըստ էության, թոնդրակեցիների հզոր շարժման բուռն արձագանքներն էին:

Խելացիորեն օգտագործելով մոնղոլ խաներից տրված «ինջու»-ական իրավունքը՝ Սյունիքի հոգեւոր եւ աշխարհիկ տերերն առանձնակի ուշադրություն դարձրին լուսավորության եւ դպրության գործին: Համազգային հռչակ վայելեցին Գլաձորի ու Տաթեւի համալսարանները, Հերմոնի, Սպիտակավոր Աստվածածնի, Եղեգիսի ու Արկղոնքի գրչության օջախները, որոնք նպաստավորվում եւ հովանավորվում էին Պռոշյանների, Օրբելյանների եւ նահանգի եպիսկոպոսական աթոռի կողմից: Հոգեւոր-մշակութային կյանքի վերելքին մեծապես նպաստում էր այն կարեւոր հանգամանքը, որ Սյունիքի եւ քաղաքական իշխանությունը, եւ հոգեւոր նվիրապետությունը գտնվում էին միեւնույն՝ Օրբելյան տոհմի ձեռքին:

Ժամանակի հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչները (Ֆրիկ, Կիրակոս Գանձակեցի, Խաչատուր Կեչառեցի, Ստեփանոս Օրբելյան եւ այլոք), ականատես լինելով ժողովրդական լայն զանգվածների սոցիալ-քաղաքական ծանր վիճակին, իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում տիրապետող մոնղոլ իշխանության դեմ: 13-րդ դարի երկրորդ կեսին բռնկված հակամոնղոլական ապստամբությունների առաջնորդներ դարձան մի շարք հայ իշխաններ: Մոնղոլական արքունիքը՝ ենթակա ժողովուրդներին զսպելու նպատակով,

մշտապես գործի էր դնում «բաժանիր, որ տիրես» սկզբունքը՝ իրար դեմ լարելով խոշոր ավատական տների ռազմունակ առաջնորդներին:

Հարուստ փաստագրական նյութերը հիմք են տալիս եզրակացնելու, որ Սյունյաց թագավորության կործանման, ապա նաեւ մյուս իշխանությունների վերացման համար, հող նախապատրաստեցին հետեւյալ պատճառները.

1. Երկրի քաղաքական մասնատվածությունը:

2. Օտար նվաճողների ներխուժումները:

3. Հայաստանի ավատական տների միջեւ եղած հակամարտությունները եւ կենտրոնախույս ձգտումները:

Հայաստանը, ընդ որում նաեւ Սյունյաց նահանգը, աստիճանաբար կորցրեցին արտաքին թշնամուն դիմակայելու ունակությունը եւ դարձան օտար զավթիչների անընդհատ բախումների ասպարեզ. ծայր առավ զանգվածային արտագաղթը մայր երկրից: Բնիկ տերերի փոխարեն հրամայող դիրքեր գրավեցին քոչվոր ցեղապետերը: Սակայն երկրի կենսունակ ուժերը՝ ռամիկն ու գյուղացին, երբեք չհեռացան հայրենի լեռներից, ապավինեցին նրանց եւ վերընձնուղվեցին՝ գալիքի անկողնում հավատով:

Մտած էր երկու դար, որպեսզի սկսվեր փառահեղ դրվագներով լեցուն մի նոր պատմաշրջան, որի հերոսն էր լինելու թուրք-պարսկական զավթիչների ահ ու սարսափ Մեծն Սյունեցին՝ Դավիթ Բեկը, իսկ երկու դար հետո՝ հանդես էր գալու արծվահայաց Գարեգին Նժդեհը՝ Զանգեզուրի փրկիչը:

Ադրբեջանական պատմաբանները՝ իրենց ազգայնական պարագլուխների պատվերով ու թելադրանքով, կեղծեցին եւ նենգափոխեցին ոչ միայն հայ, այլեւ ադրբեջանական ժողովուրդների անցյալը: Արցախյան գոյամարտի շրջանում Սյունիքը դարձավ Լեռնային Ղարաբաղի թիկունքն ու հուսալի պատվարը: Ադրբեջանական զավթիչները զգացին հայ ժողովրդի միասնական պայքարի զորությունը. ընկրկեցին, ջախջախվեցին եւ հեռացան լեռնաշխարհից: Ազատագրվեցին Հայաստանի պատմական տարածքները՝ Քարվաճառ-Քելբաջարը, Կովսական-Զանգեզանը, Քաշաթաղ-Լաչինը եւ այլ շրջաններ:

Սյունյաց ժողովուրդը հպարտանում է իր պատմության փառավոր էջերով, հայրենական զավակներով: Արցախ-Ղարաբաղը հայ ժողովրդի արծվաբույնն է՝ բազմաթիվ տաղանդավոր զորավարներով ու հերոս զինվորներով...

Ուրիշի պատմությունը չի կարելի սեփականել: Չէ՛ որ մինչեւ հոկ-

տեմբերյան հեղափոխությունը Կասպից ծովի նավթաբեր տարածքները պատկանում էին ոչ միայն կովկասյան թաթարներին՝ ադրբեջանցիներին, այլեւ՝ շվեդական, ֆրանսիական, անգլիական, ռուսական ընկերություններին, ինչպես նաեւ՝ Մանթաշյաններին, Ղուկասյաններին, Արամյաններին, Մայիլյաններին, Լիանոզյաններին, Ավան-Յուզբաշյաններին, Ծատուրյաններին, Առաքելյաններին, Միրզոյաններին...

Պատմությունը ժողովրդի հիշողությունն է, եւ մենք պարտավոր ենք այն պահպանել եւ փոխանցել գալիք սերունդներին, փոխանցել ազնվորեն, առանց խեղաթյուրման...

**ИСТОРИЯ СЮНИКА***(с древнейших времён до наших дней)***РЕЗЮМЕ**

На основании многочисленных исторических сведений и подробного анализа сравнительного материала следует заключить, что на территории Сюникского нагорья с древнейших времен обитало армянское население, каковым и оставалось до сих пор. После создания Месропом Маштоцом армянской письменности Сюник стал одним из важнейших духовно-культурных центров Армении. Эта неоспоримая реальность подтверждается дошедшими до нас памятниками материальной культуры с богатейшим литературным наследием. В числе первоисточников особую важность представляют памятные записи рукописей и lapidарные надписи, сохранившие ценные сведения не только по истории Армении, но и сопредельных стран. В эпоху развитого феодализма преемственность традиций продолжалась как в общественно-политической, социально-правовой, так и культурной жизни народа.

Примечателен тот факт, что Сюник, несмотря на разделительную политику иноземных правителей, всегда находился в составе общенационального армянского государства. Центробежные устремления светских и духовных феодалов Сюника объясняются не этническим отличием края, как ошибочно представляется в трудах ряда азербайджанских «албанистов», а значительным военно-политическим потенциалом Сюника по сравнению с другими армянскими феодальными образованиями. Сюник никогда не входил в состав Кавказской Албании и никогда не был периферийной «албанской окраиной». На территории Сюникского нагорья тюркоязычные племена стали поселяться в период позднего средневековья, а принудительная исламизация незначительной части христианского населения

происходила, в частности, после вторжения Тимура и тюркменских племен Кара-коюнлу и Ак-коюнлу.

У всех цивилизованных народов эпоха феодализма характеризуется, в первую очередь, усугублением антагонистических отношений между отдельными противоборствующими силами. Классическими примерами могут послужить не только Армения, но и сопредельные страны.

В последние годы ряд азербайджанских историков, в том числе и ныне покойный академик Зия Буниятов, опубликовали труды о Кавказской Албании, где извращено историческое прошлое не только Сюника, но и Арцаха. Думаем, аморально, когда путем фальсификации и искажения исторических реалий, присваивается в корне самобытное культурное наследие армянского народа, тем самым извращая историю азербайджанского народа. Ныне, правда, они перестали трубить на весь мир миф о том, что Арцах, Сюник, Гандзак и прочие регионы якобы были территориями Кавказской Албании, хозяевами которых стали «наследники» кавказских албанцев-азербайджанцы. Дело дошло до такой степени нелепости, что крупные армянские мыслители Мовсес Каганкатваци, Мхитар Гош, Киракос Гандзакци и другие деятели средневековья объявляются албанцами, поскольку они имели счастья родиться в Арцахе, Гандзаке и сопредельных регионах Восточного края Армении.

Эти выдуманные и ничем необоснованные версии азербайджанских «албанистов», не подкреплены фактографическим материалом, следовательно лишены научной почвы. Подобные голословные заявления проникнуты идеологией панисламизма с дальней целью присвоения чужих территорий. Однако, политический заказ часто не проходит. И не всегда желаемое становится действительностью.

Героический армянский народ Арцах-Карабаха выстоял против азербайджанских агрессоров и выдворил их из своих исконных земель.

Ныне Нагорный Карабах и сопредельные земли исторической Армении (Карвачар-Кельбаджар, Ковсакан-Зангелан, Кашатаг-



Лачин и другие) освобождены ценой крови и больших потерь. Ведь истина: кто приходит с мечом, тот погибнет от меча.

С немного согласия азербайджанской интеллигенции совершались чудовищные преступления в Сумгаите, Баку, Кировабаде... О чем думали опозорившие себя лидеры Азербайджана, когда травили свой народ духом национализма и ненависти к соседям. История подобных авантюристов-лидеров не прощает.

